



ԱՆՑՄԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ»
ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՆՑՄԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՄՈՐ ՈՒՂԵՐՁՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԱՐԹԱՆ 2018 – 2022 ԹԹ.
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I	7
ՄԱՔՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ	7
ՄԱՔՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ	8
I ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ	10
ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅԻՆ «ԳԵՐԴՈԶԱՎՈՐՈՒՄ»	11
ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ	16
ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԿԱՊՈՒՂԻ (ՊՐԱԿՏԻԿԱ)	19
ՄԻՇՏ ՄՏԱԾԵՔ ԼԱՎ ԲԱՆԻ ՄԱՍԻՆ	21
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄՏԱՑԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ	24
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍՔԱՆԱՎՈՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)	27
ԳԼՈՒԽ II	30
ԶԵՐԲԱԶԱՏՈՒՄ ՎԱԽԵՐԻՑ	30
ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՎԱԽԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄ	31
II ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ	34
ԱՌԱՆՑ ԴԻՄԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՃՈՒՃԱՆՔԻ	34
ԵՆԹԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՎԱԽԵՐ	36
ՎԱԽ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՆԴԵՊ	38
ԶԵՐԲԱԶԱՏՈՒՄ ՎԱԽԻՑ (ՊՐԱԿՏԻԿԱ)	41
ՎԱԽԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԼԱՆՈՒՄ	43
ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)	46
ՓԱԿՈՑՆԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)	48
ՈՍԿԵ ՄԵՂՐԱԲԶԻԶՆԵՐ (ՊՐԱԿՏԻԿԱ)	51
ԱՆՑՅԱԼԻ ԲԺՇԿՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)	53
ԳԼՈՒԽ III	57

ՍԵՓԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	57
ՍԵՓԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	58
ՀԱՆԳԻՍՏ ԵՎ ՄԻԱ՛ՅՆ ՀԱՆԳԻՍՏ	61
ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՔՐՈՂ ՊՏՏԱՀՈՂՄԸ	64
ԹՐԹԻՌԱՅԻՆ ՊԱՏ.....	66
ԹՐԹԻՌՆԵՐԻ ՀԱՎԱՍՍԱՐԱԿՇՌՈՒՄ	69
ՉՀԱՏՎՈՂ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	71
III ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ	74
ԱՆԳԻՏԱԿԻՑ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	75
ՍԻՐՈ ԲՈԺՈԺ (ՊՐԱԿՏԻԿԱ).....	77
ԻՆՔՆԱԲՈՒԽ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ	79
ՀԱԿԱԶԴՄԱՆ ԵՌԱԶԱՓ ԾՐԱԳՐԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ).....	82
ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ «ՄԿԱՎԱՌԱԿԸ» (ՊՐԱԿՏԻԿԱ).....	84
ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԴՐԱԽՏ (ՊՐԱԿՏԻԿԱ).....	86
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՊՐԱԿՏԻԿԱ).....	89
ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ «ՔԱՂՀԱՆ» (ՊՐԱԿՏԻԿԱ).....	91
ԱՐՈՐՆԵՐ ՁՈՒԼԵՆՔ ՍՐԵՐԻՑ (ՊՐԱԿՏԻԿԱ)	94
ՍԻՐՈ ԲՅՈՒՐԵՂԻ ԾԻԱԾԱՆԸ (ՊՐԱԿՏԻԿԱ).....	96
ԳԼՈՒԽ IV	99
ՆԵՐՔԻՆ «ԴԻՎԵՐՍԱՆՏՆԵՐ»	99
ԱՎԵՐԻՉ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	100
ՆԵՐՔԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ	103
IV ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ	106
ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	106
ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ).....	108

Ինքնուրույն ընթացակարգի ընդունումը 111

Մեջ 111

Ինտերնետի ընթացակարգը 114

Կենսապայմանի վերաբերյալ 116

ՎՏԱՆԳԱՎՈՐ «ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ» 119

ԱՄԵՆԱՆԵՐՄԱՆ ՄԵԾԱԶՈՐ ՈՒԺԸ 122

ՁԵՐԲԱԶԱՏՈՒՄ ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆԵՐԻՑ (ՊՐԱԿՏԻԿԱ) 124

ՎԻՐԱՎՈՐԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԷԳՈՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ 127

ԳԼՈՒԽ V 130

ԿՅԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ 131

V ԳԼՈՒԽ ՀԱՎԵԼՎԱԾ 134

ԿՅԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՇԵՄԻՆ... 134

ԿՅԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 137

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԹԵ՞ ՀՈԳՈՒ ԹԵԼԱԴՐԱՆՔ 139

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ 142

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ 145

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՌԵԶՈՆԱՆՍ 148

ԵՐԿՆԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ 151

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 153

ԲԱՑԱՍԱԿԱՆԻՑ՝ ԴՐԱԿԱՆ (ՊՐԱԿՏԻԿԱ) 155

ԵՐԿՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ ՄԻԱԲԵՎԵՌՈՒԹՅԱՆ (ՊՐԱԿՏԻԿԱ) 158

ԳԼՈՒԽ VI 161

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ ՁԵՐ ՇՈՒՐՁԸ 162

VI ԳԼՈՒԽ ՀԱՎԵԼՎԱԾ 165

ՀԵՏԱԴԱՐՁ ՊՐՈՑԵՍ 165

ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻՑ ՉԱՀԵԼ 167

Ֆիզիկական ՄԱՐՄՆԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ.	169
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՖԻԼՏՐ (ՊՐԱԿՏԻԿԱ).....	171
«ԾԱՆՐ» ՇՐՋԱՊԱՏ.....	174
ՉՈՐՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՄԵՐԿԱԲ (ՊՐԱԿՏԻԿԱ).....	176
ԶՈՒԳԱՀԵՌ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	179
ՄԱՐԴՈՒ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿՈՂԸ.....	182
ՍԵՓԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՐԱՐԻՉ.....	184
ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԻՄՈՒՆԻՏԵՏ.....	186
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՈՒՄ.....	189
ԳԼՈՒԽ VII.....	192
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՌԱՉԱՓ ՄԱՏՐԻՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ.....	193
ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՆԵՐ.....	195
VII ԳԼՒԽ ՀԱՎԵԼՎԱԾ.....	199
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԿՇԵՌՔԻ ՆԺԱՐԸ.....	199
ԶԳՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԹՈՆՔԻ ՎՐԱ.....	202
ԱՆԴՐԱԴԱՐՁՄԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԱՆՑՄԱՆ ՍՑԵՆԱՐԸ.....	205
ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԲԱԶՄԱՍՏԻՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	208
ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ՕՐԵՆՔԻ «ՎԵՐԱԴԱՐՁԸ».....	210
ԱԶԱՏ ԿԱՄՔԻ «ՊԱՐԱՆԻ ԶԳՈՒՄ».....	213
«ԸՆԿԵՐԱՆԱԼ» ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՕՐԵՆՔԻ ՀԵՏ.....	216
ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ.....	218
ԳԼՈՒԿԱԼ «ՄԱՐԴՈՍՏԱՅՆԻ» ԿՈՐԾԱՆՈՒՄԸ.....	221
ԳԼՈՒԽ VIII.....	224
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....	224

ԳԼՈՒԽ I

ՄԱՔՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՄԱՔՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

I ԳԼՈՒԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ

7

1. ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅԻՆ «ԳԵՐԴՈԶԱՎՈՐՈՒՄ»
2. ՈՒՍՈՒՑԻՉ ԵՎ ԱՇԱԿԵՐՏ
3. ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ
4. ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԿԱՊՈՒՂԻ (ՊՐԱԿՏԻԿԱ)
5. ՄԻՇՏ ՄՏԱԾԵՔ ԼԱՎ ԲԱՆԻ ՄԱՍԻՆ
6. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄՏԱՑԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
7. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍՔԱՆԱՎՈՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ՄԱՔՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 20 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասուն՝ զավակներ:

Այսօր մենք ավելի հանգամանորեն կխոսենք ինքնաբժշկման մասին:

Այդ պրոցեսն ընդհանուր առմամբ արդեն սկսվել է նրանց մոտ, ովքեր ակտիվորեն կիրառում են էներգետիկական պրակտիկաները, որոնք մեծ քանակությամբ տրվել են այս կայքէջում:

Սակայն ես հասկանում եմ, զավակներս, որ տեղեկատվության առատության պատճառով դուք դժվարանում եք կենտրոնանալ մեկ քանի վրա և մշակել գործողությունների հստակ ծրագիր:

Ինչու՞ եմ ձեզ այսպիսի քանակությամբ տեղեկություններ տալիս և այսքան սեղմ ժամկետում:

Ընկ այն պատճառով, որ Երկրի թրթիռները, նշանակում է՝ նաև ձեր սեփական թրթիռները տարեցտարի ավելի ու ավելի արագ են բարձրանում, և ձեր մոլորակի վրա ընթացող այդ վիթխարի, համընդհանուր փոփոխություններին համընթաց շարժվելու համար հարկավոր է շտապել:

Որպեսզի հնարավորինս շատ մարդ ի վիճակի լինի կատարելու Անցումը, անհրաժեշտ է նախապատրաստել որոշակի «լոկոմոտիվ» ամենահին և հասուն հոգիներից, որոնք ունակ կլինեն իրենց հետևից տանելու մյուսներին:

Հենց այդ նպատակով էլ ստեղծվել է «Վերածնունդ» կայքէջը:

Բարձրագույն Ուժերն արել են ամեն ինչ, որ այն իր հաստատուն տեղն ունենա համացանցի տարածքներում և դեպի իրեն առձգի հատկապես այն հոգիներին, որոնց համար ստեղծվել է:

Իսկ նրանց, ովքեր «գլխովին թաղվել են» տեղեկատվության հսկայական ծավալում, և հատկապես նրանց, ովքեր վերջերս են

թաթախվել դրա մեջ, ես ուզում եմ տալ գործողությունների որոշակի պլան իրենց հոգևոր ուղու փուլերն արագորեն անցնելու համար, որովհետև հապաղելու ժամանակ արդեն իսկապես չի մնում:

Եվ այսպես, **առաջին քանը, որ պիտի անեք՝ ազատվել եռաչափ աշխարհի կարծրատիպերից ու շաբլոններից**, որոնք թույլ չեն տալիս ձեզ թեթև ու ներդաշնակորեն մաս կազմել չորրորդ, իսկ հետո նաև Հինգերորդ չափման նոր հասարակությանը:

Դրա համար պետք է ձեր կյանքից բացառեք զանգվածային լրատվության բոլոր պաշտոնական միջոցները, որոնց մեջ ներդրված են մարդկային գիտակցության վրա ազդելու թաքուն մեխանիզմներ:

Համացանցում գտե՛ք ձեզ համար մի քանի մաքուր տեղեկատվական աղբյուր: Եվ թող ձեր ինտուիցիան՝ ձեր հոգին ընտրի դրանք, այլ ոչ թե Խելքը:

Ձեր ընտրության գլխավոր չափանիշը պիտի լինի ձեր տեղեկատուի բարձր թրթռանքը:

Եթե դեռևս չեք զգում էներգիաները և չեք կարողանում ինքներդ որոշել այս կամ այն մարդու՝ ինչ-որ ոլորտի մասնագետի, լրագրողի կամ բլոգերի էներգետիկական մաքրության աստիճանը, **կարող եք դեկավարվել հետևյալ արտաքին նշաններով:**

Տեղեկությունը պիտի հաղորդվի առանց ավելորդ հույզերի, որոնք այս կամ այն կերպ աղավաղում են տվյալ մարդու էներգետիկական տարածությունը:

Պիտի հաղորդվի հստակ, պարզ և հակիրճ ձևով, խնայելով ձեր ժամանակը:

Պիտի հիմնված լինի կոնկրետ փաստերի և փաստաթղթերի վրա, այլ ոչ թե սեփական կռահումների ու մտահանգումների:

Պիտի կրի իր մեջ դրական սկզբունք, նույնիսկ եթե պարունակում է բացասական, երբեմն էլ ահաբեկող փաստեր:

Այլ կերպ ասած՝ տեղեկատվություն հաղորդող մարդը պետք է ոչ թե վախեցնի ձեզ, այլ ցույց տա, թե որն է ելքը ստեղծված իրավիճակից՝ տոգորելով ձեզ բարեհաջող հանգուցալուծման Հավատով:

Այդպես տեղի է ունենում գիտակցության ծրագրավորում դեպի դրականը, որ հիմա շատ կարևոր է:

Մարդկության հավաքական գիտակցության լրիվ շրջադարձը Լույսի ուղղությամբ կարող է իսկական հրաշքներ գործել և բազմակի արագացնել Երկրի և համայն մարդկության Անցումը Հինգերորդ չափման նոր աշխարհ:

Եվ հակառակը, այն ամենը, ինչ պարունակում է իր մեջ վախ, հուսալքություն ու հիասթափություն, նպաստում է Խավարի ուժերին և արգելակում Անցումը:

Դրա համար, սիրելիներ՛ս, ընտրելով ինչ-որ տեղեկատվական կապուղի, դուք արդեն իսկ ձեր ավանդն եք ներբերում Երկրի իրադարձությունների զարգացման լուսավոր կամ մթամած սցենարին:

Մի՛ շտ հիշեք այս մասին:

Անսահման սիրող Բացարձակ Հայրը խոսեց ձեզ հետ

I ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ

1. ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅԻՆ «ԳԵՐԴՈԶԱՎՈՐՈՒՄ»
2. ՈՒՍՈՒՑԻՉ ԵՎ ԱՇԱԿԵՐՏ
3. ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ
4. ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԿԱՊՈՒՂԻ (ՊՐԱԿՏԻԿԱ)
5. ՄԻ՛ՇՏ ՄՏԱԾԵՔ ԼԱՎ ԲԱՆԻ ՄԱՍԻՆ
6. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՍՏԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ

7. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍՔԱՆԱՎՈՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅԻՆ «ԳԵՐԴՈԶԱՎՈՐՈՒՄ»

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 6 ՀՈՒԼԻՍԻ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն գավակներ:

Այսօրվա իմ ուղերձը որոշակի նախազգուշացում է՝ ուղղված ձեզնից նրանց, ովքեր դեռևս չեն սանձել իրենց հանդիպած բոլոր մարդկանց փրկելու ցանկությունը, անզիջում կերպով պաշտպանելով սեփական համոզմունքները և փորձելով բռնի պարտադրել սեփական աշխարհընկալումը:

Անշուշտ, ես նկատի ունեմ նրանց, ովքեր հասկանում են, թե ինչ է իրականում կատարվում Երկրի վրա և, ջանալով հասցնել այդ իմացությունները շրջապատին, երբեմն անցնում են թույլատրելի սահմանները:

Ձեզ արդեն տրվել է ուղերձների մի ամբողջ շարք, թե ինչպես կարելի է խնամքով, զգուշորեն ու իմաստնաբար հասու դարձնել անհաղորդ մարդկանց իրենց համար նոր այդ իմացություններին, հատկապես երբ խոսքը համաշխարհային «վերնախավի» սոսկալի, անմարդկային արարքներին է վերաբերում:

Ես տեսնում եմ, որ ներկայումս ակտիվացել և մեղիական տարածքներ են ելնում բազմաթիվ լուսավոր ու մաքուր հոգիներ, որոնք գիտակցում են իրենց իսկական նախասահմանումը և անկեղծորեն փորձում են օգնել մարդկանց՝ ուշքի գալու թմբիրից և խուսափելու այն սարսափելի սխալներից, որոնք անդառնալի հետևանքների կրերեն:

Նրանց նպատակներն իսկապես մաքուր են ու լուսավոր, սակայն շատ քչերին է հաջողվում անհրաժեշտ գիտելիքները մարդկանց հասցնել առանց շեղումների՝ ավելորդ ճնշման ու հուզական «գերդոզավորման»:

Իհարկե, ձեզնից յուրաքանչյուրն ունի իր ուրույն կենսափորձը, գիտելիքների պաշարը, կրթությունը, գիտակության չափը, գրական կամ հոետորական ունակությունները:

Եվ յուրաքանչյուրը հրամցնում է դրանք իր յուրահատուկ, անկրկնելի ոճով:

Սակայն հիմա խոսքն այդ մասին չէ, այլ՝ ձեր ասելիքի էներգետիկական լիցքի, որ փորձում եք հասցնել մարդկանց:

Երբեմն մարդը սկսում է իր պատմությունը հանգիստ, չափավոր տեմպով, խնամքով շարակցելով տրամաբանական շղթաները, հանգամանորեն ընտրելով արտահայտություններն ու հետևելով իր ամեն բառին:

Բայց հաճախ, թեմայի մեջ խորանալու համեմատ, փորձելով «ընդգրկել անընդգրկելին», կորցնում է իր նախնական ներդաշնակ հոգեվիճակը և ջանում ոճական թերացումները փոխհատուցել հուզական լարվածությամբ:

Հավանաբար շատերդ եք նկատել, թե ինչպես է փոխվում մարդու տոնը՝ թեմայի մեջ խորամուխ լինելու հետ:

Նրա ձայնը բարձրանում է, դառնում իշխող ու ճնշիչ:

Նա այլևս չի պատմում, այլ «բարբառում» է, չի կիսում ձեզ հետ իր փորձը, այլ սովորեցնում է ապրել, չի հայտնում իր կարծիքը, այլ պարտադրում է. . .

Եվ այդ ընթացքում փոխվում է թե՛ հենց իր՝ մարդու, թե՛ իր մատուցած տեղեկատվության էներգետիկան:

Ինչու՞ է այդպես լինում:

Ամենից առաջ այն պատճառով, որ այդ մարդու Էգոն «մի կողմ է հրում» նրա Հոգուն, իսկ Էգոն, ինչպես գիտեք, սահման չի ճանաչում:

Ուրիշին ճնշելը ցանկացած Էգոյի հիմնական կյանքային սկզբունքն է:

Եվ Հոգին դժվարանում է մրցել նրա հետ, որովհետև Էզոն իր տարածքում է՝ եռաչափ աշխարհում, այնինչ Հոգին ավելի բարձր չափումներում է գտնվում:

Առայժմ քչերին է հաջողվում հավասարակշռել Էզոն և Հոգին այնպես, որ ներդաշնակորեն զուգակցվեն իրար հետ և ֆիզիկական պլանում իրենց դրսևորեն ի բարձրագույն բարօրություն բոլորի:

Այդ իսկ պատճառով, միակ խորհուրդը, որ կուզեմ այսօր տալ, սա է. հետևե՛ք ձեր էներգետիկական վիճակին, երբ սկսում եք խոսել մեկի հետ և առավել ևս՝ եթե ձեզ վիճակվել է մեծ լսարանի հաղորդել ձեր իմացությունները, լինի դա ելույթ ինչ-որ սրահում, թե համացանցի վիրտուալ տարածության միջոցով:

Շատ կարևոր է որսալ այն պահը, երբ ձեր թրթռանքն սկսում է ընկնել, իսկ դա լինում է այն դեպքում, երբ դուք կորցնում եք չափի զգացումը, և կառավարման դեկը ստանձնում է արդեն ձեր Էզոն, և ոչ թե Հոգին:

Հավատացե՛ք, սիրելիներ՛ս, դա անչափ կարևոր է ոչ միայն հենց ձեզ, այլև ձեր ունկնդիրների համար:

Անձնատուր լինելով միևնույն հոսանքին, ինչ՝ դուք, նրանք ականա հետևում են ձեր թրթռանքին, և ձեր սեփական էներգետիկայի անկումը հանգեցնում է բոլոր այն մարդկանց թրթիռների իջեցմանը, որոնք գտնվում են ձեր էներգետիկական տիրույթում, անկախ նրանից՝ ձեր կողքին են նրանք, թե լսում են ձեր ելույթը գտնվելով աշխարհի տարբեր ծագերում:

Մի՛շտ հիշեք, որ մեղիական տարածություն էլնելով, դուք պատասխանատու եք դառնում ոչ միայն ինքներդ ձեզ, այլև նրանց համար, ովքեր հավատացել ու հետևել են ձեզ:

ՈՒՍՈՒՑԻՉ ԵՎ ԱՇԱԿԵՐՏ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 7 ՀՈՒԼԻՍԻ 2021 Թ.

Ի լրումն [իմ նախորդ ուղերձի](#), այսօր ես կուզեի արդեն դիմել տարատեսակ կապուղիների և կայքէջերի «սպառողներին», ինչպես լրատվական, այնպես էլ էզոթերիկ:

Եվ մենք կդիտարկենք ձեր փոխգործակցության պրոցեսը էներգետիկական տեսակետից, քանի որ այս տարիների ընթացքում ձեզ քիչ հուշումներ չեն տրվել, թե ինչպես «զատեք ցորենը որումից»:

Մենք կելնենք նրանից, որ այդ առումով դուք արդեն բավականաչափ կոփված եք և ուշադրության եք արժանացնում սուսկ այն մարդկանց, որոնք ճշմարիտ տեղեկատվություն են հաղորդում աշխարհի անցուդարձի մասին և անում են դա անշահախնդիր ձևով, ելնելով լավագույն մղումներից:

Բայց քանի դեռ դուք ապրում եք եռաչափ աշխարհում, քչերին է հաջողվում պահել այդ բարձր նշաձողը՝ գիտակցությամբ մշտապես գտնվել Հինգերորդ չափման տարածությունում:

Հոգևոր անկումը հնարավոր է երկու կողմից էլ՝ թե՛ նրանց, ովքեր գիտելիք են բերում, և թե՛ նրանց, ովքեր ընդունում են այն:

Մա այն հավիտենական փոխկապակցություն է, որն առկա է ուսուցչի և աշակերտի միջև:

Մակայն հիմա, երբ Երկիր է իջել Աստվածային ցանքը (Божественный посев), ուսուցչի և աշակերտի տեղերը հաճախ փոխվում են:

«Ուսուցիչ» ասելով ես նկատի ունեմ այն մարդկանց, որոնք, զգալով դրա անհրաժեշտությունը, իրենց մեջ ուժ են գտել ելնելու մեդիական տիրույթ և շփվելու մեծ լսարանի հետ:

Մակայն փոխգործակցությունը ուրիշ մարդկանց հետ միշտ ենթադրում է էներգետիկական փոխանակություն. այն անխուսափելի է Միասնության Տիեզերական Օրենքի պատճառով,

ընդ որում, բնավ կարևոր չէ՝ կողք կողքի եք գտնվում, թե աշխարհի տարբեր ծայրերում:

Եվ ահա այստեղ մի շատ նուրբ պահ է առաջ գալիս. ինչպես ներս թողնել հարկավոր գիտելիքները՝ միաժամանակ մաքուր ու անձեռնմխելի պահելով սեփական էներգետիկական տարածությունը:

Բանն այն է, որ նույնիսկ ամենամաքուր ու լուսավոր մարդը կիսում է ձեզ հետ աշխարհի ու իրավիճակի ԻՐ տեսլականը՝ ի՛ր փորձն ու իրադարձությունների ի՛ր ըմբռնումը:

Իսկ ձեր խնդիրն է՝ վերցնել նրա պատմածից սուկ ռացիոնալ հատիկը և յուրովի մեկնաբանել,- ամեն ինչ տեսնել սեփական, այլ ոչ ուրիշի աչքերով, որքան էլ խելացի, լավ ու բանիմաց թվա այդ մարդը:

Եվ այդտեղ ձեզ կարող է օգնել միայն ձեր Հոգին՝ ձեր ինտուիցիան, բայց ոչ երբեք ձեր ռացիոնալ Խելքն ու եռաչափ աշխարհի հմտությունները, որոնք, որպես կանոն, կրում են իրենց մեջ կարծրատիպային հակազդեցություններ (реакции) և ծեծված շաբլոններ:

Նման գերիշխող շաբլոններից է մանկուց ի վեր ձեզ ներշնչվող միտքը, թե ձեզնից ավագը, ուսուցիչը, գիտնականը, լրագրողը, քաղաքագետը, բժիշկը, հոգևորականը (այս ցանկը շատ երկար կարող է լինել) գիտի, թե ինչն է ձեզ համար լավ:

Այս խոնարհումը հեղինակությունների առջև փոքրուց ներշնչվել է ձեզ ձեր գիտակցության կառավարման նպատակով:

Եվ հիմա ժամանակն է ձերբազատվելու այդ սուտ դրվածքից:

Եռաչափ մատրիցը փուլ է գալիս արդեն ձեր աչքի առաջ, բոլոր դիմակներն ընկնում են «հարգված» ու «հեղինակավոր» մարդկանց դեմքերից, և դուք տեսնում եք նրանց իսկական էությունը՝ երբեմն անախորժ, կեղծավոր ու ցինիկ:

Արդյունքում դուք սկսում եք որոնել այդ ահաբեկող իրականության այլընտրանքը՝ մաքուր ու լուսավոր մարդկանց, որոնք իսկապես ավելի ու ավելի շատ են ի հայտ գալիս հիմա՝ դուրս ելնելով ստվերից:

Եվ այդուհանդերձ, նրա՛նք էլ մարդ են՝ իրենց բոլոր թուլություններով ու թերություններով, որոնցից հասկապես դժվար է լինում ազատվել, երբ գլխովին ընկղմվում ես դեպքերի հորձանուտը, շփվելով տարատեսակ մարդկանց հետ՝ էներգետիկորեն անկայուն, երբեմն էլ ագրեսիվ:

Նրանցից ոչ բոլորն են ունակ հաղթահարելու տարակարծիք մարդկանց մշտական էներգետիկական գրոհները, ինչն ականա իջեցնում է իրենց թրթիռները, հետևաբար և՛ իրենց ունկնդիրների կամ ընթերցողների թրթիռները:

Եվ ձեր խնդիրն է, զավակնե՛րս, նրբազգացորեն ջոկջոկել ձեզ անհրաժեշտ իմացությունները էներգետիկական «մոլախոտերից», որոնք կարող են պատել տվյալ մարդու կապուղին կամ քայքեջը, մաքրել իսկական տեղեկատվությունը եռաչափ աշխարհի «թեփից»:

Եվ իմ հաջորդ ուղերձում ես կպատմեմ, թե ինչպես կարող եք դա անել:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 8 ՀՈՒԼԻՍԻ 2021 Թ.

Եվ այսպես, շարունակելով [իմ նախորդ ուղերձը](#), խոսենք այն մասին, թե ինչպես կարելի է սովորել ճիշտ ընդունել տեղեկությունը՝ առանց վնաս հասցնելու ձեր հոգեբանական և էներգետիկական վիճակին:

Նախ և առաջ, դուք պետք է որսաք այն մարդու ալիքը, որին պատրաստվում եք լսել կամ որի հողվածը կամ չեննելինգը պատրաստվում եք կարդալ:

Ականջ դրեք ձեր զգացումներին:

Ինչպե՞ս են վերաբերվում այդ մարդուն ձեր չակրաները: Նրանցից ո՞րն է «արձագանքում» նրան:

Այդ մարդուն նայելիս հաճելի ու հանգիստ վիճակ է առաջանում ձեզ մոտ, թե՛ ընդհակառակը՝ զգում եք, որ վանում է ձեզ:

Սակայն շատ կարևոր է, որ զգաք հենց ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ հակազդեցությունը, այսինքն՝ որ այդ հարցերին արձագանքի ձեր Հոգին, ձեր նուրբ մարմինները, այլ ոչ թե եռաչափ աշխարհի մարդու ընկալումը, որին հատկանշական է երկվությունը՝ դուր է գալիս — դուր չի գալիս, գեղեցիկ է — սոգեղ է, խելացի է — հիմար է:

Հավանաբար արդեն նկատել եք, որ հաճելի արտաքինի և ճիշտ ու գեղեցիկ խոսքերի տակ հաճախ թաքնված է լինում մեծապես անհաճո անձնավորություն:

Իսկ երբեմն էլ, հակառակը, մեկը, որ առաջին հայացքից թվում է փոքրինչ կոպտավուն, անկիրթ, գեղեցիկ խոսելու անկարող, այդուհանդերձ իսկական է, անկեղծ, մաքուր գիտելիքներ տվող, որ գալիս են իր Հոգու խորքերից:

Եվ իհարկե, առաջին հերթին ուշադրություն դարձրեք մարդու աչքերին, դրանք չեն կարող խաբել:

Աչքերն իսկապես Հոգու հայելին են և, սուզվելով դրանց մեջ, դուք շատ բան կհասկանաք և կզգաք այդ մարդու իսկական մտադրությունները:

Ես գիտեմ, որ շատերդ ամենասկզբում հենց այդպես էլ վարվում եք, բայց հետո ինչ-որ պահից միանում է ձեր Միտքը, որը սկսում է «փսփսալ», թե դուք կարող եք սխալված լինել, և համոզում է, որ այնուամենայնիվ հարկավոր է լսել, թե ինչ է ասում մարդը:

Հետևանքը լինում է այն, որ դուք ընկղմվում եք ձեզ համար աններդաշնակ էներգիաների մեջ և կորցնում ոչ միայն ձեր թանկարժեք ժամանակը, այլև էներգետիկական ամբողջականությունը:

Ահա թե ինչ է տեղի ունենում, երբ սկսում են փոխազդել թրթռանքի տարբեր մակարդակներ ունեցող մարդիկ, նույնիսկ՝ եթե չեն շփվում ուղղակիորեն, այլ մեկը «զեկուցող» է, իսկ մյուսն ունկնդիր:

Ջանալով ըմբռնել այդ մարդու հաղորդածի իմաստը, դուք ակամա բացում եք նրա առաջ ձեր էներգետիկական տարածության «դռները»՝ ասես ձեր տուն թողնելով նրան:

Եվ նա սկսում է իրեն պահել այնպես, ինչպես սովոր է՝ երբեմն չափից դուրս «սանձարձակ», ինչն անհարիր է ձեր հոգևոր «կողերսին»:

Եվ դա կատարվում է այն պատճառով, որ դուք էներգապես չեք համընկնում նման մարդու հետ:

Հետևանքներն իրենց սպասել չեն տալիս:

Դուք ձեզ զգում եք ուժասպառ, անբավարարված, ջղագրգիռ, խաբված. . .

Այս բացասական զգացումները կարող են հրապուրել համանման էներգիաներով սնվող աստրալ էություններին, որն է՛լ ավելի կվատթաքացնի ձեր աններդաշնակ վիճակը:

Եվ այդ ամենը տեղի է ունենում լոկ այն պատճառով, որ դուք գերադասել եք լսել ձեր Մտքին, և ոչ Հոգուն:

Վերհիշե՛ք, գավակնե՛րս, ինչ տարատեսակ զգացումներ եք ունենում համացանցում այս կամ այն հոլովակը դիտելուց հետո:

Մեկը բառացիորեն գետնին է գամում ձեզ, իսկ մյուսը՝ թև տալիս ու թռցնում:

Դա բացատրվում է նրանով, որ խիստ տարբեր են ձեզ տեղեկատվություն հաղորդող մարդիկ:

Ոմանց հատուկ է ծանր ու ցածր էներգետիկան, այլոց՝ թեթև, լուսավոր ու եթերային:

Ընդ որում, կարևոր չէ, թե ինչ թեմայից են խոսում:

Երբեմն ամենասուսկալի ու ողբերգական բաների մասին մարդն այնպես է պատմում, որ դուք թնավորվում եք, որովհետև խոսում է պատկերավոր, հումորով՝ դրական տրամադրությամբ, և կարևորը՝ ցույց տալով մարդկանց այդ փակուղուց դուրս գալու ելքը, փրկության հույս ներշնչելով նրանց:

Իսկ մյուսը հաղորդում է «հավիտենական» ճշմարտություններ, բայց այնքան տաղտկալի ու ծանրակշիռ ձևով, որ արդյունքը ճիշտ հակառակն է լինում:

Եվ դա բացատրվում է նրանով, որ չափից դուրս «ծանրակշիռ» են նրա սեփական էներգիաները, որոնք թույլ չեն տալիս իրեն «թռչել» և առավել ևս՝ իր հետևից տանել մյուսներին:

ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԿԱՊՈՒՂԻ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 9 ՀՈՒԼԻՄԻ 2021 Թ.

Եվ այսպես, ես ուզում եմ այսօր անցնել էներգափոխանակության վերաբերյալ մեր զրույցի գործնական մասին, որ տեղի է ունենում մարդկանց միջև վիրտուալ իրականության տիրույթում,- երբ լսում եք ինչ-որ մեկին կամ կարդում ինչ-որ մեկի չեննելինգը կամ հոդվածը:

Ժամանակն է խոսելու այն մասին, թե ինչպես կարող եք պաշտպանել ինքներդ ձեզ օտարածին էներգիաներից, որ կարող է արձակել այս կամ այն տեղեկատվությունը հաղորդող մարդը:

Ես հասկանում եմ, զավակնե՛րս, որ ներկայումս, երբ Մութ և Լուսավոր ուժերի հակամարտությունը ֆիզիկական պլանում իր վճռորոշ փուլն է մտնում, անհնարին է և հարկավոր էլ չէ հայտնվել լիակատար տեղեկատվական վակուումում:

Հետևել իրադարձությունների զարգացմանը պե՛տք է, բայց ջանացե՛ք անել դա ձեզ համար անվնաս կերպով, բարձր պահելով ձեր թրթռանքը:

Համացանցում շրջանառող տեղեկատվության այսօրվա ծավալների պարագայում հեշտ չէ կողմնորոշվել ու ընտրել արժանավոր և ամենակարևորը՝ բարձրաթրթիռ տեղեկատվական աղբյուր:

Սակայն նույնիսկ երբ գտնեք այդպիսի աղբյուր, մի՛ արհամարհեք էներգետիկական պաշտպանության միջոցները:

Եվ հիմա ես ձեզ կտամ ոչ բարդ մի պրակտիկա, որը կօգնի, այս կամ այն մարդու հաղորդած տեղեկատվությունը ներս թողնելով գիտակցության մեջ, էներգապես մնալ անձեռնմխելի:

Այս պրակտիկան կպաշտպանի ձեր նուրբ մարմինները հենց իր՝ տեղեկատվություն հաղորդող մարդու էներգիաների ներթափանցումից, քանի որ նրա էներգիաները կարող են ավերիչ լինել ձեզ համար, անգամ եթե իր ասածն օգտակար դուրս գա:

Դրա պատճառները կարող են տարբեր լինել. խառնվածքների, կրթվածության մակարդակների, խոսելակերպերի չհամընկնում:

Ձեզ, օրինակ, կարող է զրգռել տվյալ մարդու ձայնը, ավելորդ հուզականությունը, քաղցրմեղցրությունը կամ, ընդհակառակը, տեղեկատվության մատուցման խստությունը, բազմակի կրկնությունները. . .

Իսկ մյուս կողմից՝ հասկանում եք, որ տեղեկությունները, որ նա ուզում է հասցնել ձեզ, հույժ կարևոր են և տվյալ պահին ձեզ անհրաժեշտ:

Այդ պատճառով էլ, թեև զգում եք ձեր թրթիռների անհամաձայնությունը, միևնույն է՝ սկսում եք լսել նրան:

Հենց նման դեպքերի համար է հետևյալ պրակտիկան, որը կանվանենք **«Միակողմանի կապուղի»**:

Սկզբունքորեն, ձեր սովորական պաշտպանական գունդն էլ (սֆերա) կարող է ձեզ զերծ պահել ցածրաթրթիռ էներգիաների ներթափանցումից:

Բայց քանի որ տվյալ դեպքում ձեր ամբողջ ուշադրությունն ուղղված է լինելու լսածի բոլոր նրբությունները որսալուն, վտանգ կա, որ ուշադրությունը խոսակցության բովանդակության վրա տեղափոխելով, դուք ականա կթուլացնեք ձեր պաշտպանությունը՝ լիովին ընկղմվելով այդ մարդու էներգետիկական դաշտի մեջ:

Եվ ահա թե ինչ եմ առաջարկում ձեզ:

Թարմացնելով Տիեզերական Սիրո Կրակից ստեղծված, արտաքուստ հայելապատ ձեր պաշտպանական գունդը՝ պատկերացրեք ձեզ և այդ մարդուն ավազի ժամացույցի տեսքով. դուք ներքևի մասն եք, նա՝ վերևի:

Նրանից եկող տեղեկատվությունը նեղ անցքից բարալիկ շիթով հոսում է ձեր մեջ և նստում ձեր գիտակցության ներսում՝ հետագա յուրացման ու վերլուծության համար:

Բայց քանի որ դուք շուտ չեք տալիս ձեր ավազի ժամացույցը, էներգետիկական փոխանակություն տեղի չի ունենում:

Դուք բաժանված կլինեք այդ մարդու էներգետիկական դաշտից առավելագույնս նեղ մի կապուղիով, նշանակում է՝ կկենտրոնանաք միայն ասվածի իմաստի վրա, առանց նրան՝ որպես անձի, որևէ գնահատական տալու:

Կիրառման հետ պրակտիկական բավական կհեշտանա:

Ինչ վերաբերում է ստացված տեղեկությանը, այստեղ արդեն որոմը ցորենից զատել ձեզ կօգնեն ձեր Հոգու հուշումները՝ ձեր սեփական ինտուիցիան:

Անուշադրության մի՛ մատնեք, սիրելիներ՛րս, այս թեթև պրակտիկական, որովհետև այժմ ավելի քան երբևէ կարևոր է հետևել սեփական էներգետիկական մաքրությանն ու անձեռնմխելիությանը:

ՄԻՇՏ ՄՏԱԾԵՔ ԼԱՎ ԲԱՆԻ ՄԱՍԻՆ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 21 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 Թ.

Եվ այսպես, որպես [նախորդ ուղերձի](#) շարունակություն, այժմ խոսենք, թե ինչ պետք է անեք ձեր **գիտակցությունն ու ենթագիտակցությունը**

միավորելու կամ գոնե նրանց խզումը առավելագույնս կրճատելու համար:

Մենք կելնենք նրանից, որ դուք արդեն կատարել եք [«Ձերբազատում ներքին “դիվերսանտներից”»](#) պրակտիկան և ուրեմն եթե անգամ մինչև վերջ չեք ազատվել, ապա գոնե նվազագույնի եք հասցրել եռաչափ աշխարհի մարդուն բնորոշ անգիտակից հակազդեցությունները (ռեակցիաները):

Դա շատ կարևոր է տվյալ փուլում, որովհետև առանց դրա՝ չեք կարողանա առաջ շարժվել:

Ենթագիտակցությունը փոխելու դժվարությունը պայմանավորված է նրանով, որ այն ձեզ համար մնում է անզգալի, նշանակում է՝ ի տարբերություն ձեր գիտակցության, դուք ի գորու չեք կառավարելու այն:

Այդ պատճառով էլ ձեր ենթագիտակցության մեջ ներդրված եռաչափ ծրագրերից ազատվելու ձեր ջանքերի արդյունքը դուք կարող եք տեսնել լոկ արտաքուստ դրսևորվող կողմնակի նշաններով:

Եվ հիմա ես կթվարկեմ այդ նշաններից մի քանիսը:

Նախ և առաջ՝ **ձեր հակազդեցությունը** թե՛ ձեր սեփական կյանքի **բացասական դեպքերին**, թե՛ համաշխարհային իրադարձություններին վերաբերող բացասական տեղեկատվությանը:

Նույնիսկ եթե դուք տեղեկատվություն եք քաղում ոչ թե զանգվածային լրատվության միջոցներից, այլ հավաստի այլընտրանքային աղբյուրներից, ներկայումս աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները բնավ լավատեսություն չեն ներշնչում, ճի՞ շտ է:

Դրա համար էլ ձեր հակազդեցությունը ոչնչով չի տարբերվում այն մարդկանց հակազդեցությունից, որոնք դիտում են հեռուստատեսային հաղորդումներ:

Ու թեև միևնույն դեպքերի լուսաբանումը արմատապես տարբեր է լինում, այդուհանդերձ ընթերցողին կամ ունկնդրին դրանք

մատուցվում են բացասական առումով, դրանով իսկ ծրագրավորելով նրանց ենթագիտակցությունը վախով ապագայի հանդեպ:

Եթե առաջինները՝ շարքային քաղքենիները, հալած յուզի տեղ ընդունում են իշխանությունների հրամցրածը, դուք, հրաշալիորեն տեղյակ լինելով ընթացող խորքային պրոցեսների մասին, տեսնում եք համաշխարհային իրադարձությունների ճշմարիտ պատկերը:

Եվ այդուհանդերձ, ձեր հակազդեցությունը գրեթե ոչնչով չի տարբերվում եռաչափ աշխարհի մարդկանց հակազդեցությունից:

Եթե հավելենք նաև ձեր անհամբերությունն ու **ջղայնությունը, որ ամեն ինչ չափազանց դանդաղ է կատարվում** և ոչ այնպես, ինչպես ցանկալի է ձեզ, ապա պարզվում է, որ ձեր ենթագիտակցությունը այդպես էլ մնացել է երրորդ չափման մակարդակում, չնայած ձեր գիտակցությունն արդեն դուրս է եկել նրա սահմաններից:

Ուրեմն ի՞նչ անել, որ հավասարվեն ձեր գիտակցությունն ու ենթագիտակցությունը:

Առաջին հերթին՝ նվազագույնի՝ հասցրեք բացասական տեղեկատվության սպառումը, որտեղից էլ կամ ումից էլ որ այն գա:

Չափավորե՛ք ձեր հետաքրքրասիրությունը:

Բոլորովին պարտադիր չէ խորամուխ լինել տեղի ունեցողի մանրամասների մեջ. բավական է տեսնել ընդհանուր պատկերը՝ համաշխարհային իրադարձությունների վեկտորը:

Երկրորդ՝ ձեր ամբողջ ուշադրությունը սևեռե՛ք այն բանի վրա, թե ինչպիսին կուգենայիք տեսնել ձեր կյանքը չորրորդ, ապա նաև հինգերորդ չափումում:

Մի՛շտ հիշեք, «ինչին ուշադրություն դարձնեք, այնտեղ էլ կհոսի էներգիան» («энергия течет, куда внимание влечет»):

Ուրեմն մի՛ սնուցեք Երկրի վրա կատարվող բացասական դեպքերը ձեր էներգիայով:

Փոխարենը շոայլորեն տվե՛ք այն Երկրի վրա ծնունդ առնող նոր կյանքին՝ չքնաղ ապագային, որում շուտով ապրելու եք ինքներդ:

Այդպես դուք ծառայություն մատուցած կլինեք և՛ ինքներդ ձեզ՝ ազատվելով եռաչափ աշխարհի բացասական ծրագրերից, և՛ ձեր մոլորակին՝ օգնելով նրան հաղթահարել Համբարձման ճանապարհին եղած վերջին խոչընդոտները:

Մի՛ շտ մտածեք լավ բանի մասին, զավակնե՛րս:

Անցյալում թողեք ձեր վախերն ու կասկածները. մի՛ սնուցեք դրանցով հեռացող հին աշխարհը:

Եվ ձեր ենթագիտակցությունը կսկսի արագորեն փոխվել, ներծծելով իր մեջ ստեղծարարման և աշխարհի հանդեպ լիակատար վստահության նոր ծրագրեր:

Օրհնու՛մ եմ ձեզ և անչափ սիրում:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՍՏԱՑԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 28 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 Թ.

Շարունակելով [իմ նախորդ ուղերձը](#), ուզում եմ այսօր անդրադառնալ ևս մեկ նշանի, որ մարդն արդեն չորրորդ չափման շեմին է:

Եվ կխոսենք նրա վերաբերմունքի մասին իր ստացած տեղեկատվության հանդեպ՝ ինչ աղբյուրից էլ այն գա:

Գիտակից մարդն այլևս անվերապահ հավատով չի ընդունում ուրիշի կարծիքը, հասկանալով, որ Երկրի վրա ձևավորվող իրավիճակն այժմ

այնքան բարդ է ու խճճված, որ դրա թնջուկներից անկարելի է գլուխ հանել սուկ տրամաբանության օգնությամբ:

Չափից դուրս շատ խաղացողներ են ներգրավված երկու կողմից էլ, և Մութ ու Լուսավոր Ուժերի պայքարը ծավալվում է հիմնականում կուլիսների ետևում, ժողովրդի աչքից հեռու:

Այդ իսկ պատճառով, տեղի ունեցողի ճշմարիտ պատկերը կարող է հասկանալ ու տեսնել միայն արտակարգ ինտուիցիայի տեր մարդը, նա, ով կարող է կարդալ տողերի արանքը և տեսնել այն, ինչ կոծկվում է կեղծավոր ժպիտների և ճիշտ խոսքերի հետևում:

Մարդն իր բնույթով շատ դյուրահավատ է, հատկապես երբ ինչ-որ լավ բան են խոստանում նրան, կամ երբ վստահեցնում են, թե ամեն ինչ արվում է իր իսկ բարօրության համար:

Հենց դա է պատճառը, որ այդքան մարդ խաբվեց ու ընկավ կառավարությունների լարած ծուղակը՝ համաձայնելով ընդունել մահաբեր փորձարարական պատրաստուկները, որոնք քողարկված էին նրանց համար սովորական ու փրկարար «պատվաստանյութ» բառի ներքո:

Իսկ մյուս կողմից, բազմաթիվ գիտակից մարդիկ, որոնց թրթիռներն արդեն բավական բարձրացել են, կարողացան ճանաչել կեղծիքը՝ տեսնել ողջ խարդավանքն ու երեսպաշտությունը, սքողված «ժողովրդի մասին հոգատարությամբ», որը գործնականորեն բռնությամբ էր պարտադրվում:

Թերևս ձեր մոլորակում մարդկանց բաժանումը գիտակիցների և անգիտակիցների ամենավառ կերպով դրսևորվում է հենց այս օրինակով:

Սակայն այստեղ էլ ամեն ինչ պարզ ու շիտակ չէ:

Նույնիսկ գիտակիցների մեջ առկա է բազմակի աստիճանավորություն:

Ոմանք ինտուիտիվ կերպով են զգացել իրենց կյանքին սպառնացող վտանգը, որովհետև կասկածելի է թվացել կառավարության այդքան

համառ «հոգատարությունը» ժողովրդի հանդեպ, ինչը բնավ հատուկ չի եղել նրան մինչ այդ:

Եվ այդ մարդիկ սկսել են տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներ որոնել ճշմարտության հասնելու և հասկանալու համար պաշտոնյաների նման անսովոր վարքագծի դրդապատճառը:

Իսկ ոմանք մինչ այդ էլ գիտեին Երկրի բնակչությունը կրճատելու գլոբալիստների ծրագրերի մասին և պատրաստ էին դեպքերի նման զարգացման:

Վստահ լինելով իրենց իրավացիության մեջ, նրանք ջանում էին վտանգից զերծ պահել նաև մերձավորներին, հաղորդելով իրենց իմացածը:

Սակայն, ինչպես համոզվեցիք ձեր սեփական փորձով, եթե մարդը պատրաստ չէ լսելու ճշմարտությունը, չի լսի, ինչ փաստարկներ ու ապացույցներ էլ բերեք իշխող վերնախավի ոճրագործությունների վերաբերյալ:

Եվ այդուհանդերձ, ձեր շնորհիվ հատուկենտ մարդիկ ձեր շրջապատում կարողացան անսալ ողջախոհության ձայնին, նշանակում է՝ ձեզ հաջողվել է փրկել նրանց Հոգիները, հնարավորություն տալով այդ մարդկանց աշխարհաճանաչողության նոր հորիզոններ բացել իրենց համար:

Նրանք էլ իրենց հերթին կարող են օգնության ձեռք մեկնել իրենց մտերիմներին ու ընկերներին, այդ կերպ ընդլայնելով արթնացած գիտակից հոգիների շրջանակը Երկրի վրա:

Եվ այդպես, հետզհետե, շղթայական ձևով, լուսավոր մարդկային հոգիները սկսում են իրենց վերելքը դեպի չորրորդ չափում:

Եվ դրանում արտահայտվում է ձեր Միասնությունը:

Դուք շանս եք տալիս մարդկանց, և արդեն նրանց իրավունքն է՝ օգտվել դրանից, թե ոչ:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍՔԱՆԱՎՈՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՅԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Շարունակելով [իմ նախորդ ուղերձը](#), ուզում եմ այսօր ձեզ առաջարկել մի պրակտիկա՝ ձեր «երրորդ աչքը» աշխարհում ընթացող իրադարձությունների վրա ֆոկուսավորելու համար:

Դա թույլ կտա ձեզ տեսնել դրանց ոչ միայն արտաքին կողմը, այլև ներքին՝ խորքային էությունը:

Քանի որ վերջին ժամանակներս Լույսի և Խավարի Ուժերի դիմակայությունը քիչ քառու ու հակասություն չի առաջ բերել, սովորական մարդու համար ոչ թե դժվար, այլ գործնականորեն անկարելի է հասկանալ՝ ինչ է իրականում կատարվում ձեր մոլորակում:

Որքան էլ որ տեղեկատվություն քաղեք այլևայլ աղբյուրներից՝ ինչպես պաշտոնական, այնպես էլ այլընտրանքային, դրանցից ոչ մեկը չի արտացոլում տեղի ունեցողի իրական պատկերը:

Եվ դա բացատրվում է նրանով, որ յուրաքանչյուր ոք, ով փորձում է վերլուծել վերջին իրադարձություններն ու գնահատական տալ, անում է դա եռաչափ աշխարհի մարդու տեսանկյունից՝ օգտագործելով իր Միտքն ու Էզոն:

Ընդ որում, իրադարձությունների վերլուծությունը մարդիկ կարող են անել ղեկավարվելով լոկ արտաքին տեսանելի դրսևորումներով, այսինքն՝ մակերեսային փաստերով:

Իսկ թե ինչ է կատարվում «վարագույրի հետևում»՝ նուրբ պլանում կամ նույնիսկ ֆիզիկական պլանի «ետնաբեմում», նրանց անհայտ է մնում:

Բացի այդ, բոլոր վերլուծաբանները՝ քաղաքագետները, լրագրողները, տնտեսագետները և նույնիսկ էզոթերիկական հոսանքների

ներկայացուցիչները, դեպքերն ու փաստերը ակամա հարմարեցնում են իրենց տեսություններին և աշխարհընկալմանը, ինչն արդեն չի կարող անաչառ բնույթ կրել:

Այդ իսկ պատճառով, զավակներ՝ րս, որպեսզի չխորտակվեք հակասական տեղեկատվության այդ ծովում, առաջարկում եմ ձեզ հետևյալը:

Քանի որ դուք չեք կարող լիովին անջատվել թե՛ լուրերից, որոնք անվերջանալի հոսքով հեղեղում են ձեզ, նախ՝ մաղեք տեղեկատվության այն աղբյուրները, որոնք թեկուզ նվազագույն կասկած են հարուցում ձեր մեջ:

Թողե՛ք միայն նրանք, որոնք համահունչ են ձեր Հոգուն:

Համոզված եմ, որ շատերդ հենց այդպես էլ վարվել եք:

Այնուհետև անցնենք բուն պրակտիկային, որը կանվանենք **«Աստվածային սքանավորում»**:

Եվ ահա թե ինչ է այն իրենից ներկայացնում:

Նախքան ինչ-որ տեղեկություն կարդալը կամ լսելը, կանչեք Համբարձման Էներգիան և խնդրեք առավելագույնս ակտիվացնել ձեր «երրորդ աչքը»:

Եվ միայն երբ կզգաք նրա ակտիվացումը ֆիզիկական պլանում՝ տարածվող ջերմության կամ տրոփյունի, իսկ գուցե նաև վեցերորդ չակրայի պտույտի տեսքով, սկսե՛ք կարդալ, լսել կամ դիտել այն, ինչ որոշել եք:

Մտովի խնդրե՛ք ձեր «երրորդ աչքին» ցույց տալ իրադարձության համակողմանի և ճշմարիտ պատկերը՝ մաղելով այն ամենը, ինչ ներմուծվել է դրա մեջ տեղեկատուի անհատականությամբ:

Ի՞նչ է ձեզ տալիս տվյալ պրակտիկան:

Այդ կերպ դուք կարող եք անգիտակցաբար՝ ինտուիտիվ կերպով, զատել ցորենը որումից, որսալով տեղի ունեցողի էությունը և դեն նետելով անպետք մանրամասները, որոնք, իբրև կանոն, «ուտվում» են

տեղեկատվական դաշտում՝ բազմաանալով հորինվածքների, չափազանցությունների և կեղծ տեղեկությունների շնորհիվ:

Հիմա Երկրի վրա գնում է տեղեկատվական ոչ թե կենաց, այլ մահու պատերազմ, և այս պատերազմը նվազ վտանգավոր չէ, քան ռազմական գործողությունները, որովհետև ավերում է ոչ թե մարմինները, այլ հոգիներն այն մարդկանց, որոնք կամա թե ակամա ներգրավված են Լույսի և Խավարի Ուժերի դիմակայության մեջ ինչպես Երկրի վրա, այնպես էլ Երկնքում:

Իսկ ձեր խնդիրն է, զավակներս, կույ չգնալ այդ պատերազմի հորձանուտին, մնալով իբրև իմաստուն կողմնակի դիտորդ այն պարագայում, երբ ձեր ուժից վեր է ինչ-որ բան փոխել ֆիզիկական պլանում:

Աշխատե՛ք էներգապես, արե՛ք սեանսներ ու մեդիտացիաներ իրավիճակի ներդաշնակեցման համար ի բարձրագույն բարօրություն բոլորի՝ Լույսի Ուժերի կամքին թողնելով որոշումը, թե տվյալ դեպքում ում համար ինչը կարող է բարօրություն լինել:

Առայժմ նրանց համար շատ ավելի հեշտ է նուրբ պլանից տեսնել պատկերն իր ամբողջության մեջ և որոշել Աստվածային նպատակահարմարությունը իրադարձությունների մեջ ներգրավված յուրաքանչյուր Հոգու համար:

Եվ ակտիվացած «երրորդ աչքը» կարող է ձեր լավ օգնականը դառնալ՝ սքանավորելով տեղեկատվությունը «թեժ կետերի» վերաբերյալ, որոնք առաջին հերթին պետք ունեն ձեր օգնության, և «կադրից դուրս թողնելով» այն ամենը, ինչ օտարամուտ է և անպետք:

Այսօր կսահմանափակվենք այսքանով:

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ԳԼՈՒԽ II

ՁԵՐԲԱԶԱՏՈՒՄ ՎԱԽԵՐԻՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՎԱԽԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄ

II ԳԼՈՒԽ ՀԱՎԵԼՎԱԾ

30

1. ԱՌԱՆՑ ԴԻՄԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՃՈՒՃԱՆՔԻ
2. ԵՆԹԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՎԱԽԵՐ
3. ՎԱԽ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՆԴԵՊ
4. ՁԵՐԲԱԶԱՏՈՒՄ ՎԱԽԻՑ (ՊՐԱԿՏԻԿԱ)
5. ՎԱԽԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԼԱՆՈՒՄ
6. ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)
7. ՓԱԿՈՑՆԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)
8. ՈՍԿԵ ՄԵՂՐԱԲԶԻՋՆԵՐ (ՊՐԱԿՏԻԿԱ)
9. ԱՆՑՅԱԼԻ ԲԺՇԿՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՎԱԽԵՐԻ ՏԱՐԲԱԼՈՒԾՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 21 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ:

Եվ այսպես, [շարունակենք մշակել գործողությունների պլան](#) նրանց համար, ովքեր «մոլորվել են» այս կայքէջի տեղեկատվության հեղեղում:

Ձեր պլանի [երկրորդ կետը](#) պիտի կազմեն վախից՝ Տիեզերքի ամենաավերիչ էներգիայից [ձերբազատվելու պրակտիկաները](#):

Անչափ կարևոր է մինչև վերջ մշակել այն, այսինքն՝ ազատել նրանից ոչ միայն ձեր գիտակցությունը, այլև ենթագիտակցությունը:

Այդ նպատակով դուք ստիպված կլինեք ավելի քան մեկ անգամ կրկնել այնպիսի պրակտիկաներ, ինչպես՝ [«Ձերբազատում վախից»](#), [«Ձեր ենթագիտակցության ”նկուղի”](#)», [նրա շարունակությունը](#), [«Գիտակցության վերածրագրավորում»](#), [«Ոսկե մեղրաբջիջներ»](#) և մի քանի այլ պրակտիկաներ:

Քանի որ հենց վախն է սողունակերպների հիմնական գործիքը, որի օգնությամբ պահվել է նրանց հազարամյա տիրապետությունը Երկրի վրա, ապա իսպառ ազատվելով նրանից, դուք կազատվեք նաև այդ գերությունից և իսկական ազատություն կգտնեք:

Այլևս ոչ ոք և ոչինչ չի կարող հարկադրել ձեզ անելու մի բան, որ չի ընդունում ձեր Հոգին, հատկապես եթե դուք անշեղորեն հետևեք ձեր պլանի [առաջին կետին՝ չդիտել և չլսել պաշտոնական լրատվության ալիքները](#), որոնք հենց նպատակ ունեն ներշնչել մարդուն վախ՝ իր բոլոր դրսևորումներով:

Բացի այդ, վախից ազատվելը ձեր առաջին քայլը կլինի ինքնաբժշկման ուղղությամբ, որովհետև հենց այդ էներգիան է մարդու օրգանիզմում առաջացնում հիվանդությունների մի ամբողջ շարան:

Վախը, ծնունդ առնելով ձեր գիտակցության մեջ, ինչպես բիկֆորդյան քուղ, տարածում է այդ ավերիչ էներգիան ամբողջ օրգանիզմով մեկ, «այրելով» առողջ բջիջներն ու քառս սփռելով ձեր բոլոր օրգանների և կենսապահովման համակարգերի գործունեության կատարյալ և կարգավորված պրոցեսում:

Իհարկե, զավակնե՛րս, ներկայումս գոյություն ունեն նաև բազմաթիվ արտաքին գործոններ, որոնք ազդում են ձեր օրգանիզմի վրա:

Դրանցից են թունավորված օդն ու անորակ սնունդը, դեղերն ու մանկական պատվաստումները, սթրեսային իրավիճակներն ու պետության մշտական վերահսկողությունը ձեզ վրա, և շատ ու շատ այլ բաներ:

Իսկ ձեզ երբևէ հարցրե՞լ եք, թե ինչպես է լինում, որ ոմանց վրա բոլոր այդ արտաքին ներգործությունները հիրավի կործանարար ազդեցություն են թողնում, իսկ ոմանք հաջողեցնում են երջանիկ ապրել նույնիսկ նման ոչ սովորական պայմաններում:

Իսկ դա բավական հեշտ է բացատրվում:

Առաջինները պաշարված են վախով, որը խորացնում է այդ ներգործությունը հարազատների ու մտերիմների, դեկավարության ու պետության կամ պարզապես նրանց ճանապարհին հանդիպող յուրաքանչյուր մարդու միջոցով:

Իսկ երկրորդները ներքին ազատություն և հավատ ունեն իրենք իրենց նկատմամբ, ինտուիցիայով հեռու վանելով վախն իրենց կյանքից:

Եռաչափ աշխարհում նման մարդկանց ընդունված է բաժանել հոռետեսների և լավատեսների:

Եվ հավանաբար նկատել եք, որ հոռետեսները շատ ավելի հաճախ են հիվանդանում, քան լավատեսները:

Իրականում մարդկային օրգանիզմն այնպիսի հզոր ներուժ ունի, որ որոշակի պայմաններում ունակ է ինքնաբժշկման:

Մակայն առայժմ շատ քչերին է հաջողվել այդպիսի պայմաններ ստեղծել, թեև հրաշքներ այդուհանդերձ կատարվում են և եռաչափ աշխարհում:

Բայց դրանք առավելապես բացառություն են ընդհանուր կանոնից:

Մարդկանց հիմնական զանգվածն ապրում է իներցիայով, գլխովին թաղված եռաչափ աշխարհի իրողությունների մեջ և անվերապահորեն հավատալով «խոսող գլուխներին», որոնք հեռուստացույցի էկրաններից հաղորդում են հենց այն տեղեկատվությունը, որը վախ ու անվստահություն է հարուցում նրանց մեջ:

Երկրի կառավարման և վերահսկման ողջ համակարգը՝ ինչպես աշխարհիկ, այնպես էլ կրոնական, դարեր ի վեր կառուցվել է վախի էներգիայի վրա:

Եվ հիմա ժամանակն է, սիրելիներ՛ս, լիովին գիտակցելով վախի կործանարար ազդեցությունը մարդու վրա, ընդմիջտ ազատվել նրանից:

Դուք միանգամայն ի գորու եք դա անելու:

Եվ թող ձեր նոր աշխարհայացքը սնուցեն արդեն բոլորովին այլ էներգիաներ՝ Լույսի, Սիրո, Արարչին Վստահելու և ինքներդ ձեզ ու ձեր ուժերին Հավատալու էներգիաները:

Ձեր կյանքի մռայլ ժամանակաշրջանը չգոյության գիրկն է գնում, և ձեր առջև բացվում են երջանիկ ու ստեղծագործ կյանքի մինչ այժմ չտեսնված հորիզոններ, որտեղ ամեն ինչ կախված է ձեզնից, այլ ոչ թե մի բուռ ՈԶ-մարդկանցից, որոնք այսքան դարեր իշխում են Երկրի վրա:

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

II ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՌԱՆՑ ԴԻՄԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՃՈՒՃԱՆՔԻ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 23 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ:

Եկել է ժամանակը շոշափելու ձեզ համար ամենակարևոր թեման, որը կօգնի բացահայտել ձեր ենթագիտակցության խորքերում թաքնված բոլոր վախերը, անվստահությունն առ կյանքը և եռաչափ աշխարհի մյուս զգացմունքները:

Եթե իսպառ չազատվեք դրանցից, դժվար կլինի շարժվել առաջ, այդ իսկ պատճառով իմ հաջորդ ուղերձներում ես կսովորեցնեմ՝ ինչպես կարելի է դրան հասնել:

Մենք արդեն բազմիցս խոսել ենք, թե որքան դժվար է մարդու համար տեսնել իրեն կողքից, ճանաչել իր իսկական դեմքը՝ առանց դիմակների և պաճուճանքի:

Որպես կանոն, ով իրեն լիովին ազատագրված է համարում իր բոլոր թերություններից և եռաչափ աշխարհի հույզերից, հենց նա՛ էլ դրանց գերին է:

Իրականում նա լուրջ «կոսմետիկ նորոգում» է արել իր «տանը», որը նրա գիտակցությունն է. ներկել և քիչումիչ շտկել է տան ճակատը, բայց ներսում՝ այդ գեղեցիկ տեսքի ետևում, ամեն ինչ մնացել է նույնը:

Այո, նրա թերությունները տեսանելի չեն շրջապատին, հենց իրեն անգամ տեսանելի չեն, սակայն ոչ այն պատճառով, որ ամբողջապես վերացել են, այլ պարզապես մարդը քշել-պարտակել է դրանք իր

ենթագիտակցության խորքերում և ինքն իրեն անգամ չի խոստովանում դա:

Շատերիդ համար դա միանգամայն զգալի է: Վերհիշե՛ք, թե ինչ անվստահություն են առաջացնում ձեր մեջ մարդիկ, որոնք գովերգում են իրենք իրենց, խոսում սեփական մաքրության ու հոգևոր հարստության մասին:

Ձեր անվստահության պատճառն այն է, որ դուք կարդում եք այդ մարդկանց ոչ թե բառերը, այլ էներգետիկան, իսկ նրանց թրթիռները, որպես կանոն, շատ ցածր են և բոլորովին չեն համապատասխանում իրենց մասին պատմածին:

Այդպես է դրսևորվում հենց այն [«հոգևոր գոռոզությունը»](#) («духовная гордыня»), որի մասին արդեն խոսել եմ իմ ուղերձներից մեկում:

Մակայն նման մարդիկ չեն գիտակցում դա, քանի որ այդպես են վարվում ոչ չարությունից կամ ձեզ խաբելու ցանկությունից դրդված:

Իրականում նրանց դրդողը ՎԱԽՆ է իր բոլոր դրսևորումներով. չլինի թե երևան թույլ, վատ, ոչ հոգևոր. . .

Այդպիսի մարդն ակամա թաքնվում է իր իսկ ստեղծած գեղեցիկ կերպարի հետևում, որին նա երագում է համապատասխանել:

Բայց դրան իսկապես հասնելու համար հարկավոր են ոչ թե գեղեցիկ խոսքեր ու ինքնահիացում, այլ անդադրում աշխատանք, որը պիտի չերևա շրջապատողներին, որպեսզի նրանք չներարկեն այնտեղ իրենց էներգիաները:

Այդ աշխատանքը պիտի արվի լռության և մենության մեջ:

Սեփական ենթագիտակցության «նկուղները փորփրելն» ամենօրյա տաժանելի աշխատանք է:

Դուք անկարող եք մեկ օրում, անգամ մեկ տարում ազատվել եռաչափ աշխարհի ողջ «աղբից», որ կուտակվել է այդ «նկուղներում» դար ու դարեր:

Հետզհետե նստելով այնտեղ, այդ «աղբը» բառացիորեն մամլվել է:

Հենց դա էլ այն փակոցներն են (блочки), որոնք ապականում են ձեր նուրբ մարմինները և աղբով լցնում ձեր գիտակցությունը:

Եվ հիմա ժամանակն է ցրիվ տալու բոլոր այդ «կուտակները»՝ լույս աշխարհի հանելու ձեր բոլոր վախերը և արդեն ընդմիջտ ազատվելու դրանցից:

Մենք կանենք դա աստիճանաբար, այնպես որ «փշուր» իսկ չմնա դրանցից, որը կարող է կրկին դեպի իրեն առձգել ձեր հաղթահարած զգացմունքները:

ԵՆԹԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՎԱԽԵՐ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 24 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 Թ.

36

Եվ այսպես, անցնում ենք ձեր գիտակցության և իր արտացոլանքի՝ ձեր մարմինների մեջ եղած եռաչափ աշխարհի փակոցներից (блочки) ձերբազատվելու նոր փուլին:

Ինչպես արդեն ասել եմ [իմ նախորդ ուղերձում](#), ձեզնից շատերը բավարարվել են սուկ «կոսմետիկ նորոգումով», չկարողանալով հասնել «նկուղներին»՝ ենթագիտակցությանը:

Եվ հիմա մենք պիտի աշխատենք հենց նրա հետ. մենք կբացենք խորքային շերտերը, որոնցում ներդրված են երկվության աշխարհի ծրագրերը, որոնք դարեր շարունակ կառավարել են ձեր գիտակցությունը:

Ինչպես գիտեք, բացասական էներգիաների հիմնական աղբյուրը ՎԱԽՆ է՝ իր բոլոր դրսևորումներով:

Այն հիրավի բազմադեմ է, քանզի ներկա է նաև այնպիսի զգացմունքների մեջ, որոնք առաջին հայացքից անմեղ են թվում:

Այն քամելեռնի նման փոխում է իր գույնը՝ իրավիճակից կախված:

Եվ հիմա մենք կդիտարկենք մարդու վրա գործած նրա ազդեցության մեխանիզմը:

Դիցուք, դուք պետք է անեք ոչ այնքան հաճելի մի գործ, որ երկար ժամանակ հետաձգել եք: Եվ մեղավորը ձեր վախն է՝ կապված նախորդ անհաջող փորձի հետ:

Այդ վախն արդեն տպավորվել է ձեր ենթագիտակցության մեջ որպես վարքագծային ծրագիր:

Դուք կանխահայտորեն սպասում եք այն մարդկանց «հարձակումներին», որոնց հետ պիտի գործ ունենաք,- նրանց կողմից այնպիսի էներգիաների դրսևորման, ինչպիսիք են ագրեսիան, անըմբռնողությունը, ձեր արժանապատվության նվաստացումը. . .

Եվ գնում եք նրանց հետ հանդիպելու բռնիս բուն իմաստով կծկված:

Ի՞նչ է տեղի ունենում այդ պահին ձեր գիտակցության և մարմնի հետ:

Նրանցում «վառվում է կարմիր լույսը»՝ «Վտա՛նգ», ինչի հետևանքով արգելափակվում են ձեր էներգետիկական հոսքերը: ՎԱԽԸ խեղդում է դրանք:

Ու քանի որ արտաքինը միշտ անդրադարձնում է ներքին վիճակը, ձեր անհաջող փորձը կրկնվում է նորից ու նորից:

Նշանակում է՝ այդ փակոցը,- որոշակի ծրագիրը,- նույնպես ներաճում է ձեր ենթագիտակցության մեջ, վերածվելով այնպիսի պինդ կծիկի, որն արդեն մեկ անգամից չի տարրալուծի նույնիսկ Սիրո նման ամենագոր էներգիան:

Ավելին, այն վերջնականապես տարրալուծել ձեզ չի հաջողվի այնքան ժամանակ, քանի դեռ չեք տարրալուծել նրա հետ կապված ծրագիրը, որն արդեն ամրակայվել է ձեր ենթագիտակցության մեջ:

Այլապես ամեն անգամ համանման իրավիճակներում այդ փակոցները կրկին ու կրկին զգացնել կտան իրենց:

Ի՞նչ վախեր են առավել հաճախ պաշարում մարդուն:

Ամենից առաջ, իհարկե, սեփական կյանքի և մերձավորների կյանքի համար ունեցած վախը:

Մակայն գոյություն ունեն նաև բազմաթիվ գուտ «կենցաղային» վախեր. օրինակ՝ տարատեսակ թղթերի ու փաստաթղթերի ձևակերպումը, վախը ղեկավարության, պաշտոնական իշխանությունների, համազգեստավորների հանդեպ, նոր ծանոթությունների, բնակության վայրի կամ աշխատանքի փոփոխության երկյուղը, խաբված լինելու, հիմար, ծիծաղելի, անլուրջ երևալու վախը և անգամ մանրուքներում ոչ ճիշտ ընտրություն կատարելու վախը. . .

Մի խոսքով, վախի այնքան տեսակներ կան, որ պարզապես անհնարին է բոլորը թվարկել:

Բայց կարևորը, գավակնե՛րս, որ **ԲԱՑԱՀԱՅՏԵՔ ՁԵՐ ՄԵՋ ԵՂԱԾ ԲՈԼՈՐ ՏԵՄԱԿԻ ՎԱԽԵՐԸ**, երբեմն՝ անտեսանելի և ենթագիտակցության խորքերում թաքնված:

Եվ թող դա դառնա ձեր տնային աշխատանքը:

Անպայման գրի՛ առեք այն ամենը, ինչ կհաջողվի պեղել ձեր մեջ, որպեսզի հետո, առանց շտապելու, պլանաչափորեն աշխատեք ձեր փակոցների հետ այնքան ժամանակ, մինչև որ սրբեք ու դուրս հանեք ձեր «նկուղից»՝ ենթագիտակցությունից, ձեր բոլոր վախերը ընդհուպ ամենավերջին «փշուրը»:

ՎԱԽ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՆԴԵՊ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 25 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 Թ.

Եվ այսպես, անցնենք ձեր գիտակցությունից և բոլոր նուրբ մարմիններից եռաչափ աշխարհի ծրագրերը հանելու գործնական

աշխատանքին, որոնք ձևավորում են փակոցներ՝ թույլ չտալով ձեզ լիովին ազատագրվել երկվության իշխանությունից:

Եթե արել եք տնային աշխատանքը, որ առաջարկել էի [իմ նախորդ ուղերձում](#), ուրեմն կարող եք սկսել աշխատել ձեր այն ՎԱԽԻ հետ, որը հենց ինքներդ կսահմանեք իբրև հիմնական:

Բոլոր վախերի հետ աշխատանքի սկզբունքը նույնն է, բայց սկսելու համար վերցնենք նրանցից մեկը, որպեսզի ընդհանուր մեթոդիկա մշակենք նրա վրա:

Եկեք դիտարկենք ամենատարածված վախերից մեկը՝ **վախը ապագայի հանդեպ կամ, այլ կերպ ասած, անհայտության վախը:**

Ինչու՞ է այն այդպես խոր նստած ձեր ենթագիտակցության մեջ:

Նախ և առաջ այն պատճառով, որ դարեր շարունակ իշխանավորները, կրոնը, ազգային ավանդույթները ձգտել են որոշակի շրջանակների մեջ խցկել մարդկանց, որ հեշտ լինի նրանց կառավարել՝ վերահսկել բոլոր մտքերը, զգացմունքները, արարքները, իսկ ընդհանրապես՝ որ մարդու մեջ սպանեն ազատասիրությունը, հետևաբար և՛ անկանխատեսելիությունը:

Իսկ ով դուրս էր պրծնում ամբոխից, դառնում էր վտարյալ, արժանանալով հասարակության դատապարտությանն ու արհամարհանքին:

Արհեստականորեն պարտադրվող արժեքների այդ համակարգն այսօր էլ ծաղկում է ապրում, թեև դարերի ընթացքում «արժեքներն», ինչ խոսք, փոխվել են:

Մակայն մարդկանց գիտակցությունը կառավարելու գլխավոր սկզբունքը մնացել է անփոփոխ. կյանքային հայացքների համասեռություն և մտածողության միակերպություն, որ թույլ է տալիս աշխարհիս ուժեղներին հաջողությամբ ձեռնածել (манипулировать) մարդկանց:

Իսկ քանի որ ներկայումս նրանց ձեռքում են զանգվածային գրեթե բոլոր լրատվամիջոցները, իրենց ձեռնարկներն էլ հաջողությամբ են պսակվում:

Բայց վերադառնանք ապագայի վախին: Ինչու՞ եմ ես մանրամասնորեն նկարագրում մարդկանց գիտակցության կառավարման մեխանիզմը:

Բանն այն է, որ հենց վերնից՝ դրսից է ձեզ պարտադրվել այն միտքը, թե ձեր կյանքը դուք պետք է ապրեք ձեր նեղ, սահմանափակ աշխարհում, չնայելով շուրջբոլորը, այլ միայն հոգ տանելով հնարավորինս շատ փող վաստակելու, հնարավորինս լավ տունուտեղ դնելու, ԲՈԼՈՐԻ ՆՄԱՆ ապրելու մասին:

Իդեալական գոյությունը դարեր ի վեր համարվել է կուշտ ու բարեկեցիկ կյանքը:

Եվ հետզհետե այդպիսի կայունությանն սպառնացող ամեն բան սկսել է ընկալվել մարդու կողմից որպես վտանգ, որն էլ ծնունդ է տալիս ունեցածը կորցնելու խուճապային վախին:

Լոկ հազվագյուտ քաջերի է հաջողվել դուրս պրծնել սովորական աշխարհից, ջարդել հաստատված կարծրատիպերը և անվեհեր ելնել ազատ նավարկության՝ սկսել ինչ-որ նոր ու անհայտ մի գործ, հավատալով, որ այն հաջողություն կբերի և նոր հորիզոններ կբացի իրենց կյանքում:

Իսկ դրա համարձակությունը կարող էին ունենալ միայն նրանք, ովքեր բոլորովին չէին վախենում անհայտությունից:

Մակայն այդպիսի մարդիկ շատ չէին Երկրի վրա, ինչպես որ շատ չեն ներկայումս:

Այդ իսկ պատճառով իմ հաջորդ ուղերձում ես կպատմեմ, թե ինչպես կարելի է բացել փակոցները ձեր մեջ խորապես արմատավորված, ամրապինդ կծիկի վերածված վախի, որ ունեք ապագայի հանդեպ, քանզի տեսնում եմ, որ նույնիսկ նրանք, որոնց հոգիներն ընտրել են

Համբարձումը, տակավին այդ վախի իշխանության տակ են, որից դեռևս ի գործու չեն իսպառ ազատվելու:

ՁԵՐԲԱԶԱՏՈՒՄ ՎԱԽԻՑ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐԶԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐԶԸ, 26 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 Թ.

Եվ այսպես, [շարունակենք մեր գրույցը](#), թե ինչպես կարելի է ազատվել ապագայի հանդեպ ունեցած վախից:

Քանի որ ձեր ստացած բոլոր տեսական գիտելիքներն այդպես էլ չտվեցին սպասված արդյունքը, և դուք խոստովանում եք ինքներդ ձեզ, որ այդ վախը տակավին ապրում է ձեր մեջ, ուրեմն անհրաժեշտ է անցնել պրակտիկաներին, որոնք կօգնեն լույս աշխարհի հանել նրան ձեր ենթագիտակցության խորքերից:

Դրա համար հարկավոր կլինի անել հետևյալ մեղիտացիան, որը կանվանենք «Ձերբազատում վախից»:

Կանչե՛ք ձեր բոլոր Երկնային օգնականներին և հզոր էներգետիկական պաշտպանություն՝ ստեղծեք, չմոռանալով, որ վախի էներգիայով սնվում են ստորին աստրալի էությունները, որոնց դուք պատրաստվում եք զրկել իրենց «ամենահամեղ պատառից»:

Մտե՛ք մեղիտատիվ վիճակի մեջ, թուլացե՛ք, խո՛ր շնչեք. . .

Իսկ հետո ինքներդ ձեզ պատկերացրե՛ք հոյակերտ մի դրյակի տեսքով, մաքրափայլ, արևի տակ երփներանգվող, ինչպես լեռնային բյուրեղ. . .

Դա ձեր գիտակցությունն է, որն արդեն ելել է չորրորդ, անգամ հինգերորդ չափման մակարդակին:

Սակայն ձեր «դոյակի» խոր նկուղում թաքնված է մի հրեշ, որի անունն է ՎԱԽ:

Նա ունի բազմաթիվ օգնականներ՝ աստրալ էությունները, որոնք վաղուց ի վեր համաձայնության են եկել այդ հրեշի հետ և սնուցում են նրան «ուժով»՝ ամենանսեմ թրթռանքի էներգիայով:

Նրանք միասին մշակում են նենգ ծրագրեր՝ քանդել ձեր հրաշք «դոյակը», ավերակ դարձնել այն՝ թույլ չտալով տեղափոխվել Հինգերորդ չափում:

Ջանացե՛ք տեսնել այդ հրեշին իր ողջ «գեղեցկությամբ»:

Եվ հենց որ տեսնեք նրան, կրնկի վրա բացե՛ք նկուղի դռները:

Բաց դռներից ներս կխուժի արեգակի վառ, կուրացուցիչ լույսը՝ Սիրո Աստվածային էներգիան, որը կճառագեք հենց դուք, զավակնե՛րս, ձեր սրտի չակրայից, ակտիվացնելով ձեր Սիրո Բյուրեղը:

Եվ համայն Տիեզերքի այդ ամենահզոր էներգիան «դուրս կմղի» աստրալ էությունների սնած-մեծացրած ահռելի Հրեշին իր ապաստանից, որտեղ թաքնվել էր այդքան դարեր, թունավորելով ձեր գոյությունը, մաշելով ձեր Հոգին վախով, թե կկորցնեք այն, ինչ ունեք՝ սիրելիներին, ունեցվածքը, հասարակական դիրքը, հոգեկան անդորրը. . .

Իսկ երբ ձեր ՎԱԽԸ լույս աշխարհ ելնի, սրտա՛նց շնորհակալություն հայտնեք նրան երկվության աշխարհում ձեռք բերած ձեր բացառիկ փորձառության համար, որով անցել եք նրա շնորհիվ շատ ու շատ մարմնավորումների ընթացքում:

Ջերմորեն հրաժեշտ տվեք նրան և բացեք նրա համար Լույսի Պորտալ, առաջարկելով ընդմիջտ հեռանալ:

Դուք կտեսնեք, թե ինչպես ձեր Վախը կսկսի դանդաղ բարձրանալ, կմտնի Պորտալից ներս և ձեր աչքի առաջ կլուծվի նրա մեջ:

Այնտեղ նա կփոխակերպվի Սիրո Աստվածային էներգիայի և այնուհետև, արդեն այդ վիճակում, կվերադառնա Երկիր:

Այդպես, զավակներս, դուք կարող եք աշխատել ձեր բոլոր վախերի հետ, պատկերացնելով, որ նրանցից ամեն մեկը թաքնվում է իր առանձին «նկուղում»:

Մի՛ շտապեք: Աշխատե՛ք աստիճանաբար, որպեսզի ոչ մի մութ «խցիկ» բաց չթողնեք:

Իսկ երբ մաքրեք ձեր բոլոր «նկուղները» անկոչ «հյուրերից», անսովոր թեթևություն կզգաք ձեր Հոգում, որովհետև ձեր «դրյակն» ամբողջությամբ բաղկացած կլինի ՄԻՄԻԱՅՆ Լույսից և Սիրուց. նրանում այլևս չի մնա ոչ մի մութ անկյուն, ոչ մի «աղբի ծեղ» . . .

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի:

ՎԱԽԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԼԱՆՈՒՄ

ԲԱՑԱՐԶԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐԶԸ, 27 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 Թ.

43

Այսօր մենք կխոսենք այն մասին, թե ինչպես են անդրադառնում ձեր ենթագիտակցության մեջ ապրող վախերը ձեր ֆիզիկական դրության վրա:

Դա բավականին բարդ պրոցես է, որովհետև բացասական հույզերի ծնունդ տված փակոցները (блочки) ֆիզիկական պլան են իջնում աստիճանաբար, անցնելով ձեր բոլոր նուրբ մարմինների միջով:

Եվ այդ պրոցեսի արագությունը կախված է նրանից, թե որքան սաստիկ ու ցավազին են եղել ձեր զգացմունքները:

Այսպես, օրինակ, «այրող» վիրավորանքը կարող է շատ արագ ի հայտ գալ ֆիզիկական պլանում, և մարդը բառիս բուն իմաստով «կվառվի» չարորակ ուռուցքներից՝ փակոցներից, որոնք, «տարանցումով» թափանցելով նուրբ մարմինների միջով, նյութականանում են ձեր այս կամ այն օրգանում, երբեմն էլ բոլոր օրգաններում միանգամից:

Սակայն վախի էներգիան տարբերվում է նրանով, որ աննկատելիորեն, ասես գաղտագողի է մոտենում մարդուն:

Եվ ահա թե ինչպես է դա լինում:

Վերհիշե՛ք հետևյալ արտահայտությունները՝ «նա սարսափից ամբողջովին կծկվեց», «վախից քարացավ», «վախը կաթվածահար արեց նրան»:

Այս արտահայտությունները իմաստային մեծ լիցք են կրում:

Նուրբ պլանում դա երևում է այնպես, ասես մարդը կուչ է գալիս, այսինքն՝ ձեր մարմնի բջիջների հեռավորությունը կտրուկ կրճատվում է, և կենսական էներգիան չի կարողանում ազատ շրջանառել օրգանիզմում:

Մահացու վտանգի պահերին դա կատարվում է ակնթարթորեն, բայց երբ վտանգն անցնում է, ձեր օրգանիզմը կրկին թուլանում է, և ադրենալինի նման ուժգին արտազատումը, որ տեղի է ունենում սթրեսային իրավիճակում, կարող է նույնիսկ օգտակար լինել, յուրատեսակ հակաթույն մշակելով մահացու վտանգի դեմ:

Սակայն «կենցաղային» անտեսանելի վախերը շատ ավելի վտանգավոր են ձեզ համար, քանզի ներարկվում են ձեր նուրբ մարմինների մեջ աստիճանաբար, վախի այս կամ այն տեսակը պարունակող ամեն նոր մտքի կամ հույզի հետ, ավելի ու ավելի խոր թափանցելով ձեր նուրբ մարմինների մեջ, մինչև որ դրսևորվում են ֆիզիկական պլանում տարատեսակ հիվանդությունների տեսքով:

Ողնաշարի, հոդերի, անոթների հիվանդությունները բոլորը հետևանք են ձեր մարմնի աստիճանական «կծկման», ինչը հանգեցնում է նյարդային վերջավորությունների սեղմման՝ երբեմն առաջ բերելով սաստիկ ցավեր:

Որպես կանոն, այդ հիվանդությունները հրահրվում են ունեցածը կորցնելու վախով. մարդու ներսում ամեն ինչ «սեղմվում է» միայն այն մտքից, թե իրենից կհեռանա սիրելին կամ կկորցնի ձեռնտու աշխատանքը, կզրկվի դժվարությամբ կուտակած ունեցվածքից. . .

Հաճախ ապագայի հանդեպ ունեցած վախը հարուցում է նաև ավելի լուրջ հիվանդություններ, նույնիսկ հոգեբանական բնույթի:

Այս ամենը ակնհայտորեն ցույց է տալիս, որ հենց գիտակցությունն է կառավարում մարդուն. որ իր ողջ կյանքը և անգամ մարմինը նա կառուցում է մտքի ուժով:

Կան բազմաթիվ օրինակներ, որ հանգիստ, ներդաշնակ մարդիկ, որոնք չեն մտատանջվում ապագայի համար, ապրում են երկար և երջանիկ, չտառապելով ոչ մի հիվանդությամբ, իսկ երիտասարդները՝ զանազան վախերով պաշարված, ձեռք են բերում հիվանդությունների ամբողջ փնջեր, որոնք տարեցտարի սուկ ավելի են խորանում:

Նախքան ֆիզիկական պլանում հայտնվելը, հիվանդությունն անցնում է իր «էվոլյուցիայի» հետևյալ փուլերով:

Նախ՝ մարդու ատմայական մարմնում ձևավորվում է փակոց որպես Աստծու ժխտում, այնուհետև այն թանձրանում է բուդիիական մարմնում որպես անվստահություն ինքն իր նկատմամբ:

Կաուզալ մարմնում արտացոլվում է Տիեզերքի Օրենքներով ապրելու մարդու անկարողությամբ, այսինքն՝ այդ Օրենքների մշտական խախտումով:

Մտային (մենտալ) մարմնում դրսևորվում է սեփական մտքերը կառավարելու անզորությամբ, իսկ զգացմունքային (աստրալ) մարմնում՝ մարդու կրքոտ ցանկությամբ՝ ամեն զնով պահելու այն, ինչ ունի:

Մինչև եթերային մարմնին հասնելը այդ փակոցը ծայրաստիճան խտանում է, գոցելով էներգետիկական կապուղիների ազատ հոսքը, և ֆիզիկական պլանում արդեն ազդում է մարդու մկանների, ոսկորների, արյունատար համակարգի, նյարդային վերջավորությունների վրա. . .

Եվ հիմա, զավակներս, ժամանակն է բաց թողնելու ձեր բոլոր մարմնական և հոգեկան հիվանդությունները, վերացնելով դրանց սկզբնապատճառը, այսինքն՝ սկիզբ դնելու հակառակ պրոցեսին՝ ձեր

բոլոր փակոցների ապաթանձրացմանը, մինչև որ դրանք իսպառ
անհետանան:

ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 28 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 Թ.

Շուտով մենք ձեռնամուխ կլինենք ձեր բազմաթիվ հիվանդությունների
պատճառ դարձած փակոցների ապաթանձրացման գործնական
աշխատանքին:

Ես ելնում եմ նրանից, որ իմ ուղերձների ընթերցողները բոլորն էլ
հրաշալի հասկանում են, որ անհնար է բուժվել՝ չազատվելով
հիվանդության իսկական պատճառներից՝ մտային և զգացմունքային,
որոնք դաջվում են ձեր նուրբ մարմինների մեջ:

Այլ կերպ ասած, ապաքինում տեղի կունենա լոկ այն դեպքում, եթե
աշխատեք ձեր գիտակցության և ֆիզիկական մարմնի հետ
միաժամանակ:

Դուք պետք է վերածրագրավորեք ձեր գիտակցությունը ձեր նոր
Աստվածային գիտելիքների նկատառումով և այնուհետև էներգապես
ներգործեք ձեր փակոցների վրա, որոնք կրում են իրենց մեջ եռաչափ
աշխարհի ավերիչ ծրագրեր:

Ձեր հիվանդությունների իսկական պատճառները հայտնաբերելու
համար դուք կարող եք օգտվել պսիխոսոմատիկական
հիվանդությունների պատրաստի աղյուսակներից որևէ մեկից կամ,
եթե արդեն կապ եք հաստատել ձեր Բարձրագույն Եսի հետ, խնդրել
նրան ասելու այդ պատճառները և խորհուրդ տալու, թե ինչպես կարող
եք ազատվել դրանցից:

Շատ հաճախ պատրաստի աղյուսակներում տրվում են մտքերի և համոզմունքների վերածրագրավորման առանցքային ձևակերպումներ, սակայն առավել արժեքավոր կլինի պատասխան ստանալ սեփական Բարձրագույն Եսից կամ Երկնային հովանավորներից, քանզի ընդհանուր հանձնարարականները, այնուամենայնիվ, չեն կարող ընդգրկել ֆիզիկական պլանում հիվանդություններ ծնող մարդկային հույզերի ողջ սպեկտրն ու բազմազանությունը:

Իհարկե, սիրելիներս, անկարելի է միանգամից վերացնել վարքային ծրագրերը, որոնք դարերով ներդրվել ու ամրակայվել են ձեր մեջ:

Այդ իսկ պատճառով հարկավոր է զինվել համբերությամբ և ջանալ ամեն օր թեկուզ մեկ փոքրիկ քայլ անել դեպի առաջ՝ ազատվելով կաշուն մտքերից և վերահսկելով սեփական զգացմունքները:

Ակներևության համար վերցնենք այսպիսի մի օրինակ:

Դուք ունեք բարձր վարձատրվող լավ աշխատանք, որը ձեր սրտով է, սակայն վախենում եք այն կորցնել, որովհետև տեսնում եք, որ շատերին հեռացնում են առանց որևիցե բացատրության:

Դուք զգում եք, որ վախն արդեն բույն է դրել ձեր սրտում:

Ինչպե՞ս կպահի տվյալ դեպքում իրեն եռաչափ աշխարհի մարդը:

Ամենայն հավանականությամբ, կսկսի քննարկել գործընկերների և ընկերների հետ, կփնտրի փաստարկներ ի հաստատումն նրա, որ իրեն նույնպես կարող է հեռացում սպառնալ, այդպիսով սնուցելով իրավիճակը բացասական զգացմունքներով և, հետևաբար, մոտեցնելով այդ պահը:

Եվ քանի որ Անդրադարձման օրենքը գործում է անկասելիորեն, նրա վախերը, «արտազեղվելով», երևան կգան ֆիզիկական պլանում, և նա իսկապես կկորցնի աշխատանքը:

Իսկ ինչպե՞ս կպահի իրեն Տիեզերքի Օրենքները հարգող մարդը:

Ամեն օր շնորհակալ կլինի ճակատագրին և Բարձրագույն Ուժերին իր հրաշալի աշխատանքի համար՝ մտքի ծայրով անգամ չանցկացնելով, որ կարող է այն կորցնել:

Միրո էներգիայով կպարարի իր արած գործը, շռայլորեն կխսելով այն գործընկերների և ղեկավարության հետ:

Նա ուրախություն կճառագի և բոլորին կվարակի իր խանդավառությամբ ու հրաշալի տրամադրությամբ:

Եվ այդ պարագայում նա ոչ միայն չի կորցնի աշխատանքը, այլև կստանա նոր, է՛լ ավելի հետաքրքիր պաշտոն, որովհետև բոլորը կզգան նրա ներքին ուժը, նրա մեծ, չմսխված պոտենցիալը:

Այստեղ էլ կգործի Անդրադարձման օրենքը, բայց «դրական նշանով»:

Այդ պատճառով, զավակնե՛րս, հայտնաբերելով ձեր բոլոր վախերը՝ չերկյուղե՛ք լույս աշխարհի հանել դրանք և «վերաձուլել» Միրո և կենսահաստատ վստահության:

Ձեր ողջ էներգիան՝ բոլոր մտքերն ու զգացմունքները, տարե՛ք ստեղծարար հունով. բացահայտե՛ք ձեր ստեղծագործական ներուժը՝ կասկածի նշույլ անգամ չունենալով հաջողության վերաբերյալ և թույլ չտալով, որ ուրիշներն էլ կասկածեն:

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի:

ՓԱԿՈՑՆԵՐԻ ՏԱՐԲԱԼՈՒԾՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 6 ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 2018 Թ.

Եվ այսպես, անցնում ենք թյուր համոզմունքների և արտաքուստ պարտադրված վարքային ծրագրերի հետևանքով ձեր նուրբ

մարմիններում գոյացած փակոցների (блочки) ապաթանձրացման աշխատանքի գործնական մասին:

Հենց որ հստակ որոշեք ձեր հիվանդության պատճառը և վերածրագրավորեք ձեր գիտակցությունը՝ ստեղծելով ճիշտ մտածն (мыслетформа) ու նոր համոզմունք, պետք է այնուհետև ֆիզիկական պլանում վերացնեք ձեր նախկին ավերիչ մտքերի և զգացմունքների հետևանքները:

Դրա համար հարկավոր է զգալ, թե հատկապես որտեղ է գտնվում հիվանդության պատճառ դարձած փակոցը, և սկսել աստիճանաբար տարրալուծել այն:

Եթե հիվանդությունը վաղուցվա է, այդ փակոցն արդեն ֆիզիկական մարմնում կլինի, և դուք առանց դժվարության կզգաք նրա տեղադրությունը:

Իսկ եթե հիվանդությունն իր սկզբնական փուլում է, դուք այն կզգաք ավելի շուտ եթերային մարմնի մեջ:

Այդ պարագայում զգացողությունների տարբերությունն աննշան կլինի. ֆիզիկական պլանում այն կլինի փոքր-ինչ ավելի թանձր, քան եթերայինում:

Ոմանց մոտ էլ հիվանդությունը կարող է դեռևս սաղմնային վիճակում լինել, և փակոցը հասցրած չի լինի ձևավորվել այն աստիճան, որ կարողանաք զգալ:

Եվ հենց պրոֆիլակտիկայի նպատակով, որպեսզի թույլ չտրվի հիվանդություններին իջնել ֆիզիկական պլան, ես տվել եմ [ձեր ենթագիտակցությունը վախի բոլոր տեսակներից ազատելու պրակտիկան](#), որովհետև վախն է մարդու բոլոր հիվանդությունների հիմքում:

Սակայն վերադառնանք այն հիվանդություններին, որոնք արդեն ի հայտ են եկել ձեզ մոտ և որոնցից հարկ է հնարավորինս շուտ ազատվել:

Որոշելով փակոցի՝ ձեր ցավերի աղբյուրի տեղադրությունը, հարկավոր է էներգետիկական շփում (կոնտակտ) ստեղծել նրա հետ:

Որպես կանոն, փակոցը «ծանր», բացասական էներգիայի թանձրուկ է, որը դուք պիտի փոխակերպեք բոլորովին այլ էներգիայի՝ «թեթև», շողշողուն, Աստվածային:

Պարզության համար վերցնենք այսպիսի օրինակ:

Ենթադրենք՝ դուք գոտկատեղի ցավ զգացիք: Ամենից հաճախ դրա պատճառը նյարդային վերջավորությունների սեղմումն է լինում, որը հրահրվել է ինչ-որ բացասական զգացմունքների արտանետումով, որոնց մասին դուք նույնիսկ հաշիվ չեք տալիս ձեզ:

Բայց հիմա մենք ամեն ինչին պիտի գիտակցորեն մոտենանք, այնպես չէ՞, զավակնե՛րս:

Դրա համար, առաջին բանը, որ հարկավոր է անել, հետևյալն է. կանչելով ձեր բոլոր Երկնային օգնականներին, նստե՛ք մեղիտացիայի, թուլացե՛ք և խնդրե՛ք ձեր Բարձրագույն Եսին ցույց տալ հիվանդության պատճառը:

Եվ այստեղ անչափ կարևոր է լիովին անջատել միտքը՝ խոսքը տալով Հոգուն, որն օբյեկտիվորեն և անաչառ կերպով ցույց կտա ձեր վրիպումը, որը հանգեցրել է որոշակի հետևանքների ֆիզիկական պլանում:

Նորի՛ց խաղարկեք այն իրավիճակը, որը բերել է նման ցավալի հետևանքների, առաջնորդվե՛ք Տիեզերքի Օրենքներով, այլ ոչ թե մտքերով ու զգացմունքներով, որ կթելադրի ձեր Էգոն, և չմոռանա՛ք հավելել այս արտահայտությունը՝ «Ի բարձրագույն բարօրություն բոլորի»:

Եվ միայն դրանից հետո ջանացե՛ք ձեր գիտակցությամբ թափանցել ֆիզիկական պլանում ձևավորված փակոցի մեջ:

Դուք նույնիսկ կարող եք տեսնել նրա ձևը, գույնն ու ֆակտուրան. . .

Կանչե՛ք Լույսի և Սիրո էներգիան և սկսե՛ք պարարել փակոցը այդ Աստվածային էներգիայով. . .

Հետևե՛ք, թե ինչպես է այն աստիճանաբար փոխվում. մութ ու այլանդակ թանձրուկը վերածվում է ձեր հիվանդությունը բժշկող պայծառ, ոսկեճաճանչ բյուրեղի. . .

Եթե ճիշտ անեք ամեն բան, ցավը կսկսի մեղմանալ, մինչև որ լրիվ անցնի՝ լուծվելով Սիրո բուժիչ էներգիայի մեջ:

Մի՛ տխրեք, զավակնե՛րս, եթե միանգամից չհաջողվի:

Ձեր հիվանդությունների հետ աշխատե՛ք հանգիստ ու անշտապ, սեփական ուժերի նկատմամբ անվերապահ հավատով տոգորված:

Մի՛ շտ հիշեք, որ դուք Արարիչն եք ձեր իրականության, որի բաղադրիչներից է նաև ձեր Աստվածային մարմինը:

ՈՍԿԵ ՄԵՂՐԱԲՋԻՋՆԵՐ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 7 ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 2018 Թ.

51

Այսօր մենք կամփոփենք իմ նախորդ ուղերձներում ասվածը, որպեսզի դրանց հիմնական էությունը չվրիպի ձեր ուշադրությունից:

Ինչպես գիտեք, ՎԱԽԸ ձեր ենթագիտակցության մեջ ներմուծված բոլոր բացասական ծրագրերի հիմնական աղբյուրն է:

Հենց նա է հրահրում այնպիսի էներգիաների հզոր արտանետումներ, ինչպես զայրույթը, ագրեսիան, նախանձը, ատելությունը, խանդը, ազահությունը և շատ ու շատ այլ բացասական զգացմունքներ:

Եվ դրանք բոլորը նստում են ձեր նուրբ մարմինների որոշակի «բջիջներում»՝ յուրօրինակ մանրաչափ էզրեգորներում, որոնք անտեսանելի էներգետիկական թելերով կապված են Երկրի համապատասխան էզրեգորների, ինչպես նաև էներգիայի այդ տեսակներով սնվող աստրալ էությունների հետ:

Երկրի հոծ և նուրբ պլանների այդ մշտական փոխազդեցությունը հանգեցնում է նրան, որ ձեր «բջիջների» էներգիաները հետզհետե լցվում են, ճիշտ ինչպես մեղրաբջիջները, և թանձրանում մինչև այն աստիճան, որ սկսում են արդեն նստվածք տալ ձեր եթերային և ֆիզիկական մարմիններում հիվանդաձին փակոցների տեսքով:

Բոլոր այդ կորստաբեր էներգիաների ներգործությունից ազատվելու համար դուք պետք է հոգևոր մեծ աշխատանք տանեք:

Եթե քանդեք բոլոր այդ էներգիաների ՀԻՄՔԸ՝ ՎԱԽԸ, անելով [«Ձերբազատում վախից»](#) մեդիտացիան, շատ ավելի հեշտ կլինի հաղթահարել նրա ածանցյալները:

Եթե համեմատենք մեղունների հետ, դեպի Լույսի Պորտալ սլացող «մայր-մեղվի»՝ **վախի** հետևից կձգվեն նաև մյուս «մեղունները»՝ տարատեսակ բացասական էներգիաները, որտեղ դրանք բոլորը կլուծվեն՝ այնուհետև փոխակերպվելով Սիրո էներգիայի:

Այդպես դրանք կդադարեն ձեր նուրբ մարմինների «բջիջները» օտարաձին էներգիաներով համալրելուց:

Ձեր բոլոր մարմինների մաքրման պրոցեսն արագացնելու համար ես այսօր կտամ ոչ դժվար մի պրակտիկա, որը պիտի անեք այնքան ժամանակ, մինչև որ զգաք ձեր լիակատար ձերբազատումը բոլոր տեսակների բացասական էներգիաներից:

Կանվանենք այն **«Ոսկե մեղրաբջիջներ»**:

Կանչելով ձեր բոլոր Երկնային օգնականներին և մտնելով մեդիտատիվ վիճակի մեջ, պատկերացրե՛ք ձեր բոլոր մարմինները՝ ֆիզիկականից մինչև ատմայական, մեղրահացի բջիջների տեսքով:

Դուք կարող եք տեսնել, որ դրանցից մի քանիսը լրիվ կամ մասնակիորեն պարունակում են մուժ, կեղտոտ, անախորժ գույների էներգիա:

Կանչե՛ք Լույսի և Սիրո Աստվածային էներգիան և խնդրե՛ք լցնել ձեր «մեղրաբջիջ»-մարմինները արևային-ոսկեգույն պսպրացող էներգիայով:

Թող այն տարրալուծի դրանց մեջ կուտակված բացասական էներգիաները՝ փոխակերպելով Սիրո էներգիայի:

Եվ հետևե՛ք, թե ինչպես են ձեր «բջիջները» լցվում «մեղրագույն ոսկով» . . .

Բայց այդ «ոսկին» չի ծանրացնում ձեր մարմինները, ընդհակառակը՝ դարձնում է թեթև ու անկշիռ, չէ՞ որ Սիրո էներգիան Տիեզերքի ամենանոսր էներգիան է:

Նա ունակ է պոկելու ձեզ Երկրից և տանելու այնտեղ, ուր միշտ ձգտել է ձեր Հոգին՝ Լույսի և Սիրո արքայություն, որտեղից դուք Երկիր եք եկել ինչ-որ ժամանակ, արիաբար ելնելով երկարուծիգ ճամփորդության երկվության աշխարհում՝ կրկին ու կրկին մարմնավորվելով այդտեղ:

Դուք կարող եք աշխատել, զավակնե՛րս, ինչպես ձեր բոլոր բացասական զգացմունքների հետ միանգամից, այնպես էլ յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին, ուշադիր ստուգելով ձեր բոլոր նուրբ մարմինները:

Դու՛րս եկեք մեղիտացիայից միայն այն ժամանակ, երբ կզգաք թեթևություն և եռաչափության «բեռից» լիովին ազատված լինելու վիճակ:

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի:

ԱՆՑՅԱԼԻ ԲԺՇԿՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 Թ.

Այսօր ես կուզեի ձեզ տալ ևս մեկ պրակտիկա ձեր նուրբ մարմինների ներդաշնակեցման համար, բայց շեշտը դնելով ձեր ֆիզիկական մարմնի հետ տարվելիք աշխատանքի վրա:

Այս անգամ մենք կմեկնենք հակառակ կողմից. տեղաշարժելով ժամանակային սանդղակը, կսկսենք ձեր ֆիզիկական մարմինը հիվանդություններից ազատելու պրոցեսը՝ գիտակցությամբ տեղափոխվելով էներգետիկական հարթության մեջ այս կամ այն անհավասարակշռության սկզբնավորման պահը:

Ի՞նչ պետք է անել դրա համար:

Նախ և առաջ որոշել ձեր հիվանդության պսիխոսոմատիկական պատճառները և հետո արդեն սկսել այն զգացմունքների վերածրագրավորման աշխատանքը, որոնք սկզբնավորել են ձեր մարմնի այս կամ այն օրգանի կամ կենսապահովման ողջ համակարգի դեգրադացման պրոցեսը:

Եկե՛ք տեսնենք դա կոնկրետ օրինակով:

Ենթադրենք՝ ինչ-որ մեկը տառապում է ասթմայով: Սրա հիմքում հաճախ ընկած է վախը և ինչ-որ իրավիճակի չընդունելը այն աստիճանի, որ շնչելը դժվար է լինում:

Շատ հաճախ նման պատճառները թաքնված են մանկության մեջ:

Դրա համար էլ կարևոր է գիտակցությամբ վերադառնալ այն պահը, երբ ձեզ մոտ ի հայտ է եկել վախի և ինչ-որ բանի կամ մարդու չընդունելու զգացումը:

Իրականում հենց վախն է դառնում հիվանդությունների մեծ մասի պատճառը, որովհետև այն «նախահայրն» է բոլոր բացասական զգացմունքների, որոնք նրա տարատեսակներն են և կրում են իրենց մեջ նրա «մասնիկները»՝ տարբեր խտությամբ:

Եվ միայն դրանից հետո կարելի է սկսել մշակել «նրբերանգները»՝ վախի էներգիայից ածանցված բացասական զգացմունքները, որոնք հանգեցրել են ձեր հիվանդությանը:

Եվ ահա թե ինչ է իրենից ներկայացնում բուն մեղիտացիան, որը կանվանենք **«Անցյալի բժշկում»**:

Խորասուզվելով հիշողությունների մեջ և որոշելով կյանքի այն պահը, երբ սկիզբ է առել ձեր հիվանդությանը հանգեցնող էներգետիկական

պրոցեսը, դուք պետք է վերածրագրավորեք այդ զգացմունքը կյանքի և փորձառության ձեր այժմյան ըմբռնման նկատառումով:

Այժմ արդեն դուք կարող եք այլ հայացքով տեսնել անցյալ, ձեզ համար երբեմնի ցավոտ իրավիճակը, ինչպես նաև դրա մասնակիցներին:

Այժմ դուք կողմնակի դիտորդ եք, իմաստուն ու ուշադիր, ունակ տեսնելու այլոց և սեփական արարքների թաքուն պատճառները, հասկանալու և ընդունելու տվյալ իրավիճակը՝ ելնելով արդեն դրա բոլոր մասնակիցների պատճառա-հետևանքային և կարմայական կապերի բարձրագույն ըմբռնումից:

Այլ խոսքով, դուք արդեն ունակ եք վերածրագրավորելու ձեր բոլոր զգացմունքներն այնպես, որ դրանք չվնասեն ո՛չ ձեզ, ո՛չ էլ այն մարդկանց, որոնց հետ կապված եք եղել:

Արդյունքում ձեր այժմյան գիտակցությունը, ջնջելով ժամանակային շրջանակները, կհայտնվի այն երեխայի կամ երիտասարդի մարմնում, որը չէր կարողացել հաղթահարել իր զգացմունքները և այդպիսով իր նուրբ մարմինների մեջ արձակել էր էներգետիկական «նետեր», որոնք հետզհետե հասել էին ֆիզիկական հոծ մարմնին՝ խոցելով այն օրգանը, որն էներգապես կապված է տվյալ զգացմունքի հետ:

Եվ հիմա դուք պետք է սկիզբ դնեք հակառակ պրոցեսին:

Դրա համար հարկավոր է լարել ողջ երևակայությունը և վիզուալիզացնել հետևյալ պատկերը:

Դուք զգուշորեն հանում եք այդ «նետը» ձեր հիվանդ օրգանից և շատ կամաց դուրս եք բերում ձեր բոլոր վնասված մարմինների միջով՝ եթերային, աստրալ (զգացմունքային), մենտալ (մտային), կաուզալ, այսինքն մինչև հասնեք այն մարմնին, որի մեջ ծնվել է հիվանդության հանգեցնող բացասական զգացմունքը:

Բայց ձեր մարմինների միջով այդ «նետի» արդեն հակառակ ուղղությամբ անցնելու հետ միաժամանակ անհրաժեշտ է բուժել «վերքերը»՝ այդ մարմինների մեջ բացված անցքերը:

Եվ դրանում ձեզ կօգնի Պլազմայի Տիեզերական Էներգիան՝ բոլոր Աստվածային Էներգիաներից ամենագործունը մարդու նուրբ մարմինների հետ աշխատանքի մեջ:

Կանչե՛ք նրան և խնդրե՛ք միակցել ձեր բոլոր մարմինների՝ Ֆիզիկականը ներառյալ, վնասված հյուսվածքները:

Սպասե՛ք, մինչև որ հոսքը լիովին դադարի, և միայն հետո դուրս եկեք մեդիտացիայից:

Մի՛ ծուլացեք, զավակնե՛րս, և այդպես աշխատեք ձեր բոլոր հիվանդությունների հետ, ինչն անկասկած անգնահատելի օգնություն կլինի ձեր մարմինը լուսային բյուրեղայինի փոխակերպելու գործում:

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց Ձեզ հետ

ԳԼՈՒԽ III

ՍԵՓԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՍԵՓԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2. ՀԱՆԳԻՍՏ ԵՎ ՄԻԱ՛ՅՆ ՀԱՆԳԻՍՏ
3. ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՔՐՈՂ ՊՏՏԱՀՈՂՄԸ (ՊՐԱԿՏԻԿԱ)
4. . ԹՐԹԻՌԱՅԻՆ ՊԱՏ
5. ԹՐԹԻՌՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒՄ
6. ՉՀԱՏՎՈՂ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

III ԳԼՈՒԽ ՀԱՎԵԼՎԱԾ

1. ԱՆԳԻՏԱԿԻՑ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2. ՄԻՐՈ ԲՈԺՈԺ (ՊՐԱԿՏԻԿԱ)

3. ԻՆՔՆԱԲՈՒԽ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)
4. ՀԱԿԱԶԴԻՄԱՆ ԵՌԱԶԱՓ ԾՐԱԳՐԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)
5. ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ «ՄԿԱՎԱՌԱԿԸ» (ՊՐԱԿՏԻԿԱ)
6. ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԴՐԱԽՏ (ՊՐԱԿՏԻԿԱ)
7. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)
8. ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ «ՔԱՂՀԱՆ» (ՊՐԱԿՏԻԿԱ)
9. ԱՐՈՐՆԵՐ ՁՈՒԼԵՆՔ ՍՐԵՐԻՑ (ՊՐԱԿՏԻԿԱ)
10. ՍԻՐՈ ԲՅՈՒՐԵՂԻ ԾԻԱԾԱՆԸ (ՊՐԱԿՏԻԿԱ)

**ՍԵՓԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԵՎ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 22 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ:

Եվ այսպես, ազատվելով զանգվածային տեղեկատվության պաշտոնական միջոցներից ունեցած կախվածությունից, ինչպես նաև մաքրելով ձեր գիտակցությունն ու ենթագիտակցությունը վախի էներգիայից, դուք արդեն իսկ հսկայական թռիչք կգործեք ձեր հոգևոր զարգացման մեջ:

Եվ այժմ կարելի է անցնել մեր Պլանի երրորդ կետին, որն է՝ **ձեր նոր աշխարհայացքի և ձեր էներգետիկական տարածության պաշտպանությունը արտաքին ներգործությունից:**

Եթե նախկինում քաղաքագետները, լրագրողները, տարատեսակ ոլորտների «մասնագետներն» էին ձեզ տանում իրենց հետևից, այս կամ այն կերպ ազդելով ձեր գիտակցության վրա, ապա հիմա եկել է ժամանակը, որ ինքներդ ստանձնեք ձեր կյանքի պատասխանատվությունը:

Եվ այստեղ ձեզ սպասում է ևս մի փորձություն՝ ձեր մերձավոր շրջապատը՝ ծնողները, կանայք, ամուսինները, զավակները, բազմաթիվ ազգականները, ընկերները, ծանոթները, աշխատակիցները:

Որպես կանոն, հենց նրանք են դառնում Անցման ճանապարհին ծառացող գլխավոր խոչընդոտը այն մարդկանց համար, ովքեր իրենց գիտակցությամբ արդեն դուրս են եկել եռաչափ աշխարհի շրջանակից, որովհետև, շարունակ լինելով ձեր կողքին, նրանք հանդես են գալիս որպես մշտական գրգռիչ գործոն՝ յուրօրինակ ստուգման ենթարկելով ձեր նոր հայացքներն ու համոզմունքները:

Ձեզնից շատերն են բախվել դրան և շարունակում են բախվել, քանի որ շատ քչերին է բախտ վիճակվել ապրել և աշխատել համախոհների հետ, այսինքն այնպիսի մարդկանց, որոնք միևնույն թրթիռային ալիքին են, ինչ դուք:

Ցավոք, ձեր մոլորակի գերակշռող մեծամասնությունն առ այսօր գտնվում է եռաչափ աշխարհի և դրա կառավարողների իշխանության տակ:

Եվ երկու աշխարհների այդ անխուսափելի բախումը, թե՛ տանը, թե՛ աշխատավայրում, ձեզնից հսկայական ուժ ու էներգիա է խլում:

Ես գիտեմ, զավակներ՝ րս, թե ինչ ցավ եք ապրում դուք տեսնելով խոր քնած ձեր մերձավորներին և թե ինչպես անում եք ձեր ձեռքից եկածը՝ բացելու նրանց աչքերը այն փոփոխությունների վրա, որ կատարվում են ներկայումս մոլորակում:

Մակայն քանի որ մենք արդեն բազմիցս խոսել ենք, որ յուրաքանչյուր ոք ունի իր ճանապարհը և իր հոգևոր «առաստաղը», որը դուք մեծ մասամբ ի վիճակի չեք փոխելու, ես այսօր մի քանի խորհուրդ կտամ ձեզ, թե ինչպես դուրս գաք ձեր շուրջը փոթորկող «կրքերի օվկիանոսից» նվազագույն բարոյական կորուստներով, թեև ավելի լավ կլինի՝ բոլորովին չընկնել այդ փոթորկի մեջ:

Նախ և առաջ՝ երբեք առաջինը խոսք մի՛ բացեք Անցման ձեզ հուզող թեմայի վերաբերյալ այն մարդկանց հետ, որոնք պատրաստ չեն լսելու:

Կարող եք ձեր իմացությունները կիսել միայն նրանց հետ, ովքեր իրենք կհարցնեն ձեզ այդ մասին:

Որոշելու համար, թե պատրաստ է արդյոք մարդը նման զրույցի, կարող եք մի նախադասությամբ ասել, որ լսել եք Երկրի էներգետիկական փոփոխությունների մասին, և հենց առաջին արձագանքից պարզ կլինի՝ կարելի է շարունակել զրույցը այդ թեմայով, թե ավելի լավ է լռել:

Նույն սկզբունքը վերաբերում է նաև մյուս թեմաներին՝ խորքային պետությանը, բնակչությանը չիպավորելու համաշխարհային կառավարության պլաններին, այլմոլորակային քաղաքակրթություններին:

Եթե հանկարծ մարդն ինքն էլ լսած է լինում այդ մասին ուրիշ աղբյուրներից և սկսում է պատմել, կարող եք լրացնել այդ տեղեկությունները ձեր իմացածով:

Ամեն պարագայում, նման անսովոր և անտեղյակների համար ցնցող թեմաների շուրջ զրույցները պետք է տարվեն շատ զգուշորեն, չափավորված և փուլ առ փուլ, ապահովագրելով ինքներդ ձեզ և նրանց՝ բացասական հույզերի դրսևորումներից ու ապրումներից:

Ես գիտեմ, սիրելիներ՛ս, որ երբեմն շատ դժվար է լինում զսպել ձեզ, այնքան որ ուզում եք հաղորդակից դարձնել ձեր մերձավորներին այն ամենին, ինչ հուզում է ձեզ:

Բայց սովորե՛ք ժամանակին կանգ առնել, դա զերծ կպահի անխուսափելի անկումից ձեր թրթիռները, ինչպես նաև ձեր մերձավորների թրթիռները՝ ձեր նկատմամբ ագրեսիվության դրսևորման դեպքում, առավել ևս՝ եթե ինքներդ էլ ագրեսիվություն եք հանդես բերում նրանց ի պատասխան:

Ընդ որում, շատ կարևոր է կանգ առնել ոչ միայն արտաքուստ՝ ներքուստ շարունակելով նրանց դատել, այլ հարկավոր է իմաստուն լինել և խոր ըմբռնումով մոտենալ նման երկխոսության անհարիրությանը, սիրով բաց թողնել ստեղծված իրավիճակը ի բարձրագույն բարօրություն բոլորի:

Միրե՛ք ձեր մերձավորներին ինչպես որ նրանք կան, նույնիսկ եթե շփումը նրանց հետ հանգում է սուկ կենցաղային թեմաներին, որոնք անտարակույս միշտ կճարվեն:

Պահե՛ք ձեր հոգևոր մաքրությունն ու էներգետիկական տարածությունը իբրև ձեր կյանքի բարձրագույն արժեք, թույլ չտալով ներխուժել ձեր Հոգու Աստվածային Տաճարը ոչ ոքի, անգամ ամենամոտ մարդկանց:

ՀԱՆԳԻՍՏ ԵՎ ՄԻԱ՛ՅՆ ՀԱՆԳԻՍՏ

ԲԱՅԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 23 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

Շարունակելով [իմ նախորդ ուղերձը](#), կուզեի այժմ ավելի մանրամասն խոսել կողմնակի ազդեցությունից ձեր էներգետիկական տարածությունը պաշտպանելու մասին:

Որպես դրա առաջին քայլ կլինի ձեր ունակությունը՝ չներքաշվելու անպտուղ բանավեճերի մեջ:

Դա արդեն իսկ զերծ կպահի ձեր աուրան օտարածին բացասական էներգիաներից և կօգնի ներդաշնակ հոգեվիճակ պահել:

Հենց այդպիսի հոգեվիճակն է ձեր թրթիռների կայունության հիմքը, քանի որ ձեր էներգետիկական տարածության մաքրությունը առաջին հերթին կախված է ձեր իսկ ներքին վիճակից:

Իսկ այն այդպիսին պահելու ունակությունը, ցանկացած իրավիճակում և ամենատարբեր մարդկանց հետ շփվելիս, նրա կայունության երաշխիքն է:

Քայքեջում քիչ պրակտիկաներ չեն տրվել «սանձելու» ձեր **անզիտակից ինքնաբերական հակազդեցությունները (ռեակցիաները)**, որոնք դուք ձեռք եք բերել եռաչափ աշխարհում ունեցած ձեր բազմաթիվ մարմնավորումների ընթացքում:

Եվ իհարկե, դա պահանջում է անդադրում աշխատանք ինքներդ ձեզ վրա, որովհետև մի օրում անկարելի է ազատվել բոլոր բազմամյա սովորություններից:

Սկզբում դուք կարող եք օգտվել այնպիսի պրակտիկաներից, ինչպես՝ [«Ինքնաբուխ հակազդեցության վերածրագրավորում»](#), [«Ենթազիտակցության ”սկավառակը”](#)», [«Աստվածային ենթազիտակցություն»](#), [«Ներքին հակազդեցության ներգործությունը իրավիճակի վրա»](#), [«Պատուհան դեպի աշխարհ»](#) և այլն:

Մակայն ի լրումն այդ պրակտիկաների, ուզում եմ տալ ևս մի քանի խորհուրդ, որոնք կօգնեն ձեզ սովորել կառավարել ինչպես սեփական, այնպես էլ զրուցակցի զգացմունքները:

Այժմ առավել քան երբեք կարևոր է զգալ մարդկանց, որոնց հետ պետք է շփվեք:

Եվ դրանում ձեզ արդեն իսկ օգնում են Երկրի նոր թրթիռները:

Շփվելով մարդու հետ, այդ նոր էներգիաները ի հայտ են բերում նրա իսկական էությունը՝ գիտակցության մակարդակն ու էներգետիկական ներուժը:

Դա լինում է տարբեր ձևերով. ոմանք բացվում են խոսքի մեջ, ոմանք էլ՝ ներքին դրսևորման մակարդակում, որը նկատելի է լինում նրանց հայացքում, ժեստերում, ընդհանուր վարքագծում:

Ամեն պարագայում, գնալով մարդկանց համար դժվար է դառնում դիմակավորվել. դիմակն ընկնում է դեմքերից՝ քշվելով նոր բարձրաթրթիռ էներգիաների հորձանքով:

Եվ արդեն ոչ մի խոսքով հնարավոր չէ պահել ցանկալի կերպարը, որովհետև վայրկենապես զգացվում է դրա ու տվյալ մարդու ներքին բովանդակության անհամապատասխանությունը:

Ներկայումս Երկրի վրա տեղի է ունենում եռաչափ մատրիցի հետզհետե տարրալուծում, և նոր Երկիրը, ինչպես թիթեռն իր բոժոժից, ելնում է դեպի ազատություն՝ նոր աշխարհի բարձր թրթիռների մեջ:

Միևնույն բանը տեղի է ունենում մաքուր ու լուսավոր մարդկային հոգիների հետ. նրանք ձգտում են դեպի նոր բարձունքներ՝ թոթափելով եռաչափության մնացորդները:

Սակայն քանի որ մարդկանց մեծ մասի գիտակցությունը դեռևս պատրաստ չէ փոփոխությունների, նրանք իներցիայով կառչում են վարքի և մտածողության հին շաբլոններից՝ չցանկանալով վայր ձգել սովորական «հագուստը»:

Բայց այդ հին հագուստն արդեն այնքան է մաշվել, որ քայքայվում է աչքի առաջ, և նրա կրողները մնում են «մերկ». նրանք արդեն ոչնչով չեն կարող ծածկել իրենց հոգու անհրապույր «մերկությունը»:

Ու թեև իրենք դա չեն գիտակցում, շատ ու շատ արթնացած հոգիներ արդեն հստակ տեսնում են նման մարդկանց:

Հենց դրանում է կայանում **տարբաժանումն ըստ թրթիռների**, որի մասին բազմիցս խոսել ենք:

Իսկ նրանք, որոնց հաջողվել է թոթափել եռաչափ աշխարհի հին «հագուստը», ընդհակառակը, փոխակերպվում են օր օրի:

Նրանց հոգիները սկսում են երևան բերել իրենց լավագույն հատկությունները, բացվելով մարդկանց ընդառաջ և «զուգվելով»

Լույսի ու Սիրո էներգիաներից հյուսված հրաշագեղ Աստվածային «զգեստներով»:

Եվ ես ուզում եմ, զավակներս, որ դուք ոչ միայն սովորեք տեսնել թե՛ նրանց, թե՛ մյուսներին, այլև կարողանաք փոխգործակցել ցանկացած մարդու հետ այնպես, որ չվնասեք ո՛չ ձեզ, ո՛չ նրան:

Իսկ թե ինչպես անել դա, կպատմեմ իմ հաջորդ ուղերձում:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՔՐՈՂ ՊՏՏԱՀՈՂՍԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 25 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

Եվ այսպես, շարունակելով [իմ նախորդ ուղերձը](#), այսօր կխոսենք, թե ինչպես կառուցեք ձեր հարաբերությունները մարդկանց հետ, որ առավելագույնս օգտավետ լինի թե՛ ձեզ, թե՛ նրանց համար:

Բայց նախ ուզում եմ մի խորհուրդ տալ ձեզ:

Երբեք խոսակցություն մի՛ սկսեք մարդու հետ ձեզ հուզող թեմաների շուրջ, եթե ինքներդ հոգնած կամ դյուրագրգիռ վիճակում եք:

Դա լավ արդյունքի չի բերի, և միայն կհեռացնի ձեզ իրարից:

Եվ մի՛ արեք դա հապճեպորեն, այլապես աչքաթող կանեք ամենազլիսավորը՝ այն, ինչ կարող է հետաքրքրություն արթնացել մարդու մեջ իր համար նոր այդ թեմայի նկատմամբ և ուրեմն՝ խթանել նրա հոգևոր զարգացումը:

Բացի այդ, ինքներդ լինելով հանգիստ ու ներդաշնակ վիճակում, դուք կվարակեք ձեր խոսակցին լուսավոր, դրական էներգիայով, այդ կերպ կրճատելով ձեր թրթիռների տարբերությունը:

Դա արդեն կտա իսկ դրական արդյունք՝ լավ նախադրյալներ ստեղծելով ձեր զրույցի համար:

Միևնույն սկզբունքը տարածվում է և ձեր գրուցակցի վրա:

Եթե տեսնում եք, որ նա ջղագրգիռ է, ագրեսիվ ու անհամբեր, ոչ մի դեպքում գրույց մի՛ բացեք նրա հետ, առավել ևս՝ իր համար անձանոթ թեմաներից:

Սովորե՛ք որոշել, թե ինչ հաճախականություն ունեն ձեր գրուցակցի թրթիռները նույնիսկ եթե նա լուռ է:

Որպես կանոն, մարդու աններդաշնակ վիճակն ուղեկցվում է բազմաթիվ արտաքին դրսևորումներով, որոնք դուք արդեն միանգամայն ի վիճակի եք նկատելու:

Իսկ եթե զգում եք, որ շտապ հարկավոր է ինչ-որ մեկին իր համար կարևոր տեղեկություն հաղորդել, փորձե՛ք նախ և առաջ էներգապես հավասարակշռության բերել նրան:

Եվ ահա թե ինչպես կարելի է դա անել:

Աշխատե՛ք «տեսնել» այդ մարդու էներգետիկական ուրվագիծը և, ողողելով այն Համբարձման էներգիայով, պատկերացրե՛ք, թե ինչպես է այդ էներգիան պտտվում ժամացույցի սլաքի ուղղությամբ, սկսելով նրա ֆիզիկական մարմնից:

Հետզհետե այն վերաբաշխվում է նրա բոլոր չակրաներով ու նուրբ մարմիններով այն բանի հաշվին, որ առավել նոսր նուրբ մարմիններն իրենց մեջ են առնում մարդու ստորին մարմինների ծանր էներգիաները՝ իրենցով հավասարակշռելով դրանք:

Այլ կերպ ասած, Համբարձման էներգիայի պարուրածն պտտահողմը տարրալուծում է բացասական էներգիաների թանձրուկները, որոնք կուտակված են մարդու ստորին չակրաներում, և ներդաշնակեցնում է նրա բոլոր չակրաներն ու մարմինները՝ ստեղծելով ընդհանուր թրթիռային ֆոն նրա էներգետիկական տարածության մեջ:

Ժամանակի հետ դուք դա կանեք հաշված բուպենների ընթացքում:

Նույն կերպ դուք կարող եք մաքրել նաև ձեր սեփական էներգետիկական տարածությունը, Համբարձման էներգիայի պարուրածն հողմը դեպի վեր արձակելով ձեր առաջին չակրայից:

Պատկերացրեք, թե ինչպես ավելի ու ավելի է մեծանում այդ էներգիայի պտտման շառավիղը, այդ կերպ նուսրացնելով ձեր նուրբ մարմինները և մեծացնելով դրանց ծավալը:

Եվ հիշե՛ք, զավակնե՛րս, եթե նույնիսկ դուք չեք զգում այդ էներգիայի աշխատանքը, ձեր մաքուր դիտավորությունը անպայման՝ կտա իր արդյունքը, որն ի հայտ կգա ֆիզիկական պլանում:

Իսկ կարտահայտվի դա նրանով, որ ձեր զրուցակիցը և դուք ինքներդ կհամակվեք խաղաղությամբ ու հոգեկան հարմարավետությամբ, որը կնպաստի ձեր ներդաշնակ շփմանը:

ԹՐԹԻՌԱՅԻՆ ՊԱՏ

ԲՍՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 26 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

66

Այսօր մենք կշարունակենք մեր զրույցը, թե ինչպես կարող եք սովորել ներդաշնակորեն փոխգործակցել տարբեր մարդկանց հետ՝ ինչպես ձեզ հետ միևնույն թրթիռային ալիքի վրա գտնվողների, այնպես էլ նրանց, որոնց թրթիռները զգալիորեն ցածր են ձերինից:

Ինչու՞ եմ ես այսքան ուշադրություն դարձնում դրան:

Միայն այն պատճառով, որ դրանից է կախված ձեր սեփական թրթիռները հարկ եղած մակարդակին պահելը, այսինքն այն, ինչին դուք պետք է հիմա ձգտեք, որովհետև դրանց կայունությունն է երաշխավորում ձեր Անցումը նոր չափման մեջ:

Եվ եթե ձեզ հետ միևնույն թրթիռային մակարդակին գտնվող մարդկանց հետ շփվելիս դուք էներգապես սնուցում եք միմյանց և ողջ շրջակա տարածությունը, ապա ցածր թրթռանք ունեցողների հետ պետք է շատ զգույշ լինեք, որ չվնասեք ո՛չ նրանց, ո՛չ ձեզ, իսկ ընդհանուր առմամբ՝ ձեզ շրջապատող բոլոր մարդկանց:

Եկեք քննենք, թե ինչ է կատարվում նուրբ պլանում, երբ հանդիպում են երկու հոգի, որոնց թրթիռները զգալիորեն տարբեր են:

Օրինակ՝ մեկը թրթռում է վեցերորդ չակրայի վրա, մյուսը՝ երրորդ:

Ինչպես արդեն գիտեք, որքան բարձր են մարդու թրթիռները, այնքան նոսրանում են նրա նուրբ մարմինները:

Եվ հակառակը, որքան ցածր են թրթիռները, այնքան դրանք թանձր են:

Իսկ ի՞նչ է կատարվում էներգետիկական տարածությունում, երբ այդ երկուսը հայտնվում են կողք կողքի:

Իրականում նրանց փոխազդեցությունը կարող է շատ տարբեր լինել, կախված իրենց վարքագծից:

Եվ հիմա մենք կդիտարկենք նրանց փոխներգործության բոլոր հնարավոր տարբերակները:

Առաջին տարբերակ

Նրանք երկուսն էլ ջղագրգիռ են դառնում՝ ինտուիտիվ կերպով զգալով էներգետիկական անհամապատասխանությունը:

Նրանց միջև առաջանում է որոշակի «պատ»՝ մերժման էներգիայից. այդպես է դրսևորվում թե՛ մեկի և թե՛ մյուսի պաշտպանական հակազդեցությունը:

Ու քանի որ այդ էներգիան երկվություն է կրում իր մեջ, հետևաբար այն Աստվածային չէ, այլ՝ ցածրաթրթիռ:

Արդյունքում ցածր թրթիռներ ունեցողը մնում է իր մակարդակին, կամ կարող է անկում ապրել, իսկ բարձր թրթիռներ ունեցողն անխուսափելիորեն իջեցնում է դրանք, դիպչելով իր իսկ ստեղծած չընդունման «պատին»:

Այդպիսով, նույնիսկ եթե այդ երկուսի միջև ինչ-որ շփում էլ տեղի ունենա, այն կկրի բավական ցածր էներգետիկա՝ երանգավորված նրանց փոխադարձ անբարյացակամությամբ:

Եվ մարդիկ միշտ ինտուիցիայով զգում են դա: Հենց այդ պատճառով էլ ձեզ ոչ միշտ է հաջողվում «ձեր հավաստին դարձնել» ձեր ընկերներին ու մերձավորներին:

Երբեմն նրանք իրենք էլ չեն կարողանում բացատրել, թե ինչու է իրենց մոտ մերժում առաջանում ձեր՝ կարծես թե ճիշտ ու համոզիչ խոսքերից:

Բանն այն է, որ ինտուիտիվ կերպով անջրպետվելով նրանց ցածր էներգետիկայից, դուք անգիտակցորեն էներգետիկական «պատ» եք կանգնեցնում ձեր և նրանց միջև, որն էլ ի վերջո վերածվում է «անըմբռնողության խուլ պատի»:

Այնուհետև նման անըմբռնողությունը աճում է ձնագնդի պես, և դուք արդեն սկսում եք վիրավորական խոսքեր շարտել իրար, ինչի արդյունքում ձեր սեփական թրթիռներն իջնում են ձեր խոսակցի մակարդակին:

Եվ եթե նրա համար այդ զգացմունքները սովորական են, երբեմն էլ ցանկալի, ձեզ համար դրանք հիրավի կործանարար են, որովհետև դուք կորցնում եք այն, ինչ ձեռք էիք բերել բազում ամիսների, անգամ տարիների ընթացքում:

Անշուշտ, դուք կարող եք վերականգնվել զանազան պրակտիկաների ու մեդիտացիաների միջոցով, սակայն յուրաքանչյուր այդպիսի էներգետիկական անկում ձեզ շարտում է ետ, և դուք կորցնում եք ձեր թանկարժեք ժամանակը, որը կարող էիք այլ կերպ օգտագործել՝ ի բարձրագույն բարօրություն ձեզ և ձեր մոլորակի:

Այդ պատճառով էլ, զավակնե՛րս, նախքան զրույցի բռնվելը մի մարդու հետ, որը «թեմայի մեջ» չէ և որի թրթիռներն ակնհայտորեն ցածր են ձերից, հիշե՛ք, թե ինչ հետևանքներ կունենա այդ շփումը ձեզ համար, և խոսակցությունն բացեք միայն այն դեպքում, եթե վստահ եք, որ կարող եք ներդաշնակ միջավայր ստեղծել դրա համար՝ գտնելով այդ մարդուն հարիր մոտեցում:

Եվ հաջորդ ուղերձում ես կպատմեմ, թե ինչպես կարելի է դա անել:

ԹՐԹԻՌՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 27 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

Եվ այսպես, շարունակենք մեր զրույցը երկու տարաթրթիռ մարդկանց փոխազդեցության մասին:

Այժմ դիտարկենք նման փոխազդեցության երկրորդ տարբերակը:

Տվյալ պարագայում վեցերորդ չակրային թրթռացող մարդը լրիվ գիտակցում է իր պատասխանատվությունը թե՛ իր, թե՛ խոսակցի հանդեպ և անում է ամեն ինչ, որ ոչ միայն հարկ եղած մակարդակին պահի իր սեփական թրթիռները, այլև ջանա բարձրացնել խոսակցի թրթռանքը երրորդ չակրայից առնվազն մինչև չորրորդ կամ լավագույն դեպքում՝ հինգերորդ չակրան:

Ի՞նչ կարող է նա անել դրա համար:

Նախ և առաջ, ընդունել դիմացինին այնպես, ինչպես կա, ոչ մի դատողություն կամ գնահատական չանել նրա հասցեին:

Նույնիսկ եթե ամեն ինչ գիտեք նրա մասին և ամեն ինչ հասկանում եք, վերաբերվեք նրան ինչպես ավազը՝ կրտսերին:

Մակայն թո՛ղ ձեր «ավագությունը» դրսևորվի ոչ թե հոգևոր գերազանցության բարձունքից նայելով, այլ իմաստուն և սիրող ընկերոջ հայացքով, որը հասկանում է, որ ամեն ոք յուրովի է անցնում իր ուղին:

Հնարավոր է, որ ի տարբերություն ձեզ, որ անցել եք հարյուրավոր, գուցե նույնիսկ հազարավոր մարմնավորումներով՝ տարատեսակ աշխարհներում, ձեր զրուցակիցը դեռ բոլորովին երիտասարդ ու անփորձ մի հոգի է, որի հոգևոր ճամփորդությունը նոր-նոր է սկսվում:

Դուք հո չե՞ք դատի երեխային, որ նա փոքր է և չգիտի կարդալ:

Ավելի շուտ կջանաք սովորեցնել նրան, որ իր առջև էլ բացվեն նորանոր հորիզոններ և ինքն էլ, արդեն լրիվ ինքնուրույն, կարողանա սուզվել հեքիաթների ու արկածների կախարդական աշխարհը:

Ճիշտ նույն կերպ դուք կարող եք նոր աշխարհ ու նոր հնարավորություններ բացել այն մարդու առջև, որը կանգնած է իր հոգևոր ճանապարհի ամենասկզբում:

Սակայն ի տարբերություն երեխայի, նա արդեն հասցրել է ամբողջովին պատել իրեն շաբլոններով, կարծրատիպերով ու սովորություններով, որոնք բնորոշ են եռաչափ աշխարհի մարդուն:

Սա արդեն այն «ծեփամածիկը» չէ, ինչպիսին փոքրիկ երեխան է, որից դուք կարող եք անհատականություն «ծեփել», այլ միանգամայն ձևավորված և սեփական համոզմունքներն աներկբա պաշտպանող մեծահասակ մարդ:

Այդ իսկ պատճառով դուք պետք է նախ և առաջ «փափկացնեք» նրան: Եվ իհարկե՝ կարող եք դա անել միայն էներգապես:

Պարարե՛ք նրան և ձեր շրջակա ողջ տարածությունը Լույսի և Միրո էներգիայով:

Դրա համար շատ հարմար կլինի վերջերս ձեզ տրված [«Կախարդական ծածկոց»](#) պրակտիկան:

Կարող եք նաև կիրառել մարդու գիտակցությունն ու շրջակա տարածությունը բոլոր տեսակի բացասական էներգիաներից և եռաչափ ծրագրերից մաքրելու ինչ-որ մի այլ պրակտիկա, որն ավելի սրտամոտ է ձեզ :

Հաջորդ քայլը կլինի ձեր թրթիռների հավասարակշռումը:

Դրա համար պետք է պատկերացնեք ինքներդ ձեզ և ձեր զրուցակցին էներգետիկական ուրվապատկերների տեսքով և ձեր շուրջը ստեղծեք Համբարձման էներգիայով լեցուն Գունդ (Մֆերա):

Այդ ունիվերսալ և չափազանց փափուկ էներգիան ունակ է հրաշքներ գործելու՝ տարրալուծելով բոլոր ցածրաթրթիռ էներգիաները և

միաժամանակ փոխելով մարդու գիտակցությունը, ազատելով նրան եռաչափ աշխարհի ծրագրերից:

Եվ հենց կզգաք, որ ձեր ստեղծած բարձրաթրթիռ դաշտը «փափկացրել» է ձեր զրուցակցի թանձր աուրան, կարող եք արդեն խնամքով ու զգուշորեն «շոշափել հողը», որոշելու համար, թե ինչ ծավալով մատուցեք իր համար նոր տեղեկատվությունն այն մասին, թե ինչ է իրականում կատարվում Երկրի վրա:

Եվ նրա արձագանքներից կախված, կարող եք շտկել ձեր գործողությունները՝ հարթելով սուր անկյուններն ու շրջանցելով այն թեմաները, որոնց նա դեռևս պատրաստ չէ:

Այդպես, անշտապ կերպով, սիրով ու ըմբռնումով դուք կարող եք «կերտել» նոր, բարձր-հոգևոր մարդու կերպարը, չարագացնելով դեպքերը, երբեմն էլ բոլորովին դադարեցնելով շփումներն այդ մարդու հետ, որպեսզի հնարավորություն տաք նրան յուրացնելու իր համար նորահայտ նյութը:

Միայն այդպես, զավակներս, կարող եք զերծ պահել ձեզ և ձեր մերձավորին ջղայնությունից, փոխադարձ հիասթափությունից, երբեմն էլ մեծ վեճերից, որոնք տառապանքից զատ ուրիշ ոչինչ չեն բերի ձեր երկուսին:

ԶՀԱՏՎՈՂ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 28 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

Շարունակելով նախորդ երկու ուղերձները, այսօր մենք կդիտարկենք թրթիռային տարբեր մակարդակներում գտնվող երկու մարդկանց փոխազդեցության երրորդ տարբերակը:

Այս անգամ կվերցնենք այսպես կոչված «չեզոք» տարբերակը, երբ երկու հոգին էլ գնում են յուրաքանչյուրն իր ճանապարհով, գործնականորեն չդիպչելով միմյանց ո՛չ խոսքով, ո՛չ էներգապես:

Զգալով, որ իրենց թրթիռները չեն համընկնում, նրանք ինտուիտիվ կերպով խուսափում են իրարից, ընդամին առանց որևէ բացասական զգացմունքի:

Այդպես նրանց մոտ գործում է օտարածին էներգիաներից ինքնապաշտպանության զգացումը:

Հենց այս տարբերակն է առավել հաճախ հանդիպում կյանքում, երբ խոսքը վերաբերում է անձանոթ մարդկանց:

Այս դեպքում տեղի է ունենում ակամա էներգետիկական ինքնամեկուսացում:

Նրանց միջև գոյանում է վերոհիշյալ էներգետիկական պատը, բայց քանի որ այն վառ արտահայտված հուզական երանգավորում չի ունենում, հետևաբար կրում է սուկ անտեսանելի պատնեշի բնույթ, որը զատում է ցածր թրթիռները բարձրից:

Մա հենց այն դեպքն է, երբ իր գիտակցությամբ եռաչափ աշխարհի սահմաններից դուրս եկած մարդը գործնականորեն անտեսանելի է դառնում ցածրաթրթիռ էակների համար:

Նա էլ իր հերթին ոչ մի բացասական զգացմունք չի տաճում մյուսների նկատմամբ, իսկ վերջիններս արդեն չեն կարողանում նրան հասնել իրենց թրթռանքով, ուստի անկարող են դառնում ճեղքել այդ պատը և ներխուժել նրա էներգետիկական տարածություն:

Իսկ ո՞րն է վերը թվարկված երեք տարբերակներից լավագույնը:

Անշուշտ, փոխադարձ անհանդուրժողության **առաջին տարբերակը** ամենաանցանկալին է, քանի որ ավերիչ է երկուսի համար էլ:

Երկրորդ տարբերակը հարմար կլինի նրան, ում թրթիռներն այնքան բարձր են, որ կարող է առանց իրեն վնասելու շփման մեջ մտնել ցանկացած մարդու հետ՝ անկախ նրա թրթիռների մակարդակից:

Այդպիսի մարդն ունակ է ներդաշնակեցնելու ընդհանուր էներգետիկական տարածությունը, ինչը կպաշտպանի իրեն և իր զրուցակցին էներգետիկական անկումից:

Բայց եթե դուք դեռ չեք զգում ձեր մեջ բավականաչափ ուժ, իմաստություն և խոր գիտակցումն այն բանի, որ Տիեզերքի յուրաքանչյուր էակ ունի գոյության իրավունք և գտնվում է հոգևոր զարգացման ի՛ր աստիճանին, ավելի լավ է առայժմ հետևեք **Երրորդ տարբերակին՝** չեզոք վերաբերմունք թրթիռային ցածր մակարդակ ունեցող մարդկանց նկատմամբ:

Սովորե՛ք հուզականորեն չհակազգել նրանց, չդատելով և գերազանցություն չզգալով նրանց նկատմամբ, որ անխուսափելիորեն կբերի ձեր սեփական թրթիռների անկման:

Թո՛ղ նրանք անտեսանելի դառնան ձեզ համար, և այդ ժամանակ դուք էլ անտեսանելի կդառնաք նրանց համար:

Ներկայումս ձեր մոլորակի վրա տեղի է ունենում այնպիսի սրընթաց շերտավորում ըստ թրթռանքի, որ շուտով ձեզ կթվա, թե շատերի հետ, որոնց վաղուց գիտեք և որոնց թվում կարող են լինել նաև ձեր ընկերներն ու մերձավորները, ապրում եք զուգահեռ աշխարհներում:

Սակայն այդ շերտավորումը ձեզ համար չպիտի լինի թշնամական և ահաբեկող:

Ընդունե՛ք այն որպես անխուսափելիություն, որպես ամեն առանձին մարդու ընտրություն:

Եվ եթե տեսնում եք, որ մեկը համառում է իր համոզմունքների մեջ, չցանկանալով փոխվել, թու՛յլ տվեք նրան վարվել իր ուզածի պես, իսկ ինքներդ գնացե՛ք առաջ՝ ձեր ճանապարհով, չհապաղելով և հուզականորեն չներքաշվելով այլոց խնդիրների մեջ:

Միայն այդպե՛ս կարող եք պատշաճ մակարդակում պահել ձեր սեփական թրթիռները, և հետևաբար դեպի ձեզ կձգեք ուրիշ՝ ոգով ձեզ հարազատ մարդկանց, որոնք գտնվում են միևնույն թրթիռային ալիքին, ինչ դուք:

Եվ ես օրհնու՛մ եմ ձեզ, որ այդպես լինի:

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

III ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ

1. ԱՆԳԻՏԱԿԻՑ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2. ՍԻՐՈ ԲՈԺՈԺ (ՊՐԱԿՏԻԿԱ)
3. ԻՆՔՆԱԲՈՒԽ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)
4. ՀԱԿԱԶԴԽԱՆ ԵՌԱԶԱՓ ԾՐԱԳՐԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)
5. ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ «ՍԿԱՎԱՌԱԿԸ» (ՊՐԱԿՏԻԿԱ)
6. ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԴՐԱԽՏ (ՊՐԱԿՏԻԿԱ)
7. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)
8. ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ «ՔԱՂՀԱՆ» (ՊՐԱԿՏԻԿԱ)
9. ԱՐՈՐՆԵՐ ՁՈՒԼԵՆՔ ՍՐԵՐԻՑ (ՊՐԱԿՏԻԿԱ)
10. ՍԻՐՈ ԲՅՈՒՐԵՂԻ ԾԻԱԾԱՆԸ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԱՆԳԻՏԱԿԻՑ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՑԱՐԶԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐԶԸ, 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ.

Այսօր ես ուզում եմ խոսել այն մասին, թե ինչպես կարող եք ճիշտ հակազդել (реагировать) անկանխատեսելի իրավիճակներին:

Մենք արդեն խոսել ենք այն մասին, թե որքան կարևոր է որսալ ամենաառաջին զգացմունքային ազդակը՝ ի պատասխան ձեր կյանքի ցանկացած իրադարձության:

Հենց նա՛ է «մեկնարկ» տալիս հետագա դեպքերի ողջ շարանին:

Այդ ուժգին հուզական ալեծփանքը բիկֆորդյան քուղի նման հեռու է «ձգում» ձեր արտանետած էներգիան:

Այնուհետև գործին միանում են Տիեզերքի Օրենքները, ինչի արդյունքում դուք ձեր կյանքի մեջ եք ներձգում այն, ինչին ծնունդ եք տվել ձեր ամենաառաջին հակազդեցությամբ (реакция):

Այդպիսով մենք կրկին ու կրկին վերադառնում ենք նրան, որ դուք պետք է սովորեք փոխել վարքի արմատացած շաբլոնները, տարրալուծել ձեր մեջ երկվության աշխարհի ծրագրերը:

Իհարկե, եռաչափ աշխարհի մարդու համար շատ դժվար է գիտակցել այն փաստը, որ այս կյանքում ոչ մի բան լավ կամ վատ չէ, այլ կա միայն ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ, որը փոխվում է՝ կախված մարդու արտածած մտքերից ու զգացմունքներից:

Եվ եթե սովորեք կառավարել ձեր մտքերն ու զգացմունքները, հենց ինքներդ կդառնաք դրության տերը և կստեղծեք ձեր սեփական իրականությունը:

Սակայն առայժմ ձեր մոլորակի մարդկանց մեծ մասին կառավարում են ԻՆՔՆԱԲՈՒԽ մտքերն ու զգացմունքները, որոնք հիմնականում ներշնչվում են տարատեսակ աստրալ էությունների կողմից:

Այդ մասին արդեն շատ է խոսվել Աստրալ աշխարհին վերաբերող իմ ուղերձների շարքում, և ես այլևս չեմ կրկնի:

Հիմա կարևոր է հասնել նրան, որ ցանկացած ոչ ստանդարտ իրավիճակում ձեզ մոտ ինքնաբուխ դառնան արդեն բոլորովին այլ մտքեր և զգացմունքներ, ասենք՝ «Ուրեմն բարին այս է», «Ամեն ինչ իմ բարօրության համար է», «Շնորհակալ եմ ճակատագրին այս փորձությունների համար»:

Անշուշտ, սովորական մարդուն դա անտրամաբանական և անհասկանալի կթվա. ինչպես կարելի է ուրախանալ դժբախտության համար և առավել ևս՝ շնորհակալ լինել ճակատագրին:

Մակայն Բարձրագույն Օրենքների տեսանկյունից տեղի է ունենում հետևյալը:

Ձեզ տրված ցանկացած փորձություն ոչ միայն կոփում է ձեր Ոգին և անգնահատելի փորձով հարստացնում ձեր Հոգու գանձարանը, այլև լցնում է ձեր նուրբ մարմինները ամենատարբեր երանգների էներգիաներով:

Ճիշտ ինչպես նկարիչն է ջանադրաբար խառնում ներկերը՝ փորձելով գտնել իրեն հարկավոր երանգը:

Նույն կերպ էլ ձեր Հոգին, իրար խառնելով ձեր զգացմունքների բոլոր «գույները», փորձում է ընտրել իրեն պետք եղած «երանգը», որը թույլ կտա իրեն կեցության նոր մակարդակ ելնել:

Գիտեմ, որ դա կարող է դյուրահաս չլինել ձեր ըմբռնման համար, որովհետև մարդկային միտքը սովոր է դասել տրամաբանորեն:

Մակայն բարձրագույն կարգի ճշմարտությանը կարող են հասու լինել լուրջ ձեր նուրբ զգայական օրգանները, որոնք «մտածում» են բոլորովին այլ կատեգորիաներով, որովհետև չեն կորցրել կապը ձեր Աստվածային ասպեկտի հետ:

Եվ հիմա մենք դժվար խնդիր ունենք լուծելու՝ վերածրագրավորել բոլոր իրադարձությունների ձեր անգիտակից հակազդեցություններն

այնպես, որ դրանք ձեզ բարձրացնեն մինչև Հինգերորդ չափման մակարդակը, և ոչ թե հետ նետեն եռաչափ աշխարհ:

ՄԻՐՈՒ ԲՈԺՈԺ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 6 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ.

Այսօր մենք ձեռնամուխ կլինենք ձեր անգիտակից հակազդեցությունների (реакции) վերածրագրավորման գործնական բաժնին:

Բայց նախ և առաջ դուք պետք է սովորեք կառավարել ձեր գիտակցությունը:

Այժմ ես կառաջարկեմ ձեզ ոչ դժվար մի պրակտիկա, որը պետք է օգնի ձեզ հավասարակշռության վիճակ ձեռք բերել:

Հենց նա պիտի այսուհետ դառնա ձեր ցանկացած ինքնաբերական հակազդեցության «մեկնակետը»:

Դա անչափ կարևոր է, և ահա թե ինչու:

Եթե դուք գրգռված կամ ընկճված վիճակում եք, ցանկացած իրադարձության նկատմամբ ձեր անգիտակից հակազդեցությունը «կելնի» քառսի էներգիայից, որով լեցուն են ձեր նուրբ մարմինները:

Իսկ եթե դուք կատարելապես հանգիստ եք ու հավասարակշիռ, դժվար չի լինի «որսալ» աններդաշնակ էներգիաները, որոնք կարող են դիտնանսսի մեջ մտնել ձեր սեփական ներդաշնակ էներգիաների հետ:

Եվ այսպես, անցնենք պրակտիկային: Անվանենք այն «Միրո Բոժոժ»:

Պատկերացրեք, որ դուք չքնաղ մի թիթեռ եք, որն իրեն լավ ու հարմարավետ է զգում իր բոժոժում, ուր լող է տալիս Անպայման Միրո էներգիայի մեջ:

Զգացե՛ք լիակատար պաշտպանվածություն,- ձեր Աստվածային անձեռնմխելիությունը:

Ոչ ոք և ոչինչ չի կարող ձեզ դուրս բերել այդ երանելի վիճակից:

Դուք գիտեք, որ ձեզ հետ ոչ մի վատ բան չի կարող պատահել, չէ՞ որ դուք գտնվում եք Տիեզերքի ամենահզոր էներգիայի՝ Սիրո էներգիայի և Լույսի բոլոր Ուժերի պաշտպանության ներքո:

Դուք հասկանում եք, որ ձեր Բոժոժի սահմաններից դուրս կատարվող ամեն բան սուկ «դեկորացիա» է, եռաչափ պատրանքային աշխարհ, որի մեջ սուզվել եք հետաքրքրասիրությունից և ձեզ տակավին անհայտ զգացմունքներ ու հույզեր ապրելու ցանկությունից դրդված:

Սակայն հիմա մոտենում է «Երկրի Համբարձում» կոչվող «ներկայացման» վերջին արարը:

Ձեր մոլորակն ինքն էլ, ինչպես դուք, որոշել է թոթափել եռաչափության կապանքները և վերադառնալ Տուն՝ Արարչի մոտ:

Նա սահուն և վեհորեն կատարում է իր Անցումը մի չափումից մյուսը, և դուք գտնվում եք նրա էներգետիկական դաշտում, զգում եք այն ձեր մարմնի յուրաքանչյուր բջիջով. . .

Բայց որպեսզի չկորչեք և «չվնասվեք» ճանապարհին, թաքնվել եք այդ հրաշագեղ ոսկեգույն «Սիրո Բոժոժում»:

Դուք կմնաք այնտեղ, մինչև որ «դուրս ճախրեք» արդեն Հինգերորդ չափման նոր աշխարհի մեջ, որտեղ ձեզ կզգաք ապահով և կվերագտնեք եռաչափ աշխարհում կորսված թռչելու ունակությունը. . .

Զգացե՛ք այդ Բոժոժը ձեր ամբողջ էությամբ. . .

Վարժվե՛ք նրան, ինչպես ձեր հագուստին, առանց որի չեք կարող դուրս գալ աշխարհ, որտեղ դեռ եռում են մարդկային կրքերը, որոնցից դուք ինքներդ վաղուց արդեն ազատվել եք:

Նայե՛ք մարդկանց և շուրջը կատարվող ամեն ինչի իմաստուն հանգստությամբ, չէ՞ որ դուք գիտեք, որ այդ ամենը ժամանակավոր է,

պատրանքային և անխուսափելի՝ եռաչափ աշխարհում, սակայն դուք արդեն անցել եք երկվության ձեր դասերը և խաղաղություն ու անդորր եք գտել ձեր Հոգում:

Ջանացե՛ք, զավակնե՛րս, որ այս պրակտիկան դառնա ձեր սովորական դրությունը, ձեր կենսակերպը, ձեր նոր աշխարհընկալումը. . .

Օրհնու՛մ եմ ձեզ և անսահման սիրում:

ԻՆՔՆԱԲՈՒԽ ՀԱՎԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 8 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ.

79

Այսօր մենք կանցնենք տարատեսակ կյանքային իրավիճակներին և ձեզ շրջապատող մարդկանց արարքներին ձեր անգիտակից հակազդեցությունների (реакции) վերածրագրավորման պրակտիկաներին:

Մենք կվերափոխենք եռաչափ աշխարհի մարդկանց բնորոշ կարծրատիպային հակազդեցությունները այնպիսի հակազդեցությունների, որոնք հատուկ են արդեն չորրորդ և հինգերորդ չափումների գիտակցություն ունեցող մարդուն:

Առաջին հերթին վերցնենք կյանքի մի քանի առավել տիպական օրինակներ:

Առաջին օրինակ

Դուք անսպասելիորեն կորցրել եք ձեր աշխատանքը:

Ինչպիսի՞ն կլինի սովորական մարդու առաջին հակազդեցությունը:

Առավելապես՝ վախ իր ապագայի համար և մտածմունք, թե ինչպես պիտի կերակրի իրեն և ընտանիքը:

Իսկ ինչպիսի՞ն պիտի լինի առաջին հակազդեցությունը և առաջին իսկ միտքը այն մարդու, որն ազատվել է եռաչափ աշխարհի կարծրատիպերից և արդեն ապրում է Տիեզերքի Օրենքներով:

Նա ամբողջ Հոգով շնորհակալ կլինի Բարձրագույն Ուժերին, որ օգնում են իրեն գտնել իր համար ավելի լավ մի բան՝ այն, ինչ թույլ կտա իրեն բացահայտել իր բոլոր տաղանդներն ու ունակությունները, այսինքն՝ բարձրանալ իր հոգևոր զարգացման նոր աստիճանին:

Այնուհետև նա կսկսի ուշի ուշով հետևել, թե ինչ է կատարվում իր շուրջը, որսալով նշաններն ու հուշումները, որոնք **ԱՆՊԱՅՄԱՆ** կհայտնվեն իր կյանքում:

Անտարակույս, հարկավոր է նաև ինչ-որ որոշակի քայլեր ձեռնարկել, օգնելով Բարձրագույն Ուժերին ամենակարճ ժամկետում իրագործելու մտադրությունը:

Այդ կերպ, միավորելով ձեր Երկնային օգնականների՝ Երկրի նուրբ պլանում գործադրած ջանքերը ֆիզիկական պլանում գործադրած ձեր սեփական ջանքերին, դուք կգտնեք նախորդից շատ ավելի լավ մի զբաղմունք՝ այն, ինչ կբերի ոչ միայն վաստակ, այլև մեծ ուրախություն և բավարարություն:

Երկրորդ օրինակը վերաբերում է մարդկային հարաբերություններին:

Հաճախ է պատահում, որ մարդիկ իներցիայով կամ էլ մենակ մնալու վախից ողջ ուժով «ձգձգում» են վաղուց իրենց սպառած հարաբերությունները:

Ամենից հաճախ դա լինում է տղամարդու և կնոջ միջև:

Եվ երբ նրանցից մեկն ի վերջո վճռական քայլ է անում այդ հարաբերությունները խզելու ուղղությամբ, մյուսն ապրում է խոր ցնցում, սթրես, վիշտ, վիրավորանք, վախ իր ապագայի համար, մի խոսքով՝ Երկրի երեսին եղած ամենաբացասական զգացմունքների մի ամբողջ սպեկտր:

Այդպիսին է եռաչափ աշխարհի մարդու կարծրատիպային հակազդեցությունը:

Բայց նա, ում գիտակցությունն արդեն դուրս է եկել երկվության սահմաններից, այդ խզումին կվերաբերվի իմաստնաբար ու հանգիստ, հարգելով իր մերձավորի ազատ կամքը և ամբողջ Հոգով շնորհակալ լինելով իրենց կյանքի լուսավոր պահերի համար, մաղթելով նրան երջանկություն ու հաջողություն:

Այդպես, մնալով մենակ, նա կգտնվի արդեն ոչ թե բացասական էներգիաների մեջ, այլ Սիրո, Շնորհակալության և Ընդունումի էներգիաների, որոնք անպայման դեպի իրեն կառձգեն համանման թրթիռներով մարդկանց, և նրա կյանքը կլցվի նոր ու վառ գույներով և հետաքրքիր ծանոթություններով:

Ես համոզված եմ, զավակներս, որ շատերդ անցել եք այդպիսի փորձառությամբ և գործնականորեն գիտեք, թե ինչպես են աշխատում Տիեզերքի Օրենքները:

Սակայն ձեր առաջին հակազդեցությունը, ամենայն հավանականությամբ, եղել է կարծրատիպային և քիչ տառապանք չի պատճառել ձեզ:

Իսկ հիմա, նույն սխալները չկրկնելու համար, դուք պետք է վերածրագրավորեք ձեր ինքնաբուխ բացասական հակազդեցությունը ի պատասխան շուրջը կատարվող ցանկացած իրադարձության նոր՝ դրական հակազդեցության, որպեսզի հենց սկզբից ուղղորդեք ձեր ճակատագրի բոլոր փոփոխությունները ստեղծարարման, այլ ոչ ավերումի ճանապարհով:

Այսօր կսահմանափակվենք այսքանով:

ՀԱԿԱԶԴԻՄԱՆ ԵՌԱԶԱՓ ԾՐԱԳՐԵՐԻ ՏԱՐԲԱԼՈՒԾՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐԶԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐԶԸ, 9 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ.

Այժմ, երբ արդեն գիտակցել էք, թե որքան կարևոր է ԷՆԵՐԳԵՏԻԿՈՐԵՆ «պահել հարվածը», մենք կանցնենք վարժություններին, որոնք կօգնեն ձեզ մնալ իմաստուն ու հանգիստ ցանկացած, նույնիսկ ամենաձայրահեղ իրավիճակում:

Բայց նախ և առաջ դուք պետք է սովորեք լավ զգալ ձեր նուրբ մարմինները, հատկապես՝ **զգացմունքային (աստրալ) և մտային (մենտալ)**, որոնք էլ հիմնական հարվածի կրողն են ամեն անսպասելի տեղեկության դեպքում, թե՛ հաճելի, թե՛ անախորժ:

Հենց այս մարմիններում են գտնվում դարերով արմատացած կարծրատիպային հակազդեցությունների մեծ մասը ի պատասխան ձեր կյանքում տեղի ունեցող ամեն ինչի:

Սկսե՛ք մեղիտացիայից: Կանչե՛ք ձեր բոլոր Երկնային օգնականներին:

Եվ փորձե՛ք տեսնել ձեր բոլոր նուրբ մարմիններն իրենց գույներով:

Ցավոք, շատ քիչ են այնպիսի մարդիկ, որոնց նուրբ մարմինները դեռևս հարթ են, ողորկ, առանց նվազագույն թերության:

Մեծ մասի նուրբ մարմինները լեցուն են «պալարներով» ու մուգ բծերով: Դրանք այն «փակոցներն» են, որոնք դուք ձեռք եք բերել եռաչափ աշխարհում ունեցած ձեր բազմաթիվ մարմնավորումների ընթացքում:

Հենց դրանցում էլ պարունակվում են շուրջը կատարվածի «հակազդման ծրագրերը»:

Եվ մեր խնդրին է տարրալուծել ձեր «ստորին» նուրբ մարմիններում եղած այդ բոլոր հին ծրագրերը և տեղափոխել ձեր անգիտակցական

հակազդեցությունները վեր՝ բուդհիական և ատմայական մարմինների մեջ, որոնցում ամփոփված է ձեր Աստվածային էությունը:

Յուրաքանչյուր մարդու այս նուրբ մարմիններն անձեռնմխելի են մնում, որովհետև նսեմ բացասական էներգիաներն իրենց թրթռանքով ի գորու չեն հասնելու նրանց:

Մակայն քանի որ երկվության աշխարհի մարդու ամբողջ կյանքն անցնում է առաջին հինգ մարմինների թրթռոնների մեջ, վեցերորդ և յոթերորդ մարմինները մնում են քնած՝ անգործուն վիճակում:

Նախքան այդ վերին՝ Աստվածային մարմինների «ծրագրավորումն» սկսելը, դուք պետք է կանչեք Տիեզերքի Սկզբնարարչի էներգիան և խնդրեք տարրալուծել բոլոր հուզական, մտածական և վարքային կարծրատիպներն ու շաբլոնները, որոնք գտնվում են ձեր առաջին հինգ մարմիններում:

Միանգամայն հնարավոր է, որ ստիպված լինեք մի քանի մեդիտացիա անել:

Դուք ինքներդ կզգաք, թե երբ ձեր մարմինները լիովին կմաքրվեն:

Ում մոտ թույլ է զարգացած վիզուալիզացումը, կարող է դա հասկանալ բազմաթիվ այլ նշաններով:

Ուշի ուշով հետևեք ձեր վարքագծին և հատկապես ձեր հակազդեցությանը ձեր կյանքի յուրաքանչյուր փոքր ու մեծ իրադարձությանը:

Դուք կզարմանաք, թե որքան արագ այն կսկսի փոխվել. որտեղ նախկինում հուզական պոռթկում էր լինում և կյանքի ամենաբացասական սցենարների ծրագրավորում, այժմ կլինի տեղի ունեցածի իմաստուն ու հանգիստ ընդունում:

Դա կնշանակի, որ ձեր ստորին նուրբ մարմինների թրթռոններն արդեն ելել են բոլորովին այլ մակարդակի, այսինքն ձեզ հաջողվել է ազատվել եռաչափ աշխարհի փակոցներից:

ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ «ՄԿԱՎԱՌԱԿԸ» (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ.

Այսօր ես ուզում եմ ձեզ տալ ևս մի պրակտիկա, որը կօգնի ձեր ենթագիտակցության մեջ ներդնելու ձեր կյանքում տեղի ունեցող բոլոր դեպքերին ի պատասխան դրսևորվող ձեր անգիտակցական հակազդեցության նոր ծրագիր:

Այժմ դուք պետք է աշխատեք յոթերորդ չակրայի կամ, այլ կերպ ասած, թագի չակրայի հետ:

Որտեղի՞ց է գալիս նման անունը:

Եռաչափ աշխարհում թագն է պսակում գլուխը տիրակալների՝ նրանց, ովքեր կառավարում են մարդկանց և որոնցից է կախված, թե ինչպիսին կլինի այդ մարդկանց կյանքը:

Նույն կերպ էլ ձեր թագի չակրան է մարդու ԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ ՊՄԱԿԸ՝ նրա Աստվածայնության զետեղարանը:

Ակտիվացնելով այն, մարդն ունակ է դառնում ինքնուրույն արարելու իր իրականությունը, այսինքն դառնալու իր սեփական կյանքի «տիրակալը»:

Եվ եթե ձեզ հաջողվի նրա մեջ տեղափոխել ձեր բոլոր անգիտակցական հակազդեցությունները, դուք իսպառ կազատվեք եռաչափ աշխարհի հին ծրագրերից:

Դուք պետք է շատ աշխատեք, որպեսզի դա տեղի ունենա:

Մակայն մենք կսկսենք փոքրից:

Պրակտիկան, որ պատրաստվում եմ ձեզ տալ, կօգնի «գերությունից ազատել» ձեր ենթագիտակցությունը, որը դարեր շարունակ կաշկանդված է եղել մարդու համար օտարածին ծրագրերով, որոնք

արհեստականորեն ներդրվել են նրա գիտակցության և ենթագիտակցության մեջ:

Բայց նախ և առաջ կուզեի բացատրել ձեզ, թե ինչ է ներկայացնում մարդու ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ և որն է նրա գլխավոր տարբերությունը գիտակցությունից:

Հենց ենթագիտակցությունն է մարդու կյանքում տեղի ունեցող ամենայն իրադարձության հանդիման նրա բոլոր ինքնաբերական ինքնաբուխ հակազդեցությունների պահոցը:

Եվ եթե մարդու գիտակցությունը բավական ճկուն է ու դյուրաշարժ, ապա ենթագիտակցությունը ամուր ու կայուն «տվյալների շտեմարան» է, որը պահվում է յոթ կնիքների հետևում, և մարդու համար անչափ դժվար է մուտք գործել սեփական կարծրատիպային հակազդեցությունների այդ «պահոցը»:

Այդ հակազդեցություններն ամրապնդվել են եռաչափ աշխարհում ունեցած իր շատ ու շատ մարմնավորումների փորձով, և դրանց հիմքում ամենացածր թրթռանքի էներգիաներով կառավարվող գոյատևման բնագոյն է:

Յուրաքանչյուր նոր մարմնավորման հետ այդ բնագոյներն ավելի ու ավելի են ամրապնդվել, բառիս բուն իմաստով ներաճելով մարդու ենթագիտակցության մեջ:

Եվ հիմա դուք պետք է շերտ առ շերտ հանեք այդ մտածները (мыслемы)՝ կարծրատիպերը, ձեր ենթագիտակցությունից, որպեսզի լիովին մաքրեք այն և տեղ բացեք ձեր կյանքում կատարվող իրադարձություններին հակազդելու այլ՝ Աստվածային ծրագրերի համար:

Եվ այսպես, անցնենք բուն պրակտիկային: Անվանենք այն **«Ենթագիտակցության “սկավառակը”**»:

Պատկերացրեք ձեր ենթագիտակցությունը սկավառակի տեսքով, որի վրա գրանցված են ձեր բոլոր անգիտակցական հակազդեցությունները:

Դուք կարող եք այն պատկերացնել տեղեկատվության ցանկացած կրիչի տեսքով, ինչպես որ ձեր ինտուիցիան կհուշի:

Այնուհետև սկսեք աստիճանաբար, առանց շտապելու, մաքրել այն իր մեջ տպված բոլոր ծրագրերից:

Անգամ կարող եք այն պատկերացնել համակարգչային սկավառակի տեսքով, որի միջից մեկը մյուսի հետևից ջնջում եք ձեր անցյալ կյանքի բոլոր «էջերը», որոնք ավերիչ ծրագրեր են պարունակում:

Ձեր աշխատանքի արդյունքը պիտի լինի բացարձակապես մաքուր սկավառակը, որը պատրաստ կլինի ընդունելու Տիեզերքի հավիտենական և անխախտ Օրենքների վրա հիմնված նոր Աստվածային «էջեր» ու ծրագրեր:

Դա կօգնի ձեզ լիովին ակտիվացնել ձեր Թագի չակրան և սկսել կառուցել կյանքն այնպես, ինչպես կհուշի ձեր Բարձրագույն Եսը, և ոչ թե եռաչափ աշխարհի կարծրատիպերը:

Այսօր կսահմանափակվենք այսքանով:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԴՐԱԽՏ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ.

Եվ այսպես, հենց որ ամբողջությամբ մաքրեք ձեր ենթագիտակցությունը անգիտակցական հակազդման բոլոր հին ծրագրերից, [ձեր ենթագիտակցության «սկավառակն»](#) արդեն պատրաստ կլինի ընդունելու նոր ծրագրեր:

Սրանք, ի տարբերություն հների, բոլորովին այլ թրթիռներ ունեն, և այդ պատճառով էլ ունակ կլինեն զետեղվելու ձեր վերին՝ ատմայական և բուդիական մարմիններում:

Իսկ որո՞նք են այդ նոր ծրագրերի հիմնական հատկանիշները:

Առաջին՝ նրանք կրում են Հինգերորդ չափման թրթիռներ, ուր տեղ չկա և ոչ մի բացասական էներգիայի:

Երկրորդ՝ ծագում են սկզբնաղբյուրից՝ Անպայման Սիրո էներգիայից, այսինքն բացառում են ամենայն բաժանում, ինչը հատուկ է երկվության աշխարհին:

Երրորդ՝ նպատակ ունեն բարձրացնելու մարդուն հոգևոր զարգացման նոր աստիճանի:

Չորրորդ՝ արարչական սկզբունք են կրում իրենց մեջ և բացում են մարդու ստեղծագործական ներուժը:

Հինգերորդ՝ արթնացնում են մարդու Աստվածային էությունը:

Վեցերորդ՝ անտեսանելի պաշտպանություն են ստեղծում եռաչափ աշխարհից:

Եվ յոթերորդ՝ հնարավորություն են տալիս կողքից նայել ողջ անցուդարձին, երրորդ աչքի չակրայի օգնությամբ ակտիվացնելով հոգևոր տեսողություն, իսկ թագի չակրայի օգնությամբ՝ Աստվածային տեսողություն:

Այդ կերպ, նրանք շրջում են մարդու գիտակցությունը դեպի այլ հուն և նպաստում արդեն բոլորովին ուրիշ մտաձևերի (мыслетформы) ամրակայմանը նրա ենթագիտակցության մեջ:

Ինչպես արդեն բացատրել եմ իմ նախորդ ուղերձներում, **ամենայն կատարվածի նկատմամբ հենց ինքնաբուխ, անգիտակցական հակազդեցություններն են ծնունդ տալիս գործողությունների հետագա ծրագրին, այսինքն՝ նաև ձեր կյանքի իրադարձությունների զարգացման սցենարին:**

Եվ այժմ ես կտամ մի պրակտիկա, որը կօգնի ձեր ենթագիտակցության մեջ «գրանցել» նոր, Աստվածային ծրագիր:

Անվանենք այն «**Վերադարձ դեպի Դրախտ**»:

Կանչե՛ք ձեր բոլոր Երկնային օգնականներին, ընդունե՛ք մեղիտաստիվ դրություն և խո՛ր շնչեք:

Այնուհետև խնդրե՛ք ձեր Բարձրագույն Եսին վերադարձնել ձեզ ձեր կյանքի այն շրջափուլը, երբ Երկրի վրա իշխում էր Անպայման Սերը և մարդը չգիտեր՝ ինչ է բաժանությունը:

Դա նրա գոյության արշալույսն էր, երբ մարդիկ իրենց աստվածներ էին զգում՝ Երկնքից Երկիր իջած:

Զգացե՛ք լիակատար անվտանգության և աշխարհի հանդեպ անսահման վստահության այն երանելի վիճակը:

Եվ հենց որ լիովին զգաք այդ վիճակը, խնդրե՛ք ձեր Բարձրագույն Եսին, որը բնակվում է ձեր Բուդհիական մարմնում, և ձեր Աստվածային Եսին, որն ապրում է Ատմայական մարմնում, այլևս ընդմիջտ պահպանել այդ վիճակը ձեր ենթագիտակցության «սկավառակի» վրա:

Եվ ամեն անգամ, երբ կուզենաք կրկին վերապրել այդ զարմանալի զգացումը, մտովի բացե՛ք այդ կախարդական «էջը»՝ վերադառնալով ձեր ակունքները:

Զանազե՛ք անել դա հնարավորինս հաճախ, հատկապես կյանքի դժվարին պահերին, որպեսզի ամրապնդեք այդ վիճակը որպես ինքնաբուխ հակազդման ձեր նոր ծրագիր:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ.

Այսօր ես կուզեի հանրագումարի բերել ձեր ենթագիտակցության վերածրագրավորմանը վերաբերող իմ ուղերձների շարքը:

Եվ այսպես, դուք արդեն գիտեք, որ կյանքի բոլոր իրադարձություններին մարդու ինքնաբուխ հակազդման «չարյաց արմատը» թաքնված է իր ենթագիտակցության մեջ:

Նշանակում է, այդ պատճառն արմատախիլ անելու համար դուք պետք է մաքրվեք եռաչափ աշխարհի բոլոր ծրագրերից, որոնք ձևավորում են չգիտակցված ենթագիտակցական հակազդեցություններ:

Որպես կանոն, դրանց հիմքում վախն է՝ իր բոլոր դրսևորումներով:

Ընդ որում, դա լինում է նույնիսկ այն ժամանակ, երբ մարդը երջանիկ է: Ենթագիտակցական մակարդակում նա միշտ վախենում է կորցնել իր երջանկությունը:

«Այնքան լավ է, որ նույնիսկ սարսափելի է» արտահայտությունը հենց դրանից է ծագել:

Եվ իր ունեցածը կորցնելու այդ վախը թույլ չի տալիս մարդուն լիովին վայելել իր կյանքը:

Արդյունքում՝ նա հիրավի առձգում է անախորժություններ, քանի որ արտաքինը միշտ անդրադարձնում է ներքինին:

Այսպիսով, հենց որ կատարեք [ձեր ենթագիտակցության մեջ պարունակվող հակազդման եռաչափ ծրագրերի տարրալուծման պրակտիկան](#), կանցնեք հաջորդ քայլին:

Ակտիվացնելով ձեր [Հոգևոր տեսողությունը](#) և [Աստվածային տեսողությունը](#), դուք սկսում եք ինքնաբուխ հակազդման նոր ծրագիր զետեղել արդեն ձեր «Բարձրագույն»՝ Բուդհիական և Ատմայական մարմիններում:

Եվ հիմա այդ ծրագրի հիմքում ոչ թե վախն է, այլ լիակատար վստահությունը աշխարհի նկատմամբ:

Դուք գիտեք, որ ձեր կյանքում ամեն ինչ կատարվում է ՄԻՇՏ ՀՕԳՈՒՏ ՁԵԶ, նույնիսկ եթե եռաչափ աշխարհի մարդու տեսակետից իրադարձությունները անախորժ, տխուր և անգամ ողբերգական թվան:

Ձեր նոր ենթագիտակցությունն այլևս չի բաժանում դրանք լավի և վատի, այլ ընդունում է ամեն ինչ որպես ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ, որը դուք ինքներդ եք ստեղծել ձեր մտքերով և զգացմունքներով:

Եվ քանի որ դուք բոլորդ շարունակում եք անցնել ձեր դասերը եռաչափ աշխարհում, կյանքը հառնում է ձեր առջև իր ամբողջ բազմազանությամբ, երբեմն մատուցելով խիստ անսպասելի անակնկալներ:

Սակայն այժմ դուք ամեն ինչի վերաբերվում եք Սիրով և Շնորհակալությամբ, ձեր ճակատագրի բոլոր վայրիվերումներն ընդունելով որպես գրավիչ մի ճամփորդություն, որ որոշել է ձեռնարկել ձեր Հոգին՝ իջնելով Երկիր հենց այդպիսի փորձառության համար:

Եվ դուք օգնում եք նրան պատվով անցնել իր բոլոր վերջին դասերը Երկրի վրա, որպեսզի արդեն ընդմիջտ լքեք երկվության աշխարհը և համբարձվեք Հինգերորդ չափում ձեր մոլորակի հետ միասին:

Եվ այս նոր ծրագիրը ձեր արդեն Աստվածային ենթագիտակցության մեջ ամրակայելու համար ես ուզում եմ տալ ևս մեկ, ոչ դժվար պրակտիկա:

Այդպես էլ կանվանենք այն՝ «Աստվածային ենթագիտակցություն»:

Նրա համար հարկ չկա մեղիտատիվ դրություն ընդունել, որովհետև այն պիտի դառնա ձեր ամենօրյա ուղեկիցը:

Պարզապես ամեն անգամ, երբ կյանքն ինչ-որ նոր ու անսպասելի բան է հրամցնում, պատկերացրեք ձեր ենթագիտակցությունը ոսկյա սկավառակի տեսքով, որի վրա գեղեցիկ տառերով փորագրված է հետևյալը.

Դուք Աստծո զավակն եք, այսինքն՝ Աստվածամարդ:

Դուք Արարչի և Տիեզերքի բոլոր Բարձրագույն Ուժերի պաշտպանության տակ եք, որոնք պատրաստ են ամեն վայրկյան սատարելու ձեզ՝ ձեր առաջին իսկ օգնության կանչով:

Դուք ինքներդ եք արարում ձեր կյանքը Սիրով, Շնորհակալությամբ և ձեր ուժերի նկատմամբ Անսահման Հավատով:

Այսուհետև և ընդմիջտ ձեր ենթագիտակցության ոսկյա սկավառակը կբովանդակի ՄԻԱՅՆ այս հաստատումները:

Օրհնում եմ ձեզ, զավակներ՝ րս, և անչափ սիրում:

ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ «ՔԱՂՀԱՆ» (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 22 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 Թ.

Այսօր ես ուզում եմ փոքր-ինչ այլ առումով խոսել չորրորդ չափման մարդու ենթագիտակցության մասին:

Քանի որ նախորդ ուղերձներում խոսվում էր արդեն վերջնականապես չորրորդ չափման տարածություն տեղափոխված մարդու գիտակցության և ենթագիտակցության հետզհետե մերձեցման մասին, այժմ կուզեի ավելի հանգամանորեն ներկայացնել դրանց փոխազդեցության պրոցեսը:

Ինչպես արդեն ասվել է [խմ նախորդ ուղերձում](#), եթե գիտակցությունը կառավարել դուք կարող եք՝ վերահսկելով ձեր մտքերն ու զգացմունքները, ապա ենթագիտակցությունը ձեզ համար տակավին մնում է անմատչելի:

Նրա մեջ ներդրված ծրագրերը գործում են ինքնուրույնաբար և, այդուհանդերձ, մարդու գիտակցությունն ու ենթագիտակցությունը սերտորեն շաղկապված են միմյանց:

Եվ դա պայմանավորված է նրանով, որ **ձեր ենթագիտակցության «նկուղ» իջնում են այն գիտակցական ծրագրերը, որոնք այնքան են արմատավորվում ձեր մեջ, որ թանձրանում են մինչև ենթագիտակցության մակարդակ:**

Այդ իսկ պատճառով, միշտ ավելի լավ է սեփական ենթագիտակցության հետ աշխատանքը սկսել սեփական թույլ տեղերի ուսումնասիրումից, որոնք դուք ի վիճակի եք հայտնաբերել գիտակցության մակարդակում:

Այսպես, օրինակ, եթե նկատել եք ձեր հաճախակի կրկնվող բացասական հակազդեցությունները (реакция) ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի նկատմամբ, ուրեմն անպայման պիտի աշխատեք,- մտովի, զգացմունքայնորեն, էներգապես:

Եվ ձեզ արդեն բավականաչափ պրակտիկաներ տրվել են բացասական զգացմունքները դրականի փոխակերպելու համար:

Ընտրեք դրանցից այն պրակտիկաները, որոնք առավել հեշտ են տրվում ձեզ, և սովորություն դարձրեք կիրառել դրանք, հենց որ անհրաժեշտություն ծագի:

Արդյունքում, ձեր գիտակցության շտկման միջոցով դուք կսկսեք ներգործել նաև ձեր ենթագիտակցության վրա:

Դա կարելի է համեմատել մոլախոտի քաղհանի հետ, երբ դուք խնամքով ազատում եք ցանկալի պտուղը այն ամենից, ինչ խանգարում է նրան աճել:

Եվ տվյալ դեպքում այդպիսի պտուղ է ձեր **նոր ենթագիտակցությունը**, իսկ «մոլախոտ»՝ եռաչափ աշխարհի արդեն հնացած մտային և զգացմունքային ծրագրերը:

Այդ աշխատանքը դյուրին չէ, որովհետև «մոլախոտերը» խոր արմատներ են ձգել ձեր ենթագիտակցության մեջ, սակայն դուք պետք է դրանք պոկեք անպայման արմատով, այլապես նորից կաճեն, այն էլ՝ ամենակարճ ժամկետում:

Ձեր աշխատանքը հեշտացնելու նպատակով ես ուզում եմ տալ ևս մեկ թեթև պրակտիկա, որն այդպես էլ կանվանենք՝ «Ենթագիտակցության “քաղհան”»:

Այն կարելի է անել հրնթացս, երբ անհրաժեշտություն զգաք:

Հենց որ ձեր գիտակցությունն արձանագրի ինչ-որ ինքնաբերի, անկառավարելի հակազդեցություն, որը հատուկ է եռաչափ աշխարհի մարդուն, ինչպես ասենք՝ վախը, նախանձը, խանդը, ջղայնությունը, անհամբերությունը և այլն, պատկերացրեք այդ զգացումը մոլախոտի տեսքով:

Այնուհետև սկսեք ոչ թե պարզապես «պոկել» այդ զգացում-«մոլախոտը» ձեր գիտակցությունից, այլ անպայման «արմատախիլ անել» ենթագիտակցության միջից, կիրառելով բոլոր այն գիտելիքներն ու պրակտիկաներ, որ վաղօրոք տրվել են ձեզ այս կայքէջում:

Նման գիտակցական և խոր աշխատանքը ինքներդ ձեզ հետ կարող է տալ արագ և լավ արդյունքներ:

Դուք կնկատեք, որ ձեր հակազդեցությունը համանման իրավիճակների նկատմամբ կփոխվի, և բացասական զգացմունքներին կփոխարինեն եթե ոչ դրական, ապա գոնե չեզոք զգացումներ:

Դուք այլևս չեք դատի ինչ-որ մեկի կամ բանի մասին, այլ հանգիստ կդիտեք, թե ինչ է տեղի ունենում:

Եվ թո՛ղ այս պրակտիկան ձեր առաջին քայլը դառնա ձեր գիտակցության և ենթագիտակցության մերձեցման ճանապարհին արդեն նոր՝ չորրորդ չափման մակարդակում:

Եվ ես օրհնու՛մ եմ ձեզ, որ այդպես լինի:

ԱՐՈՐՆԵՐ ՁՈՒԼԵՆՔ ՍՐԵՐԻՑ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Շարունակելով [իմ նախորդ ուղերձը](#), այսօր կխոսենք մարդու զգացմունքային մարմնի և հոգևոր Զարթոնքի մեջ ունեցած իր դերի մասին:

Զգացմունքային մարմինը հաճախ անվանում են նաև աստրալ և, իհարկե, դա պատահական չէ:

Հիմնականում հենց նրա՛ վրա են «թռչում-գալիս» բոլոր տեսակների և մակարդակների աստրալ էությունները:

Նրանցից յուրաքանչյուրը առձգվում է ինչ-որ զգացմունքով, որը, որպես կանոն, բազմաթիվ նրբերանգներ ու երանգներ է ունենում:

Բացի այդ, զգացմունքային մարմինն իր մեջ է ներառում եռաչափ աշխարհի բոլոր ծրագրերը, չէ՞ որ հենց դրանք են ծնունդ տալիս բոլոր այն զգացմունքներին, որոնցով հիմնականում ապրում է երկվության աշխարհի մարդը:

Գրեթե բոլոր այդ զգացմունքներն ու ծրագրերը կրում են իրենց մեջ չափազանց ցածրաթրթիռ էներգիաներ, որոնց հիմքում գլխավոր և ամենատարածված էներգիան է՝ ՎԱԽԻ ԷՆԵՐԳԻԱՆ:

Մենք շատ ենք խոսել այդ մասին, ուստի այսօր կանդրադառնանք նրան, թե ինչպես են ազդում նոր՝ բարձրաթրթիռ էներգիաները

մարդու զգացմունքային մարմնի վրա և թե ինչպես կարող էք դուք արագացնել ձեր Զարթոնքի պրոցեսը՝ մաքրելով ձեր զգացմունքային մարմինը:

Անչափ կարևոր է, որ այդ մաքրումը կատարվի ոչ միայն դրսից, այլև ներսից:

Ինչպես արդեն գիտեք, ներկայումս Երկիր եկող բարձրաթրթիռ էներգիաները մարդը ստանում է գլխավորապես անգիտակցորեն:

Սակայն եթե ուժգնացնեք նրանց ազդեցությունը ինքներդ ձեզ հետ տարվող գիտակցված աշխատանքով, ձեր Զարթոնքը զգալիորեն արագ կընթանա:

Ու թեև ձեզ արդեն տրվել են բազմաթիվ պրակտիկաներ վախից և նրանից բխող բոլոր բացասական էներգիաներից ազատվելու համար, այսօր ես ուզում եմ տալ ևս մեկ՝ ունիվերսալ պրակտիկա, որը հրաշալի գուգակցվում է արդեն լիովին չորրորդ չափման տարածություն մտած ձեր մոլորակի այժմյան էներգիաների հետ:

Անվանենք այն «Արորներ ձուլենք սրերից»:

Ինչու՞ եմ այդպես անվանել պրակտիկան:

Նախ և առաջ այն պատճառով, որ բարձր չափումների աշխարհներում բոլորովին այլ կյանքային առաջնություններ և խնդիրներ են:

Նրանք ուղղված են այլևս ոչ թե ինքնին գոյատևմանը, և հաճախ՝ ուրիշ մարդկանց հաշվին, այլ խաղաղ ստեղծագործ կյանքին, որի հիմքը կազմում են Ազատությունը, Հավասարությունն ու Եղբայրությունը:

Եվ այսպես, անցնենք բուն պրակտիկային:

Դրա համար հարկավոր է լրիվ թուլանալ, կանչել բոլոր Երկնային օգնականներին և մտնել բավական խոր մեղիտատիվ դրության մեջ:

Այնուհետև կանչե՛ք Տիեզերական Սիրո Կրակը և խնդրե՛ք մաքրել ձեր զգացմունքային մարմինը բոլոր էներգիաներից ու ծրագրերից, որոնք պատասխանատու են եռաչափ աշխարհում ողջ մնալու համար:

Դուք կարող եք զգալ, թե ինչպես է թրթռում կամ ժամացույցի սլաքի ուղղությամբ պտտվում ձեր երրորդ չակրան:

Եթե պտույտ զգաք, ջանացե՛ք առավելագույն արագություն ու ընդգրկման շառավիղ հաղորդել նրան՝ ձեր զգացմունքային մարմինը մանրակրկտորեն մաքրելու համար, «փոշիացնելով» ամենայն հինը, ժամանակավրեպը, եռաչափը. . .

Եվ երբ զգաք, որ պտույտը հանդարտվել է, իսկ ձեր զգացմունքային մարմինը լիովին մաքրվել է եռաչափ աշխարհի էներգիաներից, կանչե՛ք Համբարձման էներգիան և խնդրե՛ք պարարել այն իրենով:

Միանգամայն հնարավոր է, որ շարժում զգաք ձեր վերին չակրաներում, քանի որ այդ բարձրաթրթիռ էներգիան ձեր էներգատարածություն կմտնի յոթերորդ չակրայի միջով, հետզհետե իջնելով դեպի երրորդը:

Մեղիտացիայից դու՛րս եկեք միայն այն ժամանակ, երբ բոլոր զգացողությունները երրորդ չակրայի շրջանում լիովին հանդարտվեն:

Դուք կարող եք կրկնել այս մեղիտացիան մի քանի անգամ, մինչև որ վերջնականապես համոզվեք, որ այլևս ենթակա չեք եռաչափ աշխարհի ցածրաթրթիռ էներգիաներին ու ծրագրերին:

Օրհնու՛մ եմ ձեզ և անսահման սիրում:

ՄԻՐՈՒ ԲՅՈՒՐԵՂԻ ԾԻԱԾԱՆԸ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Այսօր մենք կգրուցենք այն մասին, թե ինչ ազդեցություն է գործում մարդու Ջարթոնքի վրա նրա մտային (մենտալ) մարմինը:

Իրականում՝ շատ մեծ, քանի որ նրա հետ անքակտելիորեն կապված սրտի չակրայում գտնվում է Սիրո Բյուրեղը, որը ներկայումս ակտիվացած է ձեր մոլորակի գործնականորեն բոլոր մարդկանց մոտ:

Այլ հարց է, թե ինչպես է այն տնօրինում մարդն ինքը:

Անշուշտ, շատերը նույնիսկ չգիտեն նրա գոյության մասին:

Բանն այն է, որ ձեր չորրորդ չակրան սահմանային չակրա է՝ ստորին և վերին չակրաների միջև:

Եվ մարդու հոգևոր զարգացման մակարդակից կամ դրա լիակատար բացակայությունից կախված, այն կա՛մ ստորին, կա՛մ վերին չակրաների «կողմն է բռնում»:

Դա տեղի է ունենում Ձգողության Օրենքի համաձայն. մարդու չակրաների և նուրբ մարմինների գերակշռող թրթիռները «ձգում են» նրան դեպի մեկ կամ մյուս կողմը:

Այդ պատճառով էլ Սիրո Բյուրեղը կարող է լիարժեքորեն ակտիվացած լինել միայն լավ զարգացած վերին չակրաներով մարդկանց մոտ, որոնք պատրաստ են ընդունելու այդչափ բարձր թրթռանքի էներգիան:

Ես գիտեմ, որ շատերդ գրեթե ֆիզիկապես զգում եք Սիրո Բյուրեղը ձեր սրտի չակրայում:

Եվ դա նշանակում է, որ այն ձեզ մոտ լիովին ակտիվացած է և դուք կարող եք գործածել ըստ նշանակության:

Իսկ այդ «նշանակությունը» Ջարթոնքի պրոցեսն արագացնելն է ինչպես ձեր, այնպես էլ համայն մարդկության մեջ:

Ձեզնից շատերն արդեն վաղուց անգիտակցաբար օգտվում են այդ գործիքից:

Ձեր ներկայությունն իսկ Երկրի վրա փոխում է նրա թրթիռային ֆոնը, որովհետև ձեր բարձր թրթռանքը, միաձուլվելով Երկրի այժմյան թրթիռների հետ, փոխակերպում է ձեր շրջակա էներգետիկական տարածությունը առնվազն չորրորդ չափման:

Բայց եթե դուք սովորեք գիտակցաբար օգտվել այդ գործիքից, ձեր Ջարթոնքի պրոցեսը բազմակիորեն կարագանա, ինչը բարենպաստ

կանդրադատնա նան ձեր շուրջը եղած բոլոր մարդկանց վրա՝ ծանոթ լինեն, թե անծանոթ:

Ու թեև արդեն տրվել են Սիրո Բյուրեղի հետ աշխատելու պրակտիկաներ, ես ուզում եմ տալ ձեզ ևս մեկը՝ շատ պարզ ու գործուն մի պրակտիկա, որը կարող էք կիրառել բառիս բուն իմաստով հրնթացս:

Որքան կարելի է հաճախ պատկերացրեք ձեր Սիրո Բյուրեղը Համբարձման Էներգիան խորհրդանշող ծիածանի գույնով, ինչպես նան՝ ձեր յոթ չակրաներն ու նրանց համապատասխանող յոթ մարմինները:

Ջանացե՛ք զգալ, որ այն ամբողջությամբ ներծծված է Համբարձման Էներգիայով:

Այդ Էներգիայի բարձրագույն թրթիռների հաշվին այն գնալով ավելի ու ավելի է նոսրանում՝ վերածվելով հսկայական, շողշողուն Բյուրեղի՝ աներևակայելիորեն գեղեցիկ ու հզոր:

Նրա ծիածանագույն ճաճանչները տարբալուծում են ձեր ճանապարհին հանդիպած մարդկանց բոլոր բացասական Էներգիաներն ու ծրագրերը:

Նրա Աստվածային Լույսը թափանցում է մարդկային հոգիների բոլոր մութ անկյունները, մաքրելով մարդկանց ենթագիտակցությունը երկվության բոլոր տեսակներից, որոնք թույլ չեն տալիս գնալ Համբարձման ուղիով:

Բանեցրե՛ք Խավարը Լույսի փոխակերպող այդ հրաշալի, հզոր, բարձրաթրթիռ «գործիքը» «առանց դադարի աշխատանքային ռեժիմով», և դա շատ անգամ կարագացնի թե՛ ձեր, թե՛ ձեր ճանապարհին հանդիպած յուրաքանչյուր մարդու Ջարթոնքը:

Արդյունքում կսկսի փոխվել մարդկության հավաքական գիտակցությունը, այդ կերպ նպաստելով ձեր մոլորակի շուտափույթ անցմանը նախ չորրորդ, ապա նան Հինգերորդ չափում:

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ԳԼՈՒԽ IV

ՆԵՐՔԻՆ «ԴԻՎԵՐՍԱՆՏՆԵՐ»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՎԵՐԻՉ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐՔԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

IV ԳԼՈՒԽ ՀԱՎԵԼՎԱԾ

99

1. ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

3. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԵՋ

4. ԻՆԵՐՏՈՒԹՅՈՒՆ

5. ԿԵՆՍԱԿԵՐՊԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ

6. ՎՏԱՆԳԱՎՈՐ «ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ»

7. ԱՄԵՆԱՆԵՐՄԱՆ ՄԵԾԱԶՈՐ ՈՒԺԸ

8. ԶԵՐԲԱԶԱՏՈՒՄ ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆԵՐԻՑ (ՊՐԱԿՏԻԿԱ)

9. ՎԻՐԱՎՈՐԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԷԳՈՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

ԱՎԵՐԻՉ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՑԱՐՉԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՉԸ, 29 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

Այսօր ես ուզում եմ անդրադառնալ ձեր հոգևոր ուղու փուլերի շուտափույթ հաղթահարման գործողությունների պլանի չորրորդ կետին:

Եվ այսպես, դուք այլևս չեք դիտում ու լսում պաշտոնական լրատվամիջոցները, աշխատել եք ձեր վախերի հետ՝ քշելով ձեր գիտակցությունից ու ենթագիտակցությունից, սովորել եք պաշտպանել ձեր էներգետիկական տարածությունը արտաքին ազդեցություններից և յուրացրել եք ամենատարբեր մարդկանց հետ շփվելու սկզբունքները:

Մակայն դուք պետք է անշուշտ հասկանաք, որ ձեր կատարելագործման պրոցեսն անվերջ է, և այդ պատճառով դուք պետք է մշտապես հետևեք ձեզ, գիտակցաբար վերաբերվեք ինքներդ ձեզ, որովհետև ստիպված եք կրկին ու կրկին անցնել «ամրության ստուգումներ», որ ձեզ համար կկազմակերպեն կյանքն ու մերձավորները:

Եվ հիմա ժամանակն է եկել խոսելու **ձեր ներքին տարածության պաշտպանության մասին արդեն ոչ թե արտաքին ազդեցություններից, այլ հենց ձեզնից, այսինքն՝ ձեր Էգոյից և տարիներով ձեռք բերված սովորություններից:**

Ու թերևս շատերիդ համար հենց դա՝ է փորձաքար դառնում ձեր հոգևոր ճանապարհին:

Ինչու՞ է այդչափ դժվար լինում ազատվել սեփական վատ սովորություններից:

Նախ և առաջ այն պատճառով, որ դուք չեք նկատում դրանք, քանի որ դարձել են արդեն ձեր երկրորդ բնավորությունը:

Եկեք դիտարկենք, օրինակ, մերձավորների մասին հոգ տանելու սովորությունը, որ եռաչափ աշխարհի մարդու տեսանկյունից հրաշալի հատկություն է համարվում:

Իսկ ի՞նչ կա թաքնված այդ՝ թվում է, թե լավ սովորության տակ:

Շատերը, հատկապես կանայք, այնքան են սովորել վերահսկելու մերձավորներին, որ չեն էլ նկատում դա:

Որպես հետևանք, էներգետիկական մակարդակում տեղի են ունենում այսպիսի պրոցեսներ:

Ձգտելով ամեն ինչ իմանալ իրենց որդու, դստեր, ամուսնու կամ կնոջ, ծնողների, ընկերների, գործընկերների յուրաքանչյուր քայլի մասին, նման մարդիկ մշտապես գտնվում են նրանց դաշտում՝ առանց քաշվելու ներխուժելով ուրիշի էներգետիկական տարածություն:

Եվ նույնիսկ եթե նման ներխուժման նպատակը հոգածությունն է և օգնելու, ինչ-որ բանից պաշտպանելու, կյանքը թեթևացնելու ցանկությունը, այնուամենայնիվ դա Ազատ Կամքի Օրենքի խախտում է:

Եվ ահա թե ինչու:

Այդ մարդկանց թվում է, թե հենց իրենք գիտեն՝ ինչպես և ինչ պետք է անեն ուրիշները, ինչը կլինի նրանց համար ավելի լավ, ավելի օգտակար, ապահով, ձեռնտու. . .

Դրա հետևանքով տեղի է ունենում այն մարդու անձի ճնշում, որին շարունակ փորձում են օգնել՝ թույլ չտալով ինքնուրույն որոշումներ ընդունել և իր սեփական փորձը ձեռք բերել:

Չէ՞ որ եթե անգամ այդ փորձը բացասական լինի, այն կլինի իր սեփակա՛ն, այլ ոչ թե ուրիշի փորձը:

Բացի այդ, նման հարաբերություններում տեղի է ունենում մշտական էներգետիկական փոխազդեցություն, որը հանգեցնում է անասելի տխուր հետևանքների, քանի որ կատարվում է այն մարդու դիմազրկում, որի զգացմունքները, մտքերն ու արարքները վերահսկվում են:

Նրա էներգետիկական տարածության մեջ ամուր հաստատվում է ուրիշի էներգիան և, որ է՛լ ավելի ցավալի է, ուրիշի կարման:

Այսպես, օրինակ, եթե մարդուն ճակատագրով նախասահմանված է իր մտածած գործը հասցնել բարեհաջող ավարտի, իսկ մերձավորներից մեկը, ելնելով իր սեփական փորձից, խոչընդոտում է դրան, մարդու կյանքի ողջ սցենարն արդեն գնում է սխալ՝ իր համար չնախատեսված ճանապարհով:

Եվ ցավոք սրտի, եռաչափ աշխարհում դա պատահում է ամեն քայլափոխին:

Օրինակ, հաճախ ծնողներն են ընտրում իրենց զավակների մասնագիտությունը, կյանքի ընկերոջը, կեցության երկիրը, տունը և շատ ուրիշ բաներ, ղեկավարվելով իրենց տեսանկյունից լավագույն նկատառումներով, իսկ իրականում այդպիսով խեղելով նրանց կյանքը:

Ինչու՞ էս հենց ա՛յդ օրինակը բերեցի:

Որովհետև հենց այդտեղ կարելի է հրաշալի տեսնել գործողությունների շարժառիթները թե՛ նրանց, ովքեր միջամտում են ուրիշի կյանքին, թե՛ նրանց, ովքեր ընդունում են նման «հոգատարությունը»:

Տվյալ դեպքում տեղի է ունենում «խաչաձև» ազդեցություն մեկմեկու վրա և միաժամանակ մարդու ներքին հատկությունների ներգործություն իր իսկ վրա, այսինքն նաև իր հոգևոր ուղու վրա:

Այդպես, «հովանավորը» կամ «վերահսկիչը», մշտապես մյուսին պարտադրելով իր կարծիքը, սնուցում է իր էզոն ու գոռոզությունը, իսկ նա, ով ենթարկվում է նրան, ցուցաբերում է թուլություն և անվստահություն իր իսկ նկատմամբ:

Արդյունքում երկուսն էլ խախտում են Ազատ Կամքի Օրենքը. առաջինը՝ պարտադրելով այն ուրիշին, երկրորդը՝ վախենալով այն դրսևորել:

Իսկ ընդհանուր առմամբ, թե՛ մեկին, թե՛ մյուսին ղեկավարում է **Վախը**՝ իր այլազան դրսևորումներով:

Առաջինի մոտ՝ մերձավորների վերահսկողության կորստի վախն է, երկրորդի մոտ՝ ինքնուրույն որոշում ընդունելու վախը:

Ինչպես տեսնում եք, գավակնե՛րս, յուրաքանչյուր բացասական էներգիայի կամ աններդաշնակ մտքի հիմքում միշտ Վախն է, որը ծնունդ է տալիս անվստահության իր և շուրջը եղած մարդկանց նկատմամբ, ինչը վերջիվերջո հանգեցնում է բացասական հետևանքների:

ՆԵՐՔԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ

ՆՇԱՆՆԵՐԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 30 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

103

Այսօր մենք [կշարունակենք գրույցը](#), թե ինչպես են ներգործում ձեր սեփական ներքին հատկությունները ձեր իսկ էներգետիկական տարածության վրա:

Հավանաբար շատերդ եք նկատել, որ ինչպիսի ուժեղ պաշտպանություն էլ առնեք ձեզ վրա, ժամանակ առ ժամանակ այն չի գործում:

Պատճառը առավելապես ձեր բացասական զգացմունքներն են և եռաչափ ծրագրերը, որոնք ներսից կոտրում են այդ պաշտպանությունը:

Այդպես դուք ինքներդ եք դառնում ձեր թրթռանքի անկման աղբյուրը:

Ցավոք, ոչ բոլորն են ի վիճակի դա ընդունելու, քանի որ սովորական մարդուն բնորոշ է իրենից դուրս փնտրել իր անհաջողությունների ու անախորժությունների պատճառը:

Մակայն չէ՞ որ դուք արդեն սովորական մարդիկ չեք, զավակնե՛րս, եռաչափ աշխարհի կատեգորիաներով մտածող, այլ՝ մարդիկ, որ ձգտում են ապրել նորովի, հետևելով Տիեզերքի՝ Օրենքներին, և ոչ թե երկվության աշխարհի:

Ուստի այսօր ես կպատմեմ, թե ինչպես կարող եք տարբերել ներքին էներգետիկական ներգործությունը արտաքինից:

Առաջին նշանը, որ ձեր աններդաշնակ վիճակը հրահրվել է ձեր իսկ բացասական զգացմունքներով, անբացատրելի անհանգստության կամ նույնիսկ տրտմության զգացումն է, որ ծնվում է ձեզ մոտ:

Ձեր Հոգի՛ն է այդպես հակադրում ձեր ամեն մի արարքին, որը զանց է առնում Տիեզերական Օրենքները:

Եվ անգամ մտահոգությունը մտերիմների համար այդպիսին է, քանի որ կրում է իր մեջ անվստահություն Բարձրագույն Ուժերի նկատմամբ՝ վախի էներգիա ներարկելով ինչպես ձեր սեփական, այնպես էլ այն մարդու աուրայի մեջ, որի համար մտահոգվում եք:

Սովորե՛ք նրբազգացորեն արձագանքել ձեր Հոգու դրսևորումների նվազագույն երևեջներին, որովհետև նա միշտ ջանում է իր ձայնը հասցնել ձեզ, տալով ինչ-որ նշան կամ հուշում, եթե սայթաքել եք:

Իմացե՛ք, որ եթե «մի բան կրծում է ձեր հոգին», ապա ամենայն հավանականությամբ դա ձեր սեփական մտքերը, զգացմունքները կամ արարքներն են:

Իսկ երբ ձեր Հոգին հանգիստ է, նշանակում է դուք ապրում եք ներդաշնակության մեջ ինքներդ ձեզ, շրջապատի մարդկանց և աշխարհի հետ, չխախտելով Տիեզերական Օրենքներից և ոչ մեկը:

Մարդու Հոգին իր Աստվածային «կամերտոնն» է ու ամենահուսալի օգնականը, և դա իր արտացոլանքն է գտել այնպիսի

արտահայտություններում, ինչպես՝ «Հոգին ուրախանում է, հրճվում է, երգում է» կամ «Հոգին տանջվում է, լալիս է, ցավում է» . . .

Հոգու այս տարբեր վիճակները անդրադարձնում են ձեր իսկ հասկություններն ու ապրումները և ուրեմն՝ ներքուստ ազդում են ձեր էներգետիկական տարածության վրա:

Երկրորդ նշանը, որ ձեր էներգետիկական պաշտպանությունը կոտրվել է ներսից, ձեր ֆիզիկական վիճակի վատթարացումն է:

Այն կարող է լինել ոչ այնքան հիվանդագին, որքան անհավասարակշիռ:

Մարդը դառնում է մտացրիվ, անուշադիր, դժվարանում է կենտրոնանալ իր արածի վրա:

Երբեմն զգում է, որ ինչ-որ բան այնպես չի արել կամ ասել, բայց չի կարողանում հստակ ձևակերպել իր անհանգստության պատճառը:

Ուրեմն ի՞նչ անել, եթե նման զգացումներ եք ունենում:

Նախ և առաջ՝ ուրախանալ, որ զգում եք:

Նշանակում է՝ ձեր Հոգին չի կարծրացել և նրբազգացորեն արձագանքում է ձեր ամեն մի աններդաշնակ արարքին և, որ ամենազնահատելին է, սերտորեն համագործակցում է ձեզ հետ՝ ուղարկելով նման հուշումներ:

Այնուհետև դուք պետք է վերստուգեք ձեր բոլոր նախընթաց մտքերը, զգացմունքներն ու արարքները, որոնց պետք է նայեք մի մարդու աչքերով, որը դուրս է եկել եռաչափ իրականության սահմաններից:

Եվ իհարկե՝ պետք է նայեք ամեն ինչին ազնիվ ու անկողմնակալ ձևով. չփնտրեք արդարացումներ, այլ դաս քաղեք կատարվածից՝ նույն բանը էլի ու էլի չկրկնելու համար:

Իսկ եթե ձեր հոգեկան անհարմարության պատճառը ուրիշների հետ ունեցած հարաբերություններն են, ներողություն՝ ն խնդրեք նրանցից, մի՛ վախեցեք թույլ երևալուց:

Իրականում դա ուժի՛ դրսևորում է, քանի որ սեփական սխալի ընդունումը հարգանքի արժանի արարք է:

Եվ կարողացե՛ք ներել ինքներդ ձեզ՝ ձեր սխալներն ընդունելով որպես եռաչափ աշխարհում ապրելու փորձ:

Մի՛ մեղադրեք ձեզ դրանց համար, այլ շարունակե՛ք առաջ գնալ ձեր հոգևոր ճանապարհով, ջանալով այդուհետ չկրկնել դրանք:

Մեծահոգի՛ եղեք թե՛ ձեր, թե՛ ուրիշների նկատմամբ, և դա կփոխհատուցվի հարյուրապատիկ չափով:

Օրհնու՛մ եմ ձեզ, զավակնե՛րս, և անսահման սիրում:

Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

IV ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ

ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 2 ԱՊՐԻԼԻ 2020 Թ.

Այսօր ես ուզում եմ խոսել այն բանի մասին, որը դուք անվանում եք սովորություններ:

Եվ թե ինչու է առաջ եկել հետևյալ արտահայտությունը՝ «սովորությունը երկրորդ բնավորությունն է»:

Ընդհանուր առմամբ, սովորությունը ձեր ենթագիտակցության մեջ ամրացած մտածական, զգացմունքային և վարքային շարվրնն է:

Այլ կերպ ասած, ձեր սովորությունները հենց մտածական ու վարքային այն կարծրատիպներն են, որոնց մասին արդեն բազմիցս խոսել ենք:

Այդ իսկ պատճառով դրանք այնքան էլ անվնաս չեն, ինչպես թվում է առաջին հայացքից:

Եվ բնավ հեշտ չէ փոխել սովորությունները, քանի որ դրանք իսկապես սերտաճել են ձեզ, դառնալով ձեր «երկրորդ բնավորությունը»:

Սակայն ամենացավալին այն է, որ սովորությունները սեղմում-նեղացնում են իրականության ձեր ընկալումը՝ իրադարձությունները հարմարեցնելով ձեր գիտակցության մեջ արդեն ձևավորված մտածական և վարքային «սխեմաներին»:

Դուք կարող եք հակառակել ինձ, թե՛ չե՞ որ կան նաև լավ սովորություններ՝ օգտակար և պիտանի:

Դա ճիշտ է, բայց նկատե՞լ եք արդյոք, զավակնե՛րս, որ արմատացած սովորությունը հաճախ սևեռուն մտքի է վերածվում:

Ինչու՞:

Որովհետև տարեցտարի տեղի է ունենում որոշակի տեսակի էներգիայի կուտակում, որը ներդաշնակորեն չի բաշխվում ձեր էներգետիկական տարածության մեջ, այլ վերածվում է մի տեսակ փակոցի՝ այս կամ այն էներգիայի թանձրուկի:

Դա նման է որոշակի զգացմունքով պաշարվածությունը, որը հանգեցնում այս կամ այն հիվանդության:

Սովորությունների դեպքում ևս էներգետիկական «գերդոզավորումը» բերում է հուզական պոռթկումների, այսինքն, վերջ ի վերջո, ֆիզիկական մարմնի հիվանդությունների:

Եկեք դա դիտարկենք թվացյալ լավ սովորության՝ մաքրասիրության և կարգասիրության կոնկրետ օրինակով:

Երբ մարդ չափից ավելի սևեռված է իր այդ սովորության վրա, ժամանակի հետ սկսում է միայն թերություններ տեսնել, բժախնդրություն դրսևորելով մանրուքների հարցում, դատելով

մերձավորներին, ընկերներին, աշխատակիցներին, թե՛ թափթփված են, այլ ոչ իր նման մաքրասեր:

Այդ դեպքում ի՞նչ էներգիաներ է նա արտաձում:

Առաջին հերթին՝ դատելու, դժգոհության և ջղագրգռության էներգիաներ, որոնք, կուտակվելով իր և շուրջը եղած մարդկանց մեջ, հետզհետե սկսում են իրենց ավերիչ գործը:

Մարդկային տեսակետից այդպիսի կոնֆլիկտի հիմքում սուկ կարգապահության լավ ու օգտակար սովորությունն է:

Իսկ Աստվածային տեսանկյունից, ուրիշին բռնությամբ սեփական սովորությունների պարտադրանքը Ազատ Կամքի Օրենքի՝ Տիեզերքի հիմնարար Օրենքներից մեկի կոպիտ խախտում է:

Այդպես, հերթական անգամ մարդը «իր բարի մտադրություններով ճանապարհ է բացում դեպի դժոխք», ընդ որում՝ ոչ միայն իր, այլև մերձավորների համար:

Եվ իմ հաջորդ ուղերձներում ես կպատմեմ, թե ինչպես կարելի է ազատվել եռաչափ մարդու սովորություններից՝ տեղ տալով սեփական ցանկությունների ազատ դրսևորմանը, որոնց հիմքում արդեն Աստվածային բաղադրիչներ են:

ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 7 ԱՊՐԻԼԻ 2020 Թ.

Եվ այսպես, [շարունակենք զբույցը ձեր սովորությունների մասին:](#)

Ինչու՞ է այդքան կարևոր հենց հիմա ազատվել դրանցից:

Առաջին հերթին՝ որովհետև նոր, Աստվածային գիտակցությունը ենթադրում է ձեր անձի բոլորովին ուրիշ ներքին «լիցք»:

Հինգերորդ չափման մարդը կատարելապես ազատ է որևիցե սահմանափակումից, իսկ յուրաքանչյուր սովորություն, նույնիսկ՝ լավագույնը, սահմանափակում է պարունակում իր մեջ, ուրեմն նաև դատողություն, համեմատություն, մի խոսքով՝ երկվություն:

Մենք արդեն շատ ենք խոսել ձեր ենթագիտակցության մեջ ներդրված մտածական, զգացական և վարքային շարժումների, ինչպես նաև այն մասին, թե որքան կարևոր է ազատվել դրանցից՝ տարրալուծելով նոր, Աստվածային էներգիաներով:

Հիմա պետք է նույն կերպ վարվեք ձեր սովորությունների հետ, որոնք այդ կարծրատիպերի ածանցյալն են:

Իհարկե, զավակներ՝ րա, դա ամեննին չի նշանակում, թե հիմա էլ մյուս ծայրահեղությանը պետք է տրվեք՝ մի սովորությունը փոխարինելով ուրիշ՝ իրեն հակառակ սովորությամբ:

Տվյալ պարագայում ձեզ ոսկերչական աշխատանք է սպասում ձեր սովորությունները փափուկ ու ներդաշնակ կերպով այլ՝ Աստվածային ռելսերի վրա տեղափոխելու համար:

Մակայն, նախ և առաջ, հարկավոր է հասկանալ, թե ինչ է ընկած ձեր սովորության հիմքում:

Դա կարող է լինել ինչ ասես՝ ինքնահաստատումից ու աչքի ընկնելու ցանկությունից մինչև մեղքի զգացում կամ բողոք:

Մարդու տարատեսակ սովորությունների հիմքը կազմող զգացմունքների ներկայանակը անասելի հարուստ է:

Այդ «հետազոտության» մեջ հանդէս բերեք ծայրաստիճան ազնվություն ու օբյեկտիվություն ինքներդ ձեր նկատմամբ:

Եվ հենց որ անեք, հաջորդ քայլը կլինի հետևյալը:

Կանչե՛ք Համբարձման Էներգիան և խնդրե՛ք տարրալուծել այն զգացմունքը, որն ընկած է ձեր սովորության հիմքում, անկախ նրանից՝ լավն էք համարում այդ զգացմունքը, թե ոչ:

Ինչու՞ եմ ձեզ խնդրում դա անել:

Լոկ նրա համար, որ ինքնին դատողությունը՝ «լավն է» կամ «վատն է», արդեն իսկ երկվություն է, իսկ չե՞ որ ձեր գլխավոր խնդիրն էլ հենց դրանից վերջնականապես ազատվելն է:

Դա հեշտ գործ չէ, զավակնե՛րս, և ջանադրություն է պահանջում, որովհետև Երկրի վրա ապրելու տարիների ընթացքում դուք ձեռք եք բերել մեծ թվով սովորություններ, որոնք երբեմն դեռ նախորդ մարմնավորումներից են ձգվում ձեր հետևից:

Սակայն Հինգերորդ չափման մեջ ապրելու համար դուք պետք է դառնաք կատարելապես ազատ անձնավորություններ՝ միաբևեռ մտածողությամբ, որը տակավին ինչ-որ տեսական ու դժվարամատչելի բան է ձեզ համար:

Ինչու՞ է այդքան դժվար տեղափոխվել մտածողության և վարքի այդ նոր «հիմքի» վրա:

Միայն այն պատճառով, որ դարեր ու հազարամյակներ երկվությունն է եղել բառիս բուն իմաստով ձեր յուրաքանչյուր մտքի ու զգացմունքի «գործարկման մեխանիզմը»:

Իսկ այժմ դրանք պիտի բխեն բոլորովին այլ բանից՝ Սիրուց՝ ինքների ձեր և մերձավորների նկատմամբ, որովհետև դուք բոլորդ կազմում եք Մեկ Ամբողջություն, և ձեզ համար նոր այդ աշխարհում ոչ մի բանի և ոչ ոքի մեջ այլևս չի լինի բաժանություն, որին այդքան սովորել եք:

Բայց որպեսզի հեշտ ընտելանաք Հինգերորդ չափման աշխարհին, այժմ ևեթ պիտի ձեռնամուխ լինեք ձեր ներքին փոխակերպությանը:

Եվ սա նույնպես Հինգերորդ չափման տարածությունը երրորդի մեջ,- որտեղ տակավին ապրում եք դուք,- «ներձգելու» տարրերից մեկն է:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԵՁ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 1 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 Թ.

Այսօր մենք կշարունակենք թեման ապագայի մարդու վերաբերյալ, որին սպասում է կյանքը Հինգերորդ չափման աշխարհում:

Եվ այս անգամ կխոսենք **որոշումներ ընդունելու ձեր ինքնությունության** մասին:

Իրականում դա ձեր գոյության վճռորոշ գործոնն է, որը լիովին փոխում է ձեր գիտակցությունը:

Եթե վերլուծեք ձեր սեփական կյանքը, կհասկանաք, թե որքան քիչ որոշումներ կան, որ իսկապես ինքներդ եք ընդունել, և դուք մեղք չունեք դրանում:

Այդպիսին է եռաչափ աշխարհը, որտեղ ամեն ինչ միտված է մարդուն Ազատ Կամքից և ընտրության իրավունքից զրկելուն:

Մանկուց ի վեր ձեզ սովորեցրել են, որ հարկավոր է ենթարկվել ծնողներին, ուսուցիչներին, վերադասներին, կառավարությանը և առհասարակ հանգամանքներին:

Հիշե՛ք սովորական արտահայտությունները՝ «Հանգամանքների գոհ», «Այդպես դասավորվեցին հանգամանքները»:

Իսկ ինչու՞ են հանգամանքներն այդպես դասավորվել:

Ձե՞ր ցանկությամբ:

Թե՞ ինչ-որ մեկը խարդախորեն դրանք այնպես էր խառնել, որ ձեզ մնար միայն ընդունել առանց ձեր գիտության արդեն իսկ դասավորված այդ հանգամանքները:

Շատ հաճախ դուք չեք էլ մտածում այդ մասին, ուրիշների որոշումներն ընդունելով իբրև միանգամայն պատշաճ, նույնիսկ եթե դրանք անմիջականորեն ձեզ են վերաբերվում:

Ինչու՞ է այդպես լինում:

Նախ և առաջ՝ որովհետև դարերով մարդու մեջ մշակվել է ենթարկվելու սովորություն, և ձեր կյանքի բոլոր մակարդակներում կառուցվում է որոշակի հիերարխիա:

Այդպես, շատ ժողովուրդների ընտանեկան ավանդույթների մեջ եղել և մնում է ավագների խոսքի իրավունքը:

Արդյունքում՝ ծնողներն են որոշում իրենց զավակների ճակատագրերը նրանց փոխարեն, ընդհուպ այն, որ իրենք են իրենց հայեցողությամբ կյանքի ընկեր ընտրում նրանց համար՝ չհարցնելով անգամ նրանց համաձայնությունը:

Սակայն բացի անցյալի այդ մնացուկներից, այսպես կոչված ժամանակակից հասարակության մեջ բավական շատ օրինակներ կան, երբ մարդը ստիպված է լինում ակամա ենթարկվել ուրիշների որոշումներին:

Հաճախ դա կատարվում է իր իսկ բարի կամքով՝ պարտքի, խղճահարության, երախտագիտության, մեղքի, ինքնագոհողության զգացմանը տեղի տալով:

Ցավոք սրտի, զավակներս, եռաչափ աշխարհում մարդու ամենամաքուր դիտավորություններն անգամ հաճախ օգտագործվում են շահադիտական նպատակներով, որովհետև խիստ բազմազան է ձեր մոլորակի բնակչության կազմը, և էներգետիկական փոխանակությունը նրանց միջև միանշանակ չէ:

Ոմանք տալիս են իրենց էներգիան գիտակցաբար կամ անգիտակցաբար, ոմանք էլ, դարձյալ գիտակցաբար կամ անգիտակցաբար, օգտագործում են այն:

Այլ խոսքով, միջմարդկային հարաբերությունները եռաչափ աշխարհում կառուցվում են անիրավահավասարության հիմքի վրա:

Եվ դա բացատրվում է նրանով, որ այստեղ ամեն ինչ ներծծված է երկվության՝ էներգետիկական, ֆիզիկական, հոգեբանական, ինչի հետևանքով ուժեղը ճնշում է թույլին գոյության բոլոր մակարդակներում:

Սակայն նույնիսկ ուժեղը ազատ չէ իր որոշումների մեջ, որովհետև նրանից վեր միշտ կա ավելի ուժեղն ու ազդեցիկը, որը կարող է ճնշել նրա կամքը:

Այդ իսկ պատճառով էլ եռաչափ աշխարհում շատ քչերին է հաջողվում դուրս պրծնել երկվութենական հարաբերությունների այդ կախարդված շրջանից և ձեռք բերել ներքին ազատություն, որը թույլ է տալիս ինքնուրույն որոշումներ ընդունել և կերտել սեփական ճակատագիրը սեփակա՛ն ցանկությամբ, այլ ոչ թե ազգականների, ընկերների, վերադասների, իշխանությունների կամքով. . .

Հաճախ նման մարդուն անվանում են ինքնական, էգոիստ, տարօրինակ, աննորմալ, այլ կերպ ասած՝ նա ենթարկվում է տարատեսակ քննադատության, որովհետև «դուրս է մնացել հոտից», համարձակվել է ինքնուրույն որոշումներ ընդունել՝ հաշվի չնստելով իրեն շրջապատող մեծամասնության կարծիքի հետ:

Սակայն հենց այդպիսի վարքագիծն է ամենանորմալն ու բնականը միաբնեռ աշխարհում, որտեղ մարդուն ղեկավարում է ոչ թե իր էգոն, այլ Հոգին:

Եվ իմ հաջորդ ուղերձում ես ավելի հանգամանորեն կպատմեմ այդ մասին:

ԻՆԵՐՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՐՉԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՉԸ, 12 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 Թ.

Եվ այսպես, շարունակենք մեր զրույցը, թե ինչ խոչընդոտներ ու ստորջրյա խույթեր են ձեզ դարանակալում Համբարձման ճանապարհին:

Դրանցից մեկը ձեր **իներտությունն** է:

Ես գիտեմ, որ ձեզնից շատերը ջանում են հնարավորինս հաճախ գործի դնել ստացած գիտելիքներն ու մեղիտացիաները:

Սակայն ավելի մեծաթիվ են նրանք, ովքեր սահմանափակվում են միայն ուղերձների ընթերցմամբ՝ իրենց ողջ հոգով ու սրտով ընդունելով դրանք, բայց հետո, առօրյա գործերի հորձանուտի մեջ, մոռանում են դրանց գործնական կիրառման մասին:

Իրականում դա այնքան էլ անվնաս բան չէ:

Ինչպես եթե ստանալով բարձրագույն բժշկական կրթություն, մարդը շարունակի կիրառել միայն սանիտարի նախնական հմտությունները:

Իսկ չէ՞ որ դուք, սիրելիներ՛րս, միանգամայն ի գորու եք դառնալու մարդկային հոգիների բժիշկներ. ձեզ արդեն տրվել են այնքան Աստվածային գիտելիքներ և հոգևոր պրակտիկաներ:

Դրանցից շատերը բնավ չեն պահանջում ժամերով ձգվող մեղիտացիաներ. դրանք կարելի է կատարել հրնթացս, հանգամանքներից ելնելով, որից, սակայն դրանք չեն դառնում պակաս գործուն:

Եվ դրանց կենսագործմանը խանգարում է լոկ ձեր իներցիան, սովորությունները, որոնք մշակվել են տարիներ ի վեր և իրենց գերին են դարձրել ձեզ՝ թույլ չտալով ոգեպես զարգանալ:

Ինչպես որ ձեր մարմինն է կորցնում իր ճկունությունն ու ճարպկությունը՝ առանց ֆիզիկական ծանրաբեռնվածության, այնպես

Էլ ձեր Հոգին է կորցնում իր մաքրությունը և դադարում է աճել ու զարգանալ՝ առանց բարոյական,- հոգևոր,- ծանրաբեռնվածության:

Նույնն է, թե սպորտ դիտեք հեռուստացույցով, բազմոցին պառկած: Այդպես չեք ուժեղանա ու ճարպկանա, ինչպես այն մարզիկները, որոնցով հիանում եք:

Իհարկե, հեշտ չէ հաղթահարել իներցիան ու հոգևոր ծուլությունը և, հոսանքին հանձնված լողալու փոխարեն, մշտապես լինել ինքներդ ձեզ, մերձավորներին, ձեր առօրյա կյանքում ծագող զանազան իրավիճակները ներդաշնակեցնելու պատրաստ վիճակում. մի խոսքով՝ ամեն բոպե վերահսկել սեփական գիտակցությունը:

Սակայն չե՞ որ հենց դա՛ է իմ նպատակը՝ օգնել ձեզ դառնալու ԳԻՏԱԿԻՑ ձեր կյանքի յուրաքանչյուր պահին:

Եվ եթե սովորեք այդպիսին լինել, շատ արագ կսկսի փոխվել ոչ միայն ձեր սեփական, այլ նաև ձեր մոլորակի իրականությունը:

Գեթ մեկ վայրկյան պատկերացրեք, թե որքան կփոխվի կյանքը, եթե մարդկանց մեծ մասը դադարի արձակել ցածրաթրթիռ էներգիաներ՝ հետևելով իր ամեն մի մտքին ու զգացմունքին:

Իսկ դա նշանակում է, որ նրանց շուրջ եղած մարդիկ էլ, հայտնվելով Լույսի ու Սիրո նրանց դաշտում, կսկսեն փոխվել՝ ողողվելով բարձրաթրթիռ էներգիաներով:

Եվ եթե դրան գումարվեն հոգևոր պրակտիկաները, ինչպես նաև բացասական էներգիաների տարրալուծման ձեր սեփական մշակումները, փոփոխություններն իրենց երկար չեն սպասեցնի Երկրի վրա, և բաղձալի նոր աշխարհը ձեր աչքի առաջ կսկսի հայտնակերպվել:

Մի՛ մոռացեք այս մասին, զավակներ՝ ռս:

ԿԵՆՍԱԿԵՐՊԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 Թ. .

Շարունակելով մեր զբույցը գալիք փոփոխություններին ձեր պատրաստ լինելու մասին, այսօր կանդրադառնանք դրա ևս մեկ բաղադրիչին:

Եվ խոսքը կվերաբերի **ձեր կենսակերպի լիակատար վերաիմաստավորմանը:**

Համաձայնե՛ք, զավակնե՛րս, որ չափազանց դժվար է փոխել սովորությունները, որոնք տարիներով ներդրվել են ձեր մեջ:

Իրականում Երկրի վրա անասելի քիչ են այնպիսի մարդիկ, որոնք կարող են մի վայրկյանում հրաժարվել իրենց նախկին կյանքից և անվախ «ընկղմվել» անհայտության մեջ:

Սովորաբար նման մարդկանց ասում են գլխից ձեռք քաշած արկածախնդիր, խենթ, անպատասխանատու, թեթևամիտ, մի խոսքով՝ նրանց հասցեագրվող բոլոր մակդիրները մեծ մասամբ բացասական բնույթ ունեն:

Իսկ իրականում անվախությունը, հետաքրքրասիրությունն ու պատրաստությունը ցանկացած փոփոխության, մարդու բնատուր հատկություններից են, որոնց հիմքում ընկած է սեփական ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու ազատությունը:

Մարդուն բնորոշ այդ ազատությունն էլ հենց ձեռք չէր տալիս նրանց, ովքեր նվաճել էին ձեր Երկրի իշխանությունը:

Նրանք հրաշալի հասկանում էին, որ ազատ ու անվախ մարդուն շատ դժվար է կառավարել:

Այդ պատճառով էլ արեցին հնարավոր ամեն բան, որ նրա կյանքը խցկեն նեղ շրջանակների մեջ՝ աշխարհիկ և կրոնական:

Այդպես, հետզհետե մարդը վարժվեց, որ իր կյանքը ի սկզբանե նախասահմանված պիտի լինի իր ծննդյան տեղով և այն միջավայրով,- ազգային, սոցիալական, մշակութային,- ուր ինքը աշխարհ է եկել:

Եվ դուրս պրծնել հստակ սահմանված կանոններով ու ավանդույթներով այդ միջավայրից սուկ հատուկենտ մարդկանց է հաջողվել:

Որպես կանոն, մարդը ծնվել ու ապրել է իր ծննդյան պահից ի վեր սահմանված այդ շրջանակներում, լոկ հազվագյուտ դեպքերում, կախված իր տաղանդներից ու ունակություններից, տեղափոխվելով մի սոցիալական շերտից մեկ այլ շերտ:

Այդպես շարունակվել է դարերով և ինչ-որ չափով շարունակվում է մինչ օրս:

Այժմ, սակայն, դուք պետք է դու՛րս գաք, զավակնե՛րս, ոչ միայն ձեր սովորական բնակության միջավայրից, այլև ձեր սովորական չափումից ավելի բարձրաթրթիռ էներգետիկական տարածություն, որտեղ բոլորովին այլ օրենքներ են՝ թե՛ ֆիզիկական, թե՛ բարոյական:

Այդ նոր բարձրաթրթիռ տարածության մեջ միակ «չափանիշը» ամեն մարդու համար կլինի ի՛ր թրթռանքը, և ոչ թե ազգային կամ սոցիալական կարգավիճակը:

Հինգերորդ չափումում կտիրի Երկրի բոլոր բնակիչների **իսկական ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆԸ** այդ բառի Աստվածային ըմբռնմամբ. նրանց փոխգործակցությունը Սիրո, Փոխադարձ Հարգանքի, Հավասարության և Եղբայրության հիման վրա:

Ու թեև հենց դա՛ է ձեր երազանքը, իրականում ձեզ համար բավական դժվար է լինելու ամեն պատահած մարդու վերաբերվել Անպայման Սիրով, այնքան որ սովորել եք դուք դատել, որը երկվության անբաժանելի մասն է:

Ձեզ համար ևս մեկ անակնկալ կարող է լինել մրցակցության ոգու լիակատար բացակայությունը նոր Երկրի վրա, որ այնքան բնորոշ է

եռաչափ աշխարհի մարդկանց, ուր ամեն ոք ուզում է ապացուցել մյուսին, որ ինքն ավելի լավն է, ավելի խելացի, տաղանդավոր. . .

Հինգերորդ չափումում, որտեղ անհնար է երկվության որևէ դրսևորում, ամեն մարդ կգրադվի իր գործով, առանց ուրիշներին նայելու, հասկանալով և սրտանց ընդունելով, որ շուրջը կան բազմաթիվ մարդիկ, որոնք ավելի խելոք ու տաղանդավոր են իրենից:

Մակայն նա պակասավոր չի զգա իրեն, իմանալով, որ յուրաքանչյուր մարդ բացառիկ է և զբաղվում է այն գործով, որը հաճելի է իր հոգուն և որով ինքը կարող է առավելագույնս օգտակար լինել մյուսներին:

Եվ որպեսզի բնականորեն մտնեք Հինգերորդ չափման տարածություն, դուք արդեն իսկ պետք է մշակեք ձեր մեջ **ինքներդ ձեզ և ուրիշներին չդաստելու** որակները, որոնք հատկանշական են այդ չափումին:

Դրա համար պետք է սովորեք ըմբռնել ուրիշին ուղղված ձեր ամեն մի միտքը, հետևելով, թե չի՞ պարունակում արդյոք իր մեջ դատողություն ու համեմատություն, կամ արդյո՞ք միայն Անպայման Սեր է բովանդակում:

Սովորեցրե՛ք ձեզ, որ նույնիսկ խորապես քնած մարդուն, որը լիովին եռաչափ աշխարհի տիրապետության տակ է, ընկալեք իբրև բացառիկ Աստվածային մի էակ:

Չե՞՞ որ դուք արդեն գիտեք, որ ամեն ոք ունի ի՛ր ճանապարհը և որ այդ մարդը ժամանակի հետ ինքն էլ կբարձրանա հոգևոր զարգացման այն մակարդակին, որտեղ դուք եք:

Իսկ առայժմ նա հոգևոր դպրոցի առաջին դասարանում է, և ուրեմն, առնվազն անշրջահայաց կլինեք, եթե խստորեն դատեք նրան:

ՎՏԱՆԳԱՎՈՐ «ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ»

ԱՇԽԱՐՀԻ ՄՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 20 ՀՈՒՆԻՍԻ 2022 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ:

Այսօր ես ուզում եմ խոսել ձեզ հետ մի շատ նուրբ թեմայի մասին, որն այնուհանդերձ չափազանց կարևոր է ձեզ համար հատկապես հիմա:

Ես գիտեմ, որ շատերդ մեղավոր եք զգում ձեզ ձեր մերձավորների առջև, որովհետև հոգևոր պլանում շատ եք առաջ անցել նրանցից և այլևս չեք ապրում նրանց հետ ընդհանուր հետաքրքրություններով:

Հարազատ ու մտերիմ մարդիկ հետզհետե սկսել են հեռանալ ձեզնից, և իրենք էլ ձեզ են արդեն անհետաքրքիր ու օտար թվում:

Եվ որքան էլ համոզում եք ինքներդ ձեզ, որ տեղի է ունենում մարդկանց բնականոն տարանջատում ըստ թրթռանքի, ձեր սիրտը շարունակում է ցավալ ու մորմոքել մերձավորների անըմբռնողությունից, երբեմն էլ դատելուց:

Այդ իսկ պատճառով ես ուզում եմ մի քանի խորհուրդ տալ ձեզ, որ կօգնի ազատվել մեղքի զգացումից և ներդաշնակեցնել խաթարված հարաբերությունները հարազատ մարդկանց հետ:

Ոչ մի վայրկյան մի՛ մոռացեք, որ ձեր Հոգին ներկայումս ապրում է մարդկային ֆիզիկական մարմնով մի չափումից մեկ այլ չափում անցնելու իր կարևորագույն և բացառիկ փորձը:

Այդ վիթխարի և վեհ գործողության համեմատությամբ մնացյալ ամեն ինչ պետք է երկրորդ պլան անցնի, նույնիսկ ձեր հարաբերությունները ամենահարազատ ու մտերիմ մարդկանց հետ:

Եթե այս մարմնավորման մեջ ճակատագիրը ձեզ ի մի է բերել, դա խոսում է լուրջ այն մասին, որ տվյալ մարդիկ օգնել են ձեր Հոգուն յուրացնելու իր վերջին և չափազանց կարևոր դասերը, որոնք նա բաց է թողել իր նախորդ կյանքերում:

Միանգամայն հնարավոր է, որ շնորհիվ հենց այդ դասերի ձեր Հոգին կարողացել է «հասնել» թրթռանքի այն մակարդակին, որը թույլ է տալիս իրագործել Անցումը:

Որպես կանոն, ինչքան ծանր ու ցավազին է մարդու կյանքային փորձը, այնքան արժեքավոր ու նշանակալից է այն նրա համար, քանի որ թույլ է տալիս արդեն ոչ թե պարզապես քայլ, այլ հսկայական թռիչք կատարել իր հոգևոր զարգացման մեջ:

Ընդունել մարդկանց այնպես, ինչպես կան, առանց դատելու և գնահատելու. շատերի համար սա է մեծագույն խոչընդոտը Համբարձման ճանապարհին:

Ճիշտ այնպես, ինչպես մեղքի զգացումից և հարազատների ու մտերիմների համար ունեցած պատասխանատվությունից ազատվելը,- հասարակության մեջ և ընտանիքում ընդունված այդ վարքային ծրագրերից ու կարծրատիպերից, որոնք չափազանց երկար են ներդրվել ձեր գիտակցության և ենթագիտակցության մեջ:

Մտածելու և սրտի ուզածին պես վարվելու ազատությունը հաճախ համարվել է խստասրտության և էգոիզմի դրսևորում:

Մարդկանց վարքը մտցվել է «բարեկանոնության» նեղլիկ շրջանակի մեջ, որը հաճախ հանգում էր ուրիշներին հաճոյանալու և ուրիշի սովորություններին, հետաքրքրություններին ու ցանկություններին հարմարվելու ունակությանը:

Ինքնագոհողությունը համարվել է գերագույն առաքինություն. մարդը շատ հաճախ գոհաբերել է սեփական կյանքը հանուն այն մարդկանց, որոնց հետ ճակատագիրն էր կապել իրեն տվյալ մարմնավորման մեջ:

Այլ կերպ ասած, նա ապրել է ուրիշի կյանքով՝ մոռանալով իրեն:

Եվ եթե եռաչափ աշխարհում դա խրախուսելի ու գովելի է, մարդու նախասահմանման բարձրագույն ըմբռնմամբ այդպիսի կյանքը իզուր է ապրվել, քանզի շատ քիչ բան է տվել նրա Հոգուն՝ չկատարելով այն

նպատակներն ու խնդիրները, որ ծրագրել էր Հոգին մարմնավորումից առաջ:

Դա հատկապես կարևոր է հասկանալ հիմա, որովհետև մերձավորների առնչությամբ ձևավորված վարքային կարծրատիպերի պատճառով, որոնք խորապես արմատացած են ձեր ենթագիտակցության մեջ, դուք կարող եք զրկել ձեր Հոգուն Երկիր մոլորակի հետ միասին Հինգերորդ չափում անցնելու անգին փորձից:

Դրա հետևանքով ձեր Հոգին ստիպված է լինելու շարունակել իր երկարուձիգ թափառումները երրորդ չափման աշխարհներում, հիշելով իր հոգևոր էվոյուցիայի մեջ անօրինակ թռիչք կատարելու բաց թողնված հնարավորությունը:

Հենց այս մասին պետք է հիշեք, զավակներս, հետևում թողնելով բոլոր սովորություններն ու վարքային կարծրատիպերը, որոնք բնորոշ են եռաչափ աշխարհի մարդկանց:

Դուք՝ ընտրյալ, մաքուր ու հին Հոգիներդ, չե՛ք կարող թույլ տալ ձեզ սայթաքել վերջին պահին հանուն երիտասարդ ու անփորձ հոգիների, որոնք իրենց ճակատագիրն ունեն և որոնց սպասում է դեռ հոգևոր զարգացման երկար ու դժվարին ճանապարհ:

Թույլ մի՛ տվեք նրանց «ջրի տակ քաշել ձեզ»:

Պահե՛ք ձեզ մակերեսին, զավակներս:

Մի՛րե՛ք ձեր մերձավորներին, օգնե՛ք նրանց, բայց մի՛ նույնացրեք ձեզ նրանց հետ:

Հետ մի՛ նայեք:

Վստահորեն շարժվեք առա՛ջ՝ դեպի ձեր նպատակակետը, բարձր պահելով ձեր թրթռանքը:

Հիշե՛ք ձեր Հոգու ծրագրերի ու նպատակների վեհության մասին:

Այժմ դա՛ է միայն կարևոր:

Ձեզ քնքշորեն սիրող Աշխարհի Մայրը խոսեց ձեզ հետ

ԱՄԵՆԱՆԵՐՄԱՆ ՄԵԾԱԶՈՐ ՈՒԺԸ

ԲԱՑԱՐԶԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐԶԸ, 6 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ:

Այսօր մենք կսկսենք հանրագումարի բերել գիտակցված և անգիտակից վիրավորանքներին վերաբերող իմ ուղերձների շարքը:

Չնայած դրանց բոլոր տեսակներին ու ենթատեսակներին, ամենայն վիրավորանքի հիմքում միշտ ընկած է մարդու ինքնահաստատման ցանկությունը՝ ֆիզիկական պլանում, և ուրիշի էներգիայով սնվելու ցանկությունը՝ նուրբ պլանում:

Հենց այդ նպատակին հասնելու համար էլ մարդը դիմում է զանազան հնարքների, ինչպես գիտակցված, այնպես էլ անգիտակից:

Բացի այդ, վիրավորանքը երկվության գլխավորատրիբուններից է, քանզի մարդկանց մեջ սերմանում է թշնամություն, այսինքն՝ բաժանություն:

Եվ այն մարդը, որը կկարողանա անկեղծորեն ներել իրեն վիրավորողին և ջնջել իրեն հասցված վիրավորանքի հուշն իր գիտակցությունից ու ենթագիտակցությունից, իսկական Աստվածայնություն կգտնի, քանզի կզգա իրեն որպես մեկ ամբողջություն նույնիսկ նրա հետ, ով ցավ է պատճառել իրեն:

Այդպիսի մարդիկ Երկրի վրա դեռ շատ սակավաթիվ են, բայց նրանք կան, և նրանց ներման ու ընդունման էներգիան տոգորված է այնքան բարձր թրթռանքով, որ ունակ է փոխելու շուրջը եղած տարածության կառուցվածքը (ստրուկտուրան) հսկայական հեռահարությամբ:

Այդ մարդիկ դառնում են Լույսի Ուժերի հզորագույն հաղորդիչներ Երկրի վրա, որովհետև նրանց նուսրացած մարմիններն ի վիճակի են ընդունելու և իրենց միջով անցկացնելու բարձրաթրթիռ էներգիայի հսկայական քանակություն, որով պարարում են ձեր Երկիրը Հրեշտակներն ու Հրեշտակապետերը, Համբարձյալ Վարպետները, ձեր Գալակտիկական ընտանիքը:

Հավատացե՛ք, զավակնե՛րս, Ամենաներումն ու Անպայման Սերը, որոնք երկվության աշխարհում սովորաբար դիտվում են որպես թուլություն, իրականում Տիեզերքի մեծագույն ուժն են, որն ի զորու է փոխակերպելու մարդու գիտակցությունն ու ֆիզիկական մարմինը Աստվածային հիպոստասի՝ բարձրացնելով նրան կեցության արդեն բոլորովին այլ մակարդակի:

Եվ հիմա հենց դա՛ են ձեզնից ակնկալում Տիեզերքի Բարձրագույն ուժերը, որոնք չեն կարող անել դա ձեր փոխարեն:

Նրանք կարող են միայն կիսել ձեզ հետ իրենց Սերն ու գիտելիքները, ինչը և անում են ամենագործուն կերպով այս վերջին տարիների ընթացքում:

Եվ ավարտելով խոսքս վիրավորանքների մասին, ուզում եմ, որ ինքներդ ձեզ տաք հետևյալ հարցերը և ազնվորեն էլ պատասխանեք ինքներդ ձեզ:

Առաջին հարց: Ինչպե՞ս արձագանքեց իմ մարմինը ինձ հասցված վիրավորանքին:

Վերհիշե՛ք ձեր այն վիճակը:

Գուցե կծկվե՞ց ձեր մարմինը: Կամ սկսեց այրվե՞լ: Իսկ գուցե քարացա՞վ:

Բանն այն է, որ ամենակրիտիկական պահին ձեզ հասցված վիրավորանքը, «դրոշմվելով» ձեր նուրբ մարմինների մեջ, գրեթե անմիջապես իջնում է ֆիզիկական պլան:

Եվ կախված այն բանից, թե ինչպես է արձագանքել վիրավորանքին ձեր ֆիզիկական մարմինը, կարելի է որոշել, թե ինչպիսին կլինեն հետևանքները:

Իսկ դրանք անպայման կլինեն, եթե մարդը սկսի փայել ու փայփայել իր վիրավորանքը, ապրել նրանով, սնուցել աստրալ էություններին, որոնք թռչում գալիս են այդ էներգիայի վրա ինչպես գիշատիչ թռչունները՝ լեշի:

Այդ էներգիան այնքան ավերիչ է, որ կարող է կարճ ժամանակում հաշմանդամ դարձնել երիտասարդ, առողջ մարդուն, երբեմն էլ՝ սպանել նրան բառի ուղիղ իմաստով:

Հենց այստեղից էլ գալիս է «մահացու վիրավորանք» արտահայտությունը:

Ենթագիտակցորեն մարդը միշտ իմացել է, որ սաստիկ վիրավորանքը կործանարար, մահացու ուժ ունի:

Եվ պատճառը, որ մարդու համար չափազանց դժվար է լինում ազատվել վիրավորանքից, այն է, որ նա չի կարողացել տիրապետել իր վիրավորանքը առաջին իսկ պահից և թույլ է տվել նրան թափանցել իր նուրբ մարմինների մեջ, իսկ հետո իջնել ֆիզիկական մարմին, այդպիսով հնարավորություն տալով աստրալ «գիշակերներին» հոշոտել իր Հոգին ու մարմինը:

Եվ հավատացե՛ք, սիրելիներ՛քս, դրանք փոխաբերություններ չեն, այլ կյանքային իրողություններ, որոնք կործանել ու տակավին կործանում են ձեր մոլորակի միլիոնավոր մարդկանց:

Այսքանով կսահմանափակվենք այսօր:

ՁԵՐԲԱԶԱՏՈՒՄ ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆԵՐԻՑ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐԶԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐԶԸ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 Թ.

Շարունակելով [իմ երեկվա ուղերձը](#), այսօր մենք կգրուցենք, թե ինչպես կարելի է վերացնել սաստիկ վիրավորանքի հետևանքները, եթե այն արդեն հասցրել է «արմատներ ձգել» ձեր ֆիզիկական մարմնի մեջ:

Ես կտամ մի պրակտիկա, որը կօգնի լիովին ազատվել նույնիսկ ամենավաղեմի, գրեթե մոռացված վիրավորանքներից, որոնք այդուհանդերձ շարունակում են ապրել ձեր ենթագիտակցության մեջ, այսինքն՝ շարունակում են ներգործել ձեր ֆիզիկական մարմնի վրա:

Հավատացե՛ք, զավակնե՛րս, հենց այդտեղ են թաքնված ձեր բազմաթիվ քրոնիկական հիվանդությունների պատճառները:

Ինչու՞ է այդքան կարևոր զգալ սեփական մարմնի արձագանքը վիրավորանքի պահին:

Բանն այն է, որ ամեն մարդու դեպքում, կախված նրա հոգեբանական և ֆիզիկական առանձնահատկություններից, մարմինը տարբեր կերպ կարձագանքի:

Այդ իսկ պատճառով հնարավոր չէ տալ բուժման մեկ ընդհանուր դեղատոմս բոլորի համար, եթե հիվանդությունն արդեն բույն է դրել ձեր մարմնի մեջ:

Գտնել ձեր հիվանդության պատճառն ու լիովին բուժել այն կարող եք ՄԻԱՅՆ ԴՈՒՔ ԻՆՔՆԵՐԴ:

Եվ քանի որ ԳՐԵԹԵ ԲՈԼՈՐ հիվանդությունները հետևանք են ձեր ապրած վախի կամ վիրավորանքի, առաջին հերթին հարկավոր է ազատվել այդ հիվանդություններին ծնունդ տված պատճառներից:

Եվ այսպես, անցնենք պրակտիկային: Այդպես էլ կանվանենք այն՝ **«Ձերբազատում վիրավորանքներից»:**

Կանչե՛ք ձեր բոլոր Երկնային օգնականներին և Միքայել Հրեշտակապետին, որ պաշտպանեն ձեր էներգետիկական տարածությունը բուն պրակտիկայի ժամանակ:

Նստե՛ք մեղիտացիայի, խո՛ր շնչեք, այնուհետև մտովի տեղափոխվելով անցյալ, մտե՛ք ձեր այն վիճակի մեջ, որ զգացել եք առաջին իսկ պահին՝ վատ լուրը կամ ձեզ ուղղված վիրավորանքը լսելով:

«Որսացե՛ք» ձեր մարմնի զգացողությունը «այրող» վիրավորանքն ստանալուն պես:

Օրինակ, եթե տաքություն զգացիք, միանգամայն հնարավոր է, որ դուք գործի եք գցել ձեր օրգանիզմի թույլ օղակը հանդիսացող օրգանի բորբոքման մեխանիզմը:

Եթե ձեր մարմինը սեղմվեց՝ կուչ եկավ, դա կարող է վերածվել անոթների նեղացման, որը կհանգեցնի գլխացավերի կամ էլ անոթների լրիվ խցանման, քանի որ կխանգարի արյան ազատ շրջանառությանը ձեր օրգանիզմում:

Իսկ եթե «քարացաք» վիրավորանքից, ձեր մարմնում դա կարող է շարունակություն գտնել զանազան կոշտացումների և նորագոյացությունների տեսքով, որոնք կարող են վերաճել չարորակ ուռուցքների:

Իսկ գուցե ուժեղ վիրավորանքին ծակոցներով արձագանքեց ձեր սիրտը, ինչը հետագայում կարող է բերել տարատեսակ սրտային հիվանդությունների:

Ինչպիսին էլ լինի ձեր մարմնի արձագանքը, այժմ կարևորը հնարավոր հիվանդությունների այդ նախնական ախտանշանների լիովին վերացումն է, այսինքն, տեղափոխվելով ժամանակի մեջ՝ իրավիճակի վերախաղարկումը:

Եվ այստեղ ձեզ կօգնի վիրավորանքի «թունավոր նետերը» [նոսրացած մարմնով անցկացնելու պրակտիկան](#):

Պատկերացրեք, թե դերասան եք և վատ եք խաղացել ձեր դերը գլխավոր փորձի ժամանակ:

Եվ ահա եկել է պրեմիերայի օրը, ու այս անգամ դուք ձեր բարձունքին եք եղել՝ փայլուն կատարելով ձեր բաժին դերը:

Ձեզ վիրավորանք հասցնելու պահին դուք մնացել եք կատարելապես հանգիստ ու անխռով:

Լիովին թուլանալով և առավելագույնս «ուղղելով» ձեր գեղեցիկ, շողշողուն նուրբ մարմինները, դուք հետաքրքրությամբ հետևում եք, թե ինչպես է թռչում ձեզ վրա արձակված «նետը», ինչպես է անցնում ձեր մարմինների միջով և սլանում հեռու՝ չդիպչելով ու չվիրավորելով դրանցից ոչ մեկը:

Իսկ հետո դուք դարձյալ հանգիստ, անշտապ վերլուծում եք իրավիճակը, կառուցելով այն իրադարձությունների պատճառահետևանքային կապերի ողջ շղթան, որոնք առիթ են տվել ձեզ հասցված վիրավորանքին:

Եվ հիմա ձեր նոր, Աստվածային գիտակցության բարձունքից այն ուրվագծվում է այնքան հստակ ու պարզորոշ, որ դուք ապշում եք, թե ինչպես չեք տեսել նախկինում:

Այդպիսով, զավակնե՛րս, դուք ոչ միայն կազատեք ձեր մարմինը իր մեջ նստած վաղեմի «փշերից», այլև կանցնեք ևս մեկ դաս, որը կօգնի ավելի լավ հասկանալ, թե ինչպես են գործում Տիեզերքի Օրենքները:

Օրհնու՛մ եմ ձեզ և անսահման սիրում:

ՎԻՐԱՎՈՐԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԷԳՈՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 Թ.

Վիրավորանքներին վերաբերող իմ ուղերձների շարքը մոտենում է ավարտին, և այսօր ես ուզում եմ ձեզ տալ բուն «քամվածքը» այն ամենի, ինչ խոսվել է դրանցում:

Ամենից առաջ, հարկավոր է հիշել, որ վիրավորանքը իր ցանկացած դրսևորմամբ,- լինի վիրավորողի գործողություն, թե վիրավորվածի հակազդեցություն,- ձեր Էգոյի արտահայտման արդյունք է:

Եվ ահա թե ինչու:

Վիրավորանք հասցնողը շոյում է իր Էգոն, այդ կերպ ինքնահաստատվելով, իսկ դրան հակադրողը պաշտպանում է ի՛ր Էգոն՝ փորձելով հերքել իրեն հասցեագրված վիրավորանքը:

Այդպես եղել է եռաչափ աշխարհում մարդկության գոյության բազում դարերի ու հազարամյակների ընթացքում:

Եվ լոկ եզակի հոգիներ, մեծ ու հինավուրց, որոնք ինչ-որ ժամանակ մարմնավորված են եղել Երկրի վրա, ի գորու են եղել կոտրելու այդ կարծրատիպը՝ չպատասխանելու վիրավորանքին վիրավորանքով և իրենց կյանքում կատարվող ամեն բան ընդունելու Սիրով և Շնորհակալությամբ:

Միայն իր Էգոյից ազատվելով կարող էր մարդը վերադառնալ իր Աստվածային ակունքներին:

Եվ եթե նախկինում դա խիստ հազվադեպ բացառությունն էր, իսկ նման մարդկանց համարում էին կա՛մ սուրբ, կա՛մ խենթ, կա՛մ էլ պարզապես հիմար, թուլամորթ ու կամազուրկ, այժմ Երկրի թրթիռային ֆոնի փոփոխության շնորհիվ շատերն են ունակ դառնում վերագտնելու այդ **մի ժամանակ կորսված հատկությունը՝ ընդունել բոլորին այնպես, ինչպես կան:**

Միայն դա արդեն իսկ կարող է ազատել ձեզ վիրավորանքներից և ընդունել մարդկային անկատարությունները, անզսպությունը, աննրբանկատությունը, երբեմն էլ կոպտությունը որպես ջահել ու անփորձ հոգիների հատկություն, որոնք չգիտեն, թե ինչ են անում:

Բոլոր պրակտիկաներն ու խորհուրդները, որ տրվել են իմ նախորդ ուղերձներում, նպատակ ունեին օգնելու ձեզ հաղթահարել այն դժվարությունները, որոնք կապված են ձեր նոր վարքագծի և կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հետ՝ արդեն ոչ թե եռաչափ աշխարհի մարդու, այլ Աստվածամարդու, Տիեզերքի Օրենքներով ապրող և ուրեմն իր Էգոյից ազատված:

Ես տեսնում եմ, որ առայժմ ոչ բոլորին է դա հաջողվում. չափազանց մեծ է այս կյանքում կուտակված ձեր վիրավորանքների «բեռը»:

Եվ հիմա ուզում եմ տալ մի ընդհանուր խորհուրդ, թե ինչպես կարելի է մնալ բարձունքին՝ ոչ մի պարագայում, նույնիսկ՝ ամենախրթին, չարձագանքելով վիրավորանքին:

Սովորե՛ք մտովի դուրս գալ ձեր մարմնից և նայել ձեզ վիրավորել փորձող մարդուն Հրեշտակի աչքերով՝ սիրող ու ամենաներող:

Դուք կարող եք անգամ երևակայել ինչ-որ զվարճալի պատկերներ, օրինակ, որ դուք նստած եք ամպի վրա և ոտքերը ճոճելով դիտում եք Երկրի վրա կատարվող այդ «ներկայացումը»:

Դուք անկեղծորեն սիրում եք այդ մարդուն, որը տվյալ պահին ջանում է ցավ պատճառել ձեզ՝ իբրև մարդու, չէ՞ որ ձեր Հրեշտակային Հոգին ամեն ինչ գիտի և հասկանում է:

Նա հրաշալի տեսնում է մարդուն այդպիսի վարքագծի դրող բոլոր պատճառները, նրա շարժառիթների բոլոր նրբություններն ու երանգները, և իր համար զվարճալի է դիտել, թե ինչպես է դա դրսևորվում Երկրի վրա:

Եվ եթե ձեզ հաջողվի հետևել իմ խորհրդին, ֆիզիկական պլանում ձեր արձագանքը վիրավորանքին կընդունի ժպիտի ձև, ջերմ, անկեղծ, Սիրով լի այն մարդու նկատմամբ, որը փորձում է ձեզ վիրավորել:

Եվ վերջին բանը, որ կուզեի հիշեցնել ձեզ:

Ինչ-որ բարդ, կրիտիկական իրավիճակում մարդուն ակամա չվիրավորելու համար պատկերացրե՛ք նրան իբրև նույնպիսի մի Հրեշտակ, որը տվյալ պահին որոշել է փորձել բացասական հերոսի դերը:

Սակայն դուք գլխի եք ընկել նրա խորամանկության մասին և չեք բարկանում իր վրա:

Փորձե՛ք, զավակնե՛րս, խաղալ այդ խաղը:

Վստահ եմ, որ այն ձեզ դուր կգա և հետզհետե կսովորեցնի լիովին ընդունել ձեր ճանապարհին պատահող յուրաքանչյուր մարդու:

Օրհնու՛մ եմ ձեզ և սիրում անսահմանորեն:

Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ԳԼՈՒԽ V

ԿՅԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

130

1. ԿՅԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

V ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ

1. ԿՅԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՇԵՄԻՆ
2. ԿՅԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
3. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵ՞Ր, ԹԵ՞ ՀՈԳՈՒ ԹԵԼԱԴՐԱՆՔ
4. ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ
5. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ
6. ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՌԵԶՈՆԱՆՍ

- 7. ԵՐԿՆԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
- 8. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- 9. ԲԱՑԱՍԱԿԱՆԻՑ՝ ԴՐԱԿԱՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)
- 10. ԵՐԿՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԿՈՒՄԸ ՄԻԱԲԵՎԵՌՈՒԹՅԱՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԿՅԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 31 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասուն՝ ն զավակներ:

Եռաչափ մատրիցից շուտափույթ կերպով դուրս գալու ձեր Պլանի **հինգերորդ կետը** կարող է դառնալ **կյանքային առաջնությունների վերաբաշխումը:**

131

Ի՞նչ եմ ենթադրում ես այդ արտահայտության ներքո:

Ամենից առաջ՝ վերաիմաստավորումն այն ամենի, ինչ իսկապես կարևոր է ձեր կյանքում, իսկ ինչ կարելի է առանց ավստասանքի դուրս նետել նրանից՝ այդ կերպ ազատելով ձեր մտքերն ու ժամանակը ինքներդ ձեր վրա տարվելիք հոգևոր աշխատանքի համար:

Ժամանակի հարցում, կարծում եմ, ամեն ինչ հասկանալի է, իսկ ազատել մտքերը «աղբից», որով բառիս բուն իմաստով ներծծված է եռաչափ մատրիցը, որում դուք դեռևս ապրում եք, բավական դժվար է:

Հավատացե՛ք, սակայն, զավակներս, ցանկության դեպքում դա՛ էլ միանգամայն հնարավոր է:

Արդեն իսկ այն, որ դուք կդադարեք հեռուստացույց նայելուց և առավելագույնս կսահմանափակեք համացանցի զանազան կայքէջերի դիտումները, ահագին ժամանակ կազատի ձեզ համար, որը

կարող եք օգտագործել մեդիտացիաների, բնության գրկում զբոսնելու, ձեր զավակների և հոգեհարազատ մարդկանց հետ շփվելու նպատակով:

Բացի այդ, դուք պետք է սովորեք վերաուղղորդել ձեր մտքերը կառուցողական հունի մեջ, ինչն ինքնին կնպաստի ձեր թրթռանքի բարձրացմանը, ինչպես նաև ձեր ֆիզիկական ու հոգեկան վիճակի լավացմանը:

Ինչպես գիտեք, ամեն մի բացասական միտք կամ հույզ ծնունդ է տալիս ձեզ համար կործանարար էներգիաների արատավոր շղթայի, որոնք, հաստատվելով ձեր նուրբ մարմիններում, սկսում են իրենց ավերիչ աշխատանքը՝ ազդելով ինչպես ձեր հոգեկան կառուցվածքի, այնպես էլ ֆիզիկական մարմնի վրա:

Այդ պատճառով, ընտրելով ձեզ հարմար մի պրակտիկա, որը դուք միանգամայն ի վիճակի եք հորինելու ինքներդ, որսացե՛ք այդպիսի մտքերն ու հույզերը հենց սկզբում, թույլ չտալով դրանց ծավալվել և լցնել ձեր էներգետիկական տարածությունը:

Աշխատե՛ք առավելագույնս հանել ձեր կյանքից բացասաբար տրամադրված մարդկանց, որոնք, իբրև կանոն, էներգետիկական վամպիրներ են:

Իսկ եթե չունեք նման հնարավորություն, մի՛ մոռացեք էներգետիկական պաշտպանության մասին, որը սկզբնական շրջանում պետք կլինի թարմացնել օրվա մեջ մի քանի անգամ:

Իսկ այժմ վերադառնանք կյանքային առաջնություններին:

Այս հարցին պետք է մոտենալ բավական լրջորեն, և լավ կլինի մի ցուցակ կազմել, թե ինչն է ձեզ համար առավել կարևոր տվյալ պահին:

Առաջին հերթին հարկավոր է որոշել ձեր Հոգու նպատակներն ու խնդիրները, որոնցից էլ կբխի մնացյալը՝ դրանց հասնելու միջոցները՝ ելնելով ձեր ներկայիս հնարավորություններից:

Իհարկե, այդ ծրագիրը պիտի բավականին իրատեսական լինի, այսինքն՝ գործուն:

Եթե ձեր մեղիտացիաներում և պարզապես երազանքներում կարելի է վիզուալիզացնել կյանքը նոր Երկրի վրա, ապա կյանքային առաջնությունները պետք է ներառեն ձեր որոշակի գործողությունները, որոնք կնպաստեն այդ երազանքի կենսագործմանը:

Դա կարող է լինել ինչ ասես՝ տեղի ունեցողի վերաբերյալ հավաստի տեղեկատվության տարածում ձեր շրջապատում, հանրագրերի (պետիցիաների) կազմակերպում, մասնակցություն բողոքի ցույցերին՝ ընդդեմ ձեզ պարտադրվող անհեթեթ վարքականոններին:

Պակաս կարևոր չէ, սակայն, նաև ձեր էներգետիկական մասնակցությունը Երկրի վրա տեղի ունեցող համընդհանուր փոփոխություններին, ինչը նպաստում է ուժերի տեղաբաշխմանը ձեր մոլորակի վրա և բերում Լույսի հաղթանակին Խավարի նկատմամբ:

Այդպես, ձեր կյանքային առաջնությունները պետք է հաշվի առնեն ձեր հոգևոր աշխատանքը և՛ ֆիզիկական, և՛ նուրբ պլանում, քանզի դրանք անքակտելիորեն շաղկապված են:

Սակայն թե՛ մի, թե՛ մյուս աշխատանքի հիմքում ենթադրվում են ստեղծարարման սկզբունքներ, այլ ոչ թե ավերման, որը բացասական էներգիաներ է պարունակում նույնիսկ այն դեպքում, երբ քանդվում է հասարակության կառավարման իր դարն արդեն ապրած, մարդակործան համակարգը:

Հրաժե՛շտ տվեք այդ համակարգին և իր ստեղծողներին առանց չարության ու ագրեսիայի և շնորհակա՛լ եղեք նրանց, որ օգնեցին ձեզ զատել ցորենը որումից, հասկանալ ձեր իսկական էությունն ու Աստվածային նախասահմանումը:

Անհունորեն սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

V ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ

ԿՅԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՇԵՄԻՆ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018 Թ.

134

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ:

Ես ուզում եմ այսօր մի քանի խորհուրդ տալ ձեզ, որոնք կօգնեն սահուն ու անցավ մուտք գործել նոր էներգետիկական տարածություն ձեր Երկրի հետ միասին:

Դուք բոլորդ ականատեսն ու միաժամանակ մասնակիցն եք Տիեզերքի «սրտի»՝ Երկիր մոլորակի վերածննդի վիթխարի հղացման:

Չափազանց քիչ մարդիկ են տակավին հասկանում այդ հղացման բացառիկությունը, քանզի մարդկային մտքերին տիրած Մութ ուժերը անում են հնարավոր ամեն բան՝ շեղելու մարդկությանը իր համար ամենակարևոր իրադարձությունից՝ Անցումից դեպի նոր ժամանակաշրջան, նոր էներգետիկական տարածություն՝ նոր կյանք:

Այն, ինչ տեղի է ունենում ներկայումս Երկրի վրա, առանց վարանելու կարելի է կոչել «խնջույք ժանտախտի ժամանակ»:

Ձեր մոլորակի բնակչության գերակշիռ մեծամասնությունը շարունակում է ապրել այնպես, կարծես ոչինչ տեղի չի ունենում:

Եվ անշուշտ, դա ոչ այնքան նրանց մեղքն է, որքան՝ դժբախտությունը, որովհետև նրանց գիտակցությունը «մթազնած» է եռաչափ աշխարհի արժեքներով, որոնց տիրապետության տակ են մանկուց ի վեր:

Դա նման է նրան, որ ամեն վայրկյան պայթելու պատրաստ վառողի տակառին նստած մարդկությունը շարունակում է հարաբերություններ պարզել, իշխանություն ու փող բաժանել, թանկարժեք խաղալիքներ գնել և մտածել զվարճանքի մասին:

Շատ շուտով այդ ամենը չգոյության գիրկը կգնա, քանզի վերապրել դուք կկարողանաք միայն այն դեպքում, եթե մոռանաք գժտություններն ու բաժանությունները և դառնաք Երկիր մոլորակի վրա ապրող **ՄԵԿՄԻԱՄՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ**, որտեղ չեն լինի երկրներն իրարից զատող սահմաններ, ռասայական և սոցիալական շերտավորումներ և կտիրի միայն մեկ «կրոն», որի անունն է **ՄԵՐ**:

Ինչու՞ եմ ձեզ դարձյալ հիշեցնում այդ մասին:

Ես ուզում եմ, զավակներս, որ պատրաստ լինեք, բարոյապես և ֆիզիկապես, ձեր մոլորակի գալիք վիթխարի փոփոխություններին, որ դրանք ձեզ անակնկալի չբերեն՝ հանելով հավասարակշռության այն վիճակից, որին հասել են ձեզնից շատերը:

Ես ուզում եմ, որ դուք կարելվույն չափ շուտ դասավորեք ձեր կյանքային առաջնություններն այն կարգով, որը թույլ կտա անցավ մուտք գործել նոր իրականություն, որը սպասում է ձեզ:

Ի՞նչ նկատի ունեմ ես:

Ձեր գլխավոր առաջնությունը այժմ պետք է դառնա հոգևոր զարգացումը:

Առաջին հերթին, դա Տիեզերքի Օրենքների իմացությունն է և դրանց համապատասխան ապրելու կարողությունը, որովհետև մարդկային օրենքներն այլևս չեն աշխատի Հինգերորդ չափման Երկիր մոլորակի վրա:

Երկրորդ, սեփական դերի՝ բացառիկ և անկրկնելի, ըմբռնումը նոր երկրի վրա նոր կյանքի շինարարության մեջ:

Դրա համար դուք պետք է Ի ՀԱՅՏ ԲԵՐԵՔ ձեր այն ունակությունները, որոնք կնպաստեն ձեր լիակատար ինքնաիրականացմանը և միևնույն ժամանակ առավելագույնս օգտակար կլինեն մյուսներին:

Հավատացե՛ք, ձեզնից ամեն մեկը տիրապետում է այդպիսի ունակությունների, դե՛ ուրեմն ջանացե՛ք գործի դնել դրանք որքան կարելի է շուտ, որպեսզի որոշակի փորձ ու վստահություն ձեռք բերեք այն ոլորտում, որտեղ կիրառելու եք ձեր տաղանդները:

Ինչու՞ է դա այդքան կարևոր:

Բանն այն է, որ ներկայումս մոլորակի բնակչության ճնշող մեծամասնությունը զբաղվում է ոչ այն գործով, որ պահանջում է իր Հոգին և հաճելի է իրեն, այլ աշխատում է լոկ իր ապրուստը հայթայթելու, իրեն և ընտանիքը կերակրելու համար:

Նոր Երկրի վրա դա այլևս անկարելի կլինի, որովհետև Երկրի բարձր թրթռանքը, ինչպես և մարդու բարձրացած թրթիռները կկարողանան առձգել միայն այն գիտելիքները, որոնք իսկական հաճույք կպատճառեն իրեն՝ պատասխանելով իր Հոգու պահանջմունքներին:

Եվ երրորդ: Սկսե՛ք ավելի ակտիվորեն կիրառել այն պրակտիկաները, որոնք տրվել են ձեզ՝ արագացնելու ձեր մարմնի փոխակերպումը լուսաբյուրեղային մարմնի, ինչը կօգնի ավելի թեթևորեն տանել ֆիզիկական գերբեռնվածությունները, որոնք ձեր մոլորակի թրթռանքի հետագա բարձրացման հետ ավելի ու ավելի նկատելի կդառնան:

Եվ իհարկե, զավակնե՛րս, ջանացե՛ք մշտապես լինել էներգետիկական հավասարակշռության վիճակում, ինչը խաղաղություն, անդորր և ներդաշնակություն կբերի ձեր Հոգիներին:

Օրհնու՛մ եմ ձեզ և սիրում անհունորեն:

ԿՅԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 9 ՀՈՒՆԻՍԻ 2019 Թ.

Եվ այսպես, սկսենք ձեր գիտակցությունը եռաչափ ծրագրերից մաքրելու ոչ դյուրին, սակայն ձեզ խիստ անհրաժեշտ աշխատանքը, որը թույլ կտա ազատվել ձեր բոլոր կարծրատիպային մտքերից, այսինքն՝ նաև վարքային շաբլոններից:

Եվ հարկավոր է սկսել **ձեր կյանքի գլխավոր առաջնությունները սահմանելուց:**

Ինքներդ էլ հասկանում եք, որ դա յուրաքանչյուր ոք ի՛նքը պետք է անի, որովհետև տվյալ դեպքում պարզապես հնարավոր չէ ինչ-որ միասնական «հրահանգ» ընտրել:

Ես կարող եմ տալ սուսկ ընդհանուր ուղղություններ, որոնք կօգնեն ձեզ ճանաչել ինքներդ ձեզ:

Կելնենք նրանից, որ այս ուղերձը կարդացող մարդիկ արդեն լիովին հասկանում են, որ մարդու մեջ գերիշխողը իր Ոգին և Հոգին են, այլ ոչ թե ֆիզիկական թաղանթն ու Միտքը, որն արդեն վաղուց գերի է դարձել երկվության աշխարհին:

Եվ հիմա ձեր խնդիրն է Միտքը ծառայեցնել Հոգուն, ինչը հնարավորություն կտա դասավորելու ձեր կյանքային առաջնությունները ելնելով արդեն Հոգու՝ ցանկություններից, այլ ոչ թե ձեր մարդկային էգոյի:

Սկսե՛ք փոքր բաներից: Փորձե՛ք մաղել ձեր կյանքից այն ամենը, ինչ վաղուց արդեն հարկավոր չէ ձեզ, չի պատճառում ոչ մի հաճույք, այլ միայն ձգվում է ձեր հետևից «երկար քղանցքի» պես, իբրև վերապրուկը եռաչափ աշխարհի, որից այնպես երազում եք դուրս պրծնել:

Դա կարող է լինել ինչ ասես՝ անպետք իրեր, որոնք կարելի է բաժանել կարիքավորներին, կամ ձեր մերձավորների և ընկերների հանդեպ ունեցած պարտականություններ, որոնք արդեն կատարում եք «մեքենաբար», լոկ սովորության համաձայն, այլ ոչ չոգու համար:

Կարող են լինել և իրենց ժամանակն ապրած հարաբերություններ, որոնք ձգվում են տարիներով, բայց այլևս չեն միավորում այդ մարդկանց հետ, այլ միայն վանում են ձեզ:

Ես կարծում եմ, որ ձեզնից շատերն արդեն զգացել են դա իրենց վրա:

Իսկ գնալով մարդկանց թրթիռային խզումը, որն էլ հենց պատճառ է դառնում նման վանողության, սուկ ահագնանալու է:

Իհարկե, այդ ամենը պետք է անեք շատ մեղմորեն, առանց ցավ պատճառելու, չհակադրելով ձեզ մյուսներին, չպարծենալով ձեր հոգևոր արժանիքներով և բացառիկությամբ այդ մարդկանց համեմատությամբ, ինչը նրանց մեջ ծնունդ կտա վիրավորանքի, իսկ ձեր մեջ գոռոզություն կհրահրի:

Այսուհետ նրբանկատությունն ու նրբազգացությունը պիտի դառնան ձեր գլխավոր դաշնակիցները ձեր ճանապարհին հանդիպած յուրաքանչյուր մարդու առնչությամբ:

Ինչու՞ է դա այդքան կարևոր:

Որովհետև միայն այդ հատկությունները կարող են չեզոքացնել այն բացասական էներգիաները, որոնք այնքան հաճախ են ծնվում եռաչափ աշխարհի մարդկանց միջև:

Դա կօգնի ձեզ զերծ մնալ դրանցից և չսնուցել դրանցով ուրիշներին, այսինքն՝ չարիք չավելացնել բացասական էներգիաներով առանց այդ էլ «խեղված» այս երկվորության աշխարհում:

Ես գիտեմ, որ շատերի համար, մանավանդ՝ ի բնե զգացմունքային մարդկանց, անչափ դժվար է սովորել զսպել իրենց, դուրս չթափել ներսում կուտակվածը:

Եվ այստեղ ես կարող եմ միայն մեկ խորհուրդ տալ ձեզ. սեփական զգացմունքները արհեստականորեն չզսպելու համար, ինչը

անխուսափելիորեն կքայքայի ձեզ ներքուստ, սովորե՛ք որսալ դրանք հենց սկզբից. ասե՛ք ինքներդ ձեզ՝ «Կա՛նգ առ»:

Բայց ամենակարևորը՝ հասկացե՛ք, թե ինչու էին այդ զգացմունքները պատրաստ պոռթկալու և հեղվելու ձեր խոսակցի գլխին. վայրկենական աշխատա՛նք տարեք սխալների վրա:

Եվ կտեսնեք, որ գրեթե միշտ ինչ-որ մեկից ունեցած դժգոհությունը արտացոլանքն է ձեր իսկ բնավորության դեռևս չհաղթահարված անհաճո որակների:

ՊԱՐՏԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆՆԵ՞Ր, ԹԵ՞ ՀՈԳՈՒ ԹԵԼԱԴՐԱՆՔ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 10 ՀՈՒՆԻՍԻ 2019 Թ.

139

Այսօր ես կպատմեմ ձեզ, թե ինչպես կարող եք սովորել տարբերել պարտականությունները հոգու թելադրանքից և ինչպիսին է այդ երկու հասկացությունների էներգետիկական բաղադրիչը:

Եկե՛ք դա դիտարկենք կոնկրետ օրինակով, թերևս՝ ձեր կյանքում ամենատարածված:

Եռաչափ աշխարհում յուրաքանչյուր մարդու հիմնական պարտավորություններից մեկը ծերացած ծնողների խնամքն է:

Եվ շատերի համար դա վերածվում է ծանրագույն, երբեմն անտանելի բեռի, որ տարիներով ընկնում է նրանց ուսերին, հոգեկան անդորրից և առողջությունից զրկելով այդ պարկեշտ ու անձնուրաց մարդկանց, որոնք մոռանում են իրենք իրենց ի հաճույս իրենց խնամյալների:

Եվ այստեղ շատ բան կախված է ձեր և ձեր ծնողների հոգևոր մտերմության աստիճանից:

Ինչպես արդեն ասվել է իմ բազմաթիվ ուղերձներում, միևնույն ընտանիքում կարող են ծնվել ամենատարբեր տարիքների հոգիներ՝ հնագույնից մինչև բոլորովին ջահել:

Եվ հաճախ է պատահում, որ հենց զավակներն են լինում այն հնագույն հոգիները, որոնք Երկիր են եկել մարդկությանն օգնելու համար իր համար բացառիկ այս անցումային փուլում և քաղելու եռաչափ կյանքի վերջին փորձը, իսկ ծնողները կարող են լինել ջահել ու անփորձ հոգիներ, որոնք իրենց հոգևոր ուղու ամենասկզբում են:

Եվ իհարկե, դա պատահական չէ. այդ կերպ հին հոգիները, զավակների մեջ մարմնավորված, ամրապնդում են Անպայման Միրո իրենց փորձառությունը՝ նույնիսկ գտնվելով եռաչափ աշխարհում, իսկ երիտասարդ հոգիները հնարավորություն են ստանում ելնելու հոգևոր զարգացման ավելի բարձր մակարդակի՝ կողք կողքի ապրելով իրենց զավակների մաքուր ու իմաստուն հոգիների հետ:

Ամենից հաճախ հենց դա էլ տեղի է ունենում վերջին ժամանակներս, այդ պատճառով էլ ֆիզիկական տարիքը նման դեպքերում անցնում է երկրորդ պլան, իսկ «իմաստությունը գալիս է տարիքի հետ» արտահայտությունը տվյալ պարագայում չի գործում:

Իմաստությունը գալիս է կեցության ամենատարբեր հարթություններում հոգու մարմնավորումների քանակով ու «որակով», և հիմա դա տեսանելի է ավելի քան երբևէ:

Իսկ այժմ պատկերացնենք այսպիսի տեսարան:

Եռաչափ աշխարհի կրքերով բռնված և, որպես հետևանք, տարատեսակ հիվանդությունների մի ամբողջ «փունջ» ժողոված մայրը կամ հայրը էներգապես բառիս բուն իմաստով քամում են իրենց զավակներին իրենց անվերջ պահանջներով ու քմահաճույքներով:

Իսկ դուստրը կամ որդին, պարտքի և պատասխանատվության զգացումից, անմունչ զիջում է նրանց ամեն ինչում:

Հաճախ պատահում է, որ նրանց միջև վաղուց արդեն չի լինում հոգևոր ջերմություն ու փոխըմբռնում, և գուցե երբեք էլ չի եղել, սակայն մարդը

կրում է իր ուսերին այդ անասելի ծանր բեռը՝ լիակատար էներգետիկական կախվածության մեջ ընկնելով ծնողներից, այդպիսով կործանելով իր հոգին՝ չթողնելով նրան ապրել ազատ ու երջանիկ և անել այն, ինչի համար եկել է Երկիր:

Անշուշտ, զավակների և ծնողների հարաբերությունները կարող են անթիվ ու անհամար տարատեսակներ ունենալ, և երջանիկ է նա, ով ճշմարիտ կերպով հոգեպես մոտ է իր հարազատներին: Այդ պարագայում նրանց խնամքը կլինի **հոգու թելադրանքով՝ ուրախ ու բնական:**

Սակայն ի՞նչ անել, զավակներ՝ րս, եթե ձերը հենց իմ բերած օրինակի դեպքն է:

Նախ և առաջ, դուք պետք է հստակ գիտակցեք, թե հատկապես ինչն է ձեզ կապում ձեր մերձավորներին՝ արյունակցական կապը, թե հոգևոր մերձությունը, նպաստում են արդյոք նրանք ձեր հոգևոր աճին, թե ձգում են ցած՝ ստիպելով ապրել եռաչափ աշխարհի ձեզ այլևս խորթ շրջանակներում իր բոլոր կարծրատիպերով ու շաբլոններով, որոնց հիմքում ամեն տեսակի ու կարգի բացասակար զգացմունքներ են:

Եվ հենց որ ունենաք իրավիճակի հստակ և իսկապես օբյեկտիվ պատկերը, պետք է մշակեք վարքային նոր գիծ ձեր խնամյալների նկատմամբ, որպեսզի թույլ չտաք էներգետիկական վամպիրներին խորտակել ձեր կյանքն ու խեղել հոգին:

Հավատացե՛ք, զավակներ՝ րս, շատ հաճախ հենց դա՛ է տեղի ունենում այն մարդկանց հետ, որոնք ճիշտ չեն հասկանում իրենց պատասխանատվությունը իրենց աշխարհ բերած մարդկանց նկատմամբ:

Ուրեմն ինչպե՞ս արժանապատվորեն դուրս գալ այդչափ դժվարին կացությունից:

Անշուշտ, չի կարելի բախտի քմահաճույքին թողնել անօգնական ու հիվանդ մարդկանց, սակայն **ԷՆԵՐԳԱՊԵՍ** հարկավոր է լիովին կտրել նրանց ձեզնից:

Եվ հավատացե՛ք, զավակնե՛րս, դա անգթություն չի լինի նրանց նկատմամբ, քանի որ **Աստվածային տեսակետից ոչ մի հոգու թույլատրելի չէ ապրել մյուսի հաշվին:**

Ամեն ոք պետք է պատասխանատու լինի իր արարքների համար. այդպես է գործում Անդրադարձման Օրենքը:

Իսկ եթե դուք թույլ եք տալիս ուրիշի բացասական ծրագրերին ներխուժել ձեր էներգատարածություն, դուք ՁԵԶ ՎՐԱ ԵՔ ՎԵՐՑՆՈՒՄ ուրիշի «մեղքերը» և հատուցում եք դրա դիմաց ձեր ժամանակով, առողջությամբ և հոգեկան աղորրով:

Դուք կարող եք շարունակել ֆիզիկապես օգնել նրանց ձեր ուժերի չափով, սակայն էներգապես պետք է լինեք մաքուր ու ինքնաբավ:

Դուք պետք է ապրեք ձեր, և ոչ թե նրանց կյանքով:

Եթե զգաք այդ սահմանը և սովորեք կյանքի կոչել իմ ասածը, կվերադառնանք դեպի ինքներդ ձեզ և կգտնենք այն ոսկե միջինը, որը թույլ կտա, կատարելով մարդկային պարտականությունները, ապրել ՁԵ՛Ր, այլ ոչ թե ուրիշի հոգու թելադրանքով:

Եվ ես օրհնու՛մ եմ ձեզ, որ այդպես լինի:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ

ԲՍՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 11 ՀՈՒՆԻՄԻ 2019 Թ.

Այսօր ես կբացատրեմ, թե ինչու է այդքան կարևոր **ձեր էներգետիկական մաքրությունը**, որի մասին խոսվել է իմ բազմաթիվ ուղերձներում:

Բանն այն է, որ հենց էներգետիկական մաքրությունն է այն «բանալին», որը բացում է Հինգերորդ չափման դուռը:

Ինչու՞ է շատերիդ համար այնքան դժվար լինում սովորել «այստեղ և հիմա» վիճակում ապրել:

Միայն այն պատճառով, սիրելիներ՛ս, որ ձեր էներգատարածությունը միշտ լիքն է լինում ՈՒՐԻՇԻ ծրագրերով, մտքերով ու զգացմունքներով, որոնք էլ հենց ձեր անդադրում Մտքում ծնունդ են տալիս այն մտային «մարաթոնի», որի մասին խոսել եմ [իմ նախորդ ուղերձներից մեկում](#):

Եվ որպեսզի տարբերեք ՁԵՐ մտքերը ուրիշի մտքերից, պետք է սովորեք ապրել էներգետիկական մաքրության մեջ՝ ձեր բարձրաթրթիռ «բոժոժում», որը զրահի նման հուսալիորեն կպաշտպանի ձեր աուրան ցանկացած օտարածին ցածրաթրթիռ էներգիայի ներթափանցումից:

Եվ նման էներգետիկական մաքրության վիճակին տանող քայլերից մեկը պետք է դառնա ձեր ունակությունը՝ հավասարապես վերաբերվելու բոլո՛ր մարդկանց, չբաժանելու նրանց յուրայինների և օտարների, մոտիկների և հեռուների:

Ես տեսնում եմ, որ հենց դա՛ է փորձաքար դառնում շատ շատերիդ համար:

Ամենամոտ ու հարազատ մարդիկ հաճախ ներքաշում են ձեզ անտեսանելի էներգետիկական «փոսերի» մեջ. իրենց դաշտի, ցանկությունների, իսկ ընդհանուր առմամբ՝ իրենց կյանքի մեջ:

Եվ եթե արդեն սովորել եք խուսափել կողմնակի մարդկանց հետ անցանկալի շփման մեջ մտնելուց, ապա ընտանիքից այլևս ոչ մի տեղ չեք փախչի:

Մակայն այս վերջին խոչընդո՛տն էլ հաղթահարելի է:

Հարկավոր է միայն ուրվագծել մերձավորներին թույլատրելի սահմանները. հստակ և պարզորեն հասկացնել, որ կան բաներ ու հասկացություններ, որոնք սուրբ են ձեզ համար և որոնք դուք չեք կարող զոհաբերել նույնիսկ հանուն նրանց, որ նրանք իրավունք

չունեն կոպտորեն ներխուժելու ձեր էներգատարածություն, ինչպես էլ որ վերաբերվեն ձեր կյանքային հայացքներին ու համոզմունքներին:

Եթե կարողանաք այդպիսի «ինքնավարության» հասնել ձեր սեփական ընտանիքում, դա արդեն իսկ առաջին քայլը կլինի ձեր ճանապարհին, որը տանում է «այստեղ և հիմա» վիճակի մեջ ապրելուն:

Կարող եք ինձ հարցնել, թե՛ «Հապա մեր ընտանեկան պարտականություննե՞րը, որոնցից պրծում չկա»:

Իսկ դրանցից պետք էլ չէ պրծնել: Պետք է միայն փոխեք ձեր վերաբերմունքը ձեր բոլոր անելիքների նկատմամբ. ուրախություն և բավականություն ապրել ամեն մի մանրուքից՝ ձեր ամեն գործողությունից ու քայլից:

Ջանացե՛ք ստեղծարարություն հանդես բերել ամեն ինչում:

Թող նույնիսկ ամենօրյա առտնին գործերը գրավիչ զբաղմունքի վերածվեն ձեզ համար:

Իսկ դրան կարելի հասնել միայն այն ժամանակ, երբ կլինեք «այստեղ և հիմա» վիճակում, գլխովին տրվելով հենց այն գործին, որով զբաղվում եք տվյալ պահին:

Համաձայնե՛ք, զավակնե՛րս, որ անելով մի բան, դուք հաճախ մտածում եք բոլորովին այլ բանի մասին, այդպիսով զրկելով ձեզ գործի ընթացքն ու ձեր աշխատանքի պտուղները լիովին վայելելու հաճույքից:

Մտքերի անասելի ցրվածությունն ու ներքին իրարանցումը աներևակայելի քառս են ներբերում ձեր էներգատարածության մեջ, ինչը ոչ միայն ցածրացնում է ձեր թրթիռները, այլև թույլ չի տալիս կենտրոնանալ «այստեղ և հիմա» պահի վրա:

Սակայն ամենացավալին այն է, որ քառսի այդ էներգիան թափանցում է ձեր արած ամեն ինչի մեջ:

Օրինակ, եթե ճաշ եք եփում, իսկ ձեր գլուխն այդ պահին զբաղված է քիչ առաջ ստացած վիրավորանքը «մարսելով» կամ ինչ-ինչ խնդիրներին լուծում փնտրելով, բոլոր այդ էներգիաները նույնությամբ

կհամակեն ձեր պատրաստած կերակուրները, իսկ ձեր ընտանիքի անդամները, ճաշակելով դրանք, կրողը կդառնան այդ էներգիաների:

Հիշե՛ք, որ կենդանի և անկենդան ամեն բան, ինչին դիպչում է մարդը, ՄԻՇՏ ներծծում է մարդու էներգիաները:

Հենց այդ պատճառով էլ կրկին ու կրկին կոչ եմ անում ձեզ պատասխանատվություն զգալ ձեր յուրաքանչյուր մտքի և զգացմունքի համար, այդ կերպ պահպանելով ձեզ և շուրջը եղած ամեն բան ավերիչ ցածրաթրթիռ էներգիաներից:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 12 ՀՈՒՆԻՄԻ 2019 Թ.

Այսօր մենք կգրուցենք աշխատանքի նկատմամբ ունեցած ձեր վերաբերմունքի մասին:

Մարդկանց մեծ մասը բաժանում է ամեն աշխատանք, որ ստիպված է կատարել իր կյանքում, լավի ու վատի, հետաքրքիրի ու ձանձրալիի, սիրելիի ու ոչ սիրելիի:

Երկվության աշխարհում դա միանգամայն նորմալ երևույթ է համարվում, որովհետև այստեղ ամեն ինչ իր հակադրությունն ունի:

Իսկ ինչպե՞ս է այդ առումով Հինգերորդ չափման մեջ՝ միաբևեռ աշխարհում:

Այնտեղ ամե՛ն աշխատանք վայելք է, ստեղծագործություն, ինքնաարտահայտման միջոց և ուրիշներին ուրախություն պարզևելու հնարավորություն:

Իսկ կարելի՞ է արդյոք հասնել դրան հիմա՝ դեռևս ապրելով եռաչափ աշխարհում:

Իհա՛րկե հնարավոր է, զավակնե՛րս: Դա ոչ միայն կգարդարի ձեր իսկ և ձեզ շրջապատող մարդկանց կյանքը, այլև կմոտեցնի ձեզ երկար սպասված Անցմանը:

Եվ հիմա մենք կխոսենք, թե ինչ է հարկավոր անել, որ դա կատարվի հնարավորինս շուտ:

Նախ և առաջ պետք է խորհեք՝ այդ ո՛ր աշխատանքն է ինձ թվում ձանձրալի ու ոչ սիրելի:

Եվ եթե ոչ մի հնարավորություն չունեք խուսափելու այդպիսի աշխատանքից, ձեզ մնում է միայն մի բան՝ ոչ սիրելի աշխատանքը վերածել սիրելիի:

Եվ ահա թե ինչպես կարելի է դա անել:

Նախ՝ մտածեք, թե ինչ է այն բերում մարդկանց, այլ ոչ թե անձամբ ձեզ, և ինչպես կարելի է նրա օգնությամբ ուրախություն պատճառել մյուսներին:

Եվ թող դա դառնա ձեր գլխավոր «ցատկահարթակը», որից մղվելով դուք կարող եք անցնել այն լուծումների որոնումին, որոնք կօգնեն ձեզ կերպավորել չսիրած աշխատանքն այնպես, որ այն վերածվի ձեզ համար ուրախության ու երջանկության անսպառ աղբյուրի:

Եկեք դա դիտենք կոնկրետ օրինակով:

Ես գիտեմ, որ ամեննին էլ ոչ բոլոր մարդիկ են սիրում կերակուր պատրաստել: Շատերն այդ զբաղմունքը դիտում են որպես անհրաժեշտություն, բեռ, տաղտկալի առօրյա գործ:

Որպես հետևանք՝ նրանց պատրաստած բոլոր կերակուրները կրում են նույնքան տաղտկալի, այսինքն՝ ցածրաթրթիռ էներգիա:

Իսկ չե՞ որ ձեր ձեռքում է, զավակնե՛րս, յուրաքանչյուր ճաշկերույթ վերածել իսկական տոնի, և դրա համար ամեննին էլ հարկավոր չեն ինչ-որ հատուկ ջանքեր և մեծ ֆինանսական ծախսեր:

Պետք է միայն ձեր ցանկությունը՝ ուրախություն պատճառել ինքներդ ձեզ և ձեր մերձավորներին, ինչպես նաև՝ ձեր երևակայությունն ու ստեղծագործական մոտեցումը:

Եվ այդ ժամանակ ձեր ամեն ճաշկերույթ իսկական տոն կդառնա:

Ներծծելով ձեր Սերը, ստեղծագործությունն ու լավ տրամադրությունն իր մեջ, կերակուրն արդեն բոլորովին այլ էներգիա կկրի, ինչը անհապաղ կփոխանցվի ձեր մերձավորներին:

Ձեր ձեռքում է հորինել ինչ-որ առանձնահատուկ ծեսեր ու ավանդույթներ, ինչն արդեն արվում է շատ ու շատ ընտանիքներում:

Մակայն կարևոր է, որ չհետևեք օտար՝ դրսից պարտադրված կարծրատիպերին, նույնիսկ եթե դրանք գրավիչ են թվում, այլ մտածեք ձե՛րը՝ նոր ու հարազատ մի բան. այն, ինչ ձեր սեփական էներգիան կկրի իր մեջ, բացառիկ և անկրկնելի:

Ինչու՞ է դա կարևոր:

Որովհետև այդ դեպքում դուք դուրս կգաք հանրորեն ընդունված վարքային շաբլոններից, որոնք պարտադրվում են ազգային ավանդություններով, մոդայով, գովազդով, այսինքն՝ կանեք ևս մեկ քայլ առաջ՝ դեպի Հինգերորդ չափման նոր տարածություն:

Եվ որպեսզի լավագույն արդյունքն ունենաք ցանկացած աշխատանքում, ինչին էլ ձեռք զարկեք, մի՛ մոռացեք, որ միայն լիակատար և ինքնամոռաց սուզումը «այստեղ և հիմա» պահի մեջ կպարարի ձեր աշխատանքը ամենաբարձր թրթռանքի էներգիաներով:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՌԵԶՈՆԱՆՍ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 12 ՀՈՒՆԻՍԻ 2019 Թ.

Եվ այսպես, շարունակենք զրույցը, թե ինչպես կարելի է ամեն աշխատանք վերածել ստեղծագործության և ինչպես սովորել լիովին կենտրոնացնել ուշադրությունը արած գործի վրա:

Իրականում դա այնքան էլ հեշտ չէ, որքան թվում է առաջին հայացքից: Եվ ահա թե ինչու:

Եռաչափ աշխարհը, որտեղ ապրում եք դուք, չափից դուրս հագեցած է էներգիաներով, որոնք իրենց մեջ պարունակում են ոչ միայն տարատեսակ թրթիռներ, այլև բազմաթիվ մտաձևեր (мыслеформы), որ արձակում են հազարավոր մարդիկ:

Եվ դա տեղի է ունենում այն պատճառով, որ ձեր մոլորակի բնակչության ճնշող մեծամասնությունը պաշարված է աստրալ պլանի էություններով՝ ամենաստորին շերտից մինչև ամենավերին շերտին պատկանող:

Այդուհանդերձ, բնակչության մեծագույն մասը ենթակա է միջին աստրալի,- այսպես ասած՝ դրա «կենցաղային» մակարդակի,- ազդեցությանը:

Զգացմունքով երանգավորված ցանկացած միտք, որ կպարունակի դատապարտություն, դժգոհություն, ջղաքրքրություն, անմիջապես որսում են միջին աստրալի էությունները և ուռճացնում անհավանական չափերի, այդ կերպ մեծացնելով տարածության մեջ արձակված բացասական էներգիայի գործողության շառավիղը, որն արդեն սկսում է ապրել սեփական կյանքով՝ ներխուժելով շուրջը եղած մարդկանց աուրայի մեջ:

Սկիզբ է առնում օդում թևածող միատիպ, ցածրաթրթիռ էներգիաների շղթայական ռեակցիա:

Նույնը տեղի է ունենում նաև մտածների հետ:

Օրինակ, ցանկացած լուր, որ թեժ կերպով քննարկվում է զանգվածային լրատվամիջոցներով, սկսում է զբաղեցնել հազարավոր մարդկանց մտքերը, և այդ մտածները նույնպես սկսում են ապրել իրենց սեփական կյանքով՝ ներխուժելով մարդկանց մտքերի մեջ առանց նրանց իմացության և ցանկության:

Եվ ձեզնից շատերը հավանաբար նկատել են դա իրենց մոտ:

Անշուշտ, դա կատարվում է բոլորովին էլ ոչ պատահաբար: Յուրաքանչյուր ոք ձգում է այն, ինչ հատկանշական է հենց իրեն:

Այդպես, քաղաքականությամբ հետաքրքրվող մարդը միանգամայն կարող է տարածության միջից «բռնել» համանման մտքեր այդ թեմայով, իսկ նա ով հետաքրքրվում է աշխարհիկ կյանքով՝ մամուլի տարածած բամբասանքները հայտնի մարդկանց ու դերասանների մասին, առավել ևս, եթե ինքն էլ արդեն հասցրել է ինչ-որ բան կարդալ կամ լսել նրանց մասին:

Մակայն ամենից հաճախ ձեր մտքերը թռչում են մեկից մյուսին, փորձելով ընդգրկել ձեր հետաքրքրությունների ամբողջ սպեկտրը:

Եվ որպես կանոն, դրանք ձեզ ուղեկցում են ձեր բոլոր գործերի ժամանակ, թույլ չտալով լիովին կենտրոնանալ արածի վրա:

Ուրեմն ինչպե՞ս ազատվել այդ անկոչ հյուրերից:

Փորձե՛ք, զավակնե՛րս, յուրացնել այսպիսի մի ոչ դժվարին **պրակտիկա:**

Երբ ձեռնամուխ եք լինում ինչ-որ աշխատանքի, ջանացե՛ք երկխոսության մեջ մտնել ձեր աշխատանքի առարկայի հետ:

Եվ կարևոր չէ, թե դա ինչ է՝ սննդամթերք, բույսեր, տնային կահ-կարասի, կարուձև, ձեր ավտոմեքենան, համակարգիչը, հանձնարարված առաջադրանք թե ձեր ստեղծագործության առարկան. . .

Մի խոսքով, ամեն բան, ինչին դիպչում էք ֆիզիկապես կամ մտովի, պիտի դառնա ձեզ համար հարազատ ու սիրելի:

Հարկավոր է ողջ ուշադրությունը կենտրոնացնել միմիայն այն բանի վրա, ինչ այդ պահին գտնվում է ձեր ձեռքում կամ մտքում:

Հեռագրացական (տելեպատիկ) կա՛պ հաստատեք այն գործի հետ, որով զբաղված եք տվյալ պահին, և շփվե՛ք ձեր աշխատանքի առարկաների հետ, ինչպես կենդանի արարածների:

Սիրեցե՛ք նրանց, շնորհակալությու՛ն հայտնեք և ջանացե՛ք ռեզոնանսի մեջ մտնել նրանց հետ,- միաձուլվել միասնական էներգետիկական ամբողջության մեջ, առավելագույնս զգալու համար միմյանց:

Դա առանձնապես լավ կարելի զգալ, երբ ռեզոնանսի մեջ եք մտնում բույսերի հետ, դրանք խնամելիս կամ տնկելիս, նաև՝ մթերքի, որ պատրաստում եք:

Չշեղվելով կողմնակի մտքերով և էներգապես միաձուլվելով ձեր ուշադրության առարկայի հետ, դուք ոչ միայն բավականություն կապրեք այդ շփումից, այլև կունենաք հրաշալի արդյունքներ, որոնք կուրախացնեն թե՛ ձեզ, թե՛ մերձավորներին:

Փորձե՛ք, զավակնե՛րս, սկսել դրանից, և ես հավատում եմ, որ աստիճանաբար նման վերաբերմունքը ձեր արած ամեն ինչի նկատմամբ կդառնա սովորություն, և դուք կկարողանաք զգալ «այստեղ և հիմա» պահի մեջ գտնվելու այն կախարդական վիճակը, որը ո՛չ մի բանի հետ չի չհամեմատվի:

Օրհնու՛մ եմ ձեզ, զավակնե՛րս, և անսահման սիրում . . .

ԵՐԿՆԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 13 ՀՈՒՆԻՍԻ 2019 Թ.

Ավարտելու համար մեր զրույցը աշխատանքի նկատմամբ ունեցած ձեր վերաբերմունքի մասին, ես կուզենայի ես մի խորհուրդ տալ ձեզ:

Եվ խոսքը կվերաբերի Տիեզերքի Բարձրագույն Ուժերի օգնությանը հոգևոր ուղին բռնած մարդուն:

Ես արդեն պատմել եմ ձեզ, որ յուրաքանչյուր արթնացած մարդու իր կյանքի ընթացքում անդավաճան կերպով տանում են նրա Երկնային օգնականները՝ Հրեշտակները, Հրեշտակապետերը, Համբարձյալ Վարպետները, իր Աստղային ընտանիքը:

Ուստի աշխատանքում և ցանկացած բան ձեռնարկելիս առավելագույն արդյունքի հասնելու համար ՄԻՇՏ օգնության կանչեք նրանց:

Անշուշտ, նրանք առանց այդ էլ հետևում են ձեզ Երկրի նուրբ պլանից, սակայն եթե դուք ԻՆՔՆԵՐԴ դիմեք նրանց որոշակի խնդրանքով, դա հավելյալ ազդակ կդառնա նրանց համար ավելի ակտիվորեն գործելու, որպեսզի այն, ինչ ցանկանում եք դուք, հնարավորինս շուտ հայտնվի ֆիզիկական պլանում:

Սակայն մի՛ շտ հիշեք, որ եթե մտածել եք մի բան, որը չի մտնում ձեր Հոգու ծրագրերի մեջ, Լույսի Ուժերը ոչ միայն չեն օգնի ձեզ, այլև կանեն ամեն ինչ, որ ձեր ցանկությունը չիրականանա:

Հին ու իմաստուն հոգիները միշտ զգում են այդ կապը իրենց կյանքում տեղի ունեցող իրադարձությունների հետ:

Եթե նրանց ձեռնարկած գործն իր ողջ ընթացքում անվերջ խոչընդոտների է բախվում, նրանք հասկանում են, որ դա ԻՐԵՆՑ ճանապարհը ՉԷ, և ժամանակին կանգ են առնում:

Իսկ եթե ամեն ինչ ընթանում է արագ, հարթ ու թեթև, հալած յուղի պես, նշանակում է՝ ամեն բան լավ է. իրենց ընտրությունը ճիշտ է, և Բարձրագույն Ուժերը կօգնեն իրագործել մտահղացումը:

Եվ ահա թե ինչպես է կատարվում նման համագործակցությունը գործնականում:

Եթե ձեր Երկնային օգնականները տեսնում են, որ դուք ձեռնամուխ եք եղել մի բանի, որն ի վնաս ձեզ է լինելու, նրանք չեն շտապի օգնել, այլ կմնան որպես կողմնակի դիտորդներ, համբերությամբ սպասելով, թե երբ պիտի անցնեք ձեր հերթական դասը և ինքներդ հասկանաք ձեր արարքների անհիմն լինելը:

Իսկ եթե դուք ի վերջո լսեք ձեր Հոգուն և զբաղվեք այն բանով, ինչ նա է տենչում, այլ ոչ թե ձեր մարդկային էգոն, ձեզ օգնության կգան բոլոր Լուսավոր Ուժերը:

Նրանք ենթրգապես կմիաձուլվեն ձեզ՝ այդ կերպ զետեղելով ձեզ իրենց բարձրաթրթիռ դաշտում:

Դա թույլ կտա ձեզ լինել դրական էներգիաների գազաթնակետին, ինչը ձեզ կհաղորդի ստեղծագործական ուժեր, ներշնչանք, լավատեսություն և նպատակասլացություն:

Ամեն ինչ կսկսի ստացվել հեշտությամբ, խաղի նման:

Ձեր ճանապարհին կսկսեն հանդիպել պետք եղած մարդիկ, որոնք նույն ալիքի վրա կլինեն, ինչ դուք, քանի որ դուք ակամա կձգեք նրանց ձեր բարձր թրթռանքով:

Ամենուր կգտնեք ըմբռնում և աջակցություն, և դա թույլ կտա կյանքի կոչել ձեր ցանկությունը լավագույն ձևով և ամենակարճ ժամկետում:

Եվ այդ հզորագույն էներգետիկական սնուցումը ձեզ և ձեր ձեռնարկին կապահովեն Բարձրագույն Ուժերը, որոնց դուք օգնության էիք կանչել:

Ահա այսպիսին է համագործակցության մեխանիզմը Լույսի Ուժերի և Ծառայության ելած, կամ պարզապես հոգևոր ուղին բռնած մարդու, որին ձգտում է նրա Հոգին:

Ես գիտեմ, որ ձեզնից ոմանք կարծում են, թե Երկնային օգնականներին կարելի է կանչել լոկ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ձեր կյանքում կատարվող ինչ-որ շատ լուրջ և ճակատագրական բանի:

Դուք հաճախ ամաչում եք անհանգստացնել նրանց «մանր բաներով»:

Բայց իմացե՛ք, սիրելիներ՛ս, որ նրանց համար մանրուքներ չկան: Նրանք հրաշալի հասկանում են, թե ինչ դժվար է լինում գլուխ հանել եռաչափ աշխարհի խնդիրներից, որոնք խոցոտում են ձեր քնքուշ հոգիները:

Ուստի կանչե՛ք նրանց ՄԻՇՏ՝ թե՛ մեծ, թե՛ փոքր բաների համար:

Խնդրե՛ք նրանց ձեր կողքին լինել ամեն օր, ամեն բուրբ, ինչով էլ որ զբաղվելիս լինեք՝ թեկուզ սովորական կենցաղային գործերով:

Այդ ժամանակ դուք կկարողանաք ՄՇՏԱՊԵՍ լինել նրանց դաշտում, նրանց բարձր թրթռանքի մեջ, և ամեն ինչ գլուխ կգա արագ ու հեշտությամբ:

Օրհնու՛մ եմ ձեզ, զավակներ՛ս, և անսահման սիրում . . .

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 14 ՀՈՒՆԻՍԻ 2019 Թ.

Այսօր մենք կխոսենք մարդու ևս մեկ հատկության մասին, որը խանգարում է նրան ազատվել եռաչափ աշխարհի ծրագրերից:

Եվ ահա թե որն է այն:

Ձեզնից շատերը պատանդն են դառնում այնպիսի հասկացության, ինչպիսին է **պատասխանատվությունը** ինքներդ ձեր, մարդկանց, մոլորակի առջև. . .

Տվյալ դեպքում գործում է երկվության աշխարհի միևնույն կարծրատիպը՝ լավ – վատ, լուրջ – անլուրջ, պատասխանատու – անպատասխանատու. . .

Պատասխանատվությունը դուք հասկանում եք որպես պարտք, որպես աշխատանք, որ պիտի տանեք ինքներդ ձեզ և ուրիշների հետ՝ լավագույն մղումներից ելնելով փորձելով ճշմարիտ ուղու վրա բերել նրանց, կիսելով նրանց հետ ձեր գիտելիքները:

Իրականում ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, Աստվածային տեսանկյունից, ՄՇՏԱՊԵՍ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԵՎ ՈՒՐԱԽ ՎԻՃԱԿՈՒՄ ԼԻՆԵԼՆ Է:

Հենց դա էլ երաշխիք կլինի, որ թե՛ դուք, թե՛ ձեր շուրջը եղած ամեն բան պարարվի ամենաբարձր թրթռանքի էներգիաներով:

Իրականացնել դա, գտնվելով երկվության աշխարհում, շատ դժվար է, որովհետև դուք դեռևս չեք սովորել ինքնաբերաբար որսալ ձեր մտքերն ու հետևել, թե դրանցից որոնք են ձեր սեփականը, և որոնք՝ աստրալ էությունների, եռաչափ աշխարհի կամ ձեր Էգոյի ներշնչածը:

Պատճառն այն է, որ ձեր շուրջը տիրում է էներգետիկական քառու, և դրանից դուրս գալու համար դուք պետք է սովորեք հարկ եղած մաքուր ալիքի վրա դնել ձեր թրթրոային «ընդունիչը», որ այնքան դժվար է որսալ օտարածին էներգիաներով ծփացող այդ տարածության մեջ:

Սակայն հենց դա էլ ձեր պատասխանատվությունն է՝ որսալ այդ ԼՈՒՄԱՎՈՐ ԱԼԻՔԸ և, ինքներդ մնալով նրա մեջ, ԼՈՒՅՍՈՎ լցնել ձեր ամբողջ շրջակա տարածությունն ու այնտեղ գտնվող մարդկանց:

Միայն այդպես կարող եք օգնել Տիեզերքի Բարձրագույն Ուժերին փոխելու ձեր մոլորակի էներգետիկական բաղադրությունը:

Իսկ խոսքերը, նույնիսկ ամենաճիշտ, երկվության աշխարհի էներգիաներ են կրում իրենց մեջ և ակամա բաժանում են մարդկանց ավելի կամ պակաս հոգևոր արժանիքներ ունեցողների, ավելի կամ պակաս էներգապես առաջադիմաճների. . .

Մի՛ շտ հիշեք, որ միայն Միրո էներգիան է միասնական բոլորի համար:

Նա չի ճանաչում բաժանություն և իրենով պարուրելով Երկրի երեսին եղած ամենայն կենդանի բան, բարձրացնում է ձեզ կեցության նոր մակարդակ՝ Հինգերորդ չափման միաբնեռ աշխարհը:

Եվ եթե յուրացնեք մշտապես այդ Սիրո հոսանքի մեջ գտնվելու և այն ավելի հեռուն տարածելու կարողությունը, ձեր պատասխանատվությունը մարդկանց և Երկրի առջև լիովին կդրսևորվի և ձեռք կբերի արդեն բոլորովին այլ հասկություններ՝ Աստվածային, և ոչ թե մարդկային:

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի:

ԲԱՑԱՍԱԿԱՆԻՑ՝ ԴՐԱԿԱՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 Թ.

155

Եվ այսպես, [շարունակենք մեր զրույցը](#), թե ինչպես կարելի է փոխակերպել ձեզ ամեն կողմից շրջապատող բացասական էներգիաները դրական՝ բարձրաթրթիռ էներգիաների:

Դրա համար, զավակնե՛րս, պետք է դառնաք հրաշագործներ՝ ձեր ամենագործությանը անվերապահ հավատացող:

Հիշե՛ք, թե մանուկ ժամանակ ինչպես էիք հիանում աճպարարներով, վայրկյան իսկ չկասկածելով, որ նրանք իսկական հրաշքներ են գործում:

Իսկ հիմա ինքներդ պիտի դառնաք այդպիսի «աճպարարներ», մի տարբերությամբ միայն, որ ձեր հրաշքները ակնթարթորեն տեսանելի և շոշափելի չեն լինի, ինչպես բեմի վրա:

Նրանք ի հայտ կգան աստիճանաբար, որովհետև մտքի և դիտավորության ուժով արարվող իրականությունը նախ ստեղծվում է նուրբ մակարդակում և հետո միայն իջնում ֆիզիկական պլան:

Եվ նրա «էջքի» արագությունը կախված է ձեր ցանկության ուժգնությունից և սեփական ուժերին նկատմամբ ունեցած հավաստից:

Այն կախված է նաև նրանից, թե որքան վառ, հստակ և մանրամասնորեն եք պատկերացնում «հրաշքը», որ պիտի արարեք:

Եվ այսպես, ձեր էներգետիկական աշխատանքի հիմքում ընկած է հակառակից ելնող սկզբունքը:

Ամեն անգամ դուք կփոխարինեք «բացասականը» «դրականով»:

Այլ խոսքով, դուք կփոխակերպեք ձեր մոլորակի վրա եղած բացասական ուժերի դիտավորության ուժը դրական, մաքուր մարդկային հոգիների դիտավորության ուժին:

Այն, ինչ փորձում են պարտադրել ձեզ, դուք ոչ թե պարզապես կվանեք և կժխտեք, ինչը կրում է իր մեջ դժգոհության, ջղայնության, հակառակության բացասական երանգներ, այլ կփոխակերպեք ճնշման էներգիան ազատագրման էներգիայով:

Եվ ահա թե ինչպես կարող եք դա անել:

Ամեն անգամ, երբ լսում եք կամ ձեր աչքով է ընկնում ինչ-որ անախորժ նորություն, պատկերացրեք այն ոչ թե հնչյունների կամ բառերի տեսքով, այլ մութ էներգետիկական գոյացության, մոխրագույնից՝ մինչև սև, կախված իր պարունակած չարիքի խտությունից:

Դա նախ և առաջ ձեզ կշեղի տխուր մտքերից՝ կասեցնելով տրամաբանական դատողությունները ձեզ համար ավերիչ հետևանքների մասին, այսինքն՝ կկտրի բացասական շղթան, որ հրահրվել էր տվյալ գործողությունների նախաձեռնողների կամ նրանց տարածած տեղեկատվության շնորհիվ:

Եվ երկրորդ՝ թույլ կտա ձեզ էներգապես ռեզոնանսի մեջ մտնել տվյալ տեղեկության հետ, վերջինս ցածր հաճախությունից ավելի բարձր հաճախության բերելու համար:

Դա նման է նրան, որ փորձում եք որսալ ռադիոալիքը, որով հեռարձակվում է ձեր սիրած երաժշտությունը, սակայն որսում եք լոկ լուրերի անցանկալի ծրագրեր:

Բայց լցվելով համբերությամբ և հավատալով ձեր ուժերին, դուք այնուամենայնիվ բռնում եք ձեր ուզած ալիքը և վերջապես վայելում սիրելի մեղեդիները:

Այսպես, օրինակ, լսելով ձեր երկրում իրականացվող նոր սահմանափակումների մասին, պատկերացրե՛ք դրանք երկրի վրա կախված մութ ամպի տեսքով:

Զգացե՛ք դրա չարագույժ էներգիան, որը կրում է իր մեջ վախ և մարդու կամքի ճնշում:

Այնուհետև պատկերացրե՛ք նրա վերևում մեկ ուրիշ ամպ՝ Համբարձման էներգիայից, շողշողուն, ծիածանագույն, սքանչելի, որը կրում է իր մեջ Միասնություն, Հավասարություն, Խաղաղություն ու Սեր, Երջանկություն ու Բերկրանք:

Եվ սկսեք դանդաղ իջեցնել ցած, հետևելով, թե ինչպես է այն կլանում, իր մեջ առնում բացասական էներգիայի մութ «ամպը», մինչև որ վերջինս լրիվ տարրալուծվում՝ այրվում է Աստվածային բարձրաթրթիռ էներգիայի ճաճանչների մեջ:

Եվ որքան պայծառ լինի այդ տեսիլքը, որքան ուժգին լինի ձեր ցանկությունը ապրելու նոր, երջանիկ աշխարհում, այնքան արագ կփոխակերպվի ձեր իրականությունը. կսկսվի մարդկանց գիտակցության մասսայական զարթոնք, այսինքն՝ կյանքը ձեր երկրում արմատապես կփոխվի դեպի լավը:

Մակայն շատ կարևոր է, զավակնե՛րս, անել այս պրակտիկան խաղով՝ թեթև և ուրախ, երեխայի նման անվերապահորեն հավատալով, որ հրաշքը անպայման՝ կկատարվի:

Եվ ես օրհնու՛մ եմ ձեզ, որ այդպես լինի:

ԵՐԿՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ ՄԻԱԲԵՎԵՌՈՒԹՅԱՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 22 ՄԱՐՏԻ 2022 Թ.

Այսօր մենք կխոսենք այն մասին, թե ինչպես պիտի սովորեք հայտնաբերել ձեր մեջ եռաչափ աշխարհի ծրագրերը:

Թերևս, ամենապարզ միջոցն է՝ հետևել ձեր շուրջը եղած մարդկանց նկատմամբ դրսևորվող ձեր հակազդեցությանը, սկսած մերձավորներից և վերջացրած հազիվ ծանոթ մարդկանցով:

Սակայն շատ կարևոր է հետամուտ լինել ամենաառաջին հակազդեցությանը, քանի դեռ միտքը չի միացել, որովհետև առաջին էներգետիկական ազդակը միշտ ելնում է ենթագիտակցությունից:

Հավանաբար ձեզնից շատերը նկատել են իրենց կրկնվող հակազդեցությունները՝ մտքերը, բառերը, ժեստերը, արարքները:

158

Հենց դրանք էլ այդ ծրագրերն են, որոնք արդեն հիմնավորապես ամրացել են ձեր ենթագիտակցության մեջ:

Եվ հենց դրանց են բնորոշ նման կարծրատիպերն ու շաբլոնները:

Երկրորդ՝ դուք պետք է ուշադրություն դարձնեք այն հանգամանքի վրա, որ հաճախ ուրիշ մարդիկ են հրահրում ձեր կարծրատիպային հակազդեցությունը:

Քիչ չի պատահում, որ մարդը համաձայնում է ինչ-որ բանի լոկ զրույցը պահելու համար, թեպետ իրականում ներքուստ նրա համար մերժելի է քննարկման առարկան:

Որպես հետևանք, նա ակամա հարմարվում է իր զրուցակցի ալիքին, իսկ իր նուրբ մարմիններն իրենց վրա են առնում ուրիշի եռաչափ ծրագրերը:

Դա պատահում է հիմնականում փափուկ, քաղաքավարի մարդկանց հետ, որոնց համարձակությունը չի ներում դադարեցնելու իրենց համար անախորժ խոսակցությունը և որոնք սկզբունքորեն ենթակա են ուրիշի ազդեցությանը:

Ուրեմն ի՞նչ անել, եթե ձեր մեջ հայտնաբերել եք կրկնվող կարծրատիպային հակազդեցություններ, որոնք էլ հենց ընդհանուր առմամբ այն ծրագրերն են, որ ամուր արմատացել են ձեր ենթագիտակցության մեջ:

Հարկավոր է դրանք «արմատախիլ անել» ձեր ենթագիտակցության միջից:

Այդ «մոլախոտերը» խանգարում են ձեր առաջընթացին, իսկ հիմա շատ կարևոր է տեղ բացել նոր մտածողության ու վարքի համար, որոնք անհրաժեշտ են Հինգերորդ չափման մեջ ապրելուն:

Այդ «քաղհանը» հարկավոր է սկսել ցանկացած բացասական միտք կամ հույզ «բացասականից դրականի» վերածրագրավորելուց:

Դրա համար ձեզ արդեն տրվել է համապատասխան պրակտիկա:

Այդուհանդերձ, որպեսզի ձեր գիտակցության մեջ սկսեն նոր մտածներ (мыслетормы) ծնվել, դուք ստիպված կլինեք որոշակի ջանքեր գործադրել:

Այդ նպատակով փորձե՛ք բարդացնել [«Բացասականից՝ դրական»](#) պրակտիկան:

Որպես հիմք ընդունեք արդեն ոչ թե բացասական զգացմունքի կամ տեղեկության փոխակերպումը դրականի, այլ երկվության վերածումը միաբևեռության:

Բայց քանի դեռ դուք ապրում եք եռաչափ աշխարհում, դա հնարավոր կլինի անել միայն վիզուալիզացման միջոցով:

Օրինակ, եթե խոսք է գնում հակադրության մասին՝ լինի մարդկանց, թե երկրների, ինչ-որ մեկի կողմը բռնելու փոխարեն պատկերացրեք այդ մարդկանց կամ երկրները միասնական էներգետիկական

տարածության մեջ՝ խաղաղ, ներդաշնակ, ուր տիրում են Միասնությունն ու Անպայման Մերը:

Ճիշտ նույն կերպ աշխատեք նաև ձեր սեփական ծրագրերի և կարծրատիպերի հետ:

Ամեն ինչի նայեք ընդհանրաբար՝ չշեղվելով մանրուքների և մանրամասների վրա:

Որքան կարելի է հաճախ պատկերացրեք ձեզ և ձեր շրջապատը Հինգերորդ չափման նոր էներգետիկական տարածությունում, որտեղ արդեն բարձր թրթռանքի շնորհիվ չի կարող հայտնվել և ոչ մի բացասական միտք կամ հույզ, առավել ևս՝ արարք:

Այլ կերպ ասած, ձեր կյանքում որևէ անբարենպաստ իրավիճակի ի հայտ գալու դեպքում փոխադրեք այդ իրավիճակը իր բոլոր մասնակիցների հետ միասին միաբևեռ աշխարհ, որտեղ չի կարող լինել հակառակություն:

Եթե սովորեք այդպես վարվել, ձեր բոլոր եռաչափ մեծ ու փոքր ծրագրերն իրենք իրենց կտարրալուծվեն՝ տեղը զիջելով նոր մտածողությանը, որը հատուկ է բարձր չափումների մարդուն:

Այսօր կսահմանափակվենք այսքանով:

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ԳԼՈՒԽ VI

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ ՁԵՐ ՇՈՒՐՁԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ ՁԵՐ
ՇՈՒՐՁԸ

VI ԳԼՈՒԽ ՀԱՎԵԼՎԱԾ

161

1. ՀԵՏԱԴԱՐՁ ՊՐՈՑԵՍ
2. ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻՑ ՋԱՀԵԼ
3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ
4. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՖԻԼՏՐ (ՊՐԱԿՏԻԿԱ)
5. «ԾԱՆՐ» ՇՐՋԱՊԱՏ
6. ՉՈՐՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՄԵՐԿԱԲ (ՊՐԱԿՏԻԿԱ)
7. ԶՈՒԳԱՀԵՌ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
8. ՄԱՐԴՈՒ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿՈՂԸ
9. ՍԵՓԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՐԱՐԻՉ
10. ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԻՍՈՒՆԻՏԵՏ
11. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՈՒՄ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ

ՍՏԵՂԾՈՒՄ ՁԵՐ ՇՈՒՐՁԸ

ԲԱՑԱՐՉԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 31 ՄԱՅԻՄԻ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասուն՝ զավակներ:

Եվ այսպես, մենք անցնում ենք ինքնաիրականացման և հոգևոր զարգացման ձեր Պլանի **վեցերորդ կետին**:

Այժմ դուք պետք է սովորեք **ստեղծել ձեր շուրջը Հինգերորդ չափման էներգետիկական տարածություն՝** ֆիզիկապես կենալով դեռևս երրորդում:

Եթե ձեզ հաջողվի հարկ եղածին պես գլուխ բերել ձեր Պլանի առաջին հինգ կետերը, կարելի է ասել, որ արդեն դրա ճանապարհին եք:

Եվ հիմա ձեզ մնում է միայն ամրապնդել ինքներդ ձեզ վրա տարած աշխատանքի արդյունքները, որպեսզի արդեն **մշտապես պատշաճ մակարդակում պահեք ձեր թրթիռները**:

Եվ ամենադժվարը թերևս հենց այդ է ձեզ համար:

Շատ դեպքերում դա բացատրվում է նրանով, որ եռաչափ աշխարհի մարդու կյանքն անկանխատեսելի է:

Եթե դուք լիակատար մենության մեջ չեք, հանրությունն ամեն օր նորանոր անակնկալներ է մատուցում ձեզ:

Եվ հատկապես դա վերաբերում է Երկրի այժմյան իրավիճակին, երբ Լուսավոր և Մութ Ուժերի պայքարն իր վերջնական փուլն է մտել:

Խորքային պետության՝ պատին դեմ առած ներկայացուցիչները այնուամենայնիվ փորձում են ավարտին հասցնել իրենց մտահղացումը՝ ավելի ու ավելի խստացնելով «անվտանգության միջոցները» իրենց իսկ կազմակերպած սուտ համավարակի դեմ, գրեթե ուժով պարտադրելով մարդկանց ընդունել կործանարար պատվաստումը:

Հատկապես դա՛ դարձավ շատերիդ համար հոգևոր հասունության որոշակի ստուգում:

Չե՞ որ խոսքն արդեն ոչ թե ֆիզիկական մարմնի կյանքի կամ մահվան մասին է, այլ ձեր Աստվածային Հոգու գոյության:

Այսպիսի ընտրության առաջ մարդկությունը դեռ երբեք չէր կանգնել, այդ իսկ պատճառով էլ շատ քչերն են ի վիճակի մինչև վերջ գիտակցելու դրա ողջ լրջությունն ու խորությունը:

Սակայն ում հաջողվել է, արդեն գնում են մինչև վերջ, չնայելով շուրջբոլորը դրված ծուղակներին պատվաստումից հրաժարվածների իրավունքների և ազատությունների բազմաթիվ սահմանափակումների տեսքով, ընդհուպ աշխատանքից հեռացում և ապրուստի միջոցներից զրկում:

Շատերիդ համար մեծագույն փորձություն է ձեր երեխաների պաշտպանությունը իշխանությունների կամայականությունից և անմարդկային փորձարկումներից:

Ներկայիս ձեր ապրածը կարելի անվանել իսկական Արմագեդդոն, որ մեկ անգամ չէ, ինչ կատարվել է ձեր մոլորակի վրա:

Որոշ քաղաքակրթություններ կործանվել են, որոշ քաղաքակրթություններ՝ ծնվել, սակայն ոչ ոք դեռ երբեք ոտնձգություն չի արել մարդու Հոգու նկատմամբ՝ փորձելով զրկել նրան Աստվածային սկզբից:

Մարդկանց վրա տարվող այս հրեշավոր փորձարկումը դարձավ այն վերջին կաթիլը, որը լցրեց Լույսի Ուժերի և ձեր Գալակտիկական ընտանիքի համբերության գավաթը:

Նրանք բոլորը օգնության են եկել մարդկանց, որպեսզի աջակցեն պատվով կատարելու Անցումը Հինգերորդ չափում Երկրի հետ միասին:

Սակայն այդ պրոցեսը ամեն ոք պետք է սկսի իրենից:

Որքան կարելի է հաճա՛խ դիմեք Բարձրագույն Ուժերի, Հրեշտակների, Հրեշտակապետերի, ձեր Գալակտիկական

եղբայրների և քույրերի օգնությանը, խնդրե՛ք սատար կանգնել ձեզ Անցման այս դժվարին փուլում, երբ ստիպված եք կռիվ մղել Խավարի Ուժերի դեմ թե՛ նուրբ, թե՛ ֆիզիկական պլանում:

Նրանք միշտ լսում են ձեզ, և նրանց օգնությունը հիրավի անգնահատելի է:

Այդ նրա՛նք են օգնում ձեզ պահպանել Հավատը ձեր նկատմամբ և բարձր պահել ձեր թրթիռները:

Նրանք սքանավորում են յուրաքանչյուր արթնացած Հոգու և «փրկօղակ են նետում» ամեն անգամ, երբ տեսնում են նրա «անկումը», ինչն անխուսափելի է նման բարդագույն պայմաններում, ուր հայտնվել էք դուք ներկայումս:

Այդպես միասնաբար,- դուք՝ ինքներդ ձեզ վրա տարած ամենօրյա քրտնաջան աշխատանքով, իսկ ձեր Երկնային օգնականները՝ ձեր կյանքում ունեցած իրենց անտեսանելի ներկայությամբ,- դուք Երկրի վրա ստեղծում եք Հինգերորդ չափման տարածություն, որը հետզհետե տարածվում է ողջ մոլորակով մեկ:

Արդյունքում՝ ով հայտնվում է նրա դաշտում, սկսում է փոխվել:

Նրանց գիտակցությունը մաքրվում է եռաչափ աշխարհի ծրագրերից, իսկ ձեր օրինակով մարդիկ տեսնում են, թե որքան հանգիստ ու երջանիկ կարելի է ապրել այդ անհեթեթ, փոթորկալից աշխարհում, չսուզվելով նրա մեջ զգացմունքայնորեն, այլ միայն հեռվից հետևելով իրադարձություններին, ինչը թույլ է տալիս մաքուր ու ազատ մնալ կարծրատիպերից, շաբլոններից և պայմանականություններից:

Եվ որքան շատ լինեն Երկրի վրա նման ազատության կղզյակներ՝ բարձրաթրթիռ էներգիաներով առլեցուն, այնքան շուտ կթևակոխի մարդկությունը նոր դարաշրջան, որն արդեն իր իրավունքների մեջ է մտնում ձեր մոլորակի վրա:

Այսքանով կավարտենք այսօր:

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

VI ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԵՏԱԴԱՐՁ ՊՐՈՑԵՍ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 18 ՀՈՒԼԻՍԻ 2022 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ:

Այսօր ես ուզում եմ սկսել մի նոր թեմա, որը թեև կլինի անցածի կրկնությունը, սակայն ավելի մանրամասնորեն կբացահայտի ձեր օրգանիզմի նորովի վերակառուցվելու էներգետիկական մեխանիզմները:

Մենք արդեն շատ ենք խոսել մարդու ֆիզիկական մարմնի՝ լուսաբյուրեղայինի փոխակերպվելու մասին, որը թույլ կտա նրան գոյել Հինգերորդ չափման բարձր թրթիռների մեջ:

165

Սակայն հիմա ես ուզում եմ շեշտն առավելապես դնել անցումային փուլի վրա և պատմել, թե ինչ է կատարվելու ձեր մարմինների հետ՝ թե՛ նուրբ, թե՛ ֆիզիկական, երբ արդեն ամուր հիմնավորվեք չորրորդ չափման տարածության մեջ:

Եվ հընթացս ձեզ կտամ էներգետիկական պրակտիկաներ այդ պրոցեսն արագացնելու համար:

Ինչու՞ եմ ես իմ նախորդ ուղերձներում այդքան մեծ ուշադրություն դարձրել մարդկանց փոխհարաբերություններին չորրորդ և Հինգերորդ չափման աշխարհներում:

Ամենից առաջ՝ որովհետև լոկ միմյանց հետ շփվելո՛վ են մարդիկ ձեռք բերում սեփական մտքերն ու զգացմունքները կառավարելու իրենց այնքան անհրաժեշտ փորձը:

Եվ հենց դրանք էլ հանդիսանում են ձեր թրթիռների մակարդակի գլխավոր «ցուցիչը»:

Սովորելով ներդաշնակ հարաբերություններ ստեղծել ձեր շուրջը եղած մարդկանց հետ, դուք այդպիսով կարգի եք բերում ձեր նուրբ մարմինների մտային և զգացմունքային բաղադրիչները:

Այլ կերպ ասած՝ դուք այնքան կամրացնեք դրանք, որ հուսալի պաշտպանություն կդառնան ձեր ֆիզիկական մարմնի համար:

Չէ՞ որ արդեն գիտեք, որ ցանկացած բացասական էներգիա, ներագդելով դրանց վրա ինչպես դրսից, այնպես էլ ներսից, կարող է ճեղք բացել դրանց մեջ, որը կվերածվի աստրալ էությունների և օտարածին էներգիաների՝ ձեր էներգետիկական տարածություն ներթափանցելու փոքր պորտալի:

Հենց ձեր «վիրավոր» նուրբ մարմինները թույլ չեն տալիս ֆիզիկական մարմնին հեշտ ու արագ փոխակերպվել լուսաբյուրեղայինի:

Մարդու նուրբնյութական կառուցվածքը որքան կատարյալ, նույնքան էլ խոցելի է:

Եվ դա բացատրվում է նրանով, որ ի սկզբանե մարդը ստեղծվել է որպես Աստվածամարդ և ապրել բարձր թրթիռների իդեալական պայմաններում:

Նրա բոլոր մարմինները,- նուրբ և ֆիզիկական,- լիակատար ներդաշնակության մեջ են եղել միմյանց հետ, իսկ միջմարդկային հարաբերությունները կառուցվել են Միասնության և Միրո հիման վրա:

Սակայն ավելի ու ավելի ցածրաթրթիռ աշխարհների, ընդհուպ երրորդ չափման աշխարհի մեջ սուզվելու համեմատ նրանց անկայուն զգացմունքային վիճակը սկսում է ազդել ֆիզիկական մարմնի վրա, ինչի հետևանքով էլ առաջ են գալիս հիվանդությունները, ծերությունն ու մահը:

Եվ հիմա, Երկրի և Հինգերորդ չափում Անցում կատարելու պատրաստ մարդկանց թրթռանքի վերելքի հետ սկիզբ է դրվում հետադարձ պրոցեսին:

Ձեր զգացմունքային վիճակի շտկման և ներդաշնակման, այսինքն՝ նուրբ մարմինների ամբողջականության վերականգնման համեմատ ձեր ֆիզիկական մարմինը կսկսի փոխվել՝ ազատվելով հիվանդություններից, ծերությունից և մահից:

ՄԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻՑ ՋԱՀԵԼ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 20 ՀՈՒԼԻՄԻ 2022 Թ.

Այսօր մենք [կշարունակենք զրույցը](#) ձեր ֆիզիկական մարմնի փոխակերպման մասին, երբ վերջնականապես անցնեք չորրորդ չափում:

Եվ այժմ ես կպատմեմ երրորդ և չորրորդ չափման մարդու օրգանիզմի հիմնական տարբերիչ առանձնահատկությունների մասին:

167

Մենք արդեն խոսել ենք, որ թրթիռների բարձրացման հետ մարդկանց ֆիզիկական մարմինները կդադարեն ծերանալուց:

Ինչու՞ է դա լինում:

Առաջին հերթին՝ որովհետև փոխվում է մարդու գիտակցությունը՝ ազատվելով եռաչափ աշխարհում համընդհանրորեն ընդունված այն դրույթից, որ տարիքի հետ մարդը ՊԵՏՔ է հիվանդանա և ծերանա:

Բայց, ինչպես արդեն գիտեք, Տիեզերքի գլխավոր Օրենքներից մեկն ասում է, որ արտաքինը միշտ արտացոլում է ներքինը:

Վերհիշե՛ք, թե մարդիկ որքան հաճախ են գործածում այնպիսի արտահայտություններ, ինչպես՝ «Տարիքն իրենն ասում է», «Տարիքից չես փախչի», «Ես ինձ զգում եմ իմ տարիքի համեմատ» և այլն:

Այլ խոսքով, մարդն ի՛նքն է մշտապես իր գիտակցության և ենթագիտակցության մեջ ներդնում հիվանդանալու և ծերանալու դրույթը:

Ինչը և տեղի է ունենում ձեր մոլորակի ճնշող մեծամասնության հետ:

Իրականում նրանց օրգանիզմը լոկ հլու հնազանդ կատարում է այն հրամանը, որ մշտապես ստանում է մարդուց:

Սակայն կա մարդկանց ևս մեկ կատեգորիա, որոնք չեն ուզում հիվանդանալ և հաճախ ենթագիտակցորեն անչափ վախենում են ծերությունից:

Նրանք անում են ամեն բան, որ ինչ-որ կերպ երկարաձգեն իրենց երիտասարդությունը:

Ոմանք հյուծում են իրենց ֆիզիկական վարժություններով, ոմանք դիմում են պլաստիկ վիրահատությունների, փորձելով այդ կերպ ծածկել ապրած տարիների հետքերը, ոմանք էլ համատեղում են այդ երկուսը:

Բայց եթե անգամ նրանց հաջողվում է խաբել ուրիշներին, միևնույն է՝ ներքուստ իրենք հրաշալի զգում են իրենց տարիքը և իրենց խաբել չեն կարող:

Իսկ կա նաև մարդկանց մի երրորդ կատեգորիա, որոնք ինտուիտիվորեն զգում են, որ հիվանդությունն ու ծերությունը անբնական բաներ են մարդու համար:

Նրանք ոչինչ չեն անում, որ թաքցնեն իրենց տարիքը, սակայն հոգով միշտ մնում են երիտասարդ:

Ներքին կողմնորոշումը դեպի հավիտենական երիտասարդություն, ինչպես նաև կյանքի մանկական ընկալումը նրանց թույլ է տալիս իրենց տարիքից շատ ավելի ջահել երևալ:

Եվ դա բացատրվում է նրանով, որ այդպիսի մարդու մարմինը հետևում է կյանքի և իր անձի նրա ներքին ընկալմանը:

Այս դեպքում դարձյալ գործում է Անդրադարձման Օրենքը, բայց արդեն դրականորեն:

Եվ հիմա մարդկությունը թևակոխում է իր կյանքի մի այնպիսի փուլ, երբ իրենց գիտակցությամբ չորրորդ չափման մեջ ամրացած մարդիկ դադարում են ծերանալուց:

Նրանց մոտ դեռ չի սկսվել օրգանիզմի երիտասարդացման հետադարձ պրոցեսը, որ հնարավոր է միայն Հինգերորդ չափումում, բայց առաջին քայլն այդ ուղղությամբ արդեն արվել է:

Եվ ես գիտեմ, որ շատ-շատերը նրանցից, ովքեր հիմա կարդում են այս ուղերձը, իրենց տարիքից իսկապես ավելի ջահել են երևում:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԱՐՏԱՔԻՆ

ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

169

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 21 ՀՈՒՆԻՄԻ 2022 Թ.

Այսօր ես ուզում եմ [շարունակել գրույցը](#) երրորդ և չորրորդ չափման մարդու օրգանիզմի տարբերիչ առանձնահատկությունների մասին:

Եվ այսպես, դուք արդեն գիտեք, որ **ձեր ֆիզիկական վիճակի վճռորոշ գործոնը ձեր գիտակցությունն է:**

Հենց նա՛ է տեղեկա-էներգետիկական ազդակներ հղում ձեր ֆիզիկական մարմնին, որը հնազանդորեն ի կատար է ածում այդ «հրամանները»:

Գիտակցության և ֆիզիկական մարմնի փոխգործակցության այս մոդելը տարածվում է ինչպես ստորին, այնպես էլ վերին չափումների աշխարհների բնակիչների վրա:

Սակայն դա միակ գործոնը չէ, որ ազդում է ձեր ֆիզիկական մարմնի վրա և որը պայմանականորեն կարելի է անվանել ներքին «ազդեցության ազենտ»:

Կան նաև արտաքին գործոններ, որոնք կախված չեն ձեզնից, սակայն խուսափել դրանց ազդեցությունից դուք անկարող եք:

Խոսքը գլխավորապես վերաբերում է օդի, ջրի, սննդամթերքի, բնակության վայրի և ձեր շրջապատի որակին:

Իհարկե, հսկայական տարբերություն կա մեզապոլիսներում և գյուղական վայրերում ապրող մարդկանց կյանքի որակների միջև:

Սակայն ընտրությունը միշտ ձերն է:

Յուրաքանչյուր ոք ինքն է սահմանում իր նախընտրությունները, որով էլ ի վերջո որոշվում է նրա գոյության թրթիռային ֆոնը:

Ոմանց դուր է գալիս «եփվել» իրադարձությունների կենտրոնում, մեծաթիվ մարդկանցով շրջապատված, և նրանք հաստատվում են մեզապոլիսներում՝ ընդունելով սրանց բոլոր «բարեմասնությունները»:

Մյուսները սիրում են լռություն, վայելելով մենությունն ու բնության ձայները, հաստատվելով մեծ քաղաքներից հեռու:

Նրանք ինտուիտիվ կերպով ձգվում են դեպի ամենայն մշտնջենականն ու բնականը, խուսափելով քաղաքակրթության «բարիքներից», որոնք ներքաշում են մարդուն նսեմ էներգիաների և արհեստական արժեքների հորձանուտը:

Եվ իհարկե, կենսառճի և բնակության վայրի ընտրությունը հսկայական ազդեցություն է գործում նաև ձեր ֆիզիկական վիճակի վրա:

Սակայն նա, ով իր թրթռանքով հասնում է չորրորդ չափման, այլևս չի կարող ապրել մեծ քաղաքների «անդացած», քառսային էներգիաների մեջ, որտեղ չունի նույնիսկ անձեռնմխելի անձնական տարածություն:

Հենց այդ պատճառով էլ, զավակներ՝ րս, ես արդեն վաղուց և համառորեն կոչ եմ անում ձեզ մեկնել մեծ քաղաքներից, որոնք խժռում են մարդկային հոգիները՝ թույլ չտալով դուրս պրծնել եռաչափ աշխարհի շրջանակներից:

Որքան էլ որ ձգտեք առաջ ընթանալ ձեր հոգևոր զարգացման մեջ, ինչ պրակտիկաներ էլ որ գործի դնեք, մեծ քաղաքների նսեմ էներգիաներն ի չիք են դարձնում ձեր բոլոր ջանքերը, որովհետև առայժմ շատ քչերին է հաջողվում դիմակայել արտաքին գործոնների սաստիկ ճնշմանը ձեր հոգեբանության և ֆիզիկական մարմնի վրա:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՖԻԼՏՐ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 23 ՀՈՒԼԻՍԻ 2022 Թ.

171

Այսօր ես ուզում եմ շարունակել զրույցը ձեր ֆիզիկական մարմնի վրա ազդող արտաքին գործոնների մասին:

[Նախորդ ուղերձում](#) խոսվում էր այն մասին, թե ինչպես է նրա վրա ազդում ձեր բնակության վայրը, որն իրականում վճռորոշ է ողջ մնացյալի համար:

Բնության գրկում ապրած կյանքը շնորհում է մարդուն մաքուր օդ, բնական մթերք և աղբյուրի ջուր, որոնք իրենք իրենցով բարձրաթրթրիո են, այսինքն՝ բարենպաստ ազդեցություն են գործում ձեր ֆիզիկական մարմնի վրա:

Մակայն ես, իհարկե, հասկանում եմ, զավակներ՝ րս, թե որքան դժվար է եռաչափ մարդու համար կտրուկ փոխել կյանքը և պոկվել հաստատված տեղից:

Ուրեմն ինչպե՞ս վարվեն նրանք, ովքեր առայժմ հնարավորություն չունեն դուրս պրծնելու մեծ քաղաքներից և հարաբերական անկախություն ձեռք բերելու քաղաքային ինֆրակառուցվածքից:

Ամենից առաջ՝ չհուսահատվել և հավատալ սեփական ուժերին:

Բայց դա պիտի լինի ոչ թե կույր հավատ, այլ ստեղծարար գործունեություն, որն ուղղված է չորրորդ չափում անցնելուն խոչընդոտող արգելքների վերացմանը:

Եվ ահա թե ինչ կարող է այն լինել:

Հարկավոր է սկսել նրանից, ինչի վրա վրա դուք հեշտությամբ կարող եք ազդել՝ ջրից և սննդամթերքից:

Հնարավորություն գտեք խմելու մաքուր ջուր և քիմիական նյութերով չմշակված բանջարեղեն ու միրգ:

Իսկ այն մթերքը, որ ստիպված եք լինում գնել խանութից, անպայման մաքրեք էներգապես, այդ կերպ չեզոքացնելով նրանց մեջ պարունակվող վնասակար նյութերը:

Այդ նպատակի համար առավել հարմար կլինի Տիեզերքի Սկզբնարարչի էներգիան՝ ունիվերսալ էներգիա, որը հրաշալի ներդաշնակվում է եռաչափ աշխարհի հետ՝ նվազագույնի հասցնելով երրորդ և չորրորդ չափումների միջև եղած ճեղքվածքը:

Ինչ վերաբերում է օդին, որ ստիպված եք շնչել մեծ քաղաքներում, այստեղ պետք է փոքր-ինչ ավելի ջանք գործադրեք:

Եվ դրա համար ես առաջարկում եմ ձեզ մի պրակտիկա, որը կանվանենք «Աստվածային ֆիլտր»:

Նրա նպատակն է մշտապես գտնվել Օդի Տարերքի պաշտպանության ներքո, որը կդառնա ձեր Հովանավորն ու գլխավոր օգնականը ձեր շնչած օդի մաքրման գործում:

Դուք հետզհետե կարող եք տարածել այդ պրակտիկան ոչ միայն ձեր սեփական էներգետիկական տարածության, այլև ողջ թաղամասի կամ նույնիսկ քաղաքի վրա, որտեղ ապրում եք:

Եվ ահա թե որն է այդ պրակտիկան:

Հանգիստ ու ներդաշնակ վիճակում կանչե՛ք Օդի Տարերքին և ջանացե՛ք ռեզոնանսի մեջ մտնել նրա հետ:

Զգացե՛ք նրա յուրակերպությունը, նրա թրթռանքը. . .

Լա՛վ մտապահեք ձեր այդ վիճակը, որպեսզի, կանչելով Օդի Տարերքին, կարողանաք իսկույն ճանաչել նրան և զգալ նրա ներկայությունը ձեր էներգատարածության մեջ:

Խնդրե՛ք նրան Աստվածային «Ֆիլտր» կանգնեցնել ձեր շուրջը, որն անցկացնելով իր միջով քաղաքային աղտոտված օդը, լիովին կմաքրի և կկառուցավորի այն:

Հետզհետե մեծացրե՛ք ձեր «Ֆիլտրի» ազդեցության շրջանակը՝ ներառելով շրջակա տարածությունը ձեր քաղաքի չափով:

Մակայն այս պրակտիկան պիտի ոչ թե մեկանգամյա արարք լինի ձեզ համար, այլ ամենօրյա աշխատանք, մինչև որ սովորական դառնա, պաշտպանական գունդ ստեղծելու նման, երբ հարկ է լինում սուզվել մեծ քաղաքի իրադարձությունների հորձանուտը:

Այն կխլի ձեզնից հաշված բոպեներ, սակայն օգուտը կլինի հսկայական ոչ միայն անձամբ ձեզ, այլև շուրջը եղած մարդկանց, երբեմն էլ ողջ քաղաքի համար:

Օրհնու՛մ եմ ձեզ և անսահման սիրում. . .

«ԾԱՆՐ» ՇՐՋԱՊԱՏ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 24 ՀՈՒԼԻՍԻ 2022 Թ.

Այսօր մենք կհուսեն ևս մեկ արտաքին գործոնի մասին, որն անդրադառնում է ձեր **ֆիզիկական** վիճակի վրա և բացասական ներգործություն ունենում:

Դա ձեր շրջապատն է, և առաջին հերթին ամենամոտ շրջապատը՝ ընտանիքի անդամները, ընկերներն ու գործընկերները, այսինքն մարդիկ, որոնց հետ շփվելուց անկարելի է խուսափել, որքան էլ որ ցանկանաք:

Այժմ եկել է մի ժամանակ, երբ տեղի է ունենում սաստկագույն շերտավորում ըստ թրթռանքի:

Դա պայմանավորված է նրանով, որ Երկիրն ինքը ձերբազատվում է ծանր էներգիաների բեռից, որոնք թույլ չեն տալիս նրան թեթև ու արագ տեղափոխվել Հինգերորդ չափման տարածություն:

174

Նուրբ պլանում ընթանում են պրոցեսներ, որոնք կարելի է համեմատել տիեզերանավի փուլային անջատման հետ իր «աստիճաններից», որոնք մնում են երկրի վրա:

Եվ տվյալ դեպքում «տիեզերանավը» ձեր մոլորակն է, որ ձգտում է վեր դեպի Հինգերորդ չափում:

Բայց այդ «նավն» իր վրա կարող է վերցնել Երկրի ոչ բոլոր բնակիչներին, այլ միայն նրանց, ովքեր իր հետևից ունակ կլինեն ազատվելու իրենց թռիչքը խոչընդոտող «բեռից»:

Իսկ ի՞նչն է բեռ ձեզ համար:

Ընդհանուր առմամբ՝ ամեն ինչ, որ ցածր թրթռոններ է կրում իր մեջ:

Առաջին հերթին՝ ձեր սեփական բացասական հատկությունները, որոնք ծանրացնում են ձեր էներգետիկան և քայքայում ներսից:

Բայց նաև ձեր շրջապատը, որը ավերիչ ազդեցություն է գործում արդեն դրսից:

Ձեր ֆիզիկական մարմինը «գերբեռնվածություն» է զգում յուրաքանչյուր անգամ, երբ ձեր էներգատարածություն են թափանցում ցածրաթրթիռ, օտարածին էներգիաներ, որ արձակում են ձեր շրջապատի մարդիկ:

Եվ դա հատկապես վտանգավոր է լինում այն ժամանակ, երբ ի պատասխան դուք հղում եք նրանց ջղայնության, վիրավորանքի կամ ագրեսիայի ձեր սեփական բացասական էներգիաները:

Հենց դա էլ տեղի է ունենում այն մարդկանց հետ, որոնց կյանքային հայացքները չեն համընկնում և որոնց թրթիռները չափազանց տարբեր են:

Ձեր մեջ շատ քչերին է բախտ վիճակվել ապրելու իդեալական պայմաններում՝ համախոհների հետ, որոնք ամեն ինչում ձեզ հետ միևնույն ալիքի վրա են:

Սակայն նույնիսկ եթե դուք փորձում եք շփվել միայն այդպիսի մարդկանց հետ, ձեր ընկերակցությունից դուրս կան բազմաթիվ այլ մարդիկ, որոնք հեռու են ձեր իդեալից և հաճախ լիովին տրված են եռաչափ աշխարհի իշխանությանը:

Ոչ բոլորին է հաջողվում հուսալիորեն պաշտպանել իր էներգատարածությունը նրանց ազդեցությունից, որը հիմա առավել ագրեսիվորեն է դրսևորվում այն պատճառով, որ այդ մարդիկ էլ իրենց հերթին են ենթարկվում իրենց համար խորթ բարձրաթրթիռ էներգիաների:

Ներկայումս, երկու ժամանակաշրջանների և երկու չափումների միացման կետում, տարաթրթիռ մարդկանց էներգետիկական հակառակությունը մտնում է իր ակտիվ փուլը, ինչը ֆիզիկական պլանում արտահայտվում է սեփական կարծիքից տարբերվող այլ կարծիքի նկատմամբ անհանդուրժողությամբ և այն չընդունելով:

Հավանաբար ձեզնից շատերն արդեն նկատել են դա, ինչպես նաև զգացել են նման շփման հետ կապված իրենց անկայուն ֆիզիկական վիճակը:

Ձեր մարմինը հիմա ահռելի ծանրաբեռնվածությունների տակ է, որպիսիք զգում են տիեզերագնացները երկրի վրա՝ անկշռության մեջ լինելուց հետո:

Եվ դա բացատրվում է նրանով, որ ձեր ֆիզիկական մարմինը, որը ծայրաստիճան «թեթևացել» է լուսաբյուրեղայինի փոխակերպվելու հոգևոր պրակտիկաներով ու մեդիտացիաներով, հայտնվելով իր համար խորթ միջավայրում, ծայրահեղորեն «հողանցվում» է շուրջը եղած մարդկանց բացասական էներգիաներով, որոնք դուք դեռևս ի վիճակի չեք չեզոքացնելու:

Եվ հաջորդ անգամ ես կտամ մի պրակտիկա, որը կօգնի ձեզ ազատվել այդ անհամապատասխանությունից և պաշտպանել ձեր ֆիզիկական մարմինը քայքայումից:

ՉՈՐՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՄԵՐԿԱԲ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 24 ՀՈՒԼԻՍԻ 2022 Թ.

[Շարունակելով նախորդ ուղերձը](#), եկե՛ք ձեռնամուխ լինենք ձեր շուրջը եղած մարդկանց բացասական ազդեցության չեզոքացման պրակտիկային:

Այս պրակտիկան կանվանենք «**Չորրորդ չափման մերկաբ**»:

Սակայն նախ և առաջ ես ուզում եմ ձեզ հիշեցնել էներգետիկական պրակտիկաների և մեդիտացիաների գլխավոր սկզբունքը:

Նրանց հիմքում միշտ ընկած է **հոգևոր** բաղադրիչը, որը և **վճռորոշ** է:

Հենց դրանով են նրանք տարբերվում, ասենք, ֆիզիկական վարժություններից:

Պրակտիկաներն ու մեդիտացիաները, որ տրվում են ձեզ այս կայքէջում, ամենից առաջ «մարզում են ձեր հոգևոր մկանները», ինչը բարենապաստ ներգործություն է ունենում նաև ֆիզիկական մարմնի վրա:

Ինչ վերաբերում է այսօրվա պրակտիկային, նրա հիմքում ընկած է ոչ թե սեփական անձի ֆիզիկական անջրպետումն ուրիշ մարդկանցից, որ ինչ-որ չափով բաժանություն է բովանդակում իր մեջ, այլ **սեփական էներգատարածության ազատումը օտարածին ցածրաթրթիռ էներգիաներից:**

Այսօր դա ոչ միայն կենսական անհրաժեշտություն է ձեզ համար, այլև չորրորդ չափում անցնելու երաշխիք:

Ձեր ֆիզիկական մարմինն այժմ դառնում է յուրօրինակ «մերկաբ», որը մի չափումից ձեզ տեղափոխում է մեկ ուրիշ չափում:

Եվ որպեսզի այդ «մերկաբը» կարողանա ազատորեն պոկվել եռաչափ աշխարհից և տեղափոխել ձեզ չորրորդ չափման նոր երկիր, դուք պետք է առավելագույնս թեթևացնեք ու նոսրացնեք այն՝ ձերբազատվելով բոլոր «ծանր» էներգիաներից:

Եվ այսպես, անցնենք բուն պրակտիկային:

Հարկ է սկսել մեդիտացիայից, որը հետագայում, երբ պրակտիկան ձեզ համար արդեն աշխատանքային դառնա, կարող էք և բաց թողնել:

Կանչե՛ք ձեր բոլոր Երկնային օգնականներին, լիովի՛ն թուլացեք և խո՛ր շնչեք. . .

Այնուհետև ջանացե՛ք տեսնել ձեր ֆիզիկական մարմինն ու բոլոր նուրբ մարմինները գունազեղ և ծավալային:

Կարգաբերե՛ք դրանցից յուրաքանչյուրը իր համապատասխան չակրայի հետ. . .

Զգացե՛ք, թե ինչպես են բոլորը մտնում միասնական թրթիռային ռիթմի մեջ. . .

Այսպիսի նուրբ կարգաբերումն ընդամենը մի քանի բոպե կպահանջի ձեզնից:

Սպասե՛ք այն պահին, երբ թրթիռները դանդաղ ու հավասարաչափ կերպով կտեղափոխվեն չակրային առանցքով վերից վար և հակառակը. . .

Հենց դա էլ կլինի ձեր լուսային մարմնի ակտիվացման նշանը և ցույց կտա, որ ձեր «մերկաբը» պատրաստ է ճամփորդության դեպի չորրորդ չափում:

Իսկ հետո մտովի գետեղե՛ք այն Տիեզերական Սիրո Կրակից ստեղծված, արտաքուստ հայելապատ պաշտպանական գնդի (սֆերայի) մեջ:

Այդ գունդը շատ տարողունակ կլինի, քանի որ ներառում է իր մեջ ձեր բոլոր նուրբ մարմիններն իրենց իդեալական՝ առավելագույնս նոսրացած վիճակում:

Այժմ ձեր խնդիրն է որքան հնարավոր է երկար մնալ այդ «մերկաբի» մեջ, անկախ ձեր գտնվելու վայրից և շրջապատից:

Դուք աստիճանաբար կվարժվեք արտաքին աշխարհից ու մարդկանցից մեկուսացած լինելու ձեր այդ նոր վիճակին, սակայն այդ մեկուսացումը լինելու է սոսկ էներգետիկական և ոգեկան:

Դուք կկարողանաք շարունակել ձեր սովորական կյանքը, բայց արդեն բոլոր իրադարձություններին նայելով չորրորդ չափման տարածությունից:

Դուք կնկատեք, թե որքան կփոխվի ձեր վարքագիծը և հակազդեցությունը ընթացիկ դեպքերին:

Եռաչափ աշխարհի մարդիկ կդադարեն գրգռել ձեզ, որովհետև դուք կընկալեք նրանց արդեն ձեր նոր գիտակցության բարձունքից:

Դուք անվրեպ կճանաչեք, թե ով է ունակ արթնանալու, և ով է անհույս քնած:

Իսկ ձեր ֆիզիկական մարմինը, լիովին մեկուսանալով եռաչափ աշխարհի ցածր էներգիաներից, այլևս չի վերապրի այն հսկայական ծանրաբեռնվածությունները, որոնք չեն թողնում նրան արագ ու թեթև փոխակերպվել լուսաբյուրեղայինի:

Արե՛ք այս պրակտիկան, զավակնե՛րս, հնարավորինս հաճախ, մինչև որ սովորեք մշտապես գտնվել բարձրաթրթիռ Աստվածային «մերկաբի» մեջ՝ ձեր նոր տանը, որն ինքներդ եք ստեղծել չորրորդ չափման տարածության մեջ:

ԶՈՒԳԱՀԵՌ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 27 ՀՈՒԼԻՍԻ 2022 Թ.

179

Շարունակելով նախորդ ուղերձը ես ուզում եմ ավելի մանրամասն բացատրել [«Չորրորդ չափման մերկաբ»](#) պրակտիկայի աշխատանքի սկզբունքը:

Կարծում եմ՝ շատերիդ մոտ կարող է հարց ծագել, թե ինչպես պիտի «Մերկաբը» մարդաշատ վայրերում և քառասային տարաթրթիռ էներգիաների մեջ անձեռնմխելի պահի ձեր էներգետիկական տարածությունը:

Բանն այն է, որ տվյալ պրակտիկան ուրիշ չափման, առայժմ՝ չորրորդ չափման մեջ ձեր մշտապես գտնվելու առաջին քայլն է:

Եթե անեք այն այսպես ասած «Հոգով», մի կողմ թողնելով Մտքի դատողությունները, կհայտնվեք ոչ թե եռաչափ աշխարհի մարդկանց մեջ, այլ չորրորդ չափման զուգահեռ աշխարհում:

Այդ երկու աշխարհները թեև հաղորդակից են, այդուհանդերձ արդեն գտնվում են զուգահեռ իրականություններում:

Գիտեմ, որ առայժմ ձեզ համար դժվար կլինի գիտակցել այդ քանի որ դուք տակավին տեսանելի եք ուրիշների համար, ինչպես և ինքներդ եք տեսնում ձեզ շրջապատող մարդկանց, բայց, այդուհանդերձ, ձեր մոլորակի վրա արդեն վաղուց ի վեր գոյություն ունեն գուգահեռ իրականություններ:

Վերցնենք թեկուզ այն մարդկանց, որոնք կուրորեն հետևում են իշխանությունների բոլոր ցուցումներին և հավատում էկրանից հեղվող ամեն բառի, և նրանց, ովքեր տեսնում ու հասկանում են ընթացիկ դեպքերի իսկական էությունը:

Մի՞ թե գուգահեռ աշխարհներում չեն ապրում նրանք:

Որպես կանոն, առաջիկաների և երկրորդների թրթիռներն այնքան խիստ են տարբերվում, որ նրանք պարզապես ի վիճակի չեն այլևս էներգապես հաղորդակցվելու միմյանց հետ:

Այդպես տեղի է ունենում ձեր մոլորակի բնակչության թրթիռային շերտավորումը:

Եվ հիմա այդ շերտավորումը բազմակի մեծացել է ի հաշիվ այն բանի, որ Երկիր եկող նոր էներգիաները սրում են կյանքի նրանց ընկալումը:

Այդպես, օրինապահ քաղաքացիներն ավելի շատ են լսում իրենց երկրների ղեկավարներին՝ կատարելով նրանց բոլոր պահանջները, իսկ ազատ մտածող մարդիկ է՛լ ավելի են հեռանում իրենց համար անհեթեթ և բոլորովին անընդունելի դարձած կառավարման համակարգից, ինչը նշանակում է, որ ոչ մի պայմանով չեն կատարի այդ պահանջները:

Մակայն եթե տվյալ դեպքում խոսքը վերաբերում է առավելապես սրանց և նրանց գիտակցության մակարդակին, ապա վերջին պրակտիկան թույլ է տալիս ձեզ վերացարկվել ժամանակակից աշխարհից արդեն հեռավար կերպով, թեև առայժմ միայն էներգապես:

Այդ երևույթի հիմքում ընկած է բարձր չափումների աշխարհների տարածա-ժամանակային պարամետրերի փոփոխման սկզբունքը:

Քանի որ չորրորդ չափումը միջանկյալ է երրորդի և Հինգերորդի միջև, այնտեղ գտնվելը թույլ է տալիս ձեզ կողմնակի դիտորդը դառնալ եռաչափ աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների՝ ձեր լուսային մարմնով արդեն դուրս լինելով երրորդ չափման աշխարհի սահմաններից:

Ավելի լավ հասկանալու համար կարող եք պատկերացնել ձեր «Մերկաբը» թափանցիկ, առաձգական փուչիկի տեսքով, որի մեջ գտնվելով դուք կարող եք ազատորեն տեղափոխվել երրորդ չափման տարածությունում, հավել ալյոց անձնական տարածության հետ, բայց առանց էներգապես խառնվելու դրանց:

Դա հիշեցնում է այն, թե ինչպես են [«Տեղափոխվող»](#) [բաղադրարկություն](#) ներկայացուցիչներն օգնում ձեզ երրորդ չափումից «սողակել» չորրորդ և նույնիսկ Հինգերորդ չափում, գետեղելով ձեզ մի տեսակ էներգետիկական բոժոժի մեջ:

Միայն թե հիմա դուք ինքներդ եք ստեղծում այդպիսի բոժոժ ձեր դիտավորության ուժով, ընդ որում, ջանալով մշտապես մնալ նրա ներսում:

Իրականում ձեզնից շատերն արդեն պատրաստ են դրան, մնում է միայն սովորել պահել թրթիռները այն մակարդակին, որը թույլ կտա այլևս դուրս չընկնել չորրորդ չափման տարածությունից ո՛չ գիտակցությամբ, ո՛չ էլ նուրբ մարմիններով:

Այդ դեպքում ձեր ֆիզիկական մարմինն էլ հուսալիորեն պաշտպանված կլինի, իսկ նրա փոխակերպման պրոցեսը լուսաբյուրեղայինի զգալիորեն կարագանա:

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի:

ՄԱՐԴՈՒ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿՈՂԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 28 ՀՈՒՆԻՍԻ 2022 Թ.

Եվ այսպես, շարունակենք զրույցը ձեր ֆիզիկական մարմինների մասին՝ չորրորդ չափման տարածության մեջ:

Ինչպես արդեն ասվել է իմ [նախորդ ուղերձում](#), հենց որ յուրացնեք [«Չորրորդ չափման մերկաբ»](#) պրակտիկան, նրանց փոխակերպման պրոցեսը նկատելիորեն կարագանա:

Եվ դա տեղի կունենա այն բանի շնորհիվ, որ ձեր ֆիզիկական մարմինը արդեն մշտապես կգտնվի իր լուսային մարմնի սահմաններում՝ նրա պաշտպանության և հովանավորության ներքո:

Ինչու՞ են «մերկաբը» հաճախ անվանում մարդու **լուսային մարմին**:

Այդ անունն, անշուշտ, պատահականորեն չի առաջ եկել:

Բանն այն է, որ երբ մարդու ֆիզիկական մարմինն ու բոլոր նուրբ մարմինները լիակատար ներդաշնակության մեջ են և թրթռում են միևնույն հաճախականությամբ, նրանք բոցավառվում են պայծառ լույսով և նուրբ պլանից իսկապես երևում են ինչպես **Միասնական Լուսային Մարմին**:

Այդ վիճակում մարդը դառնում է անխոցելի, անձեռնմխելի, որովհետև շրջապատված է լինում Անպայման Սիրո Էներգիայով, որն էներգետիկական «գրահի» պես պաշտպանում է նրան:

Դա Լույսի Ռազմիկների իսկական Աստվածային «սպառազինություն» է, որը թույլ է տալիս նրանց դիմակայել Խավարի Ուժերին ինչպես Երկրի վրա, այնպես էլ Երկնքում:

Մակայն վերադառնանք ձեր ֆիզիկական մարմիններին և խոսենք այն մասին, թե ուրիշ ինչ կարող եք ձեռնարկել, որ օգնեք նրանց հաղթահարելու երրորդ և չորրորդ չափումների միջև եղած թրթիռային սահմանը:

Անցման այս փուլում դուք արդեն կարող եք աշխատել ֆիզիկական մարմնի հետ բջժի մակարդակով:

Եվ այդ աշխատանքը նրա Աստվածային կողմի վերականգնումն է, որը «կորսվել» էր Երկրի վրա ունեցած ձեր բազմաթիվ մարմնավորումների ժամանակ:

Ի՞նչ է մարդու Աստվածային կողմը:

Դա այնպիսի հատկությունների համակազմ է, որոնք թույլ են տալիս մարդուն դառնալ սեփական կյանքի Արարիչը:

Դրանք սկզբնապես կողավորված են եղել մարդու ԴՆԹ-ի մեջ իր գոյության արշալույսին, երբ դեռ Աստվածամարդ էր:

Սակայն բազմաթիվ գենետիկական փոքրիկ հետևանքով Աստվածային կողմը «ջնջվել» էր՝ կորցնելով իր նախնական հատկությունները:

Իսկ այժմ դուք հնարավորություն եք ստանում վերականգնել այն ձեր թրթիռների բարձրացման և ֆիզիկական մարմնով ավելի բարձր չափում անցնելու ճանապարհով:

Իհարկե, հեշտ չէ այդ պրոցեսը, բայց ցանկության դեպքում և որոշակի պրակտիկաների օգնությամբ այն դառնում է միանգամայն իրական:

Եվ հաջորդ ուղերձներում մենք ավելի հանգամանորեն կխոսենք այդ մասին:

ՄԵՓԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՐԱՐԻՉ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 30 ՀՈՒԼԻՍԻ 2022 Թ.

Այսօր մենք [կշարունակենք զրույցը](#) մարդու Աստվածային կողմի վերականգնման մասին:

Դրա առաջին քայլը կարող է լինել ձեր ունակությունը որքան կարելի է երկար, իսկ իդեալական դեպքում՝ մշտապես գտնվել «Մերկաբում», ձեր լուսային մարմնում:

Ինչու՞ է դա այդչափ կարևոր:

Նախ և առաջ՝ որովհետև առանց դրա ձեր բոլոր հետագա աշխատանքները չեն կարողանա «մարմին առնել»:

Որքան էլ պրակտիկաներ ու մեդիտացիաներ անեք, եթե ձեր նուրբ մարմինները ամբողջական ու հուսալի չեն, ֆիզիկական մարմինը լուսա-բյուրեղայինի փոխակերպելու ձեր բոլոր ջանքերն ապարդյուն կանցնեն:

Այլ խոսքով, ձեր լուսային մարմինը բյուրեղային մարմնի կառուցման «հիմքն» է:

Ինչպես որ եռաչափ աշխարհում մարդու ֆիզիկական մարմինը չի կարող ամրակազմ ու առողջ լինել, եթե նրա նուրբ մարմինները վնասված են, այնպես էլ բարձր չափումների աշխարհում բյուրեղային մարմինը չի կարող գոյություն ունենալ առանց վստահելի պաշտպանության՝ իր լուսային մարմնի տեսքով:

Այդպես, լուսային մարմինը խորհրդանշում է ամբողջականություն և հուսալիություն, իսկ բյուրեղային մարմինը՝ կատարելություն և կերպափոխման ունակություն:

Ձեռք բերելով լուսային մարմին, դուք կզգաք ձեզ արտաքին աշխարհից լիովին պաշտպանված և միննույն ժամանակ Անպայման

Մեր կտածեք այդ աշխարհի նկատմամբ, որ հիմնված կլինի իրերի էության խորքը թափանցելու վրա:

Դուք կդառնաք տեղի ունեցող դեպքերի և դրանց մասնակիցների ծայրաստիճան բարեհոգի դիտորդը:

Ձեր ֆիզիկական մարմինը կդադարի ծերանալուց շնորհիվ այն բանի, որ այլևս չի կրի բացասական էներգիաներ, չէ՞ որ ձեր գիտակցությունն արդեն լիովին ազատված կլինի եռաչափ աշխարհին բնորոշ երկվությունից:

Եվ դա հսկայական առաջընթաց է ձեր հոգևոր զարգացման մեջ:

Սակայն սեփական կյանքի իսկական Արարիչը դառնալու համար անհրաժեշտ է վերականգնել ձեր Աստվածային կողը, և լուսաբյուրեղային մարմինը այդ պրոցեսի գլխավոր բաղադրիչներից է:

Իսկ ի՞նչ է նշանակում «Սեփական կյանքի Արարիչ» արտահայտությունը:

Բարձր չափումների աշխարհներում դա այլևս գեղեցիկ փոխաբերություն չէ, այլ առօրյա իրականություն:

Այնտեղ մարդն իսկապես սկսում է ինքը արարել իր կյանքը դրա բոլոր հիպոստասներում՝ ինչպես հոգևոր, այնպես էլ ֆիզիկական, քանի որ ի գորու է փոխգործակցել իր ֆիզիկական մարմնի հետ մտքի և դիտավորության ուժի միջոցով:

Ինչպե՞ս է դա տեղի ունենում:

Էներգիաները նրբորեն զգալու շնորհիվ մարդը կարող է փոխել իր օրգանների և մարմնամասերի թրթիռային հաճախականությունը:

Դրա արդյունքում բյուրավոր բյուրեղիկներ, որոնցից բաղկացած է նրա նոր ֆիզիկական մարմինը, դասավորվում են այն հերթականությամբ, ինչ մարդն է հանձնարարում:

Այդ կերպ նա կարող է ուղղել իր մարմնի ֆիզիկական թերությունները՝ տալով իրեն ցանկալի ձևը, ինչպես նաև փոխել աչքերի ու մազերի գույնը:

Սակայն ամենակարևորը՝ նա կարող է հանձնարարել իր բոլոր օրգանների աշխատանքի իդեալական պարամետրերը, ինչի շնորհիվ դադարում է հիվանդանալուց և ծերանալուց:

Սակայն այդ ամենը, զավակներս, կլինի միայն այն ժամանակ, երբ դուք արդեն վերջնականապես տեղափոխվեք Հինգերորդ չափում, իսկ առայժմ եկե՛ք հասու դառնանք չորրորդ չափման մեջ գոյելու այբուբենին:

Եվ տվյալ փուլում չափազանց կարևոր է սովորել դուրս չընկնել «Մերկաբից», մշտապես մնալով ձեր Աստվածային լուսային «սպառազինության» մեջ:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԻՄՈՒՆԻՏԵՏ

ԲԱՅԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 4 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 Թ.

186

Այսօր մենք կշարունակենք զրույցը ձեր ֆիզիկական մարմինների՝ լուսա-բյուրեղայինի փոխակերպման մասին:

Եվ այս անգամ ավելի մանրամասն կխոսենք այն պրոցեսների մասին, որոնք տեղի են ունենում նրանցում ձեր մեղիտացիաների ու պրակտիկաների և հատկապես ձեր մարմնի հետ կատարվող էներգետիկական աշխատանքի ժամանակ:

Իրականում ձեր մարմնի բոլոր օրգանները տարբեր կերպ են արձագանքում դրանց:

Եվ դա բացատրվում է նախ և առաջ նրանով, որ դրանցից յուրաքանչյուրին բնորոշ է ոչ միայն իր ուրույն թրթիռային հաճախականությունը, այլև տվյալ պահին միմյանցից տարբերվող ֆիզիկական վիճակ:

Ներկայումս շատ քչերին է հաջողվում նույնիսկ երիտասարդ տարիքում իդեալական առողջություն պահել:

Մարդու ֆիզիկական մարմինը բոլոր կողմերից ենթարկվում է գրոհների, հասկապես վերջին տարիներին, երբ գրեթե ամենուր իր ծննդյան օրվանից երեխան պարտադիր կարգով ստանում է կործանարար պատվաստումների մի ամբողջ լրակազմ:

Օդը, ջուրը, սննդամթերքը, կենսաածը Երկրի խիտ բնակեցված շրջաններում, ամեն ինչ նպաստում է մարդու ֆիզիկական մարմնի քայքայմանը:

Այդ իսկ պատճառով էլ ձեր մոլորակի վրա պրակտիկորեն չեն մնացել իդեալապես առողջ մարդիկ:

Մարդու համար անբնական կենսակերպից առաջին հերթին տուժում են նրա շնչառական օրգաններն ու մարսողությունը, որոնք կուտակում են իրենց մեջ վնասակար նյութերի մասնիկներ:

Սրանք մեծ դժվարությամբ են դուրս բերվում օրգանիզմից, որովհետև նրանց փոխարեն մշտապես գալիս են նորերը:

Դրան նպաստում են նաև օդանավերից ցանվող ծանր մետաղների մասնիկները, որոնք նստելով ձեր օրգանիզմում, յուրօրինակ մագնիսի դեր են կատարում՝ պահելով ողջ միկրոսկոպիկ «աղբը», որ մինչ այդ կուտակվել էր օրգանիզմում:

Մի խոսքով, այժմ տեղի է ունենում մարդկության նպատակաուղղված ոչնչացում թե՛ օդից, թե՛ ցամաքից:

Սակայն լինելով Աստվածային էակներ, մարդիկ օժտված են ամրության հսկայական պաշարներով, որոնք ավելի ու ավելի են համալրվում նրանց հոգևոր վերելքի հետ միասին:

Եվ դա տեղի է ունենում հետևյալ կերպ:

Պրակտիկաների և մեդիտացիաների ժամանակ մարդու նուրբ մարմինները, ինչպես նաև ֆիզիկական մարմինը փոխում են իրենց էներգետիկական կառուցվածքը, ինչի արդյունքում տեղի է ունենում

բացասական և օտարածին ամենայն բանի անջատում, որ արդեն հասցրել է ներթափանցել նրանց մեջ:

Ճիշտ ինչպես վաղուցվա փամփուշտն է կապտուլավորվում մարդու օրգանիզմում, և նա շարունակում է ապրել՝ չզգալով ոչ մի անհարմարություն:

Համանման պրոցեսներ, բայց արդեն մանրադիտակային մասշտաբի, տեղի են ունենում նաև մարդու օրգանիզմ թափանցած օտարածին մասնիկների հետ:

Մակայն դա լինում է միայն այն ժամանակ, երբ մարդու թրթիռները բավական բարձր են, քանի որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է էներգետիկական «կապտուլավորմանը», որը թույլ չի տալիս վնասաբեր մասնիկներին տարածվել մարդու ողջ էներգետիկական տարածության մեջ:

Իսկ թրթիռների ցածր մակարդակ ունեցող և խիստ եռաչափ մարդկանց օրգանիզմը լրիվ կլանում է այդ մասնիկները, քանի որ ինքն էլ համանման թրթիռային հաճախականություններ ունի:

Ձեր օրգանիզմի այդպիսի պաշտպանական հակազդեցությունը կարելի է անվանել **էներգետիկական իմունիտետ**, որը մարդու մոտ բարձր է այն չափով, ինչ չափով որ բարձր է իր թրթիռների մակարդակը:

Եվ հիմա մենք ձեզ հետ միասին սովորում ենք առավելագույնս ամրապնդել այդ իմունիտետը:

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՈՒՄ

ԲԱՑԱՐՉԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՁԸ, 19 ՀՈՒՆԻՍԻ 2022 Թ.

Այսօր մենք կշեղվենք մեր թեմայից և կխոսենք այն մասին, թե ինչպես պիտի սովորեք չարագացնել իրադարձությունները, ինչը ոչ միայն խաթարում է նրանց բնականոն ընթացքը, այլև նվազեցնում է էներգետիկական արժեքը:

Ի՞նչ է կատարվում նուրբ պլանում, երբ անհամբերությունը համակում է ձեզ:

Քննության առնենք տվյալ պահին ամենահրատապ թեման՝ Երկրի Անցումը Հինգերորդ չափում:

Ես գիտեմ, որ ձեզնից շատերն իրենց հարց են տալիս, թե ինչու է այն շարունակ հետաձգվում՝ չնայած նուրբ պլանից եկող բազմաթիվ հավաստիացումներին, թե Լույսի Ուժերն արդեն հաղթանակ են տարել:

Շատ առումներով հենց այն պատճառով, զավակնե՛րս, որ դուք դեռևս չեք սովորել կառավարել ձեր մտքերը, զգացմունքներն ու ցանկությունները:

Պատկերավորության համար երևակայե՛ք Անցման բուն ընթացքը մեծ, գեղեցիկ, հոյակերտ մի առազաստանավի տեսքով, որն ուղղություն է վերցրել դեպի Հինգերորդ չափման ծովածոց:

Մակայն արագ ու անարգել հասնելու համար նա պետք է կտրի հսկայական տարածություն, որը բաժանում է այդ ծովածոցը եռաչափ աշխարհից:

Եթե բախտը բերի և համընթաց քամի պատահի, նա արագ ու վստահ կսլանա դեպի իր նպատակը:

Իսկ եթե ալեկոծություն լինի կամ փոթորիկ բարձրանա, նրա ընթացքը կդանդաղի և վատթարագույն դեպքում նավը շատ ու շատ հետ կշարտվի:

Եվ այդ «եղանակը» ստեղծում եք դու՛ք, սիրելիներ՛րս. ձեր լուսավոր բարձրաթրթիռ էներգիաներով դուք «փչում եք առագաստներն» այդ նավի, իսկ բացասական էներգիաներով դանդաղեցնում նրա ընթացքը, երբեմն էլ առհասարակ վտանգի ենթարկում:

**Անհամբերության էներգիան միշտ աններդաշնակ է և հետևաբար՝
ավերիչ:**

Նրանում չկա անդորր ու վստահություն, ինչը հաջողության գրավական է ցանկացած գործում, որ կարող եք ձեռնարկել:

Եկե՛ք ավելի մանրակրկիտ դիտարկենք անհամբերության էներգիայի բաղադրիչները:

Դա և՛ ինչ-որ բան չհասցնելու վախն է:

Ե՛վ ջղայնությունը, որ ձեր ցանկությունն արագ չի կատարվում:

Ե՛վ ինքներդ ձեզ չհավատալը:

Ե՛վ անկարողությունը՝ ապրելու «այստեղ և հիմա» պահի մեջ:

Ե՛վ վիրավորանքը, որ ձեր սպասումները չեն արդարանում:

Բոլոր այս բաղադրիչների մեջ չկա գեթ մեկ դրական, լուսավոր էներգիա, որը «կլցնեք առագաստները» դեպի Հինգերորդ չափում ուղևորվող հիասքանչ նավի:

Ձեր աններդաշնակ, բացասական էներգիաները սոսկ խոչընդոտում են նրա ուղին՝ բարձրացնելով ալիքներ, երբեմն փոթորկալից. . .

Ուրեմն ինչպե՞ս ազատվեք ձեզ համակած անհամբերությունից:

Դրա համար պատկերացրե՛ք, որ դուք ինքներդ լողում եք այդ Նավով:

Վայելե՛ք ձեր շուրջը ծփացող անձայրածիր, հանդարտ Սիրո Օվկիանոսի վեհությունն ու գեղեցկությունը:

Պատկերացրե՛ք, որ Անպայման Սիրո Աստվածային Էներգիան ողողում է ձեր բովանդակ էությունը՝ ձեր մարմնի ամեն բջիջը, համակելով այն երանությամբ ու ջերմությամբ:

Ռեզոնանսի մե՛ջ մտեք ձեզ Հինգերորդ չափում տանող Նավի թրթիռների հետ:

Զգացե՛ք խաղաղություն և ներդաշնակություն:

Եղե՛ք «այստեղ և հիմա» պահի մեջ:

Որտեղ էլ լինեք, ինչ էլ անեք, մտքով և ամենակարևորը՝ Էներգապես մնացե՛ք այդ Նավի մեջ, որը հանգիստ ու վստահ ճեմում է դեպի իր նպատակը,- չորրորդ չափման միջով դեպի Հինգերորդ չափում:

Այս պրակտիկայի համար հարկավոր չէ մտնել մեդիտատիվ վիճակի մեջ:

Նրա նպատակն է օգնել ձեզ հաղթահարելու ձեր անհամբերությունը, որը հետ է շարտում ձեզ:

Զեր Հոգում «փոթորիկ» ստեղծելու փոխարեն «լցրե՛ք ձեր առագաստները» Անպայման Սիրո Էներգիայով և լավագույն ապագայի Հավատով:

Եվ ես օրհնու՛մ եմ ձեզ, որ այդպես լինի:

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ԳԼՈՒԽ VII

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՌԱԶԱՓ ՄԱՏՐԻՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՌԱԶԱՓ ՄԱՏՐԻՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ
ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՆԵՐ

192

VI ԳԼՈՒԽ ՀԱՎԵԼՎԱԾ

1. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԿՇԵՌՔԻ ՆԺԱՐԸ
2. ԶԳՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐ
ԶԱՐԹՈՆՔԻ ՎՐԱ
3. ԱՆԴՐԱԴԱՐՁՄԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԱՆՑՄԱՆ ՍՑԵՆԱՐԸ
4. ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԲԱԶՄԱՍՏԻՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ
5. ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ՕՐԵՆՔԻ «ՎԵՐԱԴԱՐՁԸ»
6. ԱԶԱՏ ԿԱՄՔԻ «ՊԱՐԱՆԻ ԶԳՈՒՄ»
7. «ԸՆԿԵՐԱՆԱԼ» ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՕՐԵՆՔԻ ՀԵՏ
8. ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ
9. ԳԼՈՒԲԱԼ «ՍԱՐԴՈՍՏԱՅՆԻ» ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՌԱԶԱՓ ՄԱՏՐԻՑԻ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ

ԲԱՑԱՐԶԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐԶԸ, 1 ՀՈՒՆԻՄԻ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասուն և զավակներ:

Այսօր մենք կանցնենք եռաչափ մատրիցից արագ դուրս գալու և Հինգերորդ չափմանն անհրաժեշտ թրթռանք ձեռք բերելու ձեր Պլանի վերջին՝ յոթերորդ կետին:

Դուք պետք է սովորեք **դիմակայել ցանկացած գործողության, որը ձեր դեմ կուղղվի ինչպես իշխանություններից, այնպես էլ որևէ մարդուց, որի գիտակցությունը եռաչափ աշխարհի տիրապետության տակ է և լիովին կառավարվում է ներկա համակարգով**:

Այժմ ձեր մոլորակի վրա տեղի է ունենում մարդկության հրեշավոր տարբաժանում արդեն ոչ միայն ըստ ազգային և սոցիալական հասկանիշների. մարդիկ բաժանվում են իրենց պատվաստել թույլ սովածների և այդ պրոցեդուրային կտրականապես դեմ եղածների:

Մարդկանց ստիպում են բառիս բուն իմաստով ճակատ ճակատի բախվել, այդ կերպ նրանց հրահրելով սողունակերպների համար այնքան բաղձալի վախի և ազրեսիայի էներգիաների արտադրման:

Հրաշալի ուսումնասիրած լինելով մարդկային հոգեբանությունը, նրանք հմուտ դիրիժորի պես «ղեկավարում են» մարդկանց զգացմունքները՝ ստիպելով դրանց «հնչել» մերթ փարձր, մերթ ցածր՝ կախված իրենց սեփական պահանջմունքներից:

Այդպես, Անցման հենց շեմին, ցածր հաճախականությունների «նվազախմբի» ձայները խորքային պետության ղեկավարության ներքո հասնում են իրենց փարձրակետին. սեփական կյանքի համար ունեցած վախը հարկադրում է մարդկանց չտեսնված սաստկությամբ ազրեսիա հեղել այլոց վրա:

Եվ հիմա այդ ազրեսիան ձեռք է բերել խաչաձև բնույթ, քանի որ մարդիկ բաժանվել են երկու խմբի:

Առաջին խումբը նրանք են, ովքեր կուրորեն հավատում են իրենց կառավարություններին և զանգվածային տեղեկատվության միջոցներին, հլու հնազանդ կատարելով նրանց բոլոր կարգադրությունները:

Նման մարդիկ ոչ միայն կամավոր են ընդունում պատվաստները, այլև ձգտում են հնարավորինս շուտ անել դա:

Հենց այս մարդկանց առնչությամբ է կիրառվում «խոր քնածներ» արտահայտությունը:

Երկրորդ խումբը նրանք են, ովքեր «արթնացել են» և գիտեն մոլորակի բնակչության կրճատման համաշխարհային կառավարության ծրագրերի մասին:

Այս մարդիկ տեղեկատվություն են քաղում արդեն բոլորովին այլ՝ ոչ պաշտոնական աղբյուրներից, որտեղ ազնիվ և անկախ բժիշկները, իրավաբանները, լրագրողներն ու քաղաքագետները, անվիճելի փաստերով ու փաստաթղթերով զինված, բացատրում են մարդկանց, թե ինչ է իրականում տեղի ունենում Երկրի վրա ներկայումս:

Սակայն այս մարդկանց մեջ էլ խիստ սակավ են նրանք, ովքեր դիտում են այդ պրոցեսը մետաֆիզիկական տեսանկյունից և տեսնում այն իր ամբողջ ընդգրկմամբ:

Նրանցից շատերը ոչինչ չգիտեն մոլորակի Հինգերորդ չափում Անցնելու մասին և իրենց իմացությունները դիտում են բացառապես իբրև միջոց՝ իրենց և սեփական ընտանիքը մարդկանց մարմինների վրա կատարվող հրեշավոր փորձարկումներից զերծ պահելու համար:

Սակայն գոյություն ունի նաև մարդկանց **երրորդ խումբ**, որը լիովին գիտակցում է Երկրի վրա տեղի ունեցող հիրավի Համատիեզերական մասշտաբի պրոցեսները իրենց ամբողջ խորությամբ:

Եվ եթե առաջին և երկրորդ խմբերը վախ ու ագեսիա են տածում միմյանց նկատմամբ, ծնունդ տալով իրենց և Երկրի համար ավերիչ էներգիաների, երրորդ խումբը ձեր մոլորակի փրկիչն է:

Հենց նրա մեջ են մտնում այն մաքուր ու հինավուրց հոգիները, որոնց ես Աստվածային ցանք եմ անվանում և որոնք մարմնավորվել են Երկրի վրա Անցման այս բախտորոշ փուլում, որպեսզի օգնեն մարդկանց Երկրի հետ միասին տեղափոխվելու Հինգերորդ չափում:

Եվ ողջ հույսը լոկ նրանց վրա է, քանի որ միայն այդ իմաստուն և հասուն հոգիներն են ունակ ցանկացած իրավիճակում պահելու ամեն հարված և պահպանելու իրենց բարձր թրթռանքը, այդ կերպ հարկ եղած մակարդակին պահելով նաև Երկիրն ու մարդկության հավաքական գիտակցությունը:

Եվ եթե դուք հիմա կարդում եք այս ուղերձը, ապա միանգամայն հնարավոր է, որ հենց դու՛ք էլ մաս եք կազմում Երկրի այդ Լույսի Ավանգարդին, և իմ հաջորդ ուղերձում ես կպատմեմ, թե ինչպես պահպանեք ձեր մեջ այդ Լույսը եռաչափ աշխարհի կրքերի փոթորկահույզ օվկիանոսում:

ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՆԵՐ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 1 ՀՈՒՆԻՄԻ 2021 Թ.

Եվ այսպես, եթե դուք իրոք պատկանում եք մարդկանց երրորդ խմբին, որի մասին խոսվեց [իմ նախորդ ուղերձում](#), ուրեմն դուք ի գորու եք հաղթահարելու բոլոր խոչընդոտները, որ կծառանան Համբարձման տանող ձեր ճանապարհին:

Նախ և առաջ, որովհետև դուք մտածում եք ոչ այնքան ձեր, որքան ձեր մոլորակի և ընդհանուր առմամբ մարդկության ճակատագրի մասին:

Եվ այդ առումով հսկայական տարբերություն կա ձեր և այն մարդկանց միջև, որոնք հոգ են տանում բացառապես իրենց և մերձավորների համար:

Ձեր գիտակցությունն արդեն դուրս է եկել եռաչափ աշխարհի շրջանակից, քանի որ դուք արդեն ի վիճակի եք դիտելու Երկրի վրա ընթացող բոլոր պրոցեսները համալիր կերպով, այսինքն՝ նկատի առնելով դրանց քաղաքական, սոցիալական, հոգեբանական և էներգետիկական ասպեկտները:

Դուք տեսնում եք բովանդակ պատկերն իր ամբողջության մեջ՝ բոլոր պատճառա-հետևանքային կապերով հանդերձ, և ինքներդ ձեզ դիտում եք ոչ իբրև առանձին միավոր, այլ՝ մի էակ, որն անքակտելիորեն կապված է Երկրի վրա ընթացող պրոցեսների հետ և այստեղ է եկել որոշակի առաքելությամբ՝ անձամբ իրագործել Անցումը և օգնել մյուսներին:

Այդ իսկ պատճառով դուք անխոցելի եք դառնում իշխանությունների առջև:

Դուք ունեք հենց այն առանցքը, որի վրա «շարված են» մարդկային լավագույն որակները՝ Սեր և հարգանք ինքներդ ձեր նկատմամբ, Հավատ ձեր ուժերի հանդեպ և սեփական արժանապատվության զգացում, արիություն և սեփական շահերը իմաստուն հանգստությամբ, առանց ագրեսիայի և դատապարտության պաշտպանելու ունակություն:

Դուք այն «ժայռն» եք, որին բախվելով փշրվում են վրդովմունքի, ագրեսիայի, թուլության ու վախի «ալիքները», որ առատորեն «ծփում են» հիմա ձեր շուրջբոլորը:

Բացի այդ, դուք մշտապես գտնվում եք Լույսի Ուժերի և ձեր Գալակտիկական ընտանիքի պաշտպանության ներքո, որոնք օգնում են ձեզ չընկճվել կյանքային ծանր իրավիճակներում և բարձր են պահում ձեր թրթիռները:

Ձեզ ոչ ոք և ոչինչ չի կարող նվաստացնել, որովհետև դուք դառնում եք անխոցելի վախի, վերահսկողության և ագրեսիայի ստոր էներգիաների համար:

Հավանաբար նկատել եք, թե որքան տարբեր է իշխանությամբ օժտված մարդկանց վերաբերմունքը իրենցից վախեցողների և նրանց նկատմամբ, ովքեր պահում են սեփական արժանապատվության զգացումը և հարգանք դրսևորում թե՛ իրենց, թե՛ այլոց հանդեպ:

Մարդու էներգիաների ընթերցումը տեղի է ունենում ենթագիտակցական մակարդակում, այդ իսկ պատճառով մարդիկ հաճախ հաշիվ չեն տալիս իրենց, թե ինչու ոմանց հետ կոպիտ են խոսում, իսկ ոմանց հետ՝ հարգալից:

Իրականում այդ ամենը շատ հեշտ է բացատրվում. ինքն իրեն հարգող մարդու բարձր թրթռոները չեն կարող դեպի իրենց առձգել կոպտություն ու անարգանք:

Մինչդեռ վախը, որպես ամենացածր թրթռանք ունեցող էներգիա, անխուսափելիորեն առձգում է ագրեսիա:

Հենց այդ պատճառով էլ, զավակնե՛րս, կրկին ու կրկին ասում եմ ձեզ. «Ձեր գերագույն խնդիրը տվյալ պահին ձեր թրթռանքը պատշաճ մակարդակում պահելն է»:

Դա կօգնի ձեզ ոչ միայն Անցման երկարաժամկետ հեռանկարում, այլև այս պահի ցնցումների մեջ, որոնք կապված են այսպես կոչված համավարակի հետ:

Միայն ձեր ներկայությամբ դուք արդեն իսկ կփոխեք իրականությունը, որի մեջ գտնվում եք՝ տարրալուծելով ձեր շուրջը եղած մարդկանց նուրբ մարմիններում պարունակվող բացասական էներգիաները, հետևաբար և փոխելով նրանց վերաբերմունքը ձեր նկատմամբ:

Ձեր ճանապարհին պատահած յուրաքանչյուր մարդու վերաբերվե՛ք հարգանքով ու ըմբռնումով, և այդ ժամանակ նրա սիրտը կփափկի և ինքն էլ կգարմանա ձեր նկատմամբ դրսևորած իր զիջողամտության ու բարության վրա:

Եվ իհարկե՝ չմոռանաք հումորի մասին՝ Տիեզերքի Ամենաստվածային էներգիաները մեկի:

Անկեղծ ժպիտն ու տեղին կատակը հաճախ կարող են ավելին անել, քան երկար ու ձանձրալի բացատրությունները իշխանությունների հետ և սեփական իրավունքի պաշտպանությունը:

Սովորե՛ք կարդալ մարդկանց էներգետիկան և սթափ գնահատել իրավիճակը, որպեսզի վայրկենապես գործողությունների պլան մշակեք և գծեք այն սահմանները, որոնք ավելի ճիշտ կհամարեք չխախտել:

Սովորե՛ք բաց թողնել իրավիճակը, երբ այդպես է պետք, և գործել ավելի վճռականորեն, եթե ձեր գործողություններից կախված են մարդկանց կյանքն ու անվտանգությունը:

Թո՛ղ որ ձեր ներքին «առանցքը», մնալով ճկուն, այդուհանդերձ պահպանի իր ամրությունն ու հուսալիությունը, որ հատուկ է ինքնաբավ և ինքն իրեն հարգող մարդուն:

Եվ ես օրհնու՛մ եմ ձեզ, որ այդպես լինի:

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

VII ԳԼԽԻ ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԿՇԵՌՔԻ ՆԺԱՐԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն գավակներ:

Եթե իմ վերջին ուղերձներում խոսվում էր այն մասին, թե ինչն է խոչընդոտում ձեր առաջընթացին դեպի Հինգերորդ չափում, ապա հիմա կխոսեմք, թե ինչն է օգնում ձեզ և Հինգերորդ չափման ինչ նշաններ են արդեն իսկ ի հայտ եկել ձեր այժմյան կյանքում:

Այլ խոսքով, եկել է ժամանակը, որ չորրորդ չափման մեջ ձեր գտնվելու «կշեռքի նժարը հակվի» դեպի Հինգերորդ չափում:

199

Սակայն դա կարող է տեղի ունենալ լոկ այն դեպքում, երբ դուք կհամոզվեք, որ վերջնականապես ազատվել եք եռաչափ մտածողության բեռից, որի հիմքում ընկած են դարերով նրանում ամրակայված կարծրատիպեր:

Ու թեև դա ամեննին էլ հեշտ բան չէ, «ազատամտության» ընդհանուր ուրվագծերն արդեն իսկ դրսևորվում են շատերիդ մեջ:

Անշուշտ, դա ամենից առաջ ձեր սեփական վաստակն է՝ **ամենօրյա հոգևոր աշխատանքը, որ տանում եք ինքներդ ձեզ վրա:**

Սակայն կան նաև արտաքին տարրեր, որոնք նպաստում են ձեր հոգևոր աճին:

Ու թեև բավական դժվար է տեսնել այդ տարրերը, դրանք հսկայական ազդեցություն են գործում ձեզ վրա՝ ձեր թրթիռները հասցնելով արդեն Հինգերորդ չափման մակարդակին:

Իսկ ի՞նչ տարրեր են դրանք:

Առաջին հերթին՝ բարձրաթրթիռ էներգիաները, որոնք բառիս բուն իմաստով Երկրից դուրս են մղում ամեն հին, ցածրաթրթիռ բան:

Արդյունքում՝ մարդիկ, որոնք ի վիճակի են դիմանալու, իրենց գիտակցությամբ և մարմիններով ակամա հարմարվում են նրանց, իսկ նրանք, որոնց թրթիռները չափազանց ցածր են, սկսում են հեռանալ ֆիզիկական պլանից, ինչն էլ ներկայումս կատարվում է ամենուրեք:

Եվ որքան բարձր լինեն նոր էներգիաների թրթիռները, այնքան շուտ կսկսի ձեր մոլորակն ազատվել իր ցածրաթրթիռ բեռից, ինչքան էլ որ դա անողորք հնչի եռաչափ մարդու տեսակետից:

Այստեղ ոչ մի չարամտություն չկա. այդպես աշխատում է Տիեզերքի գլխավոր Օրենքներից մեկը՝ Ձգողության օրենքը, որը ոչ ոք ի գորու չէ վերացնելու:

Ձեր մոլորակի էվոլյուցիան անխուսափելի է և արդեն ընթանում է իր ամբողջ թափով:

Եվ այն հանգամանքը, որ այդ էվոլյուցիան ոչ բոլորը կկարողանան շարունակել մոլորակի հետ միասին, անխուսափելի օրինաչափություն է:

Յուրաքանչյուր հոգի զարգացման իր ուրույն ճանապարհն է անցնում և ունի Երկրի վրա այս բախտորոշ փուլում մարմնավորվելու իր ուրույն նպատակները:

Ոմանց վիճակված է Երկրի հետ միասին անցնել Հինգերորդ չափում, ոմանց էլ բավական է սոսկ հպվել այդ պրոցեսին՝ ապրելով բացասական փորձառություն:

Ոմանք կկարողանան համբարձվել իրենց ֆիզիկական մարմիններով, ոմանք էլ նոր Երկիր կտեղափոխվեն ապամարմնավորման միջոցով, քանի որ նրանց մարմինները չափից դուրս մաշված են այդչափ ուժգին էներգետիկական ցնցման համար, չնայած որ գիտակցությունն արդեն պատրաստ է Անցմանը:

Կան բազմաթիվ տարբերակներ, և դուք կգարմանաք, թե ֆիզիկական պլանը լքած որքան լուսավոր մարդկային հոգիներ կգտնեք Հինգերորդ չափման Երկրի վրա:

Բայց ձեր մոլորակի բնակչության գերակշիռ մասն, այդուհանդերձ, կհեռանա այլ աշխարհներ, և դրա հետ հարկավոր է համակերպվել:

Նրանց Հոգիները կձգվեն դեպի այն աշխարհները, որտեղ կկարողանան քաղել իրենց համար ամենանպաստավոր և անհրաժեշտ փորձը:

Եվ հիմա ըստ թրթռանքի կատարվող նման շերտավորումը մտել է իր եզրափակիչ փուլը:

Լրանում է այն ժամկետը, որը տրվել էր մարդկությանը Չարթոնքի համար, և այժմ ամեն Հոգի իր վերջնական ընտրությունն է կատարում՝ գիտակցված թե անգիտակից:

Եվ ես գիտեմ, որ ձեր ինտուիցիան թույլ տալիս է ճանաչել թե՛ այն մարդկանց, որոնք կանգնած են Համբարձման շեմին, թե՛ նրանց, որոնք «դուրս են մնացել» Անցումից:

Հենց դա է Հինգերորդ չափման այն տարրը, որը գործուն կերպով ներխուժում է ձեր կյանք:

Այսքանով կսահմանափակվենք այսօր:

ԶԳՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԹՈՆՔԻ ՎՐԱ

ԲԱՑԱՐԶԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐԶԸ, 19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Հինգերորդ չափման՝ ձեր կյանքում հայտնված ևս մեկ նշանի մասին կխոսենք մենք այսօր:

Եվ դարձյալ կանդրադառնանք ժամանակային պարամետրերի փոփոխությանը, որ ձեզնից շատերն արդեն վաղուց նկատում են:

Սակայն այս անգամ մենք կընդգծենք, թե ինչ ազդեցություն են գործում նման փոփոխությունները Տիեզերքի Օրենքների վրա, որոնց համաձայն ապրում է յուրաքանչյուր մարդ՝ անկախ այն բանից, թե որ չափման մեջ է կենում:

Եվ եկեք մեկ առ մեկ քննենք այդ Օրենքները:

202

Սկսենք **Զգողության Օրենքից**, որի մասին արդեն խոսվել է [իս վերջին ուղերձում](#):

Թերևս հենց նրա օրինակով կարելի է տեսնել Հինգերորդ չափման ամենավառ դրսևորումները ձեր մոլորակի վրա:

Համեմատության համար եկեք հիշենք, թե ինչպես էր գործում այդ Օրենքը նախկինում՝ առնվազն տասը տարի առաջ:

Եվ կդիտարկենք դա ձեր հոգևոր զարթոնքի լույսի ներքո:

Վերհիշե՛ք 2012 թվականը, երբ շատ շատերը սպասում էին ճակատագրական, մեծ իրադարձությունների, որ պիտի տեղի ունենային Երկրի վրա. ոմանք՝ աշխարհի վերջին, ոմանք էլ՝ Համբարձմանը, կախված տվյալ պահին իրենց ունեցած գիտելիքներից:

Իսկ ի՞նչ է իրականում կատարվել 2012 թվականի դեկտեմբերին:

Մոլորակի սպասված Անցումը իր զարգացման նոր շրջափուլ այնուամենայնիվ կատարվեց, սակայն ոչ այնպես, ինչպես սպասում էին:

Այն անտեսանելի եղավ թե՛ առաջինների, թե՛ երկրորդների համար, որովհետև կատարվեց միայն նուրբ պլանում:

Արդյունքում, այն մարդիկ, որոնք սպասում էին աշխարհի վերջին, հանգստացան և շարունակեցին ապրել իրենց սովորական կյանքով:

Իսկ նրանք, ովքեր սպասում էին Համբարձման, բաժանվեցին մի քանի խմբի:

Մի մասը, հիասթափվելով, որ իրենց ակնկալիքները չիրականացան, թողեցին Համբարձման թեման, մյուս մասը, որի հավատն ուժեղ էր, իսկ ինտուիցիան հուշում էր, որ ամեն ինչ դեռ առջևում է, կրկնապատիկ ուժով խորամուխ եղան Անցման թեմայի մեջ, ջանալով հասնել ճշմարտության և հասկանալ նման հապաղման պատճառները:

Ինչպե՞ս այս դեպքում գործեց Ձգողության Օրենքը:

Նախ և առաջ՝ ըստ յուրաքանչյուր մարդու թրթռանքի և ազատ կամքի:

Աշխարհի վերջին սպասողների թրթիռները ցածր էին, որովհետև նրանք վախ էին ապրում իրենց կյանքի համար:

Այդ պատճառով էլ նրանք հաճույքով վերադարձան եռաչափ աշխարհի սովորական կեցությանը՝ այն իրականություն, որը համապատասխանում էր իրենց թրթիռներին և սեփական կյանքում ոչինչ չփոխելու ցանկությանը:

Իսկ նրանք, ովքեր ամբողջ Հոգով ձգտում էին դեպի նոր իրականություն, եռաչափ աշխարհն ընկալելով որպես հնացած և իրենց ցանկություններին ու հոգևոր մղումներին այլևս չհամապատասխանող մի աշխարհ, պահեցին իրենց բավականին բարձր թրթիռները:

Եվ այդ մարդիկ շարունակեցին իրենց ուղին դեպի Հինգերորդ չափում:

Ինչպես տեսնում եք, թե՛ առաջինները, թե՛ երկրորդները Ձգողության Օրենքի համաձայն հայտնվեցին այն իրականության մեջ, որին համապատասխանում էին իրենց թրթիռները:

Սակայն բնավ չի նշանակում, թե մարդկանց առաջին խմբի համար մեկընդմիջտ փակ է դեպի Համբարձում տանող ճանապարհը, իսկ երկրորդ խմբին պատկանող մարդիկ անպայման կկատարեն Անցումը:

Կյանքային հանգամանքները, նոր էներգիաները, ինչպես նաև Լույսի Ուժերի անդադրում աշխատանքն իրենց ճշգրտումները կներմուծեն մարդկանց ճակատագրերի մեջ, ինչի արդյունքում ոմանք կարող են արթնանալ գրեթե վայրկենապես, իսկ ոմանք՝ վար ընկնել իրենց ձեռք բերած հոգևոր բարձունքից:

Եվ հենց դա էլ տեղի է ունենում այս վերջին տարիների ընթացքում:

Բազմաթիվ՝ թվում է, թե Համբարձման համար բոլորովին անպատրաստ մարդիկ զարթոնք ապրեցին, իսկ նրանք, ովքեր տարիներ ի վեր երկար ու համառորեն գնում էին այդ ուղղությամբ, գլխապտույտ անկում ունեցան եռաչափության մեջ, այդ կերպ փակելով Համբարձման տանող իրենց ճանապարհը:

Եվ այժմ այդ պրոցեսներն ավելի են արագանում ոչ միայն ժամանակային պարամետրերի փոփոխության պատճառով, այլ որովհետև ամեն ինչ հիմա ջրի երես է ելնում, թե՛ լավը, թե՛ վատը, և մարդիկ ավելի ու ավելի դժվարությամբ են հաջողում թաքցնել իրենց իսկական էությունը:

Այսքանով կսահմանափակվենք այսօր:

ԱՆԴՐԱԴԱՐՁՄԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԱՆՑՄԱՆ ՍՑԵՆԱՐԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Այսօր մենք կդիտարկենք Տիեզերքի Օրենքներից ևս մեկը, որպեսզի հասկանաք, թե ինչպես է այն հարաբերվում ներկայիս փոփոխվող ժամանակային պարամետրերին:

Եվ խոսքը կվերաբերի **Անդրադարձման Օրենքին**:

Մենք արդեն բազմիցս խոսել ենք, որ վերջին տարիներին արդեն այլ կերպ են գործում **կարմայական օրենքները**՝ ավելի արագ, քան նախկինում:

Եթե առաջներում ձեր անվայել արարքների հատուցումը կարող էր գալ նույնիսկ հաջորդ մարմնավորման մեջ, ապա հիմա ամեն ինչ կատարվում է այս կյանքում և հաճախ շատ արագ:

Այս երևույթը նույնպես Հինգերորդ չափման դրսևորումներից է Երկրի վրա, որը նպաստում է շատերի Չարթոնքին:

Նման **արագ կարման** թույլ է տալիս ձեզ հստակ տեսնել կյանքում տեղի ունեցող ամեն ինչի պատճառա-հետևանքային կապը և ժամանակին շտկել ձեր վերաբերմունքը ինչ-որ մեկի կամ իրադարձության նկատմամբ:

Իհարկե, գործնականորեն կիրառել նման ունակությունը կարող են ոչ բոլորը, այլ միայն նրանք, որոնց թրթիռները թույլ տալիս են:

Խոր քնած մարդիկ սովոր են իրենց բոլոր դժբախտությունների ու տառապանքների համար մեղադրել շրջապատին:

Եվ լոկ նրանք, որոնց գիտակցությունն արդեն դուրս է եկել եռաչափության շրջանակից, կարող են գիտակցել իրենց անհաջողությունների «ներքին» պատճառները:

Ընդ որում, դա վերաբերում է ոչ միայն առանձին մարդկանց, այլև համայն մարդկությանը:

Այսպես, օրինակ, եթե մարդկության հավաքական գիտակցությունն ավելի բարձր թրթիռներ ունենար, մարդիկ չէին ընկնի համաշխարհային կառավարության լարած ծուղակը՝ իրենց պարտադրված կեղծ-համավարակի և կեղծ-պատվաստման տեսքով, դրանցից բխող բոլոր հետևանքներով:

Այդպես, ձեր մոլորակի բնակչության ճնշող մեծամասնության ստրկական հոգեբանությունն ու անմոռնչ հնազանդությունը իշխանությունների անհեթեթ և անօրինական պահանջներին, ավելի մեծ անախորժությունների պատճառ դարձան:

Բացի այն, որ շատերը զրկվեցին առողջությունից և նույնիսկ կյանքից, վատթարագույն ուղղությամբ **փոխվեց նաև մոլորակի և մարդկության՝ Հինգերորդ չափում անցնելու սցենարը:**

Այդ կերպ Անդրադարձման Օրենքը դրսևորվեց ոչ միայն առանձին մարդկանց, այլև ողջ մարդկության կյանքում:

Եվ հիմա եկել է ժամանակը դա գիտակցելու, որպեսզի այլևս չկրկնեք նախկին սխալները, այլ արագ ու վստահ շարժվեք դեպի Հինգերորդ չափում ձեր մոլորակի հետ միասին:

Մենք արդեն շատ ենք խոսել այն մասին, որ իսկապես արթնացած մեկ մարդն արժե հարյուր, իսկ երբեմն նաև հազար չարթնացած մարդ:

Այդ պատճառով էլ, եթե ձեզնից յուրաքանչյուրն սկսի գիտակցաբար վերաբերվել իր կյանքում կատարվող ամեն ինչի, որոնելով ու բացելով բոլոր իրադարձությունների և մարդկանց հետ ունեցած իր հարաբերությունների պատճառա-հետևանքային շղթաները, դա արդեն իսկ հսկայական ներդրում կլինի մարդկության հավաքական գիտակցության թրթռանքի բարձրացման մեջ:

Հենց դա էլ կնշանակի, որ դուք հարգում եք Անդրադարձման Օրենքը՝ ժամանակին շտկելով ձեր վարքագիծն ըստ այդ Օրենքի:

Ջանացե՛ք, զավակնե՛րս, առավել մանրակրկիտ ձևով հետևել ձեր բոլոր մտքերին ու զգացմունքներին, որ բաց չթողնեք այն պահը, երբ դրանք ձեզ կհեռացնեն ձեր իսկ նախանշած ուղուց:

Իրականում դա շատ զվարճալի զբաղմունք է:

Այն կարելի է համեմատել պինգ-պոնգ խաղալու հետ. եթե դուք ժամանակին որսաք «գնդակը»,- իրադարձությունը, որն արտաքուստ անդրադարձրել է ձեր աններդաշնակ մտքերն ու զգացմունքները,- և չեզոքացնեք դրա հետևանքները գոնե էներգետիկական մակարդակում, հաղթող դուրս կգաք, իսկ եթե չորսաք ձեր «գնդակը», ստիպված կլինեք կրկին ու կրկին «խաղալ»՝ անցնելով միևնույն դասերը:

Եվ ես մաղթում եմ ձեզ, սիրելիներ՛ս, որ ավարտեք այդ «պարտիան» արագ և համոզիչ հաղթանակով, ազատվելով բոլոր եռաչափ հակազդեցություններից ձեզ «արտացոլող» իրադարձությունների և մարդկանց նկատմամբ:

Եվ թող այսուհետ դեպի ձեզ առձգվեն միայն երջանկությունն ու ուրախությունը, մաքուր ու լուսավոր հոգիները, որոնք ձեր հոգու ներդաշնակ վիճակի արտացոլանքը կլինեն:

ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԲԱԶՄԱՍՏԻՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՑԱՐԶԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐԶԸ, 21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Այսօր մենք կշարունակենք զրույցը Տիեզերքի Օրենքների՝ տարբեր չափումներում իրենց դրսևորման առանձնահատկությունների մասին:

Եվ հիմա կխոսենք **Միասնության Օրենքի** մասին:

Կարծում եմ՝ ձեզնից շատերն արդեն նկատել են, թե որքան տարբեր է նա «իրեն պահում» երրորդ և Հինգերորդ չափումներում:

Եվ դա բնական է, որովհետև մարդը, որի գիտակցությունն արդեն ելել է Հինգերորդ չափման մակարդակին, բոլորովին այլ կերպ է հասկանում այդ Օրենքը, քանի որ այժմ այն դուրս է գալիս եռաչափության սահմաններից և ընդգրկում է ոչ միայն ձեր Գալակտիկան, այլև համայն Տիեզերքը:

Հենց դա է նկատվում այժմ շատ ու շատ արթնացած հոգիների մոտ, ինչը միևնույն ժամանակ նաև Հինգերորդ չափման դրսևորումն է նրանց կյանքում:

Սակայն ամեն բան կատարվում է աստիճանաբար՝ փուլերով:

Որպես կանոն, զարգացման ուղի ոտք դրած մարդը նախ սկսում է Միասնություն զգալ բնության տարերքների, կենդանական աշխարհի, շուրջը եղած մարդկանց հետ:

Սակայն Աշխարհին, Տիեզերքի կյանքի բազմակերպությանը, իր Գալակտիկական եղբայրներին ու քույրերին վերաբերող գիտելիքների բացահայտման հետ Միասնության Օրենքը նրա ընկալման մեջ արդեն բոլորովին այլ մասշտաբներ է ընդունում:

Անշուշտ, դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե մարդն անվերապահորեն հավատում է՝ զգում է իր ամբողջ Հոգով, որ իրականում ամեն ինչ հենց այդպես է, որ դա իր երևակայության պտուղը չէ, այլ իրականություն, թող որ տակավին անտեսանելի և անապացուցելի՝ եռաչափ մարդու տեսակետից:

Այդպես դրսևորվում է Միասնության Օրենքի բազմաստիճանությունը, որը մարդու թրթռանքից և աշխարհագրացողությունից կախված՝ ընդունում է տարբեր ձևեր. ընտանեկան, խմբային, ազգային Միասնությունից մինչև Համատիեզերական մասշտաբի Միասնություն:

Իսկ ինչ վերաբերում է չորրորդ չափմանը, որտեղ կենում են հիմա ձեզնից շատերը, այստեղ կատարվում է միջանկյալ մի բան այդ Օրենքի՝ երրորդ և Հինգերորդ չափումներում ունեցած դրսևորումների միջև:

Եվ ահա թե ինչու:

Ինչպես գիտեք, ներկայումս տեղի է ունենում Երկրի բնակչության սաստիկ շերտավորում ըստ թրթռանքի:

Դրա արդյունքում ոմանք Միասնության զգացում են ապրում բնակչության խոր քնած մասի հետ, մյուսները՝ արթնացածի:

Եվ այս երկու խմբերի միջև, որոնք հաճախ հակամարտ են տրամադրված միմյանց նկատմամբ, չկա ոչ մի Միասնություն:

Մեղավորը եռաչափ աշխարհի երկվությունն է, որն այժմ ավելի քան երբևէ սրվել է:

Սակայն հասարակության նման շերտավորումը միանգամայն օրինաչափ է. այդպես են գործում Ձգողության Օրենքը և Ազատ Կամքի Օրենքը:

Յուրաքանչյում ոք ընտրել է իր ուղին՝ այն էներգետիկական տարածությունը և այն իրականությունը, որոնց մեջ ինքն իրեն հարմարավետ է զգում և որոնք համապատասխանում են իր Հոգու թելադրանքին:

Այդպիսով, Երկրի վրա ստեղծվել է բացառիկ մի իրավիճակ՝ երկու գուգահեռ, թեև մերթ ընդ մերթ հատվող իրականություններ, որոնցում մարդիկ ապրում են իրենց Միասնության Օրենքներով:

Մակայն մարդկանց առաջին խմբում, որոնք մնացել են եռաչափ աշխարհում, Միասնության Օրենքը դրսևորվում է կրճատ տեսքով՝ ընտանիքի, քաղաքի, երկրի, առավելագույնը Երկիր մոլորակի շրջանակներով սահմանափակված, մինչդեռ երկրորդ խմբում դրսևորվում է իր ընդլայնված տարբերակով, քանի որ այդ Օրենքն արդեն ընդգրկում է ոչ միայն Երկիրը, այլև Գալակտիկան և բովանդակ Տիեզերքը:

Վերջին հաշվով, երկրորդ խմբի մարդիկ սկսում են Միասնություն զգալ նաև նրանց հետ, ովքեր ընտրել են եռաչափ աշխարհում մնալը, գիտակցելով մոլորակի բնակչության՝ ըստ թրթռանքի շերտավորվելու անխուսափելիությունը և Երկրի յուրաքանչյուր բնակչի ազատ ընտրությունը:

Եվ որքան բարձր է մարդու թրթռանքը, այնքան լայն և ընդգրկուն է դրսևորվում նրա կյանքում Միասնության Օրենքը, որը ներառում է արդեն բոլոր չափումները և կենդանի էակների բոլոր տեսակները ինչպես Երկրի վրա, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ՕՐԵՆՔԻ «ՎԵՐԱԴԱՐՁԸ»

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Այսօր մենք կխոսենք Տիեզերքի ևս մեկ Օրենքի՝ ամենակարևորներից մեկի մասին, որն առնչվում է Երկրի երեսին ապրող յուրաքանչյուր կենդանի արարածի:

Դա Ազատ Կամքի Օրենքն է:

Հատկապես այս Օրենքն է ամենից շատ ոտնահարվել Երկրի վրա և ոտնահարվում է տակավին:

Նրանք, ովքեր զավթել են ձեր մոլորակի իշխանությունը, մարդկանց շարունակ խցկել են որոշակի շրջանակների մեջ՝ թույլ չտալով ինքնուրույն տնօրինել իրենց ճակատագիրը:

Ավելին, հետզհետե հաջողվել է հնազանդությունն ու սահմանված երկրային օրենքներին հետևելը առաքինությունների կարգին դասել:

Դա բերել է նրան, որ բոլոր համամարդկային արժեքներն ու մարդկային Հոգու բնական պահանջմունքները խեղաթյուրվել են:

Դեռ մանկուց երեխային սովորեցնում են, որ նա ազատ չէ իր ընտրության մեջ. որ նրա կյանքն ու ճակատագիրը ենթարկվում են իր ծնողներին, կրոնին, պետությանը կամ պարզապես հանգամանքներին և որ ինքն ի գորու չէ փոխելու որևէ բան:

Հատուկենտ «ապստամբներին» էլ, որոնք համարձակվում են «զատվել հոտից», վաղ թե ուշ դարձի են բերում, և այդպես հազարամյակներ շարունակ:

Հենց դրանով է բացատրվում ձեր մոլորակի ներկայիս իրավիճակը, երբ միլիարդավոր մարդիկ պատանդ դարձան Երկրի իշխանությունը զավթած մի բուռ հանցագործների:

Ինչպես կարողացել էք նկատել վերջին տարիներին, մարդու ազատ կամքի ճնշումն արդեն հասցվել է անհեթեթության, վերածվելով մարդկության զանգվածային ոչնչացման:

Մակայն դա էլ հենց խթան ծառայեց հարյուր հազարավոր մարդկանց զարթոնքի համար, որոնք վերջապես գիտակցեցին իշխող վերնախավի իսկական բնույթն ու իսկական նպատակները:

Եվ այն փաստը, որ վերջ ի վերջո դա տեղի ունեցավ, շատ առումներով Ազատ Կամքի Օրենքի դրսևորման հետևանքն է, որը Երկիր է վերադարձել Հինգերորդ չափման նոր բարձրաթրթիո էներգիաների հետ միասին:

Մաքրելով մարդկանց գիտակցությունը, այդ էներգիաներին հաջողվել է ճեղքել եռաչափ աշխարհի դարավոր նստվածքների ստվար շերտն իր կարծրատիպային մտային դրույթներով, որոնք ճնշում են մարդկանց ազատ կամքը՝ համակարգի հլու ստրուկների վերածելով նրանց:

Եվ հիմա այդ համակարգն սկսում է փլուզվել, իր հետևից չգոյության մասնելով բոլոր այն օրենքներն ու ավանդույթները, որոնք հիմնված են վախի և մարդու կամքի ճնշման վրա:

Իհարկե, բոլորը չէ, որ պատրաստ են ելնելու «ազատ նավարկության», ստանձնելով սեփական կյանքի և ճակատագրի պատասխանատվությունը:

Շատերը կկառչեն իրենց այնքան սովորական դարձած հին բարոյական արժեքներից, չմտածելով, թե ով է պարտադրել նման «բարոյականությունը»:

Բայց ազատամտությունն արդեն ազատության մեջ է, և վերստին եռաչափության «վանդակը» քշել այն մարդկանց, որոնք լիակուրծք շնչել են նոր կյանքի բերկրալից կանխավայելքով տոգորված «օդը», իշխանավորներին այլևս չի հաջողվի:

Եռաչափ մատրիցն այժմ ցրիվ է գալիս աչքի առաջ, և միայն կույրը կարող է չտեսնել դա:

Եվ այդուհանդերձ նման «կույրեր» Երկրի վրա դեռ բավական շատ կան, նրանք կհեռանան ցածր թրթռանքի ուրիշ աշխարհներ՝ շարունակելու իրենց գոյությունն այնտեղ, մինչև որ բացվեն իրենց աչքերը և իրենք էլ ձեռք բերեն ազատ կամք. այն կամքը, որը կարող է վերադարձնել մարդուն իր Աստվածային էությունը՝ սեփական կյանքի Արարիչը դարձնելով նրան:

ԱԶԱՏ ԿԱՄՔԻ «ՊԱՐԱՆԻ ԶԳՈՒՄ»

ԲԱՑԱՐԶԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐԶԸ, 23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Այսօր ես ուզում եմ [շարունակել գրույցը](#) Ազատ Կամքի մասին, որն այժմ առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում:

Եվ հիմա մենք այն կոդիտարկենք գլոբալ մասշտաբով:

Մակայն նախ և առաջ ես ուզում եմ բացատրել, թե ինչով է տարբերվում այդ Օրենքի՝ առանձին մարդկանց վրա գործած ազդեցությունը մարդկության հավաքական գիտակցության վրա ունեցած ազդեցությունից:

Ինչպես արդեն բազմիցս ասվել է իմ ուղերձներում, յուրաքանչյուր մարդ իր ներդրումն է անում՝ դրական կամ բացասական, մարդկության հավաքական գիտակցության մեջ:

Եվ դա մեծագույն չափով վերաբերում է Տիեզերքի Օրենքների պահպանմանը:

Մակայն այդ Օրենքներից ոչ մեկն այնպես ուժգին չի ազդում հավաքական գիտակցության «որակի» վրա, ինչպես Ազատ Կամքի Օրենքը:

Հենց նա է որոշում, թե հետագայում ինչ ուղղությամբ կընթանա մարդկությունը՝ էվոլյուցիայի թե ինվոլյուցիայի:

Այն, ինչ կատարվում է ներկայումս Երկրի վրա, կարելի է համեմատել պարանի ձգման հետ, ընդ որում ոչ միայն քանակական, այլև որակական հարաբերակցությամբ:

Եվ հիմա ես կբացատրեմ՝ ինչ է դա նշանակում:

Մի կողմում այն մարդիկ են, որոնք ամբողջ ուժով կառչած են հին կյանքից՝ սոսկալի վախենալով որևէ բան փոխել դրանում:

Նրանք համաձայն են ամեն բանի, անվերապահորեն հավատալով այն ամենին, ինչ լսում են պաշտոնական լրատվական աղբյուրներից:

Նրանց թվում է՝ եթե իրենք համբերությամբ տանեն իրենց կյանքի դժվարին ժամանակները, կրելով նյութական ու բարոյական զրկանքներ, ապա շատ շուտով ամեն բան կդառնա ի շրջանս յուր:

Այդ կերպ նրանք դրսևորում են իրենց ազատ կամքը՝ մնալու որպես համաշխարհային կառավարության իշխանությանը ենթակա եռաչափ աշխարհի արդեն հնացած համակարգի հնազանդ պտուտակներ:

Մյուսները տեսնում են ամեն բան առանց գունավորման, հստակ գիտակցելով, որ անցյալն այլևս ետ չի գա և որ այն, ինչին տանում է իրենց աշխարհը կառավարող վերնախավը, մարդկության համար կդառնա աղետ, բառիս բուն իմաստով նրա կործանումը:

Եվ նրանց ազատ կամքն արտահայտվում է գործուն դիմակայությամբ ներկայիս իշխանական համակարգին, որն անշեղորեն առաջ է տանում թվայնացումը մարդկանց կյանքի բոլոր ոլորտներում և գենափոխված պրեպարատները, որոնք սպանում են մարդու Հոգին՝ վերածելով նրան ուրիշի հլու կամակատարի:

Այդ իսկ պատճառով կարելի է առանց դույզն չափազանցության ասել, որ մարդկանց այս կամ մյուս կատեգորիայի ազատ կամքի արտահայտությունը արտացոլանքն է Լույսի և Խավարի ուժերի պայքարի:

Ամեն ինչ միախառնվել է ձեր մոլորակի վրա, հասնելով եռման բարձրակետին ոչ միայն քաղաքական, ֆինանսական և սոցիալական ոլորտներում, այլև յուրաքանչյուր մարդու գիտակցության և Հոգու մեջ:

Սակայն արթնացած լուսավոր մարդկային հոգիները հսկայական առավելություն ունեն ի դեմս Հինգերորդ չափման բարձրաթիօն էներգիաների, որոնք այժմ հզոր հորձանքով ողողում են Երկիրը, ինչպես նաև՝ Լույսի Ուժերի և ձեր Գալակտիկական եղբայրների օգնության, որոնք ապահովագրում են ձեզ ոչ միայն նուրբ, այլև ֆիզիկական պլանում:

Եվ դա հնարավոր է եղել միայն շնորհիվ այն բանի, որ նրանք «կարդացել» են միլիոնավոր մարդկանց ազատ կամքը, որոնք չեն ցանկանում ապրել առաջվա պես՝ կատարելով իշխող վերնախավի անմիտ հրամանները:

Իսկ Խավարի Ուժերը, որոնք ապահովում են խորքային պետության պաշտպանությունը, արդեն «շնչահեղձ են լինում» նոր էներգիաների մեջ և ի վիճակի չեն առաջվա նման սատարել իրենց երբեմնի հզոր «խնամյալներին» և նրանց, ովքեր որոշել են հետևել սրանց:

Այդպիսով, Երկրի բնակիչների դրսևորած ազատ կամքի «պարանի ձգման» մեջ անխուսափելիորեն կհաղթեն նրանք, ովքեր կլինեն Լույսի կողմից:

Մի փոքր ջանադրություն, և այդ «պարանը» երկու մասի կկիսվի՝ ոմանց տանելով երրորդ չափում, ոմանց էլ՝ նոր բարձրաթրթիռ աշխարհ:

Ամեն ոք կհայտնվի այն էներգետիկական տարածության մեջ, որն ինքն է ընտրել՝ դրսևորելով իր ազատ կամքը:

Մակայն հիմա արդեն այդ բաժանարար գիծը կանցնի նաև մարդկության հավաքական գիտակցության միջով. նրա մի մասը կգնա էվոյուցիայի ուղիով, մյուս մասը՝ ինվոյուցիայի:

Եվ դա փոխել ի գորու չէ ոչ ոք, քանզի Տիեզերքի Օրենքները մշտնջենական են և անփոփոխելի:

«ԸՆԿԵՐԱՆԱԼ» ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՕՐԵՆՔԻ ՀԵՏ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Այսօր ես ուզում եմ անդրադառնալ Տիեզերքի Օրենքներից ևս մեկին, որն ազդում է ձեզ վրա ավելի շուտ միջնորդավորված կերպով:

Եվ խոսքը կվերաբերի **Պատճառի և Հետևանքի Օրենքին**, որն անխզելիորեն կապված է երկու այլ Օրենքների հետ՝ **Զգողության և Անդրադարձման**:

Ինչու՞ եմ որոշել առանձին ուղերձով խոսել նրա մասին:

Նախ և առաջ այն պատճառով, որ հատկապես այս Օրենքը ամենատեսանելին է ձեզ համար, մանավանդ հիմա, երբ իր իրավունքներն է ստանձնել **արագ կարման**:

216

Նրա հետ շատ դյուրին է աշխատել, քանի որ նա ամեն ինչ «կոչում է իր անունով»՝ անհապաղ ի հայտ գալով ֆիզիկական պլանում:

Կարելի է նույնիսկ ասել, որ նա Տիեզերքի «ամենանյութական» Օրենքն է:

Այդպես, ձեր կյանքի ցանկացած իրադարձություն ՄԻՇՏ ձեր այս կամ այն մտքերի, զգացմունքների ու գործողությունների հետևանքն է թե՛ մեծ, թե՛ փոքր բաներում:

Այդ իսկ պատճառով, եթե դուք սովորեք իսկույն ևեթ, առանց հետաձգելու գտնել ձեր անհաջողությունների կամ, ընդհակառակը, հաջողությունների պատճառները, ապա արագ «կընկերանաք» այդ Օրենքի հետ, և դա թույլ կտա ձեզ նշանակալից առաջընթաց ապրել ձեր հոգևոր զարգացման մեջ:

Գործնականորեն յուրացնելով այն, դուք կհամոզվեք, որ **ձեր կյանքում ամեն ինչ կախված է ՄԻՄԻԱՅՆ ձեզնից**՝ անկախ արտաքին

հանգամանքներից, ձեր շրջապատից, քաղաքական իրավիճակից և այլն:

Եվ դրա ամենավառ օրինակը բերեցին վերջին տարիները, երբ բուլոբի համար միատեսակ պայմաններում ոմանք անմոռուչ տեղի տվեցին իշխանություններին, իսկ մյուսները նույնիսկ նյութական և բարոյական կորուստների գնով կարողացան պաշտպանել սեփական ճակատագիրն ինքնուրույն վճռելու իրենց իրավունքը, թույլ չտալով անարգել իրենց մարմինն ու Հոգին:

Այդպես, միննույն պատճառը, մարդկանց ազատ կամքից կախված, հանգեցրեց բացարձակապես տարբեր հետևանքների. ոմանց է՛լ ավելի ընկղմեց եռաչափության մեջ, իսկ ոմանց բարձրացրեց մինչև չորրորդ չափում, այդպիսով բացելով նրանց առջև Համբարձման ուղին:

Իհարկե, ամեն ինչ այդքան միանշանակ չէ, քանի որ թե՛ մի, թե՛ մյուս կատեգորիայի մարդկանց վարքագծում առկա են բազմաթիվ տարատեսակ նրբերանգներ:

217

Օրինակ, ինչ-որ մեկի Հոգին չի ընդունել «խաղի կանոնները», սակայն մարդը ստիպված է եղել գնալ դրան զավակներին սովից փրկելու համար, ինչ-որ մեկն էլ, հրաժարվելով այսպես կոչված «պատվաստումից», մտածել է լոկ իրեն չվնասելու մասին, չգիտակցելով մարդկության դեմ ուղղված հանցագործությունների ողջ ընդգրկումը:

Ամեն մարդ, ինչպես և իր կյանքի պայմանները, այնքան անհատական է, որ Երկրի վրա գոյություն չունեն միատեսակ պատճառներ և հետևանքներ, կան միայն դրանց ընդհանուր ուղղությունները, որոնցից էլ ի վերջո ձևավորվում են համայն մարդկության զարգացման ընդհանուր դրական կամ բացասական վեկտորները:

Եվ յուրաքանչյուր առանձին մարդու վարքագիծ համալրում է ընդհանուր հավաքական գիտակցության գանձատուփը:

Եվ ես ուզում եմ, զավակներս, որ դուք հստակ գիտակցեք ձեր պատասխանատվությունը ոչ միայն ձեր սեփական Հոգու, այլև ողջ մարդկության առջև, որի մասնիկն եք ինքներդ:

Ջանացե՛ք մշտապես դրական ավանդ ներքերել ձեր ընդհանուր էներգետիկական «գանձատուփի» մեջ, ինչը թույլ կտա ձեզ և միլիոնավոր այլ մարդկանց ավելի արագ իրականացնել սպասված անցումը դեպի Հինգերորդ չափում:

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Այսօր ես ուզում եմ հանրագումարի բերել մեր զրույցը Տիեզերքի Օրենքների մասին, որոնք շատ առումներով այժմ նորովի են դրսևորվում:

218

Եվ դա տեղի է ունենում ոչ թե այն պատճառով, որ փոխվում են իրենք՝ Օրենքները, այլ որովհետև փոխվում է էներգետիկական տարածությունը, այսինքն՝ նաև մարդկանց թրթիռները, որոնք ապրում են այդ Օրենքներով:

Ներկայումս Երկրի վրա ընթացող պրոցեսները բացառիկ են, որովհետև դեռ երբեք ոչ մի մոլորակում թե՛ իր՝ մոլորակի, թե՛ նրա բնակիչների թրթիռները չեն փոխվել այսքան սրընթաց կերպով՝ մի քանի տասնամյակի ընթացքում:

Սովորաբար դրա համար հարկավոր են դարեր, եթե ոչ հազարամյակներ:

Եվ իհարկե, ձեր մոլորակի բնակիչներից ոչ բոլորն են ի վիճակի վերակառուցելու իրենց գիտակցությունը և առավել ևս՝ իրենց մարմինները նման սեղմ ժամկետներում:

Սակայն հոգիներն էլ, որ մարմնավորվել են հիմա Երկրի վրա, սովորական չեն. դրանք այն հոգիներն են, որոնք երկար ու խնամքով նախապատրաստվել են այդ վիթխարի իրադարձությանը:

Բացի այդ, քիչ չեն նաև ուրիշ մոլորակներից՝ ավելի բարձր չափումներից եկած հոգիները:

Նրանցից ոմանք որոշել են ձեռք բերել իրենց ֆիզիկական մարմնով ավելի բարձր չափում անցնելու բացառիկ փորձառությունը:

Մյուսներն ինքնակամ մասնակցում են այդ փորձարկմանը, որպեսզի օգնեն այժմ Երկրի վրա մարմնավորված իրենց աստղային եղբայրներին ու քույրերին պատվով անցնել եռաչափ աշխարհի փուշ ու տատասկի միջով, որոնցով ծածկված է Համբարձման տանող նրանց ուղին:

Եվ ծննդյան ժամանակ պահպանվել է նրանցից ոմանց հիշողությունը, թե ովքեր են իրենք և որտեղից են եկել:

Սակայն վերադառնանք մեր թեմային, թե ինչպես են գործում Տիեզերքի Օրենքները նոր իրականության մեջ, երբ փոխվում է Երկրի էներգետիկական տարածությունը, ինչը այս կամ այն կերպ անդրադառնում է յուրաքանչյուր մարդու կյանքի վրա:

Նման պայմաններում **արագ կարման**, որի մասին խոսվեց [իմ նախորդ ուղերձներից մեկում](#), ամեն մեկի մոտ գործում է տարբեր կերպ՝ կախված մարդու թրթիռների մակարդակից:

Շատ առումներով այն կախված է նրանից, թե որչափ ճշգրտորեն է մարդը շարժվում Տիեզերքի Օրենքներով. գիտի արդյոք դրանց մասին և արդյոք ձգտում է պահել դրանք:

Անշուշտ, ձեր մոլորակի բնակչության մեծ մասը ոչ միայն չգիտի, այլև չի էլ կասկածում դրանց գոյության մասին՝ առաջնորդվելով սուկ իր նսեմ բնագոյներով:

Դրա համար նոր էներգիաներն էլ շրջանցում են նման մարդկանց, «վանվելով» նրանց էներգետիկական տարածությունից թրթիռային ահռելի տարբերության պատճառով:

Բանը լրիվ այլ է մաքուր մարդկային հոգիների պարագայում, որոնք Երկիր են եկել Համբարձման փորձն ապրելու նպատակով:

Ոչինչ չիմանալով անգամ Երկրի՝ Հինգերորդ չափում անցնելու մասին, նրանք անգիտակցորեն պատրաստ են դրան և ազահաբար կլանում են իրենց այնքան մոտ ու հարագատ բարձրաթրթիռ էներգիաները:

Հատկապես այդ մարդկանց գիտակցությունն է սկսում արագորեն փոխվել, և նրանք գլխովին խորասուզվում են նոր գիտելիքների, էներգետիկական պրակտիկաների և մեդիտացիաների մեջ, ջանալով վերականգնել բաց թողածը:

Տիեզերքի Օրենքներն արդեն դատարկ հնչյուն չեն նրանց համար, այլ գործողության ուղեցույց:

Նրանք սկսում կիրառել այդ Օրենքներն իրենց առօրյա կյանքում, հետևելով դրանց ներգործությանը և ըստ այդմ շտկելով իրենց մտքերը, զգացմունքներն ու արարքները:

Եվ այդ մարդիկ արդեն ունակ են տեսնելու, թե որքան արագ են փոխվում ժամանակային պարամետրերը Երկրի վրա, որքան սրընթաց են «բումերանգի պես» իրենց վերադառնում թե՛ վատը, թե՛ լավը, թե ինչպիսի մարդիկ և իրադարձություններ են ձգվում դեպի իրենց՝ կախված իրենց իսկ հոգեվիճակից և արտածած հույզերից:

Կարելի է ասել, որ Տիեզերքի Օրենքները, փոխելով իրենց պարամետրերը Երկրի՝ դեպի ավելի բարձր չափումներ առաջխաղացման համեմատ, օգնում են մարդկանց ոգեպես աճել և համաքայլ ընթանալ մոլորակի նոր թրթիռների հետ:

Եվ քանի որ Տիեզերքի բոլոր Օրենքները մշտապես փոխգործակցում են միմյանց հետ, բխելով մեկը մյուսից, մարդկանց գիտակցության փոխակերպումն էլ տեղի է ունենում բազմապլանային ձևով՝ միաժամանակ մի քանի մակարդակում:

Օրինակ, սովորելով հստակ տեսնել իրենց կյանքի բոլոր իրադարձությունների պատճառա-հետևանքային կապերը, մարդիկ բարձրանում են Ձգողության, Անդրադարձման, Ազատ Կամքի

Օրենքների յուրացման, իսկ ընդհանուր առմամբ՝ այն իրականության գիտակցման նոր մակարդակին, որտեղ գտնվում են իրենց կյանքի տվյալ պահին:

Եվ դա արդեն իսկ հսկայական առաջընթաց է Համբարձման տանող իրենց ճանապարհին:

ԳԼՈՒԲԱԼ «ՄԱՐԴՈՍՏԱՅՆԻ» ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 Թ.

Այսօր ես ուզում եմ ձեզ հետ խոսել ներկայումս Երկրի վրա ընթացող գլոբալ պրոցեսների մասին:

Սակայն նախ և առաջ հարկավոր է հասկանալ, թե ինչ է **գլոբալիզմը**, որի մասին այդքան խոսում են հիմա:

Դա երկրների և ժողովուրդների լիակատար դիմագրկումն է և ենթարկումը միասնական դեկավարման:

Եվ այդ նպատակին հասնելու համար գործի են դրվում ստվերային կառավարությանը մատչելի բոլոր մեթոդները:

Ինչպես տեսնում եք, առայժմ դա բավական լավ հաջողվում է նրանց:

Միակ, սակայն հույժ էական խոչընդոտը նրանց պլանների լիակատար իրագործման ճանապարհին, եղավ մարդու «անխորտակելի»՝ ոչ մի խորամանկության չտրվող, Աստվածային էությունը:

Եթե կլոնները, սողունակերպներն ու մարդկային մարմիններում մարմնավորված մյուս ցածրաթրթիո քաղաքակրթությունների ներկայացուցիչները հեշտությամբ տրվում են «վարժեցման», ապա մաքուր մարդկային հոգիները ինտուիցիայով զգում են խարդավանքը

և դիմադրություն են ցուցաբերում Երկրի բնակչության «ապամարդացման» գլոբալիստների պլաններին:

Եվ դա առանձնապես նկատելի է դարձել հիմա, երբ հասարակությունը բաժանվել է երկու մասի՝ նրանց, ովքեր անվերապահորեն հավատում են այն ամենին, ինչ իրենց ներշնչում են գլոբալիստների կամակատար իշխանությունները, և նրանց, ովքեր չեն հավատում պաշտոնական լրատվության աղբյուրներից եկող և ոչ մի խոսքի:

Այդ իսկ պատճառով, գլոբալիստների հղացած միասնականացումը ճարճատում է իր բոլոր կարերով, և այդ «գույնզգույն գործվածքի» մեջ առաջացած «անցքերը կարկատել» նրանց այլևս չի հաջողվի:

Կարելի է ասել, որ նրանց մանրակրկիտ մշակած և տարիներով առաջ տարած ծրագիրն արդեն ձախողվել է:

Ցավոք, այդ հաղթանակը մարդկությանը տրվեց չափազանց թանկ գնով՝ հսկայական թվով կյանքերի կորստյան ճանապարհով, որ արդեն իսկ և առաջիկա տարիներին էլ կխլի կեղծ-պատվաստումը:

Եվ որքան էլ խոսենք այդ մարդկանց ազատ ընտրության մասին, նրանց կյանքերի պատասխանատվության առյուծի բաժինը գլոբալիստներինն է, որոնք խաբեությամբ նման ողբերգական վախճանի բերեցին մարդկության որոշակի մասին:

Գլոբալիստների կողմնակիցներին հաջողվեց ի կատար ածել այդ հանցագործությունը շնորհիվ միասնական կառավարման, որ իրականացրել ու առ այսօր շարունակում է իրականացնել սովետային կառավարությունը իշխանության գլուխ կանգնած իր դրածոների միջոցով:

Եվ հիմա եկել է ժամանակը քանդելու ողջ աշխարհը պարուրած համաշխարհային իշխանական այդ «սարդոստայնը», - կտրատելու իշխանության էներգետիկական «կպչուն թելերն» այդ հանցավոր կառույցի, որն ամայացնում է մարդկանց հոգիները և քայքայում նրանց առողջությունն ու կյանքը:

Դուք կարող եք հարցնել՝ «Իսկ ի՞նչ կարող է նման իրավիճակում անել հասարակ մարդը, որը չունի իշխանություն, որից փաստորեն ոչինչ կախված չէ»:

Իրականում նա կարող է շատ բան անել:

Հստակ և պարզորոշ հայտնելով ձեր ներքին բողոքը իշխանությունների հանցավոր գործողությունների դեմ, դուք սկիզբ եք դնում Խավարի Ուժերին հակազդելու էներգետիկական շղթային, որը Ձգողության Օրենքի համաձայն դեպի իրեն կգրավի ձեր կողմնակիցներին ոչ միայն նուրբ, այլև ֆիզիկական պլանում:

Այդպիսով դուք ավելի ակտիվ և արդյունավետ գործողությունների ձեռնարկման ազդանշան եք տալիս ձեր Երկնային օգնականներին և Գալակտիկական ընտանիքին, իսկ ձեր շրջապատում կսկսեն հայտնվել համանման հայացքներով մարդիկ, որոնք ինտուիտիվ կերպով կկարդան ձեն տրամադրություններն ու մտադրությունները:

Ձեր շուրջը եղած ամեն բան կմտնի շարժման մեջ, որը սկիզբ կառնի ձեր իսկ անկեղծ և ուժգին ցանկությունից՝ ապրելու Լույսի՝ մեջ, այլ ոչ թե Խավարի:

Ամենից ավելի հենց դրանից են վախենում գլոբալիստները:

Մինչդեռ հենց դա էլ տեղի է ունենում ամենուրեք, և դա, վերջիվերջո, արդեն հիմնավորապես կավերի իշխանության հիերարխիական բուրգը, որի փլատակների տակ կմնա հին աշխարհն իր բոլոր մանկլավիկներով:

Եվ դուք ի գորու եք, զավակնե՛րս, առավելագույնս արագացնելու այդ պրոցեսը:

Օրհնու՛մ եմ ձեզ և անսահման սիրում:

Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ԳԼՈՒԽ VIII

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

224

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 2 ՀՈՒՆԻՄԻ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ:

Այսօր ես ուզում եմ հանրագումարի բերել իմ այն ուղերձների շարքը, որոնք հասցեագրված են նրանց, ովքեր նոր-նոր են «թաթախվում» Համբարձման թեմայի մեջ՝ սկսելով ձերբազատվել երկվության կապանքներից:

Այդ ուղերձները նպատակ ունեին ձեզ տալ ուղեցույց մի թեև, որը թույլ կտա հոգևոր զարգացման ուղին բռնած մարդկանց չմոլորվել էզոթերիկ գիտելիքների «թավուտներում», այլ միանգամից սկսել կարևորից՝ նրանից, ինչը կօգնի ձեզ ամենասեղմ ժամկետում ազատվել եռաչափ աշխարհի՝ ձեր գիտակցության մեջ ներդրված

ծրագրերից և սովորել ապրել արդեն այլ՝ Տիեզերական օրենքների համաձայն:

Եթե դուք լրջորեն մոտենաք ձեր հոգևոր ինքնագարգացմանը և լիովին գիտակցեք ձեր մոլորակի վրա տեղի ունեցող փոփոխությունների անդառնալիությունը, ապա այդ Պլանի իրագործումը կօգնի ձեզ ամենակարճ ժամկետում նորովի վերակառուցել ձեր գիտակցությունը:

Եվ հիմա ես ուզում եմ տալ ևս մի քանի խորհուրդ, որ կօգնի ձեզ չչեղվել ճանապարհից:

Իմ տված գործողությունների Պլանի հիման վրա կազմե՛ք ձեր սեփական Պլանը, որը կարտացոլի ձեր անհատական յուրահատկություններն ու այժմյան հնարավորությունները, ինչպես նաև ձեր Հոգու նպատակներն ու խնդիրները:

Կարևորը՝ որ այդ Պլանը լինի իրատեսական:

Դրա համար դուք պետք է ազնվորեն գնահատեք ձեր հնարավորությունները, նկատի առնելով ձեր այժմյան ֆիզիկական և հոգեբանական դրությունը, ինչպես և՛ սոցիալական և ֆինանսական վիճակը:

Բացի այդ, հարկ է հաշվի առնել նաև ձեր ընտանիքի՝ հարազատների ու մերձավորների շահերը:

Դուք բնավ կարիք չունեք վերածվելու ժամանակակից հասարակության հողմադացների հետ կռիվ տվող ինչ-որ «Դոն Կիխոտների», ինչը սոսկ հիասթափություն և անվստահություն կրերի ձեզ սեփական ուժերի նկատմամբ:

Ձեր յուրաքանչյուր քայլը պետք է մանրակրկիտ մտածված լինի, այդ թվում՝ գործնական տեսանկյունից, որովհետև քանի դուք ապրում եք եռաչափ աշխարհում, պետք է ինչ-որ չափով համապատասխանեք նրա օրենքներին:

Եվ այստեղով շատ նրբին սահման է անցնում:

Այդ համապատասխանությունը պետք է ունենա որոշակի սահմաններ, որոնք խախտելով դուք կարող եք վերստին հայտնվել բարիկադի մյուս կողմում, որտեղից այնքան դժվարությամբ դուրս էիք պրծել:

Այլ խոսքով, դուք կարող եք ձեզ թույլ տալ խաղալ եռաչափ աշխարհի կանոններով միայն այնքան ժամանակ, քանի դեռ չեն շոշափվել մարդու հիմնարար հոգևոր արժեքները, այսինքն՝ քանի ձեզ չի առաջարկվել գործարքի մեջ մտնել ձեր խղճի հետ:

Դուք պետք է սովորեք հստակ որսալ այն պահը, երբ հարկավոր կլինի ինքներդ ձեզ ասել՝ «Կա՛նգ առ»:

Եվ հիմա ձեր կյանքում է կարող են ծագել բազմաթիվ նման իրավիճակներ, որովհետև, ինչպես բազմիցս ասել եմ, երկու ժամանակաշրջանների հանգուցակետում մարդիկ արագացված տեմպով են անցնում հոգևոր հասունության իրենց վերջին, կարևորագույն քնությունը:

Եվ քանի որ մինչև Անցումը շատ ժամանակ չի մնում, այդպիսի «ամրության ստուգումները» ոչ միայն հաճախադեպ են դառնում, այլև ձեռք են բերում ուժգնացած բնույթ:

Դուք պետք է մշտապես զգոն լինեք, որ չսայթաքեք և թույլ չտաք մարդկային մարմինների մեջ մարմնավորված ցածրաթրթիռ էակներին իջեցնելու ձեր թրթռանքը:

Իսկ նրանք, ներկայումս Երկիրը ողողած նոր էներգիաների ազդեցության տակ առավել քան երբևէ կառչում են կյանքից, հասկանալով, որ կարող են գոյատևել միայն իրենց հարազատ բացասական էներգիաների մեջ:

Հենց այդպիսի էներգիաներ էլ փորձում են հրահրել իրենց շրջապատում:

Այդ իսկ պատճառով մի՛շտ հիշեք ցածրաթրթիռ մարդկանց (իսկ ավելի հաճախ՝ ոչ-մարդկանց) հետ **շփման երեք տարբերակների մասին:**

Սովորե՛ք ներդաշնակ հարաբերություններ կառուցել ձեր ճանապարհին հանդիպած ամեն մի էակի հետ և մի՛ մոռացեք էներգետիկական պաշտպանության մասին, որն առայժմ ձեր անվտանգության գլխավոր երաշխավորն է:

Եվ վերջին խորհուրդս:

Մի՛ վախեցեք ինքնուրույնություն և ստեղծարարություն դրսևորել ամեն ինչում:

Ստեղծե՛ք ձեր սեփական պրակտիկաներն ու մեղիտացիաները՝ էլնելով իրականության ձեր ըմբռնման առանձնահատկություններից:

Համատեղե՛ք էներգետիկական աշխատանքը պրակտիկ գործողությունների հետ, որտեղ որ դա պատշաճ կլինի:

Դարձե՛ք ձեր իրականության արարիչները այժմ և եթ, և այդ ժամանակ երրորդ և Հինգերորդ չափման աշխարհները զատող սահմանները կսկսեն սրընթաց կերպով ջնջվել:

Դրանով դուք կօգնեք ձեզ և շատ ուրիշների մերձեցնելու Լույսի Ուժերի երկար սպասված հաղթանակը Խավարի Ուժերի նկատմամբ:

Եվ ես օրհնու՛մ եմ ձեզ, որ այդպես լինի:

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

КНИЖНАЯ ЛАВКА

**В нашей Книжной Лавке вы найдете и другие Сборники Посланий
Отца-Абсолюта и Вознесенных Мастеров:**

О НОВОМ ВИДЕНИИ ЖИЗНИ	ПРАКТИКИ НА КАЖДЫЙ ДЕНЬ
ВОЗВРАЩЕНИЕ К БОГУ (МАТЕРЬ МИРА)	ПОСОБИЕ ПО ПЕРЕХОДУ В ПЯТОЕ ИЗМЕРЕНИЕ
ТРИЕДИНСТВО ДУХА, ДУШИ И ТЕЛА	УСТРОЙСТВО МИРОЗДАНИЯ
АСТРАЛЬНЫЙ МИР	АРХАНГЕЛЫ
ВТОРОЕ ПРИШЕСТВИЕ ХРИСТА (НАЧАЛО)	НЕБЕСНАЯ ГВАРДИЯ
ВТОРОЕ ПРИШЕСТВИЕ ХРИСТА (ЧАСТЬ 2)	АГАРТА И ЖРЕЦЫ ГИПЕРБОРЕИ
ТРИЕДИНСТВО ДУХА, ДУШИ И ТЕЛА	ГФС - КТО МЫ ТАКИЕ
РЕЛИГИЯ И ЗАКОНЫ ВСЕЛЕННОЙ	МЕДИТАЦИИ И ПРАКТИКИ
ЧАСТО ЗАДАВАЕМЫЕ ВОПРОСЫ	НАШЕ СОВМЕСТНОЕ ВОЗНЕСЕНИЕ
НА ПОРОГЕ ВОЗНЕСЕНИЯ	КАК ОТДЕЛИТЬ ЗЕРНА ОТ ПЛЕВЕЛ
	МУЖЧИНА И ЖЕНЩИНА
	ВЗАИМООТНОШЕНИЯ С ДЕТЬМИ
	РЕПТИЛОИДЫ И КЛОНЫ

А также другие текстовые и аудио сборники Посланий.

КНИЖНАЯ ЛАВКА И КАТАЛОГ ПОСТОЯННО ОБНОВЛЯЮТСЯ

Книжная Лавка сайта «Возрождение» <https://vozrojdенийsveta.com/book/>

Каталог <https://vozrojdенийsveta.com/book/katalog.html>

АВТОРСКИЕ ПРАВА

Все права на тексты и аудиозаписи защищены законом об авторском праве и принадлежат сайту «Возрождение».

При перепечатке и распространении материалов, а также воспроизведении их в любом виде и любыми средствами, обязательна активная ссылка на сайт “Возрождение” <https://vozrojdенийsveta.com/>